

ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

---

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ  
№ 3-4 (66-67)

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ  
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ  
JOURNAL FOR ARMENIAN STUDIES

Հիմնադիր՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ

*Խմբագրական խորհուրդ՝*

Ս. Ռ. Գևորգյան (**նախագահ**),

Ա. Վ. Գալստյան (**գլխավոր խմբագիր**),

Ա. Հ. Հարությունյան (**գլխավոր խմբագրի տեղակալ**),

Մ. Մ. Իսախրյան, Է. Գ. Հովհաննիսյան, Ս. Դ. Դանիելյան,

Ա. Գ. Դոլուխանյան, Վ. Գ. Համբարձումյան,

Ա. Հ. Հակոբյան, Է. Ս. Մկրտչյան, Ս. Պ. Մուրադյան,

Ա. Տազեսյան (Բեյրութ), Զ. Պողոսյան (Իտալիա),

Հ. Մարտիրոսյան (Նիդերլանդներ), Ա. Հ. Մանուկեան (Շվեյցարիա)

Գրանցման վկայական՝ 211.200.00182

Գրանցման տարեթիվը՝ 26.03.2003թ.

Պարբերականությունը՝ եռամսյա

Բոլոր նյութերն ուղարկվում են գրախոսության:

Արտատպության դեպքում հղումը «Հայագիտական հանդես»-ին պարտադիր է:

Մեր հասցեն՝ Երևան, Ալեք Մանուկյան փ. 13, հեռախոս՝ 55-60-30 (1-18)

Կայքէջ՝ <https://armenianstudies.aspu.am/>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**ՀՐԱԶԻԿ ՀԱԿՈՐՋԱՆՅԱՆ**

Հայագիտության արհեստածին խնդիրները ակադեմիական գիտության մեջ--- 12

**ԼԻԼԻԹ ՊԱՊԻԿՅԱՆ**

Ժողովրդախոսակցական և բարբառային բառերի լեզվաոճական կիրառությունները Գեղամ Սարյանի չափածոյում ----- 31

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**ՆՈՐԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ**

XIX դարի արևելահայ դրամատուրգիան ----- 49

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

Ժանրային իրացման որոշ հարցեր. Վանո Սիրադեղյանի «Ձեռքդ ետ տար ցավի վրայից» ստեղծագործությունը ----- 63

**ՄԱՆՈՒՇ ԲԱԼԱՅԱՆ**

«Յուշատետր» էսսեների գեղարվեստավերագրական հիմնավորումները----- 74

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**ՇԱԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«Հայ երիտասարդների միություն» ընդհատակյա կազմակերպությունը (1978-1980թթ.)----- 99

**ԱՆՆԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ**

Սևրի պայմանագիրն ու Հայկական հարցի ճակատագիրը. հույսեր և հիասթափություն----- 113

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**ՄՈՎՍԵՍ ՔՇՆ. (ԴԱՎԻԹ) ՍԱՀԱԿՅԱՆ**

«Աստուած», «Անձն» «Էություն» և «Բնություն» եզրույթների քննություն----- 127

ՄՇԱԿՈՒՅԹ

**ԱՐՓԻՆԵ ԹՈՐԻԿՅԱՆ**

Սարգիս Խաչատուրյանի ստեղծագործական գործունեության առաջին  
շրջանը----- 145

**ՌԱՖԻԿ ԳԱՐԻԵԼՅԱՆ**

Դարավանդային երկրագործությունը հայկական մշակույթում (նախնական  
դիտարկումներ)----- 160

**ԼՈՒՍԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Մոնումենտալ արվեստը Հայաստանի թանգարանների ձևավորումներում XX-XXI  
դարերում----- 175

**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ****ՄԵԼԱՆՅԱ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ, ԱՄԱԼՅԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Ոչ լեզվական ֆակուլտետներում ընթերցանության ուսուցման ժամանակակից  
միտումներ----- 192

**ԳՐԵՏԱ ՅԱԿՈՐԵԱՆ, ՔՆԱՐԻԿ ԱՐՐԱՀԱՄԵԱՆ**

Պոլսոյ Կեդրոնական վարժարանը ազգային պահպանության  
խաչուղիներում-----205

**ՆԱՐԻՆԵ ՀՈՒՆԱՆՅԱՆ, ԱՐՄԵՆՈՒՀԻ ԴԵՄԻՐՃՅԱՆ**

Գոյականի թվի քերականական կարգի համեմատական վերլուծության մեթոդի  
կիրառումը հայերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման գործընթացում-----227

**ԱՇԽԵՆ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ**

Հայախոս ուսանողներին ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման  
տեխնոլոգիաները----- 244

**ՀՈՒՓՍԻՄԵ ՄԱՐՈՆՅԱՆ**

«Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի մեթոդիկական և  
տեխնոլոգիան----- 265

**ՆԱԻՐԱ ՄԻՒԹԱՐՅԱՆ**

Հայկական մշակութային արժեքները կրթության և պետության հոգածության ներքո ----- 282

### **ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Հայկական գեղարվեստական մշակույթում «Ոսկերչական արվեստի» պատմաժամանակագրության մեթոդաբանություն----- 296

### **ՎԱՀԵ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ**

Լուսանկարչության և գեղանկարչության ինտեգրված ուսուցումը գեղարվեստական կրթօջախներում----- 311

### **ԱՐԳԻՇՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հայ-թեք ճարտարապետական ոճի ուսումնառության արդիականությունը Հայաստանում----- 327

### **ԱՆՆԱ ԵՂՅԱՆ**

Անգլերեն ճարտարապետական բառապաշարի զուգորդական ուսումնասիրության արդիականությունը----- 343

### **ՆԱԻՐԱ ՍԻՄՈՆՅԱՆ**

Լայն հնարավորություններով հումանացված կրթական միջավայր ----- 351

### **ՇՈՒՇԱՆԻԿ ՀԱԿՈՐՅԱՆ**

Ուսուցչի պատրաստման համակարգը Ֆինլանդիայում----- 363

### **ՆԱԻՐԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

Հանրակրթության դերը պետության զարգացման գործում----- 378

### **ԱՐԵՎԻԿ ԱՖՐԻԿՅԱՆ**

Կարողունակահեն կրթության հիմնահարցերը ----- 392

### **ԱՐՓԻՆԵ ՂԼԵՉՅԱՆ**

Ուսումնառության արդյունքների ստուգման և գնահատման այլընտրանքային գործիքներ----- 405

**СОДЕРЖАНИЕ**  
**ЛИНГВИСТИКА**

**ГРАЧИК АКОБДЖАНЫАН**

Искусственные проблемы арменоведения в академической науке ----- 12

**ЛИЛИТ ПАПИКЯН**

Лингвостилистические особенности просторечий и диалектизмов в поэзии Гегамы Сарьяна----- 31

**ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ**

**НОРА МЕЛКОНЯН**

Восточно-армянская драматургия XIX века----- 49

**ОВАННЕС ОВАКИМЯН**

Жанровая определенность и вопросы жанровой идентификации: произведение Вано Сирадехяна «Возьми руку с боли»----- 63

**МАНУШ БАЛАЯН**

Художественно-документальные обоснования эссе "Ушатетр" (Записная книжка)----- 74

**ИСТОРИЯ**

**ШАГЕН АРУТЮНЯН**

"Союз армянской молодежи" подпольная организация (1978-1980)----- 99

**АННА МЕЛКОНЯН**

Севрский договор и судьба Армянского вопроса. надежды и разочарования---- 113

**ТЕОЛОГИЯ**

**ИЕРЕЙ МОВСЕС (ДАВИД) СААКЯН**

Анализ терминов «Бог», «ипостась», «сущность» и «природа»----- 127

**КУЛЬТУРА**

**АРПИНЕ ТОРИКЯН**

Первый период творческой деятельности Саркиса Хачатуряна----- 145

**РАФИК ГАБРИЕЛЯН**

Террасное земледелие в армянской культуре. предварительные замечания----- 160

**ЛУСИНЕ ПЕТРОСЯН**

Монументальное искусство в оформлении музеев в Армении в XX-XXI веках---- 175

**ПЕДАГОГИКА****МЕЛНИЯ АСТВАЦАТРЯН, АМАЛИЯ ПЕТРОСЯН**

Современные тенденции в обучении чтению неязыковых факультетах-----192

**ГРЕТА АКОПЯН, КНАРИК АБРААМЯН**

Центральный лицей Константинополя в пересечении путей сохранения национальной-----205

**НАРИНЕ УНАНЯН, АРМЕНУИ ДЕМИРЧЯН**

Применение метода сравнительного анализа грамматического порядка числа существительных в процессе обучения армянскому языку как иностранному -- 227

**АШХЕН ГЮРДЖИНЯН**

Технологии обучения французским фразеологическим единицам ----- 244

**РИПСИМЕ МАРОНИЯН**

Методика и технология комплексного курса «Моделирование одежды»----- 265

**НАИРА МХИТАРЯН**

Культурные ценности в образовании и государственной заботе ----- 282

**ДАВИТ ПЕТРОСЯН**

Методология исторической хронологии «Ювелирного искусства» в армянской художественной культуре ----- 296

**ВАГЕ ИСРАЕЛЯН**

Интегрированное обучение фотографии и живописи в художественном образовании----- 311

**АРГИШТИ ХАЧАТРЯН**

Современность армяно-тек архитектурного стильного образования в Армении-327

**АННА ЕГЯН**

Актуальность сопоставительной архитектурной лексики Английского языка---- 343

**НАИРА СИМОНЯН**

Гуманизированная широкими возможностями образовательная среда----- 351

**ШУШАНИК АКОПЯН**

Подготовки учителей в финляндии----- 363

**НАИРА ТАДЕВОСЯН**

Роль народного образования в развитии государства----- 378

**АРЕВИК АФРИКЯН**

Проблемы компетентностного образования----- 392

**АРПИНЕ ГЛЕЧЯН**

Альтернативные инструменты оценки и анализа результатов обучения----- 405

**CONTENTS**  
**LINGUISTICS**

**HRACHIK HAKOBJANYAN**

Artificial problems of Armenian studies in academic science----- 12

**LILIT PAPIKYAN**

Linguistic applications of folk – colloquial and dialectic words in Gegham----- 31

**LITERARY STUDIES**

**NORA MELKONYAN**

XIX Century Eastern Armenian Dramaturgy----- 49

**HOVHANNES HOVAKIMYAN**

Genre Identification and Related Issues: Vano Siradeghyan's "Take Your Hand off the Pain"----- 63

**MANUSH BALAYAN**

Cultural-documental observations of the essay "Hushatetr" (Memoir)----- 74

**HISTORY**

**SHAHEN HARUTYUNYAN**

"Union of Armenian Youth" underground organization (1978-1980)----- 99

**ANNA MELKONYAN**

The Treaty of Sevres and the fate of the Armenian question. hopes and disappointments----- 113

**THEOLOGY**

**FR. MOYSES (DAVIT) SAHAKYAN**

An Analysis of Terms "God", "Person", "Essence" and "Nature"----- 127

**CULTURE**

**ARPINE TORIKYAN**

The first period of Sarkis Katchadourian's creative work----- 145

**RAFIK GABRIELIAN**

The terrace farming in Armenian culture. preliminary observations ----- 160

**LUSINE PETROSYAN**

Monumental art in museum design----- 175

**PEDAGOGY****MELANYA ASTVATSATRYAN, AMALYA PETROSYAN**

Current Trends in Reading Instruction in Non-Linguistic Faculties-----192

**GRETA HAKOBYAN, KNARIK ABRAHAMIAN**

Getronagan Armenian High School (Lyceum) in Constantinople (Istanbul) in the Crossroads of Preserving the National Identity ----- 205

**NARINE HUNANYAN, ARMENUHI DEMIRCHYAN**

Application of the method of comparative analysis of the grammatical order of noun number in the process of teaching Armenian as a foreign language----- 227

**ASHKHEN GYURJINYAN**

Technologies of teaching french phraseological units----- 244

**HRIPSIME MARONYAN**

Methodics and technology of the comprehensive course "Fashion design"----- 265

**NAIRA MKHITARYAN**

Cultural values in education and state care ----- 282

**DAVIT PETROSYAN**

Methodology of the historical chronology of "Jewelry Art" in Armenian artistic culture----- 296

**VAHE ISRAYELIAN**

Integrated teaching of photography and painting in art education----- 311

**ARGISHTI KHACHATRYAN**

Modernity of Armenian-tech architectural style education in Armenia----- 327

**ANNA YEGHYAN**

The Relevance of comparative study of english architectural vocabulary----- 343

**NAIRA SIMONYAN**

Humanized educational environment with wide opportunities----- 351

**SHUSHANIK HAKOBYAN**

Teacher training system in Finland----- 363

**NAIRA TADEVOSYAN**

The role of public education in the development of the state----- 378

**AREVIK AFRIKYAN**

Issues of competence-based education----- 392

**ARPINE GHLECHYAN**

Alternative instruments for verification and evaluation of learning outcomes----- 405

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՀՐԱՉԻԿ ՀԱԿՈՔՋԱՆՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐՇԵՍԱԾԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ  
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.120

## ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում ընդհանուր լեզվաբանության և հայերենագիտության պատմական նյութերի վերլուծության հիման վրա վեր են հանվում հայոց լեզվի և նրա մշակույթի շուրջ ընթացած անհարկի քննարկումների մի քանի շեշտադրում: Դրանք խնդրահարույց են, քանի որ պատմականորեն բացահայտվել են հաճախ նյութի էությունից չբխող և եզրահանգումների տեսքով արված որոշակի աղավաղումներ, որոնք լայնորեն պրոպագանդել են: Քանի որ հայագիտության շատ բնագավառներում այդ բացահայտումները չեն կարող մեկնաբանվել միայն թյուրիմացության և պատահականության շրջանակներում, ուստի անհրաժեշտ է լրաբանել դրանք և գիտական անաչառությամբ վերականգնել ճշմարտությունը: Այս պահանջն ավելի ակնհայտ է դարձել վերջին տարիներին շումերերեն, խեթերեն, բասկերեն, ռապանոյ լեզուների և հայերենի նյութական հազարավոր նույնությունների ստուգաբանման հետևանքով, որն օգնում է բացահայտելու և համակարգելու նշված աղավաղումների հիմքերը: Այս պարագայում հայագիտությունը երևում է բոլորովին նոր լույսի տակ և համաշխարհային մշակույթի մեջ հայկական վաղնջական մշակույթի ներդրման առավել հստակ ծավալով:

*Բանալի բառեր և արտահայտություններ. լեզու, մշակույթ, լեզվական ընդհանրություններ, մշակութային աղավաղումներ, գիտական վերականգնումներ:*


### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հողվածում հայերենին վերաբերող աղավաղումներն ու խեղաթյուրումներն ուսումնասիրվում են հայոց լեզվի պատմության լայն շրջանակում, ուր ընդգրկված են ինչպես օտար, այնպես էլ հայազգի լեզվաբանների աշխատություններ: Դրանցում մեզ հետաքրքրող հայագիտական որոշակի խնդիրները կա՛մ չեն բարձրացվել անհրաժեշտ մակարդակով, կա՛մ էլ բարձրացված հարցերը մերժվել են ոչ այնքան գիտական հիմքերով և, ինչպես Հարվարդի համալսարանի երիտասարդ լեզվաբանների հաղորդման մեջ է ասվում, հայերենի խնդիրները լուծվել են ոչ թե լեզվաբանական գիտության, այլ որոշակի ուժերի ու տերությունների քաղաքական շահերին համապատասխան:

### ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունը կատարվել է լեզվաբանական գիտության և ճանաչողության մեթոդներով և սկզբունքներով, ինչպես՝ գիտական գրականության բովանդակային վերլուծության, տեսակետների ու լեզվաբանական փաստերի զուգադրման, համադրման ու հակադրման իմացաբանական սկզբունքներով, ինչպես նաև լեզվաբանական երևույթների ձևաիմաստային-երկպլանային զուգադրման վերջնարդյունքից դեպի պատճառ մեթոդներով:

### ՔՆՆԱՐԿՈՒՄ



#### Հայագիտության

#### վիճակը:

Հայագիտական

պատմական հետազոտությունները թե՛ խորհրդային, թե՛ հետխորհրդային շրջանում ուղղորդվել են ոչ այնքան լեզվի առանձնահատկությունների, որքան քաղաքական որոշակի իրադարձությունների թելադրանքով: Ինչպես կոմունիստների պրոլետարական դիկտատուրայի մեջ ոչինչ չկար

պրոլետարական, այնպես էլ հետխորհրդային Հայաստանի կառավարման ժողովրդավարության մեջ ժողովրդավարական ոչինչ չկա, ընդ որում՝ այդ անվան տակ շարունակում են տեղ գտնել ապագային ծրագրեր, որոնց հետևանքով հայ

պատմամշակութային արժեքների նկատմամբ վերաբերմունքը եղել և շարունակում է մնալ հայկական իրականությունից օտարված, պատվիրված: Այս առումով մեր օրերի իրավիճակը շարունակությունն է անհիշելի ժամանակներից եկող համաշխարհային գործընթացների, որոնց էպիկենտրոնում շարունակում ենք մնալ մենք՝ թե՛ որպես ազգ, թե՛ որպես աշխարհագրական տարածք: Նույնիսկ ավանդապատումներում, որտեղ հայկական մշակույթի վերաբերյալ ակնարկները խիստ միակողմանի են և գնալով նվազում են, փաստվում է, որ մարդկային քաղաքակրթությունը սկիզբ է առել հայաստանյան դրախտով և Արարատին հանգրվանած նոյյան տապանով, այսինքն՝ Հայաստանով ու հայոց լեզվով: Շումերական դյուցազնավեպն այս իրողության կապակցությամբ ավելի շատ մանրամասներ է տալիս, քան Հին կտակարանը: Դա են վկայում նաև նախածին հայոց լեզվին նվիրված հայկական և օտար գիտունների հետազոտություններն ու փաստարկումները, և 1599 թ. տպագրված Հին կտակարանի Armenia հիմքով Կենաց ծառի պատկերը՝ ցուցումով, որ կենաց ծառի վրա տեղադրված ժողովուրդները ծագել են Հայաստանից: Քաղաքակրթության երկփեղկման այդ ներքին պայքարը **պատմականորեն** սկսվել է Սարգոն Աքադացու, իսկ **ավանդապատումով՝** Բաբելոնյան աշտարակաշինության ժամանակներից: Սարգոն Աքադացու արշավանքը դեպի Հայաստան հին աշխարհակարգի դեմ ուղղված ծրագիր էր, քանի որ դրանով հիմք դրվեց միջազգային հարաբերությունների նոր տեսակի: Հայոց առաքելական Ավետյաց երկրի մինչ այդ ներդրված քաղաքակրթությանը հակադրվեց քոչվորների ավարառուական, կողոպտչական պատերազմը: Հայաստան կատարած իր արշավանքի արձանագրության մեջ Նարամ Սուենի շեշտադրումը, որ պատմության մեջ ինքն առաջինն է համարձակվել պատերազմի ելնել Հայոց երկրի դեմ, ըստ էության նոր տեսակի ավերիչ և աշխարհավեր քաղաքակրթական ծրագրի հռչակագիր էր: Սկսելով որպես քոչվորներ՝ կողոպտիչ, կործանարար համակարգերը շարունակում են իրենց պահել քոչվորների պես: Տիրելով աշխարհի հարստություններին՝ նրանք շարունակում են

բաղձալ ուրիշի ունեցվածքը: Հզորանալով բացառապես ուրիշների նյութական բարիքները ավագակաբար հափշտակելու իրենց ստեղծած տեխնոլոգիաների շնորհիվ՝ նրանք այսօր մոտեցել են իրենց վախճանին ու պարտությանը՝ բաբելոնյան աշտարակի բաժանարար գաղափարի արժեզրկմանը: Երկրագնդի ստեղծարար և կործանարար ուժային բևեռների միջև վաղուց սկսված քաղաքակրթական այդ անողոք պայքարը այժմ նոր փուլ է թևակոխել. նրանք հասել են իրենց բացարձակ հաղթանակին, տիրապետում են աշխարհի ֆինանսական միջոցների հսկայական մասին, համարյա թե ստեղծված է գլոբալացման տանող համաաշխարհային կառավարություն, տեխնոլոգիաներ են մշակված՝ բոլոր երկրներին թելադրելու իրենց կամքը, կենսաքիմիական լաբորատորիաների միջոցով կառավարում են համաճարակներ, անցանկանալի երկրների համար ստեղծում են տնտեսական ու եղանակային ծանր պայմաններ, տեղերում քայքայում են ավանդական արժեքային համակարգերը: Ամբողջ աշխարհը հստակ գիտակցում է, որ նրանք դրական ոչինչ չեն բերել մարդկությանը և ոչինչ չունեն նրան տալու ապագայի և հեռանկարի առումով: Այսօր արդեն ունենք մի պատկեր, երբ քաղաքակրթության հակադիր ուժերը հասել են իրենց սնանկ ու ապակառուցողական գործունեության գագաթնակետին և բացահայտվել են աշխարհի ազգաբնակչության մեծամասնության աչքում: Սկսել է նրանց տոտալ պարտության փուլը, և հայ ժողովրդի մասնակցությամբ դրվելու է կործանարար համակարգերի վախճանի, զսպման և քայքայման սկիզբը:

Սարգսնի պատերազմից սկսած հայերը մասնակցել են **քաղաքակրթության համար մղված պատերազմների** խոշոր թե մանր բոլոր բախումներին, ու այսօր էլ մենք մեր կենսատարածքում ընթացող այդ պատերազմի էպիկենտրոնում ենք, որից որպես շրջանի բոլորում կրկին անցում է լինելու մարդկային միաբևեռ Ավետյաց քաղաքակրթությանը: *Դրան հասնելու ճանապարհը միշտ նույնն է՝ դիմագրավել մշակութային դիմագրկման ճանապարհով մարդկությանը վերջնական բարոյագրկման փանող գլաբալացման հերթական փորձին,*

ամբողջացնել մեր լեզվամշակութային անցյալը և ներկան և հստակեցնել ակադեմիական գիտության կողմից աշխարհի աղավաղված մշակութային պատկերը, որն առավել զգուն է երևում հայագիտության ոլորտում: Բոլորը հստակորեն գիտակցում են, որ ձևավորվում են ընդհանրապես՝ աշխարհի, ու մասնավորապես՝ մեր երկրի հասարակական ու մշակութային կյանքի տարբեր ոլորտների խորքային շտկման փոփոխությունները, ուստի այս աշխատանքում առաջարկվող վերլուծությամբ կփորձենք հնարավորինս օժանդակել գործընթացների ու խնդիրների նախապատրաստմանը, որոնք գոնե մեզ մոտ այս անգամ ուշացել են առնվազն 30 տարով:

Մեր վերջին երկդարյա անցյալում տարբեր երկրների շահերին հետամուտ գործակալությունների ֆինանսավորմամբ աստիճանաբար անտեսվել, արհամարհվել և շրջանցվել են հայ ժողովրդի և աշխարհի քաղաքակրթական ստեղծագործ ուժերի քաղաքական ներկան, մշակութային արժեքները, պահանջներն ու հետաքրքրությունները: Մեր ժամանակի խնդիրը ակադեմիական գիտության շրջանակներում այդ ամենի վերականգնումն է, ինչպես մեր երկրի ու պատմական Հայաստանի, այնպես էլ նրան հարակից այն վայրերի ազգային պատմամշակութային նյութի հիման վրա, որոնք մեր վաղնջական անցյալի տարբեր փուլերում հազարամյակներ շարունակ գտնվել են հայոց մշակութային ազդեցության գոտում: Դրանով մենք առաջընթացի ուղի կնշենք մշակութային բոլոր այն ստեղծագործ ուժերի համար, որոնց պատմական շահերը մեզ նման անտեսված են եղել նախորդ շրջաններում:

**Խորհրդային տարիներին** Հայաստանին թույլատրվել են միայն մասնակի ազատություններ՝ կարճ վերմակի սկզբունքով, որը թույլ չի տվել ունենալ ծածկված ոտք և գլուխ միաժամանակ: Ազգային շահին միտված բոլոր գիտությունները՝ լեզվաբանություն, մշակութաբանություն և այլն, տասը փակի տակ են եղել: Հատկապես հայրենական հնագիտությունը, պատմությունը և մշակութաբանությունը արտաքին կարգավորումների ուժով հայտնվել են հակահայկական և հակագիտական «տեսությունների» լաբիրինթոսում և

յուրացնելով օտար մասնագետների հերյուրած կեղծ դրույթները՝ յուրովի զարգացրել են դրանք: Ինչպես նշում է Հարվարդի համալսարանի մշակութաբանների հայտարարությունը, հայ ժողովրդի մշակութային խնդիրները մշտապես լուծվել են միայն խոշոր տերությունների և համաշխարհային կապիտալի թելադրանքի լույսի տակ:

*Հայերենը* համեմատական քերականության ոլորտում կապվեց պարսկական ճյուղի հետ (Պետերման, Վինդիշման և այլք), ապա դիտվեց հնդեվրոպական լեզվաընտանիքի մի առանձին ճյուղ (Հ.Հյուբշման) **(Աղայան Է, 1959)**: Հայկական լեզվաբանական անդաստանում իշխում էր հայոց լեզուն հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանելու մեծ հրճվանքը, իսկ ոչ հնդեվրոպական լեզուների հետ հայերենի ունեցած բառապաշարային ընդհանրությունները մեկնաբանվում էին որպես *հայերենի կարարած փոխառություններ*, առանց հաշվի առնելու, որ այդ լեզուներով խոսող ժողովուրդներից շատերը մեզ երբևէ հարևան չեն եղել, իսկ մյուսները կապված են եղել ժառանգականորեն: *Մինչդեռ մեր օրերի սրուգաբանական մի շարք հեթազորությունների արդյունքում այդ ընդհանրություններն սրացան բոլորովին հակադիր բացառություններ:*

Երբ 20-րդ դարի 30-ական թվականների վերջում Ստալինի որոշմամբ ամեն հանրապետություն տոնում էր մի նշանավոր պատմական իրողություն և հայերը կանգ առան «Սասնա ծռեր»-ի վրա (վրացիները ներկայացրին Շոթա Ռուսթավելու «Վազրենավորը», ազերները՝ պարսիկ Նիզամի Գյանջևիին, ռուսները՝ «Իլյա Մուրոմեցը» և այլն), «մերոնք» հստակ հրահանգ ստացան, որ ներկայացված նյութը իր վաղեմությամբ չպետք է գերազանցի մեր «մեծ եղբոր»՝ ռուսների հոբելյանական նյութին, ուստի խորհրդահայ էպոսագիտությունը «Սասնա տուն» էպոսը երկնքից իջեցրեց գետնին՝ այն համարելով ընդամենը հազար տարվա ստեղծագործություն և տեղայնացնելով արաբական խալիֆաթի դեմ հայ ժողովրդի մղած պայքարի շրջանակում, աստվածներին նույնացրեց VIII-IX դարերի պատմական գործիչների հետ (Քեռի Թորոս՝ Թեոդորոս Ռշտունի, Բաբը Ֆրենկ՝ Հռոմի պապ և այլն), Խաչ Պատարագին՝ համադրեց քրիստոնեության

խաչի ու պատարագի հետ, այն դեպքում, երբ Հ.Թումանյանի, Հովսեփ Օրբելու և մեր օրերում՝ մշակութաբան Արթուր Արմինի գնահատմամբ այն թաքնագրված տիեզերամեկնության՝ տիեզերագիտության, աստղագիտության նախաստեղծ գոյաբանության աշխարհընկալման քրմական գիտելիքի ընդհանրացում է, որը, քրիստոնեության կողմից արգելվելով, պահպանվել է ժողովրդական հիշողության մեջ (Արմին Ա., 2007):

Դասեր քաղելով Վիլիամ Շեքսպիրի ծննդյան 450-ամյակի միջոցառումներից, որի ընթացքում պարզվեց, որ ԽՍՀՄ հանրապետությունների մեջ Շեքսպիրին առաջինը հայերն են թարգմանել (Հ.Մասեհյան), Կրեմլը բացիեբաց որոշում ընդունեց, որ արտասահմանյան որևէ նշանավոր երկ ԽՍՀՄ-ում նախ՝ պետք է թարգմանվի ռուսաց լեզվով, հետո՝ մյուս ազգերի: Միջնադարյան ֆեոդալական այս «առաջին գիշերվա իրավունքը» պահպանվեց մինչև խորհրդային համակարգի փլուզումը:

Կոնկրետ մշակութաբանության ոլորտում գիտությունը խարխափում էր լեզվի ստալինյան տեսության հորինվածքում: Կրեմլը, Ադրբեջանը, Վրաստանը, թևավորվելով հայր Ստալինի «դասակարգային պայքարը գնալով սրվում է» զառանցանքով, հայագիտության ոլորտը կառավարում էին ձևավորած «գիտական հեղինակությունների» միջոցով՝ Մ.Բ. Պիոտրովսկի, Ի.Մ. Դյակոնով, Գ.Մելիքիշվիլի, Զ.Բունիաթով, Ազիզբեկովա խանում և այլք, որոնք ծրագրված խեղաթյուրում էին հայ ժողովրդի տասնյակ հազարավոր տարիների անցյալ ունեցող պատմությունը, ստեղծվում էին անհարիր տեսություններ: 1920-1930-ական թվականների կոմունիստական մամլակը ոչնչացրել էր հայ իսկական մտավորականությանը և կրթօջախներում ու Գիտությունների ակադեմիայում նրանց փոխարինել հեշտ կառավարելի «բանվորագյուղացիական մտավորականությամբ» (Джаошвили В., 1968):

Թեև հայոց պատմությունը շարադրվում էր օտարների կողմից, բայց ջանասիրաբար հետևորդներ էին աճեցնում ազգությամբ հայ մասնագետներից: Ուրարտուն օտարվեց Արարատ գաղափարից, բայց հռչակվեց Ադրբեջանում,

Վրաստանում ու Հայաստանում բնակվող ժողովրդների ու ազգությունների նախահայրենիք, և Հայաստանում կատարված պեղումների արդյունքները բաժանվում էին երեք հանրապետությունների միջև:

Այսօր փորձե՛ք որևէ հայ պատմաբանի հետ խոսակցություն վարել «Ուրարտու-Արարատյան թագավորություն» ըմբռնումների նույնականության մասին, պատմության թանգարանում փորձե՛ք խոսք բացել ցուցադրանքի օտարամետ մեկնաբանությունների մասին, փորձե՛ք բարձրացնել հայ ժողովրդի բնիկության խնդիրը և այն կապել Հայկական լեռնաշխարհում ձևավորված պետությունների՝ հայ ժողովրդի ու նրա մշակույթի հետ, Պատմական Հայաստանի տարածքում պեղված արժեքների հայկականության մասին, հայ-շումերական, հայ-եգիպտական, հայ-խեթական, հայ-էտրուսկյան և այլ լեզվամշակութային կապերի մասին, համաշխարհային մշակույթի ձևավորման գործում հայկական մշակույթի ներդրման ծավալի մասին, վերջապես փորձե՛ք խոսել Քարահունջի աստղադիտարանի ու Սյունիքի ժայռագրերի մասին և դուք **հայկական մշակույթի բազմաթիվ մասնագետների կողմից կհանդիպեք մարտնչող դիմադրության**: Այսօր այս ոլորտները ներկայացված են հայկականությունն աղավաղող գիտելիքի տեսքով, որը համապատասխան տեղ է գտել մերօրյա դպրոցական դասագրքերում: Հայաստանի ակադեմիական ոլորտի մշակութաբանները՝ ազգագրագետներ, լեզվաբաններ, հնագետներ, պատմաբաններ, մեջքով են կանգնած հին պատկերացումները հեղաշրջող հայկական հայտնագործությունների ու գիտական նորագույն դարակազմիկ բացահայտումների հանդեպ: Բայց եթե մի կողմ թողնելով շահադիտական նպատակներն ու վերամբարձ կեցվածքը, նրանք միավորվեին գիտականորեն ճշմարիտ տեսակետերի շուրջ, և ամեն մեկը կարողանար մեջտեղ բերել գիտության մեջ իր հավաքագրած այն փաստերը, որոնց մասին խոսում է միայն մտերիմների հետ կամ ընդհանրապես չի խոսում՝ պատկերն արագորեն կփոխվեր:

Ըստ օտարների կողմից մեզ պարտադրված և ամենուրեք տարածված տեսակետի՝ Հայկական լեռնաշխարհում հայերը հայտնվեցին մ.թ.ա.VI դարում և տապալելով Ուրարտական պետությունը՝ ստեղծեցին հայկականը: Այս տեսության կողմնակիցները նույնքան միասնաբար չեն կարողանում նշել այն պատմական տարածքները, որտեղ ձևավորվել և Հայաստան է եկել հայ ժողովուրդը, մշակույթի այն ծավալն ու սահմանները, որ նշված վայրերում հայը թողել է իրենից հետո (նշվում են Փոյուզիան, Բալկանները, անգամ հայերին հորջորջում են ծովային ժողովուրդ (Дьяконов М., 1968): Բայց նրանց համար կարևորը հայ ժողովրդի եկվորության տեսության առաջադրումն էր, իսկ դրա հիմնավորման վրա ոչ ոք գլուխ չի ցավեցրել, քանի որ փաստեր չկան:

Ակադեմիական լեզվաբանությունը հետևողականությամբ մի կողմ է թողնում և չի զարգացնում հնդեվրոպական լեզուների հանդեպ հայոց լեզվի վաղեմության, Հայկական լեռնաշխարհում ձևավորված հնագույն մշակույթների, հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական լեզուների հետ հայերենի բառապաշարային սերտ ընդհանրությունների վերաբերյալ թեմաները, իսկ շումերերենի, խեթերենի, ուրարտերենի, բասկերենի, էտրուսկերենի և այլ լեզուների հետ հայերենի ակնհայտ ընդհանրությունները հաստատող օտար լեզվաբաններից շատերը՝ Յ. Կարստ, Պ. Յանսեն, Հ. Պեդերսեն, Ռ. Էլլիս, Ս. Բուզգե, Է. Լիդեն, Է. Գիլ, Է. Ս. Դոջսոն, Բ. Է. Լասա, Է. դե Գարիբայ, Ա. դե Պոսա, Բ. դե Էչավե, Վ. Շտիբին Մ. դը Լաֆայետ և ուրիշներ, մինչև այսօր անհայտ են հայ ընթերցողին և անգամ շատ լեզվաբանների, քանի որ հետևողականորեն չեն ավանդվել մեզանում:

Հայոց լեզվի խնդիրներում թույլ տված աղավաղումների պատճառով այսօր զգալիորեն անհամաչափ են երևում թե՛ ներլեզվաընտանիքային, թե՛ միջլեզվաընտանիքային կապերն ու ընդհանրությունները, քանի որ կոնկրետ հայերենի դեպքում, հենց պատմահամեմատական լեզվաբանության սկզբունքների առումով, հասկանալի չէ, թե ինչպես կարող է նոստրատիկ ընդհանրությունների քանակը գերազանցել ցեղակցականին (ռապանուի լեզվի

հետ՝ շուրջ 3 000 բառ և արտահայտություն, բաակերենի հետ՝ 1000-ից ավելի, շումերերենի հետ՝ շուրջ 2500 և այլն), իսկ հնդեվրոպական ընտանիքի բոլոր լեզուների հետ՝ ընդամենը շուրջ 1000 բառ և արմատ):

Հետխորհրդային ոչ ակադեմիական հայագիտության մեջ հակասությունների պարզաբանման ներքևից սկսած այս գիտական շարժումը զգալի առաջընթաց արձանագրեց նաև մշակութաբանության մյուս ոլորտներում: Դրա համար նպաստավոր եղավ Թ.Գամկրելիձեի և Վ.Իվանովի ուսումնասիրություններում Հայկական լեռնաշխարհի հոչակումը որպես հնդեվրոպական լեզուների նախահայրենիք, որով հերքվեց հայերի եվրոպական կեղծ տեսակետը: Նշանավոր եղան Այունիքի ժայռապատկերների ոլորտում Համլետ Մարտիրոսյանի հետազոտությունները, որոնցում գործադրելով հին գրերի վերձանման մեթոդներ (համանունների և ռեբուս), նա բացահայտեց, որ ժայռապատկերները գրային համակարգ են, ունեն հայկական լեզվամտածողություն և ստեղծման 15-12000 տարվա ներքին շեմ (**Մարտիրոսյան Հ., 2023**):

Շումերագետ Վիլեն Սաֆարյանը (**Սաֆարյան Վ., 2003**), Այգեկ Վայմանի մատնանշած համանունների և ռեբուսի մեթոդներով բացահայտեց հարյուրավոր հայ-շումերական համանունների շարքեր, իսկ Արմեն Դավթյանը շուրջ եկու տասնամյակ տևած իր հետազոտությունների մեջ (**Դավթյան Ա., 2014**) հրատարակեց հայ-շումերերեն 2250 ընդհանրություն, որի առկայությունը պայթեցնում է հնագույն լեզուներից հայերենի իբր կատարած փոխառությունների ստահող պնդումը: Այս աշխատություններում վերը նշված ծագումնաբանության որոշման մեթոդների կողքին Ա.Դավթյանը մշակեց *դարձվածքների, բազմիմաստ բառերի և հոմանիշների մեթոդները՝ գիտականորեն համալրելով հնագույն լեզուների հետ նույնությունների բացահայտման պատմահամեմատական քերականության մեթոդների զինանոցը*:

Նույն կերպ երկու տասնյակից ավելի տարիների ընթացքում հետազոտելով հայերենի և *ռապանուերենի* (պոլինեզիական լեզուներ) ընդհանրությունները՝

Լ.Ստեփանյանը (**Ստեփանյան Լ., 2015**) 6000 բառ պարունակող բառարանում բացահայտեց շուրջ 3000 հայերեն համարժեքներ: Ուսումնասիրության մեջ զուգահեռաբար ներկայացվում են բառային, քերականական և հնչյունական ապշեցուցիչ համապատասխանություններ: Առեղծված է, թե ինչպես է մեկնաբանելու ակադեմիական լեզվաբանությունն այն փաստը, թե ի՞նչ պայմաններում է ընդամենը 8-9000 տարվա վաղեմությամբ հնդեվրոպական ընտանիքից «գատված» հայերենի և 40-50000 տարվա պատմություն ունեցող ռապանոսի լեզվի միջև ստեղծվել 3000 համարժեք բառ ու արտահայտություն, երբ նրանց միջև անգամ հարևանության գործոն չի եղել, որպեսզի դրանք մեկնաբանվեին որպես հայերենի կատարած փոխառություններ:

Այս խնդիրների վերհանման և լուծման ճանապարհին ուշադրության արժանի է նաև Վ.Ներսեսեանի «Խեթերեն, թե՛ հայերեն» (**Ներսեսեան Վ., 2013**), Ս.Աղաջանյանի «Գաղտնագերծված հայալեզու կայսրություն» հետազոտությունները (**Աղաջանյան Ս., 2022**), որտեղ հեղինակները, իբրև աջակից ունենալով Պ. Ենսենի, Յ.Կարստի և այլոց ուսումնասիրությունները, խեթական հայտնի տեքստերի վերծանման ճանապարհին լուրջ բանավեճի մեջ են մտնում հայտնի խեթագետներ Գ.Մելիքիշվիլու, Գ.Վինկլըրի, Ա.Սեյսի, Է.Ֆոոերի, Բ.Հոզնու, Տ.Բրայցեի, Ա.Ե.Քիմբրլի, Ու.Պ. Լեհմանի, Զ.Սլոկումի և Զ.Քիլըրի հետ, բացահայտում են լեզվաբանական գիտության շղարշի տակ հայ-խեթական համալեզվության դեմ իրականացված մի շարք մեղանչումներ:

Այս առումով ուշագրավ են հայերեն-բասկերեն ընդհանրությունների վերաբերյալ Վ. Սարգսյանի հետազոտությունները (**Սարգսյան Վ., 2000**), որոնք նա ավելացնում է տասնյակի հասնող լեզվաբանների հայտնագործություններին՝ մատնանշելով շատ ավելի սերտ կապեր, քան ենթադրվում են անգամ նույն լեզվաընտանիքին պատկանող լեզուների միջև: Ավանդական լեզվաբանությունը այլևս չի կարող վարչահրամայական եղանակով մերժել նման դարակազմիկ հետազոտությունների արդյունքները, կամ էլ ուղղակի լռության մատնել դրանք, ինչպես վարվել է մինչ օրս, քանի որ նշված արդյունքները պաշտպանվում են

մշակութաբանական հարակից գիտությունների գերժամանակակից մեթոդներով ստացված փաստերով:

Ավանդական լեզվաբանության շրջանակներում ուսումնասիրություններ են կատարվել հայերենի և այլ լեզուների միջև, և բացահայտվել բազմաթիվ ընդհանրություններ (խեթական, հուրրիական, էտրուսկյան, թուրանյան, պելասգյան և այլն), սակայն ո՛չ ընդհանուր լեզվաբանության, ո՛չ էլ հայագիտության ոլորտի լեզվաբանները դրականորեն չեն արձագանքել դրանց, բացի նշանավոր լեզվաբան Է. Աղայանից, որն իր «Հայ լեզվաբանության պատմություն» աշխատության մեջ մանրամասնությամբ ներկայացրել է այդ տեսությունները, սակայն թեմայի ամփոփման ավարտին քննադատել դրանք խորհրդային լեզվաբանության դիրքերից՝ կարծես ջանալով հայերենի հարցում առանձնապես չտարբերվել համաշխարհային ակադեմիական լեզվաբանության ձևակերպումներից (Աղայան է., 1958, 1962):

(Սույն աշխատության հետագա շարունակությունը նվիրված է նշված հարցերի առավել մանրամասն պարզաբանմանը):

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով լեզվաբանության պատմության, լեզվաբանական գենետիկայի, պատմահամեմատական լեզվաբանության և այլ ոլորտի աշխատություններ՝ արձանագրում ենք.

1. Հայերենի նյութի հետազոտական աշխատանքներ տեղի են ունեցել լեզվաբանության զարգացման ողջ ընթացքում:

2. Անկախ հետազոտության կոնկրետ եզրակացությունից՝ շատ դեպքերում օբյեկտիվորեն նշվել են հայերենի բացառիկ առանձնահատկությունները, որոնք նրան տարբերում են աշխարհի այլ լեզուներից: Ցավոք, այդ առանձնահատկությունները, որպես կանոն, չեն հետազոտվել մինչև վերջ, մինչդեռ հենց դրանցում են ամփոփված հայերենի ինքնատիպ իրականությունների գիտական գնահատման գաղտնիքները:

3. Բացի բացառիկ լեզվաբաններից՝ Պ.Ենսեն, Յ.Կարստ, Ս.Բուզգե, Հ.Հյուբշման, Պեդերսոն և ուրիշներ, որոնք պայքարել են իրենց տեսությունների պաշտպանության դիրքերում, մյուսներից շատերի հետազոտության մեջ արվել են նաև նյութից չբխող եզրահանգումներ, անգամ տեքստային խեղումներ: Եվ քանի որ նման երևույթներ նկատվել են հայ մշակութաբանության բոլոր ոլորտներում, դրանք համատեղ պայմաններ են ստեղծել հայոց լեզվի, հայ ժողովրդի պատմության և մշակույթի վերաբերյալ կեղծ, հակազիտական գնահատումներ պարունակող բացասական բնույթի եզրահանգումների համար, որոնք բխել են ոչ թե նյութից, այլ համաշխարհային մեծ քաղաքականությունից, այդ պատճառով նաև լայնորեն շրջանառվել են ակադեմիական լեզվաբանության կողմից և տևականորեն խանգարել ու խանգարում են հայագիտության օբյեկտիվ զարգացմանը: Նրանք հետևողականորեն անտեսել, լուրջան են մատնել կամ քննադատել բոլոր այն նորովի բացահայտումները, որոնց արդյունքները հակադիր են համարվել իշխող պատմահամեմատական լեզվաբանությանը և հնդեվրոպաբանությանը:

4. Այսօր հասարակական-քաղաքական տարբեր տեղաշարժերի պատճառով աշխարհում իրադրություն է փոխվում, որի հետևանքով հասարակական և բնագիտական մշակութաբանական մի շարք ուղղությունների տարբեր ոլորտներում կատարած գիտական բացահայտումները զգալիորեն թուլացրել են լեզվաբանության և մասնավորապես հայերենագիտության մի շարք հարցերի նախկին պատկերացումների հիմքերը: Դրանց զուգահեռ վերջին շրջանում հայ լեզվաբաններն ու մշակութաբանները լուրջ հայտնագործություններ են կատարել, որոնք փոխում են մի շարք այլ լեզուների և հայերենի միջև եղած նյութական ընդհանրությունների բնութագրությունները և տալիս մշակութաբանական մի շարք խնդիրների հստակ լուծումներ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աղայան Է. (1958)**, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ.:
2. **Աղայան Է. (1962)**, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Երևան, ԵՊՀ հրատ.:
3. **Աղաջանյան Ս. (2022)**, Գաղտնագերծված հայալեզու կայսրություն, Երևան, Հեղինակային հրատ.:
4. **Արմին Ա. (2007)**, Հնագույն հեթանոսական Աստվածաշունչ Սասնա ծռեր էպոսը, հ. 1, Լոս Անջելես, «Սփյուռք» հրատ.:
5. **Դավթյան Ա. (2014)**, Հայերեն-շումերերեն ընդհանրությունների բառարան, Երևան, Հեղինակային հրատ.:
6. **Մարտիրոսյան Հ. (2023)**, Հայկական ժայռապատկերների և հին աշխարհի գրային համակարգերի ծագումնաբանական առնչությունները, academia.edu, <http://www.iatp.am/culture/articles/martirosyan-am.pdf>:
7. **Ներսեսեան Վ. (2013)**, Խեթերե՞ն, թե՛ հին հայերեն, Երևան, Գասպրինտ:
8. **Ջահուկյան Գ. (1960)**, Լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ.:

9. **Ջահուկյան Գ. (1962)**, Լեզվաբանության պատմություն, հ. 2, Երևան, ԵՊՀ հրատ.:
10. **Սարգսյան Վ. (2000)**, Բասկերի ծագման առեղծվածը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, «Ասողիկ» հրատ.:
11. **Սաֆարյան Վ. (2003)**, Որոնումներ «մեռած» լեզուների պանթեոնում, Երևան, «Գլաճոր» կառավարման համալսարան:
12. **Ստեփանյան Լ. (2015)**, «Հայ-պոլիներգյան լեզվամշակութային ընդհանրություններ», Երևան, «Յասոն» հրատ.:
13. **Дьяконов М. (1968)**, Предыстория армянского народа, Ереван, Издательство АН Армянской ССР.
14. **Джаошвили В. (1968)**, Население Грузии: экономико-географическое исследование. Тбилиси, Официальные данные Всесоюзных переписей населения в СССР в 1926 – 1979 гг.

## REFERENCES

1. **Aghayan E. (1958)**, Hay lezvabanowt'yan patmowt'yown /History of Armenian Linguistics/, vol. 1, Yerevan, YSU ed.
2. **Aghayan E. (1962)**, Hay lezvabanowt'yan patmowt'yown /History of Armenian Linguistics/, vol. 2, Yerevan, YSU ed.
3. **Aghajanyan S. (2022)**, Gaghtnazerc'vac' hayalezow kaysrowt'yown /Declassified Armenian Empire/, Yerevan, Author's ed.
4. **Armin A. (2007)**, Hnagowyn het'anosakan Astvac'ashownch Sasna c'r'er e'posy' /The Ancient Pagan Bible the Epic Poem "Daredevils of Sassoun"/, vol. 1, Los Angeles, "Diaspora" Public-cultural publishing house.
5. **Davtyan A. (2014)**, Hayeren-showmereren y'ndhanrowt'yownneri bar'aran /Dictionary of Armenian-Sumerian Generalities/, Yerevan, Author's ed.
6. **Martirosyan H. (2023)**, Haykakan jhayr'apatkernereri & hin ashxarhi grayin hamakargereri c'agowmnabanakan ar'nchowt'yownneri' /Genealogical

- Relationships of Armenian Rock Paintings and Ancient World Writing Systems/, academia.edu, <http://www.iatp.am/culture/articles/martirosyan-am.pdf>.
7. **Nersesian V. (2013)**, *Xet'ere'n, t'e' hin hayeren /Hittite or Ancient Armenian/*, Yerevan, Gasprint.
  8. **Jahukyan G. (1960)**, *Lezvabanowt'yan patmowt'yown /History of Linguistics/*, vol. 1, Yerevan, YSU ed.:
  9. **Jahukyan G. (1962)**, *Lezvabanowt'yan patmowt'yown /History of Linguistics/*, vol. 2, Yerevan, YSU ed.:
  10. **Sargsyan V. (2000)**, *Baskeri c'agman ar'eghc'vac'y' & Haykakan ler'nashxarhy' /The Mystery of the Origin of the Basques and the Armenian Highlands/*, Yerevan, "Asoghik" ed.
  11. **Safaryan V. (2003)**, *Oronowmner «mer'ac'» lezowneri pant'eonowm /Investigations in the Pantheon of "Dead" Languages/*, Yerevan, "Gladzor" University of Management.
  12. **Stepanyan L. (2015)**, «Hay-polinezyan lezvamshakowt'ayin y'ndhanrowt'yownner» /"Armenian-Polynesian Linguistic and Cultural Commonalities"/, Yerevan, "Jason" ed.:
  13. **Dyakonov M. (1968)**, *Predystoriya armyanskogo naroda /Prehistory of the Armenian People/*, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR.
  14. **Jaoshvili V. (1968)**, *Naseleniye Gruzii: ekonomiko-geograficheskoye issledovaniye /Population of Georgia: Economic and Geographical Study/*. Tbilisi, Official Data of the All-Union Population Censuses in the USSR in 1926 - 1979.

Грачик Акобджанян

Искусственные проблемы арменоведения в академической науке

Заключение

**Ключевые слова и выражения:** язык, культура, языковые общности, культурные искажения, научные реставрации.

Статья исследует целый клубок изначально лженаучных формулировок в области арменоведения, посредством которых в академическом языкознании сложилось ложное представление о соотношениях армянского языка с другими языками мира. Сравнительно-историческое языкознание в принципе не должно мириться с таким положением вещей, поскольку число ностратических сходств армянского с другими языками мира гораздо больше, чем число сходств со всеми вместе взятыми индоевропейскими языками. В последнее время положение ещё больше обострилось из-за открытий, сделанных со стороны новых направлений языкознания, вследствие которых растёт возраст армянского как самостоятельного языка, доказывается факт самобытности армян на Армянском плато, не выдерживает никакой критики вопрос о единичности армянского языка на армянской ветви в индоевропейской языковой семье, во-первых, из-за ненаучного отчуждения друг от друга армянского и хетто-лувийского ветвей, во-вторых, в силу исключительного тождества шумерского и баскского языков (которые не считаются индоевропейскими), с армянским, соотношения которых не ностратические, а генеологические. В статье ставится вопрос о том, чтобы академическое языкознание или по-научному интерпретировало эти противоречия, или признало свои исторически допущенные оплошности по отношению армянского языка.

**Hrachik Hakobjanyan****Artificial problems of Armenian studies in academic science****Conclusion**

**Key words and expressions:** *language, culture, linguistic generalities, cultural distortions, scientific reconstructions.*

The article touches upon a situation in the field of Armenian studies, which was initially created as a bogus receiving pseudo-scientific formulations, which in academic linguistics led to a false image of the commonalities of Armenian and the languages of the world. Historical-comparative linguistics should not accept the situation in which the number of Nostratic commonalities connecting Armenian to single non-Indo-European languages is greater than the number of the commonalities it has with all the Indo-European languages together. This has no interpretation in the framework of previous conceptions, and a new framework has not yet been proposed. By not raising the problem or avoiding it, linguistics cannot solve it. Recently, the situation has been intensified by the exceptional discoveries made by a number of new linguistic directions, according to which the age of Armenian as an independent language is increasing, the issue of the indigenusness of Armenians in the Armenian Highlands is proven. The image of the Armenian language branch in the Indo-European language family should also be changed, firstly, due to the unscientific alienation of the Armenian and Khetaluvian language branches, secondly, due to the extensive sameness of Sumerian and Basque (which have not been considered Indo-European so far) with Armenian (which is considered Indo-European), thus being presented as languages of the Armenian branch. The article poses the problem that academic linguistics should either scientifically interpret these inconsistencies, or accept the historical mistakes it has made in relation to the Armenian language.

**Հրաչիկ Հակոբջանյան** – Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի լեզվաբանության ամբիոնի դոցենտ, բան. գիտ. թեկն.:

Գիտական հետաքրքրությունները՝ լեզվաբանություն, մշակութաբանություն, փիլիսոփայություն, մանկավարժություն: Հեղինակել է 60-ից ավելի գիտական հոդվածներ: [hrachyahak@gmail.com](mailto:hrachyahak@gmail.com)

**Грачик Акобджанян** – БГУ, преподаватель кафедры языкознания, к.ф.н., доцент. Научные интересы: лингвистика, культурология, философия, педагогика: Автор более 60-и научных статей. [hrachyahak@gmail.com](mailto:hrachyahak@gmail.com)

**Hrachik Hakobjanyan** – Lecturer at the Chair of Linguistics of Brusov State University, PhD, Associate Professor. Scientific interests: linguistics, cultural studies, philosophy, pedagogy. Author of more than 60 scientific articles. [hrachyahak@gmail.com](mailto:hrachyahak@gmail.com)

*Խմբագրություն է ուղարկվել 10.11.2024թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 23.11.2024թ.*

*Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.*

## ԼԻԼԻԹ ՊԱՊԻԿՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ  
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.121

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հայ նորագույն գրականության մեջ Գ. Սարյանը ստեղծել է բանաստեղծական ինքնատիպ աշխարհ, թողել գրական հարուստ ժառանգություն: Այս առումով խիստ կարևորվում է նրա ստեղծագործության ուսումնասիրությունը: Սարյանի ստեղծագործություններում նկարագրվող յուրաքանչյուր երևույթի մեջ դրսևորվում են հեղինակի վերաբերմունքը, անմիջական ապրումը: Հայտնի է, որ գրողի բառապաշարի հանգամանալից ուսումնասիրությունը կարևոր է տվյալ հեղինակի երկերի լեզվի մասին պատկերացում կազմելու համար: Ուստի սույն հոդվածում անհրաժեշտ ենք համարում լեզվաոճական քննության ենթարկել Գեղամ Սարյանի չափածոյի բառապաշարը, տվյալ դեպքում՝ ժողովրդախոսակցական և բարբառային բառերը, քանի որ դրանց համակողմանի քննությունը հնարավորություն է տալիս ստանալու հեղինակի լեզվի, գրողական վարպետության ամբողջական պատկերը: Գ. Սարյանի ստեղծագործության լեզուն աչքի է ընկնում հայերենի բառապաշարի ժողովրդախոսակցական, բարբառային շերտերի, դրանց քերականական և ոճական դրսևորումների հաջող կիրառությամբ ու ինքնատիպությամբ: Հեղինակի կողմից բառերի, հատկապես առանձին բառաշերտերի ընտրությունը հիմնականում պայմանավորված է ստեղծագործության բովանդակությամբ: Գրողի երկերի բառապաշարի ուսումնասիրությունը ենթադրում է նաև տարբեր բառաշերտերի արտահայտչական դերի և ոճական երանգավորման քննություն, իսկ ոճական երանգավորում, ինչպես գիտենք, կարող են ունենալ լեզվի

բառապաշարի ամենատարբեր շերտերը: Գ. Սարյանի երկերի լեզվական ատաղձը միագույն ու միատարր չէ: Նկատի ունենալով հեղինակի բանաստեղծական խոսքում յուրաքանչյուր բառային միավորի գործածության ոճական նպատակադրումը՝ կարող ենք ասել, որ Գեղամ Սարյանի չափաձոյում առանձնանում են ժողովրդախոսակցական և բարբառային բառաշերտերը:

Բանաստեղծի չափաձոյի խոսքարվեստում ժողովրդախոսակցական բառաշերտը իր մատչելիությամբ և հասկանալիությամբ յուրահատուկ տեղ է գրավում տարածական սահմանափակություն ունեցող բարբառային բառերի համեմատությամբ՝ ունենալով ակնհայտ առավելություն:

Սարյանի երկերում **ժողովրդախոսակցական և բարբառային բառերը** գործածվում են և՛ հեղինակի, և՛ հերոսների խոսքում: Այդ գործածությունները ոճականորեն ճիշտ են և արդարացված. նպաստում են գրողի խոսքի ժողովրդայնացմանը, ստեղծում առավել մտերմիկ և կենդանի միջավայր: Հեղինակը գործածում է ինչպես ժողովրդին ծանոթ, հայտնի, այնպես էլ իրենց գրական համարժեքը չունեցող խոսակցական, բարբառային բառեր, որոնք ոչ միայն շեշտում են կերպարների սոցիալական նկարագիրը, այլև երբեմն օգնում են բանատողերի հանգավորմանը:

***Բանալի բառեր և արտահայտություններ.** Գեղամ Սարյան, բառապաշար, չափաձո, ժողովրդախոսակցական բառեր, բարբառային բառեր, լեզվաոճական քննություն, հեղինակի խոսք, հերոսի խոսք, ստեղծագործություն:*

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային շրջանի հայ գրականության մեջ Գեղամ Սարյանի ստեղծագործությունը գրավում է առանձնահատուկ տեղ: Գեղամ Սարյանի և նրա չափաձոյի ընդհանուր նկարագիրը արտահայտված է մտերիմ ընկերոջ՝ Համո Սահյանի հետևյալ տողերում. «Քո երգի մեջ մեղմություն կա մի անհաս, // Մեղմության մեջ՝ անմարելի մի կրակ... // Դու ինձ համար եղել ես ու կմնաս // Բանաստեղծ ու մարդ լինելու օրինակ» (Սարյան Գ., 1971): Գեղամ Սարյանը (Գեղամ Բաղդասարյան, 1902-1976) ծնվել է Իրանի Թավրիզ քաղաքում: Նա

սովորել է տեղի թեմական կենտրոնական դպրոցում, եղել Հ. Աճառյանի աշակերտը: Անսահման էր հայրենիքի կարոտը, ոգեշունչ՝ նրա մշտական, պաշտամունքի հասնող սերը Հ. Թումանյանի, Պ. Դուրյանի, Վ. Տերյանի չափածոյի, ինչպես նաև պարսկական բանաստեղծության հանդեպ: Ինքնակենսագրական տողերից մեկում Սարյանը խոստովանում է. «Եթե Դուրյանն ու Տերյանն ինձ կաշառել էին իրենց խոր հուզականությամբ, իսկ Թումանյանն իր ժողովրդական ոգով, գեղեցիկ ոճով ու սրտամոտ զգացմունքներով, ապա պարսիկ պոետներն ինձ կախարդել էին իրենց խորությամբ, իմաստնությամբ ու գունագեղությամբ» **(Սարյան Գ., 1969)**: Սարյանը խորապես համոզված էր, որ միայն մայր հայրենիքի գրական շրջանակում կարող է լրջորեն զբաղվել գրական-ստեղծագործական աշխատանքով, միայն հայրենիքի գրական մթնոլորտը կարող է նպաստել իր գրական գործունեությանը: Եվ 1922թ. նա գալիս է Հայաստան:

Գ. Սարյանը Հայաստանի գրողների այն սերնդից է, որի գրական գործունեությունը սկսվել է Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելու ժամանակ: 1927-1928թթ. աշխատել է «Ավանգարդ», «Մաճկալ» (Երևան), 1928-1931 թթ.՝ «Բանվոր» (Լենինական) թերթերում, 1934-1935թթ.՝ «Խորհրդային գրականություն» ամսագրում, այնուհետև զբաղվել է բացառապես ստեղծագործական աշխատանքով:

Հայաստանում նա գրական ասպարեզ է մտնում այն ժամանակ, երբ գոյություն ուներ գրական խստապահանջ մի մթնոլորտ: Գեղամ Սարյանն իր գրական գործունեությունն սկսում է «Շիրակի հարսանիքը» պոեմով, որը լույս է տեսել 1925թ., իսկ 1930թ.՝ բանաստեղծությունների ժողովածուն՝ «Երկիր Խորհրդային»-ը: Այնուհետև հրատարակվել են Սարյանի քնարական երգերի, բալլադների, պոեմների ժողովածուները՝ «Երկաթե ոտնաձայներ», «Միջօրե», «Գյուլնարա», «Բալլադներ», «Քրիզանթեմ», «Մտերիմ էջեր»: Սարյանը «Թերթելով կյանքիս էջերը» ինքնակենսագրական հուշերում գրում է. «Եվ եթե ինձ հարցնեն, թե ինչ բովանդակություն ունեն իմ ստեղծագործությունները, ես կպատասխանեմ, որ նրանց մի մասը հանդիսանում է իմ կենսագրությունը, միա-

հյուսված իմ ծննդավայր Իրանի կենսագրության հետ, իսկ մյուս մասը՝ դարձյալ իմ կենսագրությունը՝ միահյուսված իմ հայրենիքի կենսագրության հետ» (**Սարյան Գ., 1969**): Գեղամ Սարյանը միայն բանաստեղծությունների և պոեմների հեղինակ չէ. նա գրել է նաև պատմվածքներ, դրամաներ, վիպակներ: Նրա ավանդը նշանակալից է նաև թարգմանական գրականության մեջ: Նա ինքնուրույն ստեղծագործությանը զուգահեռ շարունակ թարգմանություններ է կատարել աշխարհի լավագույն բանաստեղծներից՝ Գյոթեից, Պուշկինից, Լերմոնտովից, Հայնեից, Սաադիից, Բայրոնից: Հեղինակի բանաստեղծություններով ստեղծվել են շատ երգեր, որոնց երաժշտությունը գրել է նշանավոր երգահան Աշոտ Սաթյանը: Այսպես՝ 1945 թ. «Սովետական Հայաստան» վավերագրական կինոնկարի համար է գրվել «Մարտիկի երգը», որը հայտնի է նաև «Կարոտ» անվանումով:

Այս աշխատանքի համար փաստական նյութ ենք ընտրել Սարյանի գրեթե ողջ բանաստեղծական ժառանգությունը, քանի որ բանաստեղծի բառապաշարի լեզվաոճական իրողությունները ակնհայտ են դառնում հատկապես ստեղծագործական ամբողջականության մեջ: Հարկ ենք համարել քննել «Հրաշալի սերունդ» չափածո վեպը (**Սարյան Գ., 1950**): Հոգվածում փորձել ենք հնարավորինս տարանջատել հեղինակի և հերոսների խոսքերը՝ առանձնացնելով և ընդգծելով դրանց բաղադրատարրերի կիրառական յուրահատկությունները:

### ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այն պայմանավորված է ուսումնասիրվող նյութի խնդիրներով և նպատակով: Գ. Սարյանի չափածոն քննելիս կիրառել ենք նկարագրական, վերլուծական, տարաժամանակյա և համաժամանակյա մեթոդները՝ անհրաժեշտության դեպքում դրանք համադրելով:

### ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ժողովրդախոսակցական բառաշերտը անսպառ հնարավորություններ է ստեղծել հայ գրողներից շատերի համար: Ժողովրդախոսակցական բառերի նպատակահարմար և տեղին գործածությունը կախված է գրողի շնորհից ու

հմտությունից: Գ. Սևակը այն կարծիքին է, որ «Ժողովրդայնություն տվողը բաները չեն, այլ հարազատ, ժողովրդային լեզվամտածողությունը, պարզ, ոչ շինծու լեզուն, որ տրվում է հարազատ ժողովրդի կենդանի խոսքի ուշադիր դիտումով և հմուտ օգտագործմամբ» (**Սևակ Գ., 1948**): Անդրադառնալով գրական լեզվի հարցերին՝ լեզվաբան Վ. Առաքելյանը գրում է. «Բավական է գրական լեզուն պարսպվի ժողովրդից, կտրվի նրա կենդանի, առողջ ու հյութեղ խոսքի միջավայրից, կդատապարտվի մահվան» (**Առաքելյան Վ., 1954**): Նշենք, որ ժողովրդախոսակցական և բարբառային բառաշերտերի միջև երբեմն դժվար է սահմանագատում կատարել: Դրանց առանձնացումը դժվարանում է նաև նրանով, որ բարբառային շերտի որոշ բառեր աստիճանաբար անցնում են ժողովրդախոսակցական լեզվին, այստեղից էլ՝ գրական: Սարյանի ստեղծագործություններում հանդիպող ժողովրդախոսակցական մի շարք բառերի վերաբերյալ տարբեր բառարանագիրների կարծիքները, նշումները չեն համընկնում: Օրինակ՝ **շվաք** (**Սարյան Գ., 1969**) բառը Ստ. Մալխասյանցը չի ընդգրկում իր բառարանում (**Մալխասեանց Ս., 1944, 1945**), «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» ունի «բարբառային» նշումը (**ԺԼԲԲ, 1980**), իսկ էդ. Աղայանը համարում է ժողովրդական (**Աղայան Է., 1976**): **Չոքել** (**Սարյան Գ., 1969**) բառը Ստ. Մալխասյանցի բառարանում նշում չունի, ըստ ԺԼԲԲ-ի՝ խոսակցական է (հատոր 4, էջ 142), ըստ էդ. Աղայանի բառարանի՝ «գավառական» (**ԺԼԲԲ, 1974**): Այսպիսի բառերի շարքը կարելի է անվերջ շարունակել: Այնուամենայնիվ, եթե ոչ ճշգրտորեն, ապա մոտավոր սահմաններում կարելի է առանձնացնել ժողովրդախոսակցական այն բառերը, որոնք հանդիպում են Սարյանի չափաձոյում (առաջնորդվել ենք էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ով և ժողովրդախոսակցական բառաշերտի մեջ առանձնացրել ենք այն բառերը, որոնց դիմաց եղել է **ժողովրդական (ժդ.)** նշումը): Ժողովրդախոսակցական բառերը գործածվում են հեղինակի խոսքում ոճական տարբեր նպատակներով: Այսպես՝ որպես **գոռով** բառի գրական տարբերակ՝ ԱԼԲԲ-ն առաջարկում է «բռնությամբ,

հարկադրաբար» բառերը (**Աղայան Է., 1976**): Սարյանը «Արցունք և ծաղկունք» բալլադի (այս երկի համար հիմք է ծառայել ժողովրդական հեքիաթը) հատվածներից մեկում գործածել է նշված բառի ժողովրդական ձևը, որը լիովին արդարացվում է: Արքայի խորամանկ խորհրդականը ցանկանում է աղջկան ամեն գնով ամուսնացնել արքայազնի հետ: Նա այդ նպատակին հասնելու համար դիմում է տարբեր խարդավանքների. «Հայրը ուզում էր դստերն անպատճառ // Արքայի որդու կին դարձնել **զոռով**» (**Սարյան Գ., 1969**): Կամ՝ «Պահակը» պոեմի հատվածներից մեկում հեղինակը հատուկ նպատակադրումով գործածում է **փափախ** բառը: Այս պոեմի հերոսը Հովի. Թումանյանի «Երկաթուղին» հայտնի պատմվածքի որսկան Օսեփն է: Նա համոզված էր, որ երկաթուղին ավելի ծանր հոգսեր է բերելու գյուղացուն: Այդ ժամանակներից տարիներ են անցել: Խորհրդային իրավակարգում նահապետական այդ գյուղացին վերափոխվել է, բայց նույնն է մնացել նրա արտաքինը. «Տեսա լոռեցի որսկան Օսեփին, // ...Այն հնամենի **փափախն** էր գլխին...» (**Սարյան Գ., 1969**): Ակնհայտ է, որ այս բառի գրական տարբերակով (մորթե գլխարկ) չէր ստեղծվի հերոսի այդքան բնական նկարագիրը: Սարյանը «Կարոտ» երկում գործածում է **շվաք** ժողովրդական բառը, որը տվյալ ստեղծագործությունում միայն **ստվեր** իմաստը չունի: Այսպես՝ հեղինակը մտքով սլացել է տուն, տեսել է մորը, այն ամենը, ինչը հարազատ է իր հոգուն. «Եվ հոգնած ու նկուն // Երբ իջներ իրիկուն, // Մի ծառի **շվաքում** // Աչքերիս իջներ քուն...» (**Սարյան Գ., 1969**): Նշված բառը այստեղ իր իմաստով թերևս ինչ-ինչ առնչություններ ունի **շվաքի տակ** դարձվածքի իմաստի հետ (մեկի հոգածության, հովանավորության տակ գտնվել կամ ապահով տեղում գտնվել): Այս առումով, իհարկե, **շվաք** խոսակցական բառի գործածությունը առավել նպատակահարմար է:

Հեղինակի խոսքում կան նաև խոսակցական բառերի անհարկի կիրառություններ, որոնք ոճական որևէ նպատակ չունեն: Օրինակ՝ «Հրաշալի սերունդ» պոեմում բանաստեղծը նկարագրում է գյուղի առօրյան. «Մի կին պարանն էր լվացքի // Ծածկում գույնգույն շորերով. // Մի տեղ փոստի դռան

կանգնած // Թերթի էին սպասում, // Պիոներներն ալ փողկապ կապած // Պարապմունքի վրագում» (Սարյան Գ., 1950): Իհարկե, այս խոսքաշարում տեղին կլիներ գործածել համապատասխան գրական համարժեքը՝ **շտապում** էին:

Գեղամ Սարյանը ժողովրդախոսակցական բառերը գործածում է իր **հերոսներին անհատականացնելու** նպատակով: Օրինակ՝ «Սայաթ - Նովա» բալլադի դրվագներից մեկում համանուն հերոսը աղոթում է. «Իմ մեղքին ներում մի՛ տա, պատի՛ժ տուր, ինչ կամենա... // Մի **խնդիրք** ունեմ քեզնից, **մեն** մի բան կուզենայի... // Որ բարի, բարի լինի պսակը իմ Աննայի...» (Սարյան Գ., 1969): Ընդգծված ժողովրդախոսակցական բառերը հերոսի խոսքին հաղորդում են ժողովրդական որոշ նրբերանգներ:

Սարյանի չափաճոյում հաճախադեպ են **այ>է** հնչյունափոխության դեպքերը. «**Էս** աշխարհով անցնող առուն» (Սարյան Գ., 1969), «Կանցնեն բարով, կանցնեն չարով // Նրանք **էս** նույն ճանապարհով...» (Սարյան Գ., 1969), «Ահա համբույր, գնա, քամի, // Տուր սիրածին **էն** ցահել» (Սարյան Գ., 1969), «Լսել է՛ որ **էսօր** կամ էգուց // Ջրանցքը կբացվի շառաչով» (Սարյան Գ., 1969), «Սիտըս **էրվում էր** ձենից» (Սարյան Գ., 1950): Կան նաև ձայնավորների սղման օրինակներ. « Ու քրտինքը **ճակտին** // **Հարսնիք** անում փոթով ...» (Սարյան Գ., 1969):

Հայտնի է, որ **բարբառային բառերը** պատկանում են բառապաշարի ոչ գործուն շերտին: Գեղարվեստական գրականության մեջ խոսքը ոճավորելու նպատակով գրողները հաճախ են դիմում բարբառային բառերի օգնությանը: Եթե հեղինակները ժողովրդախոսակցական բառերը համեմատաբար ազատ են գործածում գեղարվեստական խոսքում, ապա բարբառային բառաշերտին պետք է դիմել միայն ոճականորեն հստակ պատճառաբանվածությամբ, քանի որ, ինչպես գիտենք, բարբառային բառերն ունեն տարածական սահմանափակումներ: Ավելացնենք նաև, որ բարբառային բառերի տեղին գործածությունները կարող են լուծել ոճական տարբեր խնդիրներ (ստեղծում են միջավայրի երանգավորում, անհատականացնում են հերոսների խոսքը և այլն):

Գեղամ Սարյանը բարբառային բառերը երբեմն գործածում է, եթե տվյալ բառի համարժեքը չկա գրական լեզվում: Այդպիսի դեպքերում արդյունավետ է գործածել բարբառային բառը. այն օգնում է խուսափելու ընդարձակ բացատրությունից: Այսպես՝ «**Հրաշալի սերունդ**» պոեմի հատվածներից մեկում հեղինակը գործածել է բարբառային **հախոնել** բառը. «Այնտեղ կալսիչն է անընդհատ // **Հախոնում** խոլոճերն ու հևում, // Ծեծում, կիտում էր ոսկեհատ // Ցորենի շեղջն արևում» (Սարյան Գ., 1950): Գրական լեզվում նշված բառի համարժեքը չկա: Հայոց լեզվի բարբառային բառարանում բացատրվում է. «Բերանով ազահորեն կծել, ամբողջ բերանով խածնել» (ՀԼԲԲ, 2004): Այլ խոսքաչափում բանաստեղծը գործածում է **թունգի** բարբառային բառը. «Մերթ մտնում էր մի դուքան, մի **թունգի** գինով հարբում, // Մերթ ուզում էր իր երգով ողջ աշխարհը հմայի» (Սարյան Գ., 1969): ՀԼԲԲ-ում նշված բառն ունի հետևյալ բացատրությունը. «Երկար վզով, նեղ բերանով աման, որը համարվում է գինու՝ օղու՝ քացախի չափ. հավասար է չորս լիտրի» (ՀԼԲԲ, 2002): Այս դեպքում բարբառային բառը նպաստում է խոսքի սեղմությանը, օգնում է հեղինակին խուսափել երկար նկարագրությունից:

Հեղինակի և կերպարների խոսքում բարբառային բառերը ունեն ոճական տարբեր գործառույթներ: Նախ անդրադառնանք կերպարների խոսքում դրանց գործածության յուրահատկությանը: Սարյանը կերպարի խոսքն անհատականացնելիս անպայման հաշվի է առնում նաև նրա ծագումը և օգտվում է համապատասխան բարբառային տարրերից: Օրինակ՝ Սայաթ-Նովայի կերպարը կերտում է Թիֆլիսի բարբառին հատուկ բառերով, որոնց մի մասը այդ բարբառին անցել է վրացերենից: Գրողը այդ բառերը գործածում է ժողովրդական մտածողությանը, նրա ոգուն հարազատ մնալու նպատակադրումով:

Այսպես՝ նշված պոեմի դրվագներից մեկում համանուն հերոսը խոսում է ինքն իր հետ. «-Տեսար, չէ՞, Սայաթ-Նովա, աշխարհի **զոռն** (ուժ, զորություն (բարբառային բառերի բացատրությունները տրվում են ըստ ՀԼԲԲ-ի)) **ու ջափան** (նեղություն, չարչարանք) ... // Սիրո սուրբ օրենքների **դավթարը** (տետր, գիրք)

սիրտն է մարդու... (Սարյան Գ., 1969): Կամ՝ Սայաթ-Նովան կանգնում է տիրամոր պատկերի առաջ և աղոթում. - Աշխարհքին **ռահմ** (գուֆ, խիղճ) ես անում, ինձ ընչի՞ թողիր անճար (Սարյան Գ., 1969): «**Հրաշալի սերունդ**» պոեմի հերոս Պապ Նահապետը վիճում է որդու հետ: Շտապ հավաքվում են հարևանները, հարազատները, անցորդները՝ վեճին ականատես լինելու համար: Պատշգամբ է դուրս գալիս Նահապետը և զայրացած ասում. «-**Հայրա՛**... ինչ եք ականջ դնում // Ի՞նչ եք կանգնել **թամաշի** // Չեն էլ թողնում մարդ իր **տնում** // Իր ցավերովը խաշվի» (Սարյան Գ., 1950): Ընտրված բարբառային բառերը, ինչպես նաև խոսակցական ոճին բնորոշ դարձվածքները օգնում են կերպավորելու գյուղական միջավայրին հարազատ մարդուն: Օրինակներից երևում է, որ բարբառային բառերը լուծում են ոճական որոշակի խնդիրներ. հերոսի խոսքը դարձնում են համոզիչ, արտահայտիչ, նպաստում են համապատասխան միջավայրի ստեղծմանը, ընդհանուր առմամբ տեղին և պատճառաբանված գործածություններ են:

Հեղինակի խոսքում այս բառաշերտը փոքր-ինչ այլ գործառույթ ունի. բարբառային բառերը նպաստում են նախ և առաջ գյուղական միջավայրի գեղարվեստական նկարագրությանը: Այսպես՝ «**Հրաշալի սերունդ**» պոեմում գրողը պատկերում է Սարատափ գյուղի դպրոցի առօրյան, եռուզեռը: «Դպրոցի մեծ սենյակում // Աշակերտներն ամեն օր // Բերում էին ու կուտակում // Հին ճախարակ, **չուֆ...**» (Սարյան Գ., 1950): **Չուֆ** բարբառային բառն ունի իր գրական համարժեքը՝ **արոր** (ՀԼԲԲ, 2007): Սակայն թերևս գյուղական միջավայրի արտացոլման համար հեղինակը նախընտրում է գործածել բարբառային տարբերակը:

Հայրենական պատերազմի տարիներին Գեղամ Սարյանը գրել է մի շարք բալլադներ: Դրանցից է «Պրոխոր Իվանով»-ը: Այդ երկի հատվածներից մեկում հեղինակը այսպես է նկարագրում անձնագրի հրամանատարին. «Գլխին մի թեք, **չալ** փափախ // Թուփ բեղերը կախ՝ շրթունքին ...» (Սարյան Գ., 1969): **Չալ** բառի գրական համարժեքն է **խատուտիկ**-ը (ՀԼԲԲ-ում այս բառը բացատրվում է.

«Վրան կետեր՝ գծեր ունեցող, խատուտիկ» (**ՎԼԲԲ, 2007**): Ակնհայտ է, որ գրական տարբերակը միշտ չէ, որ կարող է հավասարաթեք փոխարինել բարբառային բառին: **Չալ** բառի գործածությունը այսպիսի խոսքաշարում թերևս տեղին է և արդարացված:

Հեղինակի խոսքում բարբառային բառերի գործածությունը օգնում է լուծելու կառուցվածքային խնդիրներ. բանաստեղծը միշտ ձգտում է բանատողերը հանգավորել և պահել տաղաչափական կանոնները: Սրանով պայմանավորված՝ երբեմն անհարկի գործածում է բարբառային բառեր (բառաձևեր), որոնք ընդհանուր առմամբ թուլացնում են ասելիքը: Երբեմն ուղղակի ստեղծվում են թույլ նկարագրություններ: «Հրաշալի սերունդ» պոեմում կան այդպիսի օրինակներ, ինչպես՝

Վերջին դաշտին է **մոտենում**

Ելնում է ձին ձորն ի վեր,

Կարծես իրար են **ձայնձնում**

Հազարավոր ծղրիդներ:

Սակայն գիտեմ ես համոզված,

Շիտակ ամեն մի **հոգի**,

Ազնիվ գործի համար ասված

Ջերմ խոսքի դեմ **կչոքի**

(Սարյան Գ., 1950):

Հայտնի է, որ հանգը նաև իմաստային զգալի դեր է խաղում: Բանաստեղծները ձգտում են տողերի վերջում դնել առավել կարևոր բառերը, որոնք կրկնվող հնչյունների շնորհիվ ավելի մեծ ուշադրություն են գրավում: Բայց մյուս կողմից էլ արհեստականորեն ստեղծված հանգից էականորեն տուժում է բովանդակությունը:

### **ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Սարյանի չափաճոյում ժողովրդախոսակցական և բարբառային բառերի բազմաթիվ գործածությունները պայմանավորված են երկի բովանդակությամբ, հեղինակի լեզվամտածողությամբ: Այս բառաշերտերը նպաստում են ինչպես հերոսների նկարագրությանը, այնպես էլ և՛ հերոսների, և՛ հեղինակի խոսքի ոճավորմանը: Ընդհանուր առմամբ դրանք տեղին և պատճառաբանված գործածություններ են:

Հայրենական պատերազմից առաջ և դրանից հետո գրված երկերի (հիմնականում բալլադների («Բալլադ սիրո և հերոսության մասին», «Մայրը», «Բարդիների պուրակում», «Հետախույզը» և այլն)) լեզվաոճական առանձնահատկությունների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ պատերազմից հետո գրված գործերի լեզուն ավելի մշակված է, և **բարբառային բառերի անհարկի գործածությունները** էական որակ չեն կազմում: Բարբառային բառերի հաջող գործածությունները երբեմն նպաստում են խոսքի սեղմությանը:

### Համառոտագրություններ

**ԱՀԲԲ** - Արդի հայերենի բացատրական բառարան (Է. Աղայան, Երևան, «Հայաստան» հրատ., 1976):

**ԺՀԼԲԲ** - Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.)

**ՀԼԲԲ** - Հայոց լեզվի բարբառային բառարան (Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.)

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. **Աղայան Է. (1976)**, Արդի հայերենի բացատրական բառարան, 2 հատորով, Երևան, «Հայաստան» հրատ.:
2. **Առաքելյան Վ. (1954)**, Ավ. Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ոճաբանական առանձնահատկությունները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
3. **ԺՀԼԲԲ (1969) (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան)**, հ.1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
4. **ԺՀԼԲԲ (1972) (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան)**, հ.2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
5. **ԺՀԼԲԲ (1974) (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան)**, հ. 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
6. **ԺՀԼԲԲ (1980) (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան)**, հ. 4 , Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
7. **ՀԼԲԲ (2002) (Հայոց լեզվի բարբառային բառարան)**, հ. Բ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
8. **ՀԼԲԲ (2004) (Հայոց լեզվի բարբառային բառարան)**, հ. Գ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
9. **ՀԼԲԲ 2007) (Հայոց լեզվի բարբառային բառարան)**, հ. Դ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
10. **Մալխասեանց Ս. (1944)**, Հայերեն բացատրական բառարան, հ. 1, հ. 2, հ. 3, Երևան, ՀՍՍՌ հրատ.:
11. **Մալխասեանց Ս. (1945)**, Հայերեն բացատրական բառարան, հ. 4, Երևան, ՀՍՍՌ հրատ.:
12. **Սարյան Գ. (1969)**, Երկերի ժողովածու հինգ հատորով, հ. 1, հ. 2, Երևան, «Հայաստան» հրատ.:
13. **Սարյան Գ. (1970)**, Երկերի ժողովածու հինգ հատորով, հ. 3, Երևան, «Հայաստան» հրատ.:

14. **Սարյան Գ. (1971)**, Երկերի ժողովածու հինգ հատորով, հ. 4, Երևան, «Հայաստան» հրատ.:
15. **Սարյան Գ. (1972)**, Երկերի ժողովածու հինգ հատորով, հ. 5, Երևան, «Հայաստան» հրատ.:
16. **Սարյան Գ. (1950)**, Հրաշալի սերունդ, Երևան, Հայպետհրատ.:
17. **Սևակ Գ. (1948)**, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:

### REFERENCES

1. **Aghayan E. (1976)**, Ardi hayereni bacatrakan bar'aran /Modern Armenian Explanatory Dictionary/, in 2 vols, Yerevan, «Armenia» Publishing House.
2. **Arakelyan V. (1954)**, Av. Isahakyani poeziayi bar'apashari otwabanakan ar'and'nahatkowt'yownnery' /Stylistic features of the vocabulary of Avetik Isahakyan's poetry/, Yerevan, USSR State Publishing House..
3. **JHLBB (1969)**, **Jhamanakakic hayoc lezvi bacatrakan bar'aran** /Explanatory dictionary of the modern Armenian language/, v. 1, Yerevan, USSR GA ed..
4. **JHLBB (1972)**, **Jhamanakakic hayoc lezvi bacatrakan bar'aran** /Explanatory dictionary of the modern Armenian language/, v. 2, Yerevan, USSR GA ed..
5. **JHLBB (1974)**, **Jhamanakakic hayoc lezvi bacatrakan bar'aran** /Explanatory dictionary of the modern Armenian language/, v. 3, Yerevan, USSR GA ed..
6. **JHLBB (1980)**, **Jhamanakakic hayoc lezvi bacatrakan bar'aran** /Explanatory dictionary of the modern Armenian language/, v. 4, Yerevan, USSR GA ed..
7. **HLBB (2002)**, **Hayoc lezvi barbar'ayin bar'aran** /A dialect dictionary of the Armenian language/, v. B, Yerevan, RA NAS "Science" publishing house.
8. **HLBB (2004)**, **Hayoc lezvi barbar'ayin bar'aran** /A dialect dictionary of the Armenian language/, v. G, Yerevan, RA NAS "Science" publishing house.
9. **HLBB (2007)**, **Hayoc lezvi barbar'ayin bar'aran** /A dialect dictionary of the Armenian language/ v. D, Yerevan, RA NAS "Science" publishing house.

10. **Malkhaseants S. (1944), Hayere'n bacatrankan bar'aran** /Armenian explanatory dictionary/, v. 1, v. 2, v. 3, Yerevan, USSR Pethrat.
11. **Malkhaseants S. (1945), Hayere'n bacatrankan bar'aran** /Armenian explanatory dictionary/, v. 4, Yerevan, USSR Pethrat.
12. **Saryan G. (1969), Erkeri jhoghovac'ow 5 hatorov** /A Selection of Works in 5 volumes/, v. 1, v. 2, Yerevan, "Hayastan" Publishing House.
13. **Saryan G. (1970), Erkeri jhoghovac'ow 5 hatorov** /A Selection of Works in 5 volumes/, v. 3, Erkeri jhoghovac'ow 5 hatorov /A Selection of Works in 5 volumes/, Yerevan, "Hayastan" Publishing House.
14. **Saryan G. (1971), Erkeri jhoghovac'ow 5 hatorov** /A Selection of Works in 5 volumes/, v. 4, Yerevan, "Hayastan" Publishing House.
15. **Saryan G. (1972), Erkeri jhoghovac'ow 5 hatorov** /A Selection of Works in 5 volumes/, v. 5, Yerevan, "Hayastan" Publishing House.
16. **Saryan G. (1950), Hrashali serownd** /A wonderful generation/, Yerevan, "Haypethrat".
17. **Sevak G. (1948), Jhamanakacic hayereni hamar'ot patmowt'yown** /A brief history of modern Armenian/, Yerevan, USSR Academy of Sciences ed.

Лилит Папикян

### **Лингвостилистические особенности просторечий и диалектизмов**

#### **в поэзии Гегам Сарьяна**

#### **Заключение**

*Ключевые слова и выражения:* Гегам Сарьян, лексика, поэзия, просторечия, разговорная лексика, диалектизмы, лингвостилистический анализ, речь автора, речь героя, произведение.

В новейшей армянской литературе Гегам Сарьян создал своеобразный поэтический мир, оставил богатое литературное наследие. В связи с этим изучение его творчества имеет первостепенное значение. Известно, что

тщательное изучение словаря писателя играет важную роль в составлении полного представления о языке произведений автора.

Поэтому в данной статье мы проводим лексикостилистический анализ стихов Гегама Сарьяна, останавливаясь на рассмотрении просторечных слов и диалектизмов, поскольку их всестороннее изучение дает возможность получить полное представление о языке произведения автора и его писательском мастерстве.

Язык произведений Г. Сарьяна отличается самобытностью и успешным слиянием элементов просторечной и диалектной лексики армянского языка, и их стилистическими проявлениями. Выбор слов, в частности отдельных словосочетаний, в основном обусловлен содержанием произведения автора.

Изучение лексики произведений писателя также включает изучение выразительной роли и стилистической окраски различных лексических слоев, а стилистическую окраску, как мы знаем, могут иметь самые разные слои лексического состава языка.

Языковой материал произведений Г. Сарьяна неоднороден. Учитывая стилистическую направленность использования каждой словарной единицы в поэтической речи автора, мы можем отметить, что в стихах Гегама Сарьяна выделяются просторечия и диалектная лексика. В поэтическом творчестве поэта просторечия занимают особое место по своей доступности и имеют очевидное преимущество по сравнению с диалектизмами, имеющими определенные ограничения. В произведениях Сарьяна просторечия и диалектизмы используются как в речи автора, так и в речи героев. Это использование стилистически правильно и оправданно: их применение способствует демократизации речи писателя, создает более душевную и живую атмосферу. Автор использует как слова, знакомые читателю, так и слова, не имеющие литературного эквивалента, которые не только подчеркивают социальный облик персонажей, но и иногда помогают найти рифму.

Lilit Papikyan

**Linguistic applications of folk – colloquial and dialectic words in  
Gegham Saryan poetry**

**Conclusion**

**Key words and expressions:** *Gegham Saryan, vocabulary, poetry, folk-colloquial words, dialectic words, linguo-stylistic analysis, author's speech, hero's speech, work.*

In modern Armenian literature, Gegham Saryan created an original poetic world and left a rich literary heritage. In this regard the study of his work is of great importance. It is well known that a thorough study of the writer's vocabulary is important for understanding the language of the author's works. Therefore, in this article, we consider it necessary to subject the vocabulary of Gegham Saryan's poetry to a linguo-stylistic analysis, in this case, the folk-colloquial and dialect words, because their comprehensive examination gives the opportunity to get a complete picture of the author's language and writing skills. The language of G. Saryan's work is distinguished by its originality and the successful use of the folk-colloquial, dialectal layers of the Armenian vocabulary and their stylistic manifestations. The author's choice of words, especially the selection of individual phrases, is mainly determined by the content of the work.

The author's choice of words, especially the selection of individual word groups, is mainly determined by the content of the work. The study of the vocabulary of the writer's works also implies the analysis of the expressive role and stylistic coloring of different word groups, and stylistic coloring, as we know, can have the most diverse groups of the vocabulary of the language. The linguistic structure of G. Saryan's works is not monochromatic and homogeneous. Taking into consideration the stylistic purpose of the use of each lexical unit in the author's poetry speech, we can say that Gegham Saryan's poetry features folk – colloquial and dialect word groups.

Due to its accessibility and comprehensibility, the folk-colloquial vocabulary of the

In the speech art of Saryan's poetry, the folk-colloquial vocabulary has its unique place due to its accessibility and comprehensibility and has obvious predominance over the dialect words that have spartial limitations. In Saryan's works, folk -colloquial and dialect words are used both in the speech of the author and the characters. These usages are stylistically correct and justified: they contribute to the popularization of the writer's speech, create a more intimate and lively environment. The author uses both colloquial and dialectal words that are known to the people and do not have their literary equivalent, which not only emphasize the social profile of the characters, but also sometimes help rhyme the poetry.

**Լիլիթ Պապիկյան** - Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ, բան. գիտ. թեկն.: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց լեզու և խոսքի մշակույթ, խոսքային էթիկետ և հաղորդակցման հմտություններ, ոճագիտություն: Հեղինակ է շուրջ հինգ հոդվածի:[Papikyanl@mail.ru](mailto:Papikyanl@mail.ru)

**Лилит Папикян** – Доцент кафедры армянского языка Ереванского государственного университета, кандидат филологических наук. Научные интересы: армянский язык и культура речи, речевой этикет и коммуникативные навыки, стилистика. Автор пяти статей. [Papikyanl@mail.ru](mailto:Papikyanl@mail.ru)

**Lilit Papikyan** - Assistant Professor at the Department of the Armenian Language at Yerevan State University, Candidate of Philological Sciences. Scientific interests: the Armenian language and speech culture, speech etiquette and communication skills, esthetics. Ms. Papikyan has authored five scientific articles. [Papikyanl@mail.ru](mailto:Papikyanl@mail.ru)

*Խմբագրություն է ուղարկվել 04.10.2024թ.*

Հանձնարարվել է գրախոսության 14.10.2024թ.

Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

## XIX ԴԱՐԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՆ

*DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.122*

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածի նպատակն է համապարփակ վերլուծություն տալ Գաբրիել Սունդուկյանի ազդեցությունը հայ դրամատուրգիայի վրա՝ ընդգծելով նրա դերը հայ դասական ռեալիզմի և հայ դրամատուրգիայի զարգացման գործում: Հոդվածում ընդգծվում է Սունդուկյանի հեռանալը պատմական ողբերգություններից և նրա կենտրոնացումը սոցիալական հարցերի շուրջ՝ ցույց է տալիս նրա առանցքային դերը հայ դրամատուրգիայի ձևավորման և դրա ռեալիստական ու բարոյախոսական տարրերն առաջ մղելու գործում: Ավելին, հոդվածը Սունդուկյանի ներդրումը տեղավորում է հայ թատրոնի ավելի լայն համատեքստում՝ համեմատելով նրա գործերը իր ժամանակակիցների և նախորդների ստեղծագործությունների հետ, ինչպիսիք են Մոսկվայի համալսարանի հայ ուսանողները և այլ դրամատուրգներ: Այն նաև քննարկում է հայ կատակերգության և դրամայի զարգացումը՝ ցույց տալով, թե ինչպես են Սունդուկյանի ստեղծագործությունները վոդևիլների ավելի վաղ ձևերից անցում կատարել դեպի սոցիալական և ընտանեկան դինամիկայի ավելի բարդ և իրատեսական պատկերներ:

***Բանալի բառեր և արտահայտություններ.** արևելահայ դրամատուրգիա, կենցաղային կատակերգություն, Գ. Սունդուկյան, Մ. Պարկանյան, Ն. Փուդինյան, վոդևիլ, ուսանողական թատրոն, եվրոպական բարձր, արևելահայ իրականություն:*

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արևելահայ իրականության մեջ մնայուն արժեք ներկայացնող դրամատուրգիա ստեղծվեց Գ. Սունդուկյանի նախաձեռնությամբ: Նա դարձավ հայ դասական ռեալիզմի առաջին և խոշորագույն ներկայացուցիչներից մեկը, որը հող նախապատրաստեց գրականության հետագա զարգացման և նվաճումների համար: Սունդուկյանի ստեղծագործություններն ասքի են ընկնում բարձր գեղարվեստականությամբ, չափի զգացումով, բառի ճշգրիտ և տեղին գործածումով: Նա գրել է թիֆլիսահայ բարբառով՝ հասարակ ժողովրդին հասկանալի լինելու համար, օգտագործել ժողովրդական բանահյուսությունը, վարպետորեն կառուցել գործողությունը, ստեղծել աշխույժ մենախոսություններ ու երկխոսություններ, ինչպես նաև դրության և խոսքի կոմիզմ:

### **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Ներկա հոդվածում հետազոտությունը իրականացվել է տրամաբանական և ժամանակահատվածի դիտարկումների միասնական գիտակցմամբ, պատմահամեմատական, վերլուծական և համադրական մեթոդների կիրառությամբ:

### **ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Մինչսունդուկյանական ժամանակաշրջանի հայ կենցաղային դրամատուրգիան հիմնականում կապվում է Մոսկվայի համալսարանի հայ ուսանողների անվան հետ՝ Մ. Պատկանյան, Ն. Ալդաթյան, Ն. Փուլինյան, Մ. Տեր-Գրիգորյան, Գ. Երիցփոխյան, Ա. Քիչմիշյան, Գ. Քուչարյան և ուրիշներ: 1859 թ. Մոսկվայի համալսարանի հայ ուսանողների նախաձեռնությամբ Նովայա Բասմաննայա քաղաքում հայ մեծահարուստ Միքայել Ստեփանյանցի տանը կազմակերպվում է առաջին թատերական ներկայացումը: Միաժամանակ ներկայացվում են երկու պիեսներ՝ «Արիստակես» պատմական ողբերգությունը (հեղ.՝ Սարգիս Վանանդեցի) և «Վա՛յ իմ կորած հիսուն ոսկին» կատակերգությունը (հեղ.՝ Ն. Ալդաթյան): Վանանդեցու «Մեծն Ներսեսը» վերանվանվել է «Արիստակես», ինչպես ենթադրվում է՝ քաղաքական զգուշության թելադրանքով, որպեսզի պատմական ստվերում ի հայտ չգա իշխանությունից

հալածված, Քիչնև աքսորված Ներսես Աշտարակեցու կերպարը: Պիեսն արևելահայերենի է վերածել Նիկողայոս Փողինյանը (1834-1880): Ներկայացման անմիջական տպավորության տակ Միքայել Նալբանդյանը պիեսի մասին գրել է. «Առհասարակ շատ թույլ բան է և զուրկ ամենայն բանաստեղծական ճարտարութենից, ասես դորա հեղինակը հարկադրանքով գրել է այդ գործը: Նա ամենայն տեղ, ամենայն բոլոր գանազան ազգասիրական խոսքերով աշխատում է վարագուրել դրամատիկական գործողության պակասությանը և չքավորությունը»: Քննադատները՝ «Ճռաքաղ» հանդեսի անանուն հոդվածագիրը և Միք. Նալբանդյանը նույնքան անողորմ են «Վա՛յ իմ կորած հիսուն ոսկին» վոդևիլի հանդես. «Վոդևիլի մեջ չկար ոչ մի նպատակ և ոչ մի վերջնական կետ», «մենք ավելի արմար ենք տեսնում նկարագիր անվանել նորան-картины»: Ավելին. Ալադաթյանի գրածը պարզ մի կատակ է: Բայց այս պարզ կատակը միտք էր տալիս բեմ հանելու առօրյա իրականությունից ծանոթ այն տիպը, որ հետո պտուվելու է արևելահայ կենցաղային թատրոնում:

Կատակերգական հերոսը վաճառական Կարապետն է՝ իր նահապետական դատողություններով և կոլորիտային խոսքով, որը դժգոհում է Թիֆլիս մտած եվրոպական բարքերից, «կնիկարմատի՝ առավոտից իրիկուն մագազիններումը ման գալուց», կոչում է ապրել «քրիստոնեի հանգի», բայց ինքը մտնում է «քրիստոնեին» չվայելող գործարքի մեջ և դառնում խաղալիք, ծաղր ու ծանակի առարկա Պետերբուրգից եկած ջահել մի աստիճանավորի՝ Նիկոլ Մելիքյանի ձեռքին: Մարդուն հավատացնում են, թե գոյություն ունի աներևութացնող գլխարկ, հիսուն ոսկի արժեցող, նա էլ դնում է գլխարկը և «աներևութացյալ» վիճակում ներկա լինում Նիկոլի և իր ջահել կնոջ՝ Սալոմեի սիրաբանությանը: «Անտեսանելին» հարկադրված դիմանում է տեսածին ու լսածին, հանդուրժում ստորացումը և միաժամանակ ծրագրում իր «աներևույթ» վարքագիծը:

Գործը փոքր է, բայց հեռանկարը, ինչպես ցույց է տալիս հայ կատակերգության հետագա ընթացքը, մեծ է: Հեղինակը ենթագիտակցորեն կանգնած է դեպի Սունդուկյան ու Պարոնյան տանող ճանապարհի սկզբնակետին

և տեսնում է, թե իրականության ինչ եզրեր է շոշափելու հայ դասական կատակերգությունը: Սա երկրորդ Կարապետն է Շիրմազանյանի եպիսկոպոս Կարապետից հետո, և երկուսը միասին ի վերջո համադրվելու են որպես Գարասիմ Յակոբիչ Ջմբախով («Խաթաբալա»): Ի տարբերություն «Արիստակես» ողբերգության, որտեղ չկա իրական հատկանիշներով օժտված գործող անձ, «Վա՛յ իմ կորած հիսուն ոսկին» կատակերգության մեջ տեսնում ենք իրական կյանքը՝ համեմված կոմիկական դրվագներով, մարդկային բնավորություններով, որոնք հակադրվում են անկյանք ողբերգություններին: Կենցաղաին տիպերի կատակերգությունը, իհարկե, հեռու էր լուսավորական թատրոնի իդեալից, և քննադատությունն ինչ-ինչ եզրակացությունների է բերում ռուսական թատրոնի օրինակով դաստիարակված հայ ուսանողներին: Փորձելով բռնել լուսավորական ռեալիզմի ճանապարհը՝ նրանք 1860 թվականին մի մասնավոր տան դահլիճում բեմադրվում են Անանիա Սուլթանշահի «Հայոց ազգի լուսավորիչքը» սուր և մերկացնող կատակերգությունը՝ ուղղված կղերապահպանողական գաղափարախոսության ներկայացուցիչների դեմ: Կատակերգության մեջ քննադատվում են դաստիարակչական այն մեթոդները, որոնք այդ ժամանակ դեռևս կիրառվում էին հայկական որոշ դպրոցներում կղերականների ղեկավարությամբ:

1815-ին Մոսկվայում հիմնվում է նշանավոր Լազարյան Ճեմարանը: Ճեմարանի աշակերտները, խրախուսվելով համալսարանի հայ ուսանողների օրինակից, սկսում են թատերական ներկայացումներ կազմակերպել: Այնտեղ բեմադրված հայկական առաջին վոդևիլներն են «Ազգային զվարճալի նկարագիր»-ը կամ «Ղասաբ Արություն»-ը և «Հիմար հանաք»-ը, որոնց հեղինակներն անհայտ են:

1864թ. Մոսկվայի համալսարանի հայ ուսանողները երկու տարվա դադարից հետո վերսկսում են իրենց թատերական աշխատանքը: Այս նոր խաղաշրջանը հիշարժան է նրանով, որ պատմական ողբերգություններից անցում են կատարում դեպի դրամա և կենցաղային կատակերգություն: Նույն թվականին բեմադրում են

կենցաղային երկու նոր կատակերգություններ՝ «Ահա ազգասերները» (հեղ.՝ Գրիգոր Քուչարյան) և «Քաղքի աղաթը փոխվել է» (հեղ.՝ Ալեքսանդր Քիչմիշյան): Դա առաջին դեպքն է, երբ ներկայացումը բաղկացած է եղել միայն կատակերգություններից: Մինչ այդ կատակերգությունները և վոդևիլները խաղացվում էին ողբերգություններից հետո՝ իբրև զվարճալի հավելված՝ ողբերգության թողած տխուր տպավորությունը փարատելու համար:

Մոսկովյան ուսանողական թատրոնի դերը սահմանափակվում է 1863 թվականով, երբ Թիֆլիսի քաղաքային թատրոնում սկսվեցին հայ մշտական թատերախմբի ներկայացումները: Մոսկովյան շրջանը եղավ ճաշակի յուրացման դերասանական արվեստի չափանիշների գիտակցման մի շրջան, որ որոշեց արևելահայ թատրոնի հետագա ուղին: Ուսանողական թատրոնը գործել է մինչև 1868-ի վերջը (**Հովհաննիսյան Հ., 1996**):

Բայց և այնպես Գաբրիել Սունդուկյանին էր վերապահված հայ կենցաղային դրամատուրգիան մեծ թռիչքի տանելը: Հ. Թումանյանը հայ գրականության հեռանկարների մասին խորհելիս մերժում էր տարաշխարհիկ և ընդունում բնաշխարհիկ գրականությունը, քանի որ վերջինը պատկերում էր հայրենի ժողովրդի կյանքը, ապրում նրա ցավերով և ուրախություններով: Բնաշխարհիկ գրողների շարքում Թումանյանը դասում էր նաև Գաբրիել Սունդուկյանին: Վերջինս, Դերենիկ Դեմիրճյանի դիպուկ արտահայտությամբ, հայ դրամատուրգիայի Աբովյանն է և այդ ասպարեզում կատարեց այն դերը, ինչ Աբովյանն ընդհանրապես հայ գրականության մեջ:

Գ. Սունդուկյանը հայ գրականության և դրամատուրգիայի մեջ լայնորեն ներմուծեց քաղաքային կյանքն ու կենցաղը: Առևտրականներ, վաշխառուներ, նրանց կանայք ու աղջիկները, չինովնիկներ, մտավորականներ, ձկնորսներ, արհեստավորներ. ահա նրա հերոսները:

Սունդուկյանն առաջինն է, որ հայ դրամատուրգիայում լայնորեն պատկերեց ամուսնական և ընտանեկան հարաբերությունները, կանանց անիրավահավասարությունը, հայրերի և որդիների կռիվը, երիտասարդությանը:

Նա դրամատուրգիա բերեց գրկվածներին, հարազատորեն արտացոլեց նրանց աշխարհը և պաշտպանեց նրանց դատը: Արևելահայ դրամատուրգը ռեալիզմի գրական ուղղության հետևողական կիրառողն է հայ թատերգության մեջ **(Ասմարյան Լ., 1980)**: «Նա՛ Սունդուկյանը, մնում է եզակի մի ֆենոմեն մեր դրամատուրգիայի մեջ, մանավանդ երբ նրան գնահատում ես իր ժամանակի, միջավայրի հետ միասին», - իրավացիորեն նկատում է Դ. Դեմիրճյանը **(Դեմիրճյան Դ., 1958)**:

Սունդուկյանին չէին ոգևորում պատմական պիեսները. նա ցանկանում էր բեմ հանել ժամանակակից կյանքում գոյություն ունեցող իրական խնդիրներն ու երևույթները: Թատերագրի համար հետաքրքրական էր կենցաղային կատակերգությունը (Հ. Գուրգենբեգյանի «Հաջի Սուլեյման», Ն. Փոլինյանի «Դալալ Ղադր», Ն. Ալդաթյանի «Վայ իմ կորած հիսուն վոսկի», Մ. Պատկանյանի «Միջի մարդ կամ մոցիքուլ», Մ. Տեր-Գրիգորյանի «Ժլատ», «Պեպոյի տկճուրը» Գ. Երեցփոխյանի վոդևիլները և այլն): Այդտեղ մարդը տեսնում էր ինքն իրեն, իր նմանին: Այդ պիեսներում պատկերվում էին մարդկային առօրյա կենցաղը, վարքուբարքը: Պախարակվում էր փառասիրությունը, ցուցամոլությունը, շահախնդրությունը, օտարամոլությունը, ժլատությունը: Կենցաղային կատակերգությունը բարոյադաստիրակչական նշանակություն ուներ հասարակության համար և ազնիվ նպատակ՝ մարդուն դուրս բերելու դարավոր նախապաշարմունքներից ու խավարից **(Ասմարյան Լ., 1980)**: Եվ այդպես էլ եղավ. Սունդուկյանը դարձավ արևելահայ ռեալիստական դրամատուրգիայի հիմնադիրը:

Նրա լավագույն ստեղծագործությունները գրվեցին 1860-1870-ական թվականներին՝ «Խաթաբալա», «Էլի մեկ զոհ», «Պեպո», «Քանդած օջախ» և այլն: Իսկ վոդևիլներն ակնհայտ դարձրին դրամատուրգիական երկխոսություններ կառուցելու հեղինակի տաղանդը («Գիշերվա սաբրը խեր է», «Օսկան Պետրովիչն էն կինքումը», «Եվ այլն կամ Նոր Դիոգենես»):

Նա 1866-ին գրեց «Խաթաբալա» վոդևիլը, որը վերամշակվեց 1879 թ.' նոր շերտեր ավելացնելով: «Վոդևիլը վերածեց սոցիալական կատակերգության,- նկատում է նշանավոր արվեստաբան Հ. Հովհաննիսյանը,- բայց իմաստը խորքում մնաց նույնը և հարստացավ, գեղեցիկը՝ վաղանցուկ տեսիլք, անհասանելի բանտարկված դոյակի պատերի ետևում, ինչպես մի «դոննա»՝ իր ասպետի գոյությանը անտեղյակ, առօրեականությունը՝ կոպիտ, կոնկրետ ու մատչելի, որ ինքնին ընդառաջ է գալիս, զարկում փակ դռների առջև պտտվող ասպետի քթին, ինչպես «ղալբ ապրանք» (**Հովհաննիսյան Հ., 1996**):

Հերոսուհու՝ Նատալիայի երևույթն իր տիպականությամբ կրում է անիրականանալի սիրո գաղափարը, Մարգարիտը դրամա է ապրում ոչ այնքան իր անբարետեսության, որքան մարդկայինին օտար օրենքներին ենթարկված լինելու համար: Այս իրականության մեջ մտահոգ ու անհանգիստ են Գևորգի մայրը՝ Քեթևանը, և լողում է, ինչպես ձուկը ջրում, կինտոյական բնավորություն ունեցող Իսային: Կատակերգության կենտրոնական դեմքը Գարասիմ Յակոբիչ Ջամբախովն է: Պիեսում առկա է նաև քաղաքային-ժողովրդական խաղի, կինտոյական-համքարական կատակի մի երանգ: Այլ գործի կամ արհեստի մարդուն ծաղրելը շուկայական արհեստավորի հոգեբանություն է՝ եկած միջնադարյան առևտրաարհեստավորական քաղաքից: Թիֆլիսն ուներ այդ ավանդությունը ժողովրդական դրամայի տեսքով, որ «Ղեյնորա» դատական ծաղրախաղն էր: Իսային գործում է այդ խաղի օրենքներով, և այդպես էլ սկսվում է կատակերգությունը (**Հովհաննիսյան Հ., 1996**):

Նույն՝ 1866-ին Սունդուկյանը գրեց «Օսկան Պետրովիչն էն կինքումը» կատակը, որտեղ իր սոցիալական զգացմունքներն արտահայտեց սատիրական գույներով: Դրամատուրգն ատում էր նյութական հարաբերությունների աշխարհը: Այս կատակում նա դժոխքի հավերժական տանջանքների մեջ է երևակայում նյութական շահի ստրուկներին:

«Եվ այլն կամ Նոր Դիոգենես» կատակում դարձյալ հայտնվում է իր դոննային՝ ամուսնացյալ կնոջը, սիրահետող ասպետը՝ եվրոպական

կերպարանքով, գեղեցկատես, բարեկիրթ, որը հայտնի չէ սիրահարված է, թե՛ բավականություն է ստանում սիրահարի դեր խաղալուց **(Հովհաննիսյան Հ., 1996)**:

«Էլի մեկ զոհը», որ գրվել է 1870-ին, սկզբունքորեն տարբեր է նախորդ պիեսներից, հեռու է դիմակային թատրոնից, ենթարկված է ընտանեկան դրամայի տիպաբանությանը, նոր է սյուժետային վիճակով, և այստեղ գործում են անհատականացված տիպեր: Ժամանակի ընտանեկան ու հասարակական կեցության պատկերը երեք ընտանիքների փոխհարաբերությամբ ներկայանում է ամբողջական ու ներկայացնում սոցիալական շահերի մի ցանց, որի մեջ խճճված է մարդը և, ինչ քայլի էլ դիմի, գտնում է իրեն փակուղում **(Հովհաննիսյան Հ., 1996)**: Մշակութային նշանավոր երևույթ էր 1871 թվականին բեմադրված «Պեպո» կատակերգությունը: Այն իր թեմայով, կերպարների ամբողջականությամբ, վիճակների պատճառաբանվածությամբ, խոսքային ու հոգեբանական նրբերանգներով, ժողովրդական ոճով, բանահյուսական իմաստնությամբ, թաքնված խորհրդանիշներով և դրամատուրգիական կառուցվածքով ամենահինքնատիպ խաղարկային գործերից է հայ թատրոնում: Այն դարձավ հայ ռեալիստական դրամատուրգիայի բացառիկ երևույթներից մեկը:

Կարծես ի պատասխան իր ժամանակակից ու հետնորդ քննադատների՝ Սունդուկյանը 1872-73 թթ. գրում է «Քանդած օջախ» պիեսը, որը նույնպես կոչվում է կատակերգություն, թեպետ նրա հերոսն ավելի դրամատիկական է իր ճակատագրով, քան Պեպոն: Թեմատիկ սյուժետային առումով «Քանդած օջախը» կարծես ձայնակից է «Էլի մեկ զոհին», բայց իրադրությունը տարբեր է, և դրամատիկական շեշտն ուրիշ տեղում է: Դեմ դիմաց կանգնած են երկու ընտանիք, որոնք ականա հարաբերության մեջ են մտել իրենցից դուրս գործող հանգամանքների թելադրանքով: Որքան էլ տխուր լինեն այդ հարաբերության հետևանքները, որքան էլ կարեկցանք առաջացնի զոհը, վիճակը կատակերգական է **(Հովհաննիսյան Հ., 1996)**:

Ստեղծագործության երրորդ շրջանում Սունդուկյանը գրեց «Ամուսիններ» (1893), «Բաղնրսի բոխա» (1908), «Սեր և ազատություն» (1910), «Կտակ» (1912) պիեսները:

Այսպիսով, ինչպես իրավացիորեն կարծում է Վ. Գրիգորյանը, «առաջին անգամ մեր դրամատուրգիայում հանդես եկան հասարակական կյանքի տարբեր ոլորտներ ներկայացնող գործող անձինք, որոնք կերտված էին տիպականացման բարձր արվեստով» (Գրիգորյան Վ., 2010):

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, քննության ենթարկված կենցաղային բնույթի ստեղծագործությունները գալիս են փաստելու, որ վերջիններիս ստեղծումը հայ գրականության մեջ ինքնանապատակ չէին: Բայց և այնպես արևելահայ իրականության մեջ մնայուն արժեք ներկայացնող դրամատուրգիա ստեղծվեց Գ. Սունդուկյանի շնորհիվ: Մարդասիրություն ու բարեգործություն. այս է Սունդուկյանի վերջնական վճիռը կյանքի հանդեպ: Սկսելով սոցիալական երգիծանքից, քնարական կատակերգությունից՝ Սունդուկյանը հանգեց սոցիալ-կենցաղային կատակերգության ժանրին, հասավ ընտանեկան-հոգեբանական դրամային՝ կրելով քրիստոնեական մարդասիրության գաղափարը: Փաստենք, որ Սունդուկյանը դարձավ հայ ռեալիստական գրականության նշանավոր դեմքերից մեկը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ասմարյան Լ. (1980)**, Գաբրիել Սունդուկյան. կյանքը և ստեղծագործությունը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
2. **Գրիգորյան Վ. (2010)**, XX դարի հայ թատերգություն, Երևան, «Լուսակն» հրատ.:
3. **Դեմիրճյան Դ. (1958)**, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, Հայպետհրատ:
4. **Հովհաննիսյան Հ. (1996)**, Հայ թատրոնի պատմություն XIX դար, Երևան, «Նաիրի» հրատ.:

## REFERENCES

1. **Asmaryan L. (1980)**, Gabriel Sowdowkyan kyanqy' & steghc'agorc'owt'yowny' /The Life and Works of Gabriel Sundukyan/, Yerevan, Armenian SSR Academy of Science publication.
2. **Grigoryan V. (2010)**, XX dari hay t'atergowt'yown /Armenian Drama of the 20th Century/, Yerevan, "Lusakn" ed..
3. **Demirchyan D. (1958)**, Erkeri jhoghovac'ow /Collected Works/, Vol. 6. Yerevan, "State Publishing House of Armenia".
4. **Hovhannisyan H. (1996)**, Hay t'atroni patmowt'yown XIX dar /History of Armenian Theater in the 19th Century/, Yerevan, "Nairi" ed..

Нора Мелконян

### Восточно-армянская драматургия XIX века

#### Заключение

*Ключевые слова и выражения:* Восточно-армянская драматургия, бытовая комедия, Г. Сундукян, М. Патканян, Н. Пхуинян, водевиль, студенческий театр, европейские нравы, восточноармянская реальность.

В армянской восточной реальности драматургия, ставшая вечной ценностью, была создана благодаря инициативе Габриела Сундюкяна. Он стал одним из первых и крупнейших представителей армянского классического реализма, который подготовил почву для дальнейшего развития и достижений литературы. Творчество Сундукиана отличается высокой художественной ценностью, чувством меры и точным, уместным использованием слов. Цель статьи — всесторонний анализ влияния Габриела Сундукяна на армянскую драматургию, подчеркивая его роль в развитии армянского классического реализма и армянской драматургии. В статье акцентируется внимание на отступление Сундукяна от исторических трагедий и его сосредоточении на социальных вопросах, демонстрируя его

ключевую роль в формировании армянской драматургии и продвижении ее реалистических и моральных элементов. Кроме того, статья описывает вклад Сундукяна в более широкий контекст армянского театра, сравнивая его произведения с работами его современников и предшественников, такими как армянские студенты Московского университета и другие драматурги. Также обсуждается развитие армянской комедии и драмы, показывая, как произведения Сундукяна перешли от более ранних форм водевиля к более сложным и реалистичным изображениям социальных и семейных динамик.

**Nora Melkonyan**

### **XIX Century Eastern Armenian Dramaturgy**

#### **Conclusion**

**Key words and expressions:** *Eastern Armenian Drama, Domestic Comedy, G. Sundukyan, M. Patkanian, N. Pghinian, Vaudeville, Student Theatre, European Norms, Eastern Armenian Reality.*

In Eastern Armenian reality, a lasting value of dramaturgy was created through the initiative of Gabriel Sundukian. He became one of the first and most prominent representatives of Armenian classical realism, laying the groundwork for the further development and achievements of literature. The works of Sundukian stand out for their high artistic quality, sense of proportion, and precise and appropriate use of language. The aim of the article is to provide a comprehensive analysis of Gabriel Sundukyan's influence on Armenian drama, highlighting his role in the development of Armenian classical realism and Armenian dramaturgy. The article emphasizes Sundukyan's departure from historical tragedies and his focus on social issues, illustrating his pivotal role in shaping Armenian drama and advancing its realistic and moralistic elements. Furthermore, the article places Sundukyan's contributions within the broader context of Armenian theatre, comparing his works with those of his contemporaries and predecessors, such as Armenian students from Moscow University

and other playwrights. It also discusses the evolution of Armenian comedy and drama, showing how Sundukyan's works transitioned from earlier forms of vaudeville to more complex and realistic portrayals of social and familial dynamics.

**Նորա Մելքոնյան** - Երևանի պետական համալսարանի՝ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ հայ գրականության պատմություն, հայ միջնադարյան և նոր գրականություն, դրամատուրգիա: [nora.melqonyan@ysu.am](mailto:nora.melqonyan@ysu.am)

**Нора Мелконян** - Аспирант кафедры истории армянской литературы и теории литературы им. академика Гр. Тамразяна Ереванского государственного университета. Область научных интересов: история армянской литературы, армянская средневековая и новая литература, драматургия. [nora.melqonyan@ysu.am](mailto:nora.melqonyan@ysu.am)

**Nora Melkonyan** - PhD student at the Chair of the History of Armenian Literature and Literary Theory named after Academician H. Tamrazyan at Yerevan State University. Research interests include the history of Armenian literature, Armenian medieval and modern literature, and dramaturgy. [nora.melqonyan@ysu.am](mailto:nora.melqonyan@ysu.am)

*Խմբագրություն է ուղարկվել 26.09.2024թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 07.10.2024թ.*

*Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.*

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԺԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ.  
ՎԱՆՈ ՍԻՐԱԴԵՂՅԱՆԻ «ՁԵՌՔԴ ԵՏ ՏԱՐ ՅԱՎԻ ՎՐԱՅԻԾ»  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

*DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.123*

### ԱՄՓՈՓՈՒՄ

Վանո Սիրադեղյանի «Ձեռքդ ետ տար ցավի վրայից»-ը հեղինակի սակավ ուսումնասիրված, սակայն ուսումնասիրության համար բավարար նյութ պարունակող ստեղծագործություններից մեկն է: Հոդվածի քննության առարկան այս ստեղծագործության ժանրային առանձնահատկությունն է, դրա մանրակրկիտ վերլուծությունն ու խնդիրների վեր հանումը: Վանո Սիրադեղյանը գրեթե միշտ նախընտրում է սեղմ ժանրը՝ պատմվածքը՝ ելնելով իր ստեղծագործության հիմնական տրամաբանությունից՝ հնարավորինս ճշգրիտ և դիպուկ լինել: Այնուամենայնիվ, որոշակի բարդություն մնում է «Ձեռքդ ետ տար ցավի վրայից» ստեղծագործության ժանրային պատկանելիության սահմանման հարցում: Դա գալիս է տարբեր ժանրերի կիրառություններով՝ ուղեգրություն, էսսե, վիպակ: Հոդվածում կատարված ուսումնասիրության արդյունքում վեր են հանվում այն բոլոր առանձնահատկությունները, որոնք հնարավորություն են տալիս «Ձեռքդ ետ տար ցավի վրայից» ստեղծագործությունը համարել վիպակ:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Վանո Սիրադեղյան, «Ձեռքդ ետ տար ցավի վրայից», պատմվածք, վիպակ, ժանր, գրականագիտություն:

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Գրողի կամ նկարչի աշխատանքը խորապես անհատական, ուրեմն նաև եզակի և անկրկնելի բնույթ ունի: Նրանցից ամեն մեկը հանդես է բերում գեղարվեստական ստեղծագործության մտահղացման և արարման իր առանձնահատուկ գիծը, որոնք, ինչքան էլ ենթարկվեն որոշ

օրինաչափությունների, չեն կարող բացարձակորեն նույնը լինել նույնիսկ երկու փարբեր հեղինակների մոտ» (Ջրբաշյան Է., 2000):

Այս տրամաբանությունն է առաջ քաշում Էդ. Ջրբաշյանը՝ բացատրելու ստեղծագործական պրոցեսի ընթացային էությունը:

Նախքան ստեղծագործական բուն պրոցեսին անդրադառնալը պետք է նշել, որ արվեստի յուրաքանչյուր գործ ապրում է զարգացման որոշակի ընթացք և փուլեր՝ սկսած գաղափարի ծնումից մինչև իրագործում և ավարտ: Սա այն հիմնական տրամաբանությունն է, որով անցնում է գրողը՝ իր որևէ ստեղծագործության արարման ընթացքում (եթե խոսում ենք իրապես գրողի մասին): Այդ ողջ գործընթացում հեղինակը բախվում է տարաբնույթ հարցերի, որոնք ունակ է լուծելու միայն ինքը: Սա ընտրությունների մի յուրօրինակ շքերթ է, որով հեղինակը փորձարկում է իր գաղափարը:

Առաջին ընտրության փուլը, խոշոր հաշվով, վերաբերում է ձևի հարցին, որը գրականության տիրույթում կարգավորվում է սեռային և ժանրային ընտրություններով: Կախված ստեղծագործության ինչպես բովանդակային, այնպես էլ նպատակային հիմունքներից՝ ընտրվում են սեռն ու ժանրը. առավել զգացմունքային, դինամիկ և հուզական խոսքը բաժին է հասնում քնարական ժանրատեսակներին, առավել պատումայինն ու ծավալունը՝ էպիկականներին:

Եթե սեռային հարցը լուծվում է շատ ավելի հեշտ ձևով, ապա սեռի ներսում ժանրային ընտրությունը շատ ավելի բարդ է, քան կարող է թվալ: Կարող է առաջ գալ ասելիքի և ժանրի անհամատեղելիություն, ինչը, ցավ ի սիրտ, շատ ենթ նկատում մեր գրականության պարագայում՝ մասնավորապես 1980-ական թթ. սկսած: Հաճախ ասելիքի փոքրությունը և պատումի անհարկի մեծությունը ծախսողում են ողջ ստեղծագործությունը՝ լցնելով այն անհարկի ուռճացումներով, մտքի բացակայությամբ և անհասկանալի, բուն ասելիքի հետ որևէ կապ չունեցող հատվածներով, գործողություններով և սյուժետային անցումներով:

Կարելի է կարծել, թե վիպական տարածությունն զբաղեցնելը ավելի բարդ է, քանի որ վեպը ծավալուն և ժամանակատար ստեղծագործական գործընթաց է ենթադրում, սակայն չպետք է համաձայնենք այս մտքի հետ: Բարձր գրականության ցուցիչ է ոչ թե խոսքի ծավալը, այլ խոսքի բովանդակային հագեցվածությունը: Եվ որքան սեղմ է բովանդակային խոսքը, այնքան ավելի բարձրարժեք ստեղծագործության հետ գործ ունենք:

Այս խնդիրներն ինչ-որ առումով լուծում են անցումային ժանրերը. արձակի պարագայում պատմվածքից վեպ անցումն ապահովում է վիպակի ժանրը:

### **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Հետազոտությունը կատարվել է համադրական-վերլուծական մեթոդով:

### **ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Վանո Սիրադեղյանը գրեթե միշտ նախընտրում է սեղմ ժանրը՝ պատմվածքը՝ ելնելով իր ստեղծագործության հիմնական տրամաբանությունից՝ հնարավորինս ճշգրիտ և դիպուկ լինել: Սա բոլորովին չի նշանակում, որ Սիրադեղյանի ասելիքն աչքի է ընկնում փոքրությամբ և սեղմությամբ: Համաշխարհային գրականությանը, իհարկե, հայտնի են այնպիսի հանճարեղ հեղինակներ, որոնք կայանում են հենց փոքր ժանրերում՝ արձարծելով մեծ թեմաներ (Չեխով, Բորխես և այլք):

Հետաքրքիր է ժանրի ներսում Սիրադեղյանի նորամուծությունը, որն ունի երկու հիմք՝ զգացականություն և դիմաբանական: Նախ նշելի է, որ զգացականությունը ոչ մի պարագայում չպետք է շփոթել հուզականության և զգացմունքայնության հետ, որովհետև սրանք բոլորովին տարբեր կատեգորիաներ են: Զգացականությունն առաջին հերթին հեղինակից ընթերցողին անցնող նյութի զգացողությունն է, ըստ որի, եթե հեղինակը, դիցուք, նկարագրում է որևէ բույրի զգացողություն, ապա այդ զգացողությունն անցնում է ընթերցողին: Սա էական հատկանիշ է, որը խոսում է հեղինակի նկարագրողական բարձր վարպետության մասին, նաև, իհարկե, բառընտրության նուրբ մոտեցման. «*Բույրի զառամյալ հիշողությունը բերում-փանում է սեխի խաբուսիկ ծաղկահոտը, ծմերուկի խակահոտը, արև առած բազալի քարի մեփաղահոտը, բազալիին կառչած վայրի*

*թզենու կծվահոտը, բեռնավորոյից խանութ կրվող հացի բուրմունքը»*  
**(Սիրադեղյան Վ., 2021):**

Սիրադեղյանը զգացական կապը կարողանում է ապահովել ոչ միայն պատմող-ընթերցող հարաբերության պարագայում, այլև հերոս-ընթերցող հարաբերություններում: Դրա շնորհիվ է, որ Սիրադեղյանի հերոսները ոչ միայն հասկանալի, այլև սիրելի են դառնում ընթերցողին: Հերոսը և ընթերցողը նույն տրամադրությունների և մտածողությունների տիրույթում են, և սա չափազանց էական է: Այսինքն՝ հերոսն օտար չէ ընթերցողին: Ոչ թե հերոսը ձևավորված է ընթերցողի համար ի սկզբանե և կամ որևէ պատմականություն է կրում, այլ հեղինակն ինքն է պատում ընթացքում հերոսին ծանոթացնում ընթերցողի հետ, իսկ յուրաքանչյուր պատմվածքի ավարտին հերոսը չափազանց մտերիմ է թվում ընթերցողին: Սիրադեղյանը մեզ տալիս է ոչ թե հերոսների կաղապարը՝ արտաքինն ու որոշակի գործողությունները, այլ այդ հերոսների մտածողությունն ու հոգեբանությունը: Արտաքինը ոչինչ չի ասում մարդու մասին. սա կյանքի հիմնական փիլիսոփայությունն է՝ իրերի բովանդակության վերադաս դիրքը իրերի մատերիայի հանդեպ: Եվ Սիրադեղյանը լավ է հասկանում այս ամենը՝ չփորձելով արտաքին նկարագրություններով ստեղծել հերոսներ, որոնք խորթ կլինեն ընթերցողին: Նա գնում է դեպի հերոսների խորքը՝ իրապես ծանոթ դարձնելու նրանց և դրա միջոցով էլ՝ սիրելի:

Պատմվածքի ժանրային նորամուծություններից երկրորդը վերաբերում է ռիթմիկային: Հեղինակն իրապես չափազանց մեծ տեղ է հատկացրել այս հատկանիշին և կարծես բոլոր պատմվածքներում չափազանց շատ է աշխատել այս խնդրի շուրջ: Ռիթմական զգացողությունն առավելապես բնորոշ է քնարական ժանրերին. սակայն կարծում ենք, որ այստեղ ևս կա ձևի և բովանդակության համապատասխանության խնդիր: Իսահակյանն իր «Աբու-Լալա Մահարի» պոեմում ընտրում է ամենաերկար՝ 20 վանկանի տողերը, որոնք էապես պայմանավորում են պոեմի ռիթմի դանդաղությունը, որը կապված է բովանդակության և պատկերի հետ (քարավանի դանդաղ ընթացքը), ու սրանով

ստեղծում է դանդաղ ընթերցողական դիմում դանդաղ պատկերի համար: Իսկ Սիրադեղյանն իր արձակում պատկերի հուզականության, գործողությունների ընթացքի արագության, որևէ երևույթի վրա ընթերցողի ուշադրությունը սևեռելու նպատակով օգտագործում է կա՛մ բազմավանկ բառեր, կա՛մ հակառակը, սակայն սա արված է այնքան վարպետորեն, որ չի էլ նկատվում դիմական նման համակարգի գոյությունը: Նույնը կարելի է ասել նաև նախադասությունների երկար կամ կարճ լինելու մասին: Սիրադեղյանը բավականին քիչ է օգտագործում երկարաշունչ նախադասություններ՝ ելնելով ընտրված բովանդակության դիմական պահանջներից:

Ժանրային առումով բավականին հետաքրքիր են հատկապես «Ձեռքդ ետ տար ցավի վրայից» և «Ծանր լույս» ստեղծագործությունները, որոնք եզակի շեղումներ են Սիրադեղյանի ստեղծագործության մեջ՝ պատմվածքից դեպի, այսպես ասած, անցումային ժանրեր:

Եթե «Ծանր լույսի» պարագայում ժանրային բոլոր հարցերը կարծես լուծված են, և կարելի է այն վստահաբար համարել վիպակ, ապա շատ են ժանրային դասակարգման հարցերը հենց «Ձեռքդ ետ տար ցավի վրայից» ստեղծագործության պարագայում: Կարծում ենք, որ այն պատմվածք համարելն ինչ-որ առումով սխալ է:

Նախ խոսենք վիպակի ժանրի մասին: Վիպակի ժանրը գրականագիտությունը տարբերակել է 19-րդ դարում, սակայն դրա սահմանումը տրվել է չափազանց մակերեսորեն: Քսաներորդ դարում այդ հարցը կարծես պետք է լուծված լիներ, սակայն կարծում ենք, որ այս անցումային ժանրերի սահմանման հարցը մնում է գրականագիտության ամենաբարդ խնդիրներից մեկը: Հայ գրականագիտության մեջ վիպակի ժանրին որոշ անդրադարձում է ունեցել Էդ. Ջրբաշյանը «Գրականության տեսություն» և «Գրական ժանրերի տեսության շուրջ» աշխատություններում և առավելապես Աստղիկ Բեքմեզյանն իր «Վիպակի ժանրը հայ նոր գրականության մեջ», «Տողամիջյան ընթերցումներ» և «Սահմանային ժանրեր» աշխատություններում: Եթե Ջրբաշյանը վիպակի ժանրին

անդրադառնում է ոչ ամբողջ սևեռումով (աշխատություններում քննվում են առհասարակ տեսական հարցեր), ապա Բեքմեզյանը փորձում է ամենայն մանրամասնությամբ սահմանազատել էպիկական ժանրերը՝ փորձելով տալ մասնավորապես վիպակի ժանրային առանձնահատկությունների բնորոշումը: Իհարկե, որոշ բարդացումներ նկատում ենք. «Վիպակում հիմնական գաղափարը և թեման միահյուսված չեն ուրիշների հետ: Նրանք միակ առանցքն են, որի շուրջ և որով կառուցվում է ստեղծագործությունը: (Ռոպես օրինակ կարելի է վերցնել ցանկացած վիպակ)» (Բեքմեզյան Ա., 2016): Այս պնդումը մի փոքր համոզիչ չէ, քանի որ հաճախ հանդիպում են վիպակներ, որոնք բավականին լայն առանցք ունեն, միևնույն ժամանակ պարունակում են զուգահեռ զարգացող սյուժետայնություն:

Այս տարակարծությունը վկայում է ոչ թե գրականագիտական թերացման, այլ նյութի չափազանց բարդ բովանդակության հետ: Այնուամենայնիվ, Բեքմեզյանը վիպակի որոշ սահմանումներ տալիս է՝ համեմատության մեջ դնելով ինչպես վեպի, այնպես էլ պատմվածքի հետ:

Գրականագետի կարծիքով՝ արձակ ստեղծագործությունների ժանրային պատկանելությունը չպիտի հիմնվի դրանց թեմատիկ «նախասիրությունների» վրա, ինչի հետ համաձայն ենք:

Քանի որ մեր հետաքրքրությունը այս պահին վերաբերում է «Ձեռքդ ետ տար ցավի վրայից» ստեղծագործության ժանրային սահմանմանը, ապա ստիպված ենք չհենվել Բեքմեզյանի առաջ քաշած բոլոր այն դրույթների վրա, որոնցով փորձ է կատարվում կատարելու վեպ-վիպակ սահմանազատումը: «Ձեռքդ ետ տար ցավի վրայից» ստեղծագործությունը մեծ ցանկության դեպքում իսկ չենք կարող համարել վեպ, հետևաբար ընտրությունը վիպակի և պատմվածքի միջև է:

Համաձայն Բեքմեզյանի կողմից առաջ քաշված մեկ այլ դրույթի՝ ծավալային հատկանիշը ևս ելակետային չէ վիպակի ժանրային սահմանման համար, քանի որ ծավալը որոշվում է կոմպոզիցիայի և սյուժեի առանձնահատկություններով, հետևաբար ծավալը հետևանք է, ոչ թե ելակետ: Կարևոր առանձնահատկություն է

համարվում, օրինակ, կոնֆլիկտայնությունը, և այդ առումով վիպակը միագիծ է. «Շեշտը դնելով հիմնական կոնֆլիկտի լուծման վրա՝ հեղինակն այսպեղ հնարավոր մյուս կոնֆլիկտները ներկայացնում է մեկ-երկու սրվերագծով՝ առանց խորանալու մանրամասների մեջ» (Բեքմեզյան Ա., 2016): «Ձեռքդ ետ տար ցավի վրայից» երկը այս առումով համապատասխանում է վիպակի ժանրին պատումի միագիծ կոնֆլիկտով և թեթև արտահայտված հարակից կոնֆլիկտային անցումներով:

Մեկ այլ պնդման մեջ տեսաբանն առանձնացնում է հետևյալ տարբերակիչ հատկանիշը. «Արտասյուժետային տարրերը վեպում խիստ նշանակալի են. ժանրակազմիչ են թե՛ քնարական, թե՛ հրապարակախոսական զեղումները, թե՛ միջանկյալ պատմությունները, որոնք վեպի որոշիչ մասերի թվին են պատկանում: Վիպակը համեմատաբար զուսպ է այս հարցում, չնայած երբեմն կարելի է հանդիպել հարկապես հեղինակային շեղումների: Պատմվածքն ու նորավեպը սովորաբար բացառում են այս միջոցները» (Բեքմեզյան Ա., 2016): Այս առումով Սիրադեղյանի ստեղծագործությունը ավելի մոտ է վիպակին (կարելի է հանդիպել հարկապես հեղինակային շեղումների), քան պատմվածքին (սովորաբար բացառում է), որովհետև տվյալ տեքստում մենք հանդիպում ենք թե՛ քնարականության (ինչն առհասարակ սիրադեղյանական արձակին բնորոշ է), թե՛ հրապարակախոսական որոշ ժանրային դրսևորումների (պատմական վերլուծության հատկանիշ, առաջին դեմքով պատում, որոշ դրվագներում զեղարվեստականության սակավություն), թե՛ միջանկյալ պատմությունների (մանկական հիշողությունների զուգահեռ ընթացք, իրական ճանապարհորդության ներկայացում):

Իհարկե հաջորդ սահմանման մեջ Բեքմեզյանը գրեթե հերքում է բազմասյուժետայնությունը վիպակում, որը կապում է բազմակոնֆլիկտայնության բացակայության հետ, ինչին արդեն իսկ հասցրել ենք անդրադառնալ:

Այնուամենայնիվ, որոշակի բարդություն մնում է «Ձեռքդ ետ տար ցավի վրայից» ստեղծագործության ժանրային պատկանելիության սահմանման

հարցում: Դա գալիս է տարբեր ժանրերի կիրառություններով՝ ուղեգրություն, էսսե, վիպակ: Ուղեգրության համար պատումը բավարար հիմքեր չի տալիս, որովհետև ուղեգրությունը հայացքն ուղղում է դեպի հատկապես իրական տարածություն, իսկ Սիրադեղյանն այստեղ ճանապարհորդում է ոչ միայն իրականության մեջ (որը պատումի սակավ մասն է կազմում), այլև առավելապես՝ պատմության: Էսսեի համար էլ չափազանց շատ է պատումի գեղարվեստականությունը:

Ելնելով վերը նշված բոլոր առանձնահատկություններից՝ առավել միտված ենք «Ձեռքդ ետ տար ցավի վրայից» ստեղծագործությունը համարել վիպակ:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Վանո Սիրադեղյանի «Ձեռքդ ետ տար ցավի վրայից» ստեղծագործությունը բավականին ինքնատիպ և յուրահատուկ ստեղծագործություն է: Սա կապված է ոչ միայն ստեղծագործության բովանդակային շերտերի հետ, որոնք մենք մանրամասն ուսումնասիրել ենք, այլև ստեղծագործության ժանրային առանձնահատկության հետ: Մանրամասն ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս դիտարկել այս ստեղծագործությունը որպես վիպակ՝ ելնելով դրա պատկերավորման, կերպարակերտման, ստեղծագրության առանձնահատկություններից:

### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. **Բեքմեզյան Ա. (2016)**, Տողամիջյան ընթերցումներ, Երևան, «Վան Արյան» հրատ.:
2. **Ջրբաշյան Է. (2000)**, Թումանյանի գրական ժառանգությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. :
3. **Սիրադեղյան Վ. (2021)**, Դուռը, Երևան, «Վանո Սիրադեղյան» հիմնադրամ:

### **REFERENCES**

1. **Beqmezian A. (2016)**, Toghaniyan y'nt'ercowmner /Reading between the lines/, Yerevan., "Van Aryan" ed..
2. **Jrbashyan E. (2000)**, Towmanyani grakan jhar'angowt'yowny' /Tumanyan's literary legacy/, Yerevan, HH GAA "Gitutyun" ed..
3. **Siradeghyan V. (2021)**, Dowl'y' /Door/, Yerevan, "Vano Siradeghyan" himnadram.

**Ованнес Овакимян**

**Жанровая определенность и вопросы жанровой идентификации: произведение**

**Вано Сирадегяна «Возьми руку с боли»**

**Заключение**

***Ключевые слова и выражения:** Вано Сирадегян, «Возьми руку с боли», рассказ, новелла, жанр, литературоведение.*

Произведение Вано Сирадегяна «Возьми руку с боли» — это уникальная и оригинальная работа, которая привлекает внимание не только своими содержательными слоями, но и жанровыми особенностями. Автор мастерски сочетает элементы повести, эссе и философского размышления, создавая произведение, которое невозможно точно отнести к какому-либо одному жанру. Это сложный текст, который заставляет задуматься о важнейших социальных и личных вопросах, затрагивающих как общественные, так и внутренние переживания человека. Сирадегян работает с глубокими эмоциональными описаниями и ритмическими акцентами, создавая яркие и многослойные образы, которые живо передают чувства героев. Его повествование не ограничивается поверхностным изображением персонажей — он углубляется в их психологию, раскрывая внутренние переживания и сложности, что делает героев произведения близкими и понятными читателю. В произведении также присутствуют элементы философских размышлений, что придает тексту дополнительную глубину. «Возьми руку с боли» выходит за рамки традиционного повествования, открывая

новые горизонты в литературе и предлагая свежие способы передачи мыслей и эмоций. Это произведение важно для современного литературного контекста, поскольку оно расширяет границы жанра и открывает новые перспективы в развитии художественной прозы.

**Hovhannes Hovakimyan**

### **Genre Identification and Related Issues: Vano Siradeghyan's**

#### ***"Take Your Hand off the Pain"***

#### **Conclusion**

***Keywords and expressions:*** Vano Siradeghyan, "Take Your Hand off the Pain", short story, novella, genre, literary studies.

Vano Siradeghyan's work "Take Your Hand off the Pain" is a unique and original piece that attracts attention not only for its thematic depth but also for its genre characteristics. The author skillfully combines elements of a short story, essay, and philosophical reflection, creating a work that cannot be easily classified into one specific genre. It is a complex text that makes the reader reflect on significant social and personal issues, addressing both societal and inner emotional experiences of a person. Siradeghyan works with deep emotional descriptions and rhythmic accents, creating vivid and multilayered images that convey the feelings of the characters. His narrative goes beyond merely portraying characters on the surface—he delves into their psychology, revealing their inner struggles and complexities, which makes the characters relatable and understandable to the reader. The work also includes elements of philosophical reflection, adding depth to the text. "Take Your Hand off the Pain" transcends traditional storytelling, opening up new horizons in literature and offering fresh ways to express thoughts and emotions. This work is significant in the contemporary literary context, as it expands the boundaries of genre and presents new perspectives on the development of prose.

**Հովհաննես Հովակիմյան** – Երևանի պետական համալսարանի Հայ բանասիրության ֆակուլտետի Հայ նորագույն գրականության և գրաքննադատության ամբիոնի հայցորդ: Գիտական հետաքրքրությունները՝ հայ նորագույն գրականություն, գրականության տեսություն: Հեղինակ է շուրջ 15 հոդվածների: [hovhanneshovakimian.hh@gmail.com](mailto:hovhanneshovakimian.hh@gmail.com)

**Ованнес Овакимян** – Аспирант кафедры современной армянской литературы и литературной критики факультета армянской филологии Ереванского государственного университета. Научные интересы: армянская современная литература, теория литературы. Автор около 15 статей. [hovhanneshovakimian.hh@gmail.com](mailto:hovhanneshovakimian.hh@gmail.com)

**Hovhannes Hovakimyan** – A PhD candidate at the Department of Modern Armenian Literature and Literary Criticism, Faculty of Armenian Philology, Yerevan State University. His research interests include modern Armenian literature and literary theory. He is the author of around 15 articles. [hovhanneshovakimian.hh@gmail.com](mailto:hovhanneshovakimian.hh@gmail.com)

*Խմբագրություն է ուղարկվել 07.11.2024թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 15.11.2024թ.*

*Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.*

## ՄԱՆՈՒՇ ԲԱԼԱՅԱՆ

**«ՅՈՒՇԱՏԵՏՐ» ԷՍՍԵՆԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ  
ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ****DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.124****ԱՄՓՈՓՈՒՄ**

Հոդվածի նպատակն է Պոլսի «Մարմարա» օրաթերթում հրապարակված և ապա առանձին գրքերով լույս տեսած խմբագրապետ Ռուպեր Հատտեճյանի «Յուշատետր» էսսեները ներկայացնել որպես առօրյա և պատմական իրադարձություններին անդրադարձող գեղարվեստական հրապարակագրություն:

Թեման արդիական է, քանի որ Ռ. Հատտեճյանի «Յուշատետր» խորագրով էսսեների գեղագիտական արժարժումներով ներկայացվում են հեղինակի մտահղացման ճանաչողական ակունքները, ժամանակի ճիշտ գնահատումները, ուղենշվում ժամանակակից արձակի զարգացման միտումները:

Ըստ սահմանված նպատակի՝ ուսումնասիրել ենք «Յուշատետր» էսսեների ձևաբովանդակային առանձնահատկությունները և դրանք բնութագրել որպես վավերագրական հիմնավորում ունեցող, գեղարվեստական ոճավորմամբ փոքրածավալ գրվածքներ, որոնք պատումի թեմատիկ բազմազանության մեջ միավորում են պատմականությունն ու արդիականությունը:

Համադրական վերլուծության մեթոդով անդրադարձել ենք «Յուշատետր»-ի էջերում հրապարակված հատկապես այն էսսեներին, որոնք վերաբերում են հայ գրական գործիչներին, նրանց հանրային ու ստեղծագործական գործունեությանը: Ընդհանրացրել ենք Ռ. Հատտեճյանի ընտրած հեղինակների բանարվեստի բովանդակային ընդգրկումները, գեղագիտական սկզբունքները, քերթողական արվեստի դրսևորման ձևերը:

Առաջնորդվելով ժամանակագրական քննության մեթոդով՝ հոդվածում «Յուշատետր»-երը դիտարկել ենք որպես յուրօրինակ քրոնիկոններ, որոնք

ստեղծագործական ընդհանրացումներով տալիս են պատմական իրարահաջորդ ժամանակների իրական պատկերը:

Եզրահանգումներում գրական դիմանկարների գեղարվեստավավերագրական պատումների ընդհանրացումները լրացրել ենք Ռ. Հատտեճյանի՝ մարդկային բանականության էկզիստենցյալ տառապանքը բնութագրող փիլիսոփայական ձևակերպումներով:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** «Յուշալետեր», էսսե, բանաստեղծական պատկեր, գրական դիմանկար, արժևորում, տարեգրություն, գեղարվեստավավերագրական արձակ, արդիականություն, պատմականություն, գաղափարախոսություն:

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պոլսի «Մարմարա» օրաթերթի բազմամյա խմբագրապետ, արձակագիր Ռոպեր Հատտեճյանը իր «Յուշալետեր»-ով նորոգեց հուշագրական ավանդույթը, որը բացեց ձևաբովանդակային լայն հնարավորություններ, ինչպես նաև առօրյա ու պատմական կարևոր, երբեմն աննշան թվացող իրադարձությունները իմաստավորելու և արժևորելու կարելիություններ: «Յուշալետեր» սյունակը, սկսած 1981-ի օգոստոսի 4-ից, «Մարմարա»-ի առաջին էջից ներկայացնում է Ռ. Հատտեճյանի էսսեները՝ իբրև գեղարվեստական հրապարակագրության լավագույն օրինակներ:

«Յուշալետեր»-երում Ռ. Հատտեճյանը թերևս որդեգրել է եվրոպական ժամանակակից վավերագրական արձակի երկու հատկանիշները՝ պատմականությունն ու արդիականությունը: Պատմականությունը դրդում է սերունդներին՝ ձեռք բերելու վստահություն սեփական հնարավորությունների նկատմամբ, իսկ արդիականության հիմքը մարդու նկատմամբ գեղազետ գրողի՝ կատարված իրողություններին գնահատական տալու սկզբունքն է: Առանձնահատուկ է նաև Ռ. Հատտեճյանի աշխարհայացքը, որի գեղագիտական հիմնավորումները «Յուշալետեր»-ի էջերից ներկայացվում են ընթերցողին գիտահանրամատչելի լեզվով:

«Հատուճեանը «Յուշատետր»-երուն բազմաբնոյթ գրութիւններովը լայն պատուհան մը բացաւ մեր գրականութեան մէջ կեանքի բոլոր երեսակներուն վրայ՝ մեր դպրութեան մէջ հրապարակագրութիւնը բարձրացնելով գրական ճաշակ ու բովանդակութիւն ունեցող անվիճելի վիճակի մը» **(Թորանեան Թ., 2002)**,- գրել է սփյուռքահայ գրականագետ Թորոս Թորանյանը: «Յուշատետր»-երի բովանդակային առանձնահատկություններին հեղինակը բազմիցս անդրադարձել է հանդիպումների և հարցազրույցների ժամանակ: Նման ստեղծագործությունների մեջ, ըստ Ռ. Հատտեճյանի, մարդիկ «...կրնան գտնել քիչ մը արուեստ, քիչ մը փիլիսոփայութիւն, քիչ մը հոգեբանութիւն, քիչ մը մշակոյթի պատմութիւն, քիչ մը գրականութիւն, եւ այս բոլորին մէջէն յայտնուող ճաշակ մը...» **(Յակոբեան Մ., 2013)**:

Պատկերավորման ու ոճի առումով Ռ. Հատտեճյանը «Յուշատետր»-ում հասել է ինքնատիպ լուծումների՝ մեկընդմիջտ հաստատելով, որ «գեղարվեստական վավերագրության հեղինակի առաջին նպատակը ընթերցողի մտերմությունը նվաճելն է» **(Գալստյան Ա., 2021)**: «Յուշատետր»-երի էջերից հնչող նրա խոսքը, ինչպես նշում է գրականագետ Սուրեն Դանիելյանը. «համախմբող ուժ ունի, եւ այն առաջին հերթին անվերջանալի երկխօսութիւն է ընթերցողների, համայնքի, բովանդակ ժողովրդի հետ» **(«Պոլսահայ գրականութիւնը...», 2023)**: :

### ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռ. Հատտեճյանի «Յուշատետր»-երը ստեղծագործական ազատությամբ ու թեմատիկ բազմազանությամբ առնչվում են տարբեր ասպարեզների և խնդիրների: Ըստ այդմ՝ առաջնորդվել ենք ժամանակագրական քննության մեթոդով՝ անդրադառնալով «Յուշատետր»-երում ներկայացված կարևոր դեմքերին և դեպքերի գրապատմական առաջընթացին: Շարադրանքում օգտագործվել են նաև համադրական վերլուծության մեթոդը՝ հընթացս ներառելով գեղագիտական տիպաբանական վերլուծության որոշ տարրեր:

### ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ժամանակի ազգային-մշակութային խնդիրների շուրջ իր մոտեցումները ընդհանրացնող Ռ. Հատտեճյանի կարևոր մտահղացումն էր «Յուշատետր»-երուն ընդմէջէն լայն չափով գրականութիւն հրամցնել ժողովուրդին» (**Շառոյեան Լ., 2003**): Նման բովանդակությամբ գրված էսսեները հետագայում հիմնականում ամփոփվեցին «Պտոյտ մը մեր գրականութեան պարտէզին մէջ» (2000), «Առագաստ՝ դէպի բանաստեղծութիւն» (2006), «Պտոյտ հայ գրականութեան քույսներուն մէջ» (2007-2010) հատորներում: Նրանցում ներկայացված գեղարվեստավավերագրական արձակի հերոսը ժամանակի արհավիրքներից խոցելի, բայց այդ արհավիրքներին հնարավորինս դիմակայող ստեղծագործող անհատն է, որն իր էությամբ ու մտածողությամբ բարդ ու ճկուն համակարգ է ստեղծում՝ իրականության և ժամանակի մեջ ընկալվելու համար:

«Առագաստ՝ դէպի բանաստեղծութիւն» հատորում հեղինակների մտերմության մեջ քննադատ Հատտեճյանն ընդգծել է նրանցից յուրաքանչյուրի ստեղծագործության ոճի և մեթոդի ձևաբովանդակային առանձնահատկությունները: Ըստ Հատտեճյանի՝ բանաստեղծները լուսավորում ու ազնվացնում են մարդկային հոգին, նոր փայլ տալիս աշխարհի և բնության խորհուրդներին, «գոր թերեւս պիտի չտեսնէինք, եթէ աշխարհին վրայ բանաստեղծութիւնը հնարուած չըլլար» (**Հատտեճեան Ռ., 2006**):

«Բանաստեղծության պարտեզի» մեջ շրջելիս Ռ. Հատտեճյանը աշխարհին ու մարդուն նայում է բանաստեղծի՝ աչքով, որին միանում է փիլիսոփայի ներհուն դատողությունը, արդյունքում միահյուսվում են երևույթն ու բանաստեղծական խոհը, կատարվում են ընդհանրացումներ՝ միևնույն պատկերի՝ տարբեր բանաստեղծների կողմից տրված լուծումների համատեքստում: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս նույն էսսեի շրջանակներում անդրադառնալու մի քանի հեղինակների, նրանց աշխարհայացքի ընդհանրություններին, բանարվեստի առանձնահատկություններին, նյութի բովանդակային ընդգրկման սահմաններին: Փիլիսոփայի խորաթափանցությունը Ռ. Հատտեճյանին տանում է դեպի

բանաստեղծական պատկերի խորքը, հիմնավորում գաղափարական գյուտերն ու մտածումները:

Բազմամարդ են «Յուշատետր»-ի «արահետները». հոգատար «պարտիզպանի» նպատակը «մեր գրականության մոռացության անդունդին խորք» (**Հատուհեան Ռ., 2000**) նայելն է և արժանավորներին վերհանելը, նրանց ստեղծագործությունները՝ իբրև տաղանդի արգասիք ներկայացնելը: «Իր ընդհանուր գիծերուն մէջ գրականության պատմութիւնը ուրիշներու վկայութեամբ ու ճաշակով, ուրիշներու հաւաստիացումով ու երաշխատրութեամբ գրուած պատմութիւն մըն է» («**Ռ. Հատուհեան գրական գործունէութեան 40-ամեայ հանգրուանին**», 1987): Ուստի և «հայ բանաստեղծության պարտեզի» զեղեցկությունները հասարակությանը հասանելի և սիրելի դարձնելու համար հարկ է ամենօրյա աշխատանք ու խնամք տանել. Ռ. Հատուհեանի պարագայում դա նշանակում է ամեն օր թերթի էջերից խոսել գրականության մասին:

Հիմնվելով անձնական տպավորությունների, ժամանակակիցներից լսած տեղեկությունների, նաև գրական մարդկանց՝ պարբերականներում հրատարակված անձնական նամակների և հուշագրությունների վրա՝ Ռ. Հատուհեանը բացում է հայ գրականության ետնաբեմի վարագույրը, ներկայացնում ուշագրավ պատումներ գրողների կյանքի, նրանց մտերմությունների, նաև այս կամ այն ստեղծագործությունը գրելու նախապատմության վերաբերյալ: Նման պատմությունները, ունենալով իրապաշտական ու տպավորապաշտական հենք, ներառում են նաև քննադատ-վավերագրողի տեսակետները և ունեն ճանաչողական արժեք:

Ռ. Հատուհեանը ներկայացրել է երկու մեծերի՝ Հ. Պարոնյանի ու Ե. Օտյանի երգիծանքի նրբությունները, պատճառաբանել Հ. Թվատինցու և Ռ. Զարդարյանի տարածայնությունները, Գ. Մահարու և Շ. Շահնուրի հեռակա բարեկամությունը, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի սերերն ու հիասթափությունները: Սիրո և նվիրումի շուրջ Ռ. Հատուհեանը համադրել է Մ. Զարիֆյանի, Ռ. Սևակի բանաստեղծական

տրտմությունը, Աստծո հետ խոսելու հնարավորության արդյունքում՝ միացրել Նարեկացու աղոթքն ու պոլսահայ բանաստեղծ Անդան Էոզերի «աղերսագիրը»:

Հայ մեծերի անձնական տառապանքը և դժվարությունները պատկերելուն զուգահեռ՝ Ռ. Հատտեճյանը անցողակի, երբեմն էլ հանգամանորեն անդրադառնում է պատմական այնպիսի դրվագների, որոնք բախտորոշ են եղել Հայրենիքում և Սփյուռքում ապրողների կյանքում: Այս առումով «Յուշատետր»-երը յուրօրինակ քրոնիկոններ են, որ տալիս են պատմական իրարահաջորդ ժամանակահատվածների իրական պատկերը:

Հեղինակը ներկայացնում է նշանավոր հեղինակների գրական-հրապարակախոսական ու հանրային գործունեությունը նախաեղեռնյան տարիներին, երբ նրանք հասարակական ու ստեղծագործական կյանքի բարձրակետում էին: Այնուհետև հաջորդում են նրանց ձերբակալվելու, տառապալից գողգոթա անցնելու, ոմանց փրկվելու և ոմանց նահատակվելու պատմությունները: «Յուշատետր»-ի պատումները շարունակաբար հասնում են մինչև ստալինյան բռնապետության տարիներ, մինչև 60-ականների բեկման ու զարթոնքի, նոր մտածողության ժամանակներ:

Ռ. Հատտեճյանը կարևորել է հայ գրական ու մշակութային կյանքի նշանավոր դեմքերի ոչ միայն ստեղծագործությունների, այլև նրանց ապրած կյանքի, անձնական ապրումների դերը, որովհետև այդ ամենը, ըստ գրականագետ-վավերագրողի, կենդանի մշակույթ է և օժանդակում է ստեղծագործող անհատի գործի լիարժեք հասկացվածությանը. «...Այլեւս գիտենք թէ մեր արուեստասէր ու ստեղծագործ գրագետները ահաւոր տառապանքներու ու ողբերգութիւններու մէջէն անցնելու ընթացքին է որ տուած են իրենց գործերը, կը մտածենք որ մենք, անոնց հրաշալի գրականութեան առջեւ խոնարհելու ընթացքին, պէտք է խոնարհինք նաեւ անոնց ապրած ողբերգութիւններուն ու անոնց զգացած տառապանքներուն առջեւ» (Հատտեճեան Ռ., 2007):

Ռ. Հատտեճյանը ընդգծում է հայ գրականության երախտավորներին գնահատելու առաջնահերթությունը. «....Պիտի ջանանք մեր մեծ գրագետները

պահ մը գոնէ դուրս բերել հայ գրականութեան համատարած գերեզմանատունէն եւ անոնց ընկերանալ անցաւոր աշխարհի մը մէջ իրենց կատարած զուարթ կամ տառապալից ուղեւորութիւններու ընթացքին» (**Հատուցեան Ռ., 2007**):

Տարագիր հայ մտավորականները, որտեղ էլ որ հանգրվանել են, ինչ պայմաններում էլ հայտնվել են, նպատակ են դրել ապրեցնելու հայ գրականությունն ու մշակույթը. այս ամենը կարծես չգրված պարտավորություն էր արևմտահայ գլխատված գրականության և սպանված ընկերների հիշատակի առջև: Թեոդիկը ապրեց եվրոպական տարբեր երկրներում՝ «իր ժամերուն մեծ մասը անցընելով տպարաններու մէջ ու գրելով կամ սրբագրելով իր Տարեցոյցները» (**Հատուցեան Ռ., 2008, Յուշատետր 60**): Երվանդ Օսյանը երկար դեգերումներից հետո Կահիրեի «Արև» թերթի խմբագրատանը հաստատեց իր աթոռը և «հոն է, որ գրեց իր վերջին ու ծաւալուն վէպերէն մէկը՝ «Հայ Տիասփորան» (**Հատուցեան Ռ., 2008, Յուշատետր 61**): Հակոբ Սիրունին Ռումինիայում «դասախօսութիւններ կ'ընէր, գիրքեր կը գրէր, մատենադարաններ կը հիմնէր, հայկական տուներ կը բանար ու ցուցահանդէսներ կը կազմակերպէր, հայ մշակույթը կը ծանօթացնէր ռումէններուն...» (**Հատուցեան Ռ., 2008, Յուշատետր 60**): Համաստեղը հեռավոր Բոստոնից «շուտով իր հեղինակութիւնը պիտի հաստատէր Սփիւռքի մէջ, նորահնար գիւղագրութեան մը ընդմէջէն տալով հայ ժողովրդի անցեալին մէջ մնացած գաւառի կեանքի գրականութիւնը» (**Հատուցեան Ռ., 2008, Յուշատետր 60**): Արշակ Չոպանյանը «մեր գրականութեան մէջ անմահացած է ուրիշներու գրականութեան բերած իր ծառայութեամբ... Ան ֆրանսական մշակութային կեանքին մէջ քիչ մը տեղ բացաւ հայ գրականութեան ու մշակույթին» (**Հատուցեան Ռ., 2007**): Ըստ Հատուցեանի՝ սա բացառիկ առաքելություն է, որ «աւելի ծանր կը կշռէ, քան թէ անոր ստեղծագործութիւնները» (**Հատուցեան Ռ., 2007**):

Ռ. Հատուցեանի տարեգրության հերոսներից շատերը եղել են բախտակից ընկերներ, կրել ճակատագրի նույն հարվածները, սատարել իրար կարիքի, հիասթափության պահերին: «Յուշատետր»-երի վավերացումները

«պատճառաբանում» են Շահնուրի՝ նահանջի տրամաբանությունն ու Վ.Շուշանյանի ըմբոստությունը՝ ընդդեմ նահանջի, Ա. Արփիարյանի մտավախությունները ու Ե. Տեմիրճիպաշյանի միստիկական տառապանքը, Հ. Թլկատինցու անմնացորդ նվիրումն իր դպրոցին ու Թեքեյանի՝ հայրենի փառաբանությունները, Սիպիլի ու Հրանտ Ասատուրի սիրո հմայքը, Թեոդիկի ու Արշակունիու բարձր իդեալները, այս ամենի հետ նաև՝ հայի, հայ գրականության ու լեզվի հարատևելու անհրաժեշտությունը: «Իրենց հայրենիքն հեռացած, օտար ափերու վրայ հայկական ինքնությունը պահելու պայքարի մը զինուորագրուած ինչ ինչ հայ գրագէտներ մագոգի նման կ'երթեւեկէին Երոպայի զանազան քաղաքներուն մէջ, երբեմն երթալով մէկ կողմէ մինչեւ Ամերիկա, մէկ կողմէ ալ մինչեւ Հնդկաստան» (**Հատուճեան Ռ., 2007**), - գրում է Ռ. Հատուճյանը՝ պատկերելով Եղեռնից մագապուրծ հայ գրողների իրական կյանքը:

«Յուշատետր»-երը խիստ ու արդարացի գնահատական ունեն նաև հայ ժողովուրդի համար մեկ այլ դաժան՝ ստալինյան ժամանակահատվածի նկատմամբ, որը նշանավորվեց որպես «Երկրորդ ապրիլի 24», որպես ազգային արվեստի ու գրականության գլխատման, մշակութային արժեքների ոտնահարման արյունոտ տարեգրություն, ինչպես նաև՝ ամբողջովին հայրենիքին նվիրված, սակայն անարդար մեղադրանքների համար «մաքրագործումի» ենթարկված տաղանդավոր հայորդիների դատապարտում և աքսոր: «Կարծես թէ չէր բաւեր այն մաքրագործումը որ մեր մշակոյթին դէմ կը դարբնուէր ինչ ինչ ժխտական օտար ուժերու կողմէ...» (**Հատուճեան Ռ., 2007**), - գրել է Ռ. Հատուճյանը Զ. Եսայանի, Եղ.Չարենցի, Գ.Մահարու և այլոց մասին: Նա ծավալվում է մեկ այլ կարևոր հարցադրման շուրջ. ովքե՞ր են իսկական հայրանասերները, արդյոք նրա՞նք, ովքեր «խաչվեցան ո՛չ թէ օտարութեան մէջ, այլ իրենց հայրենիքին հողերուն վրայ» (**Հատուճեան Ռ., 2007**), թե «այն միւսները, որոնք այս գրագէտները կը խաչէին, կը հալածէին, կ'աքսորէին յանուն հայրենիքին» (**Հատուճեան Ռ., 2007**):

Պատմական զարգացումները փշրեցին սուտ գաղափարախոսությունները, համայնավարական սահմանափակումները և սոցիալիստական ռեալիզմի պարտադրած սխեմատիզմը, որոնք ոչ միայն կասեցրել են խորհրդահայ գրականության զարգացման բնականոն ընթացքը, այլև դարձել վտանգավոր խոչընդոտներ՝ տաղանդավոր հեղինակների կենսագործունեության, նրանց գրական երկերը արժևորելու ճանապարհին: Եվ փաստն այն է, որ բոլոր դատապարտվածները ի սկզբանե ոգևորվել ու իրենց ստեղծագործություններում փառաբանել են սովետների կուսակցական կարգախոսները: Սակայն տարիների հետ անդրադարձել են արվեստի ու գրականության գեղագիտական մնայուն հատկանիշներին և ձաղկել ամեն մի ազգային գաղափար փոշիացնող և արժեզրկող «հնթերնասիոնալը, համայնավար կարգերը, ոչնչությունները մարդ դարձնող, մարդերն ալ ոչնչություն դարձնող» (**Հատուճեան Ռ., 2008, Յուշատետր 60**) վարչակարգը:

Ռ. Հատուճյանը անդրադարձել է նաև խորհրդահայ այն գրական սերնդին, որն անտեսեց սոցիալիստական ռեալիզմի պարտադրած կաղապարները, կոտրեց թեմատիկ սահմանափակումների պատնեշները և մերձեցման ինչ-ինչ եզրեր փնտրեց Սփյուռքում ստեղծվող գրականության հետ: Այս նոր փուլի առաջատարը դարձավ հախտուն ու անհանգիստ խառնվածքի բանաստեղծ Պարոյր Սևակը՝ Ռ. Հատուճյանի սերնդակիցը, փիլիսոփայական մտածումներում ինչ-որ չափով նրա խոհակիցը: «Պարոյր Սևակին հետ գլուխ գլխի» խորագրով էսսեների շարքում Ռ. Հատուճյանը գրում է բանաստեղծի՝ անհատի և աշխարհի, կյանքի և մահվան մասին խոհափիլիսոփայական մտորումների, իրերի փոխհարաբերությունների շուրջ ինքնատիպ ձևակերպումների, ժամանակակից մարդու կերպարում խոհն ու զգացմունքը համատեղելու նրա տաղանդի մասին: «...Բանաստեղծ Պարոյր Սևակի կարծիքով մեռնիլը դժուար է ո՛չ թե անոր համար որ ինք պիտի բաժնուի աշխարհի գեղեցկություններէն, այլ անոր համար, որ կը վախնայ թէ ինք իրեն հետ կը տանի այդ գեղեցկությունները, իր կեանքին հետ կը վերջանան նաեւ կեանքի

գեղեցկութիւնները» (**Հատտէճեան Ռ., 2006**),- ընդհանրացնում է Ռ. Հատտէճեանը:

Հայ գրականության վերջին տասնամյակների գրական կյանքին վերաբերող այունակներում հեղինակը հատկապես կարևորել է ազգային մտածողության՝ նոր ձևով դրսևորվելու ձգտումը թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ բանաստեղծության մեջ: Թեմաների ընտրության համատեքստում Ռ. Հատտէճեանը ընդհանրության եզրեր է նկատել Պ. Սևակի և Զ. Խրախունու, Մ. Մարգարյանի և Ի. Սարըալյանի, Զահրատի և Հ. Սահյանի, Գ. Էմինի և Ա. Ծառուկյանի ստեղծագործություններում:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հեղինակները, որոնց մասին գրել է Ռ. Հատտէճեանը, հաճախ ընտրվել են պատահական, առանց նախապես պատրաստված ծրագրի: Նրա համար կարևորը ստեղծագործող անհատի ու ստեղծագործության արժևորումն է, մատչելի վերլուծություններն ու ճիշտ համադրությունները, նաև փաստերի իսկությունն ու ընթերցողին հետաքրքրելու արվեստը: Գրական դիմանկարների գեղարվեստավավերագրական պատումներում նկատելի են Ռ. Հատտէճեանի փիլիսոփայական անդրադարձումները, որ բնութագրում են իրականության մեջ մարդկային բանականության էկզիստենցյալ տառապանքը: Շոշափելով ստեղծագործող անհատի և իր ժամանակի անհաշտությունները՝ հեղինակը պատկերել է գրամշակութային բնականոն ընթացքի խզումները, բացահայտել դրանց դրդապատճառները: Այն, որ «Յուշատետր»-երը «ճակատագրուած են ապրելու, մնալու եւ խորհրդածութեան քանդակներով զարդարելու մեր գրականութեան գեղայարդար պարտէզը» (**Խրախունի Զ., 1991**) համարվում է կարևոր ձեռքբերում ու «մրցանիշ»:

Ռ. Հատտէճեանը, «Յուշատետր»-ի էջերում արժևորել է հայ գրական ժառանգությունը՝ գրելով. «Ժողովուրդի մը համար պատիւ է ունենալ այսքան որակաւոր ու ներշնչեալ բանաստեղծներ: Բայց այդ պատիւը կը կրկնապատկուի, կը քառապատկուի, եթէ ժողովուրդը կ'անդրադառնայ այդ բանաստեղծներուն արժէքին եւ տէր կը կանգնի անոնց վաստակին» (**Հատտէճեան Ռ., 2000**):

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. **Գալստյան Ա. (2021)**, Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն, Երևան, «Էդիտ Պրինտ» հրատ.:
2. **Խրախունի Ջ. (1991)**, Նշմարներ միա երեսէն, Իսթանպուլ, «Մուրատ օֆսէթ» տպ.:
3. **Թորանեան Թ. (2002)**, Ռուպէր Հատտէճեան.Ամբողջական գրագէտը, Հալէպ, «Կիլիկիա» տպ.:
4. **Հատտէճեան Ռ. (2000)**, Յուշատետր 39, Պտոյտ մը հայ բանաստեղծութեան պարտէզին մէջ, Իսթանպուլ, «Մուրատ օֆսէթ» տպ.:
5. **Հատտէճեան Ռ. (2006)**, Յուշատետր 47, Առագաստ դէպի բանաստեղծութիւն, Իսթանպուլ, «Մուրատ օֆսէթ» տպ.:
6. **Հատտէճեան Ռ. (2007)**, Յուշատետր 59, Պտոյտ հայ գրականութեան քուլիսներուն մէջ, հտ. Ա, Իսթանպուլ, «Մուրատ օֆսէթ» տպ.:
7. **Հատտէճեան Ռ. (2008)**, Յուշատետր 60, Պտոյտ հայ գրականութեան քուլիսներուն մէջ, հտ. Բ, Իսթանպուլ, «Մուրատ օֆսէթ» տպ.:
8. **Հատտէճեան Ռ., (2008)**, Յուշատետր 61, Պտոյտ հայ գրականութեան քուլիսներուն մէջ, հտ. Գ, Իսթանպուլ, «Մուրատ օֆսէթ» տպ.:
9. **Յակոբեան Մ. (2013)**, Անվերջակէտ զրոյց մեր գրականութեան երախտաւորներուն հետ, Իսթանպուլ, «Մուրատ օֆսէթ» տպ., 2013:
10. **Շառոյեան Լ. (2000)**, Յաւերժօրէն սիրելի «մերին Պոլիսը», Իսթանպուլ, «Մուրատ օֆսէթ» տպ.:
11. **«Պոլսահայ գրականութիւնը 20-րդ դարի կէսից մինչեւ մեր օրերը» (2023)**, Երևան, «Արմավ» հրատ.:
12. **«Ռուպէր Հատտէճեան գրական գործունէութեան 40-ամեայ հանգրուանին» (1987)**, Իսթանպուլ, «Մուրատ օֆսէթ» տպ.:

## REFERENCES

1. **Galstyan A., (2021)**, Arevelahay gegharvestakan vaveragrowt'yan lezown /The Language of Eastern Armenian Artistic Documentary/, Yerevan, "Edit Print" pub.
2. **Khrakhuni Z., (1991)**, Nshmarner miws erese'n /Observations from the Other Side/, Istanbul, "Murad Ofset" pub.
3. **Toranian T., (2002)**, R'ope'r Hatte'twean.Amboghjakan grage'ty' /Robert Hattejian: The Complete Intellectual/, Aleppo, "Kilikia" pub.
4. **Hattejian R. (2000)**, Yowshatetr 39, Ptoyt my' hay banasteghc'owt'ean parte'zin me'j /Memoir 39, A Stroll in the Garden of Armenian Poetry/, Istanbul, "Murad Ofset" pub.
5. **Hattejian R. (2006)**, Yowshatetr 47, Ar'agast de'pi banasteghc'owt'iwn /Memoir 47, Sail towards Poetry/, Istanbul, "Murad Ofset" pub.
6. **Hattejian R. (2007)**, Yowshatetr 59, Ptoyt hay grakanowt'ean qowlisnerown me'j /Memoir 59, A Stroll Behind the Curtains of Armenian Literature/, vol. A, Istanbul, "Murad Ofset" pub.
7. **Hattejian R. (2008)**, Yowshatetr 60, Ptoyt hay grakanowt'ean qowlisnerown me'j /Memoir 60, A Stroll Behind the Curtains of Armenian Literature/, vol. B, Istanbul, "Murad Ofset" pub.
8. **Hattejian R., (2008)**, Yowshatetr 61, Ptoyt hay grakanowt'ean qowlisnerown me'j /Memoir 61, A Stroll Behind the Curtains of Armenian Literature/, vol. C, Istanbul, "Murad Ofset" pub.
9. **Hakobyan M. (2013)**, Anverjake't zroyc mer grakanowt'ean eraxtawornerown het /Endless Conversations with the Distinguished Figures of Our Literature/, Istanbul, "Murad Ofset" pub.
10. **Sharoyan L. (2000)**, Yawerjho're'n sireli «merin Polisy'» /Forever Beloved "My Istanbul"/, Istanbul, "Murad Ofset" pub.

11. «Polsahay grakanowt'iwny' 20-rd dari ke'sic minchew mer o'rery'» /"The Literature of Armenians from Constantinople: From the Mid-20th Century to the Present Day"/ (2023), Yerevan, "Arnav" pub.
12. «R'ope'r Hatte'twean grakan gorc'owne'owt'ean 40-ameay hangrowanin» /"Robert Hattejian's Literary Activity: 40-Year Milestone"/ (1987), Istanbul, "Murad Ofset" pub.

Мануш Балаян

**Художественно-документальные обоснования эссе "Ушатетр"**

**(Записная книжка)**

**Заключение**

*Ключевые слова и выражения:* "Ушатетр", эссе, поэтический образ, литературный портрет, оценивание, хроника, художественно-документальная проза, современность, историзм, идеология.

Цель статьи - представить эссе "Ушатетр" редактора Ропера Аттчяна, опубликованные в константинопольской ежедневной газете «Мармара», а затем изданные отдельными книгами, как художественное издание обращающееся к повседневным и историческим событиям.

Данная тема является актуальной, так как эстетические аспекты эссе Р. Аттечяна под названием "Ушатетр" отражают когнитивные истоки замысла автора, точное восприятие времени, а также демонстрируют тенденции в развитии современной прозы.

В соответствии с этой целью, нами были исследованы формальные особенности эссе "Ушатетр", которые охарактеризованы как небольшие произведения с документальной основой, художественным стилем, сочетающим историчность и актуальность в разнообразии тематики повествования.

Методом сопоставительного анализа мы рассмотрели эссе, опубликованные в "Ушатетр", которые касаются армянских литературных деятелей, их общественной и творческой деятельности. Мы обобщили основные содержательные элементы, эстетические принципы и формы художественного выражения авторов, выбранных Р. Аттецяном.

Используя метод хронологического анализа, статья рассматривает "Ушатетрер" как своеобразные хроники, которые через творческие обобщения предоставляют реальную картину последовательных исторических периодов.

В заключении мы дополнили обобщения художественно-документальных рассказов о литературных портретах философскими формулировками Р. Аттецяна, характеризующими экзистенциальные переживания человеческого разума.

Manush Balayan

## Cultural-documental observations of the essay "Hushatetr" (Memoir)

### Conclusion

**Key words and expressions:** *"Hushatetr" essay, poetic image, literary portrait, evaluation, chronicle, art-documentary prose, modernity, historicism, ideology.*

The purpose of this article is to present the "Memoir" (Յուշատետր) essays by editor-in-chief Robert Hattejian, published in Istanbul's *Marmara* daily and later as separate books, as artistic journalistic reflections on daily and historical events.

This topic is significant because the aesthetic elements of R. Attechian's essays in "Hushatetr" reflect the cognitive origins of the author's intent, an accurate perception of the era, and demonstrate trends in the development of contemporary prose.

In line with this goal, we have examined the formal characteristics of the "Hushatetr" essays, which are defined by their documentary foundation, artistic style, and a combination of historicity and relevance within a diverse range of narrative themes.

Through comparative analysis, we explored the essays published in "Hushatetr" focusing on Armenian literary figures, as well as their public and creative endeavors. We summarized the key content elements, aesthetic principles, and forms of artistic expression of the authors selected by R. Attechian.

Using chronological analysis, the article considers "Hushatetr"-s as a unique form of chronicle that, through creative generalizations, provides an authentic depiction of successive historical periods.

In conclusion, we supplemented the artistic-documentary accounts of literary portraits with R. Attechian's philosophical reflections, which characterize the existential experiences of the human mind.

**Մանուշ Բալայան** - Այբ դպրոց, հայերենի ուսուցչուհի: Գիտական հետաքրքրությունները՝ նորագույն շրջանի հայ գրականություն: Հեղինակ է շուրջ տասը հոդվածի: [manush.balayan@mail.ru](mailto:manush.balayan@mail.ru)

**Мануш Балаян** - Школа Айб, преподаватель армянского языка. Сфера научных интересов: Новейшая армянская литература.: Автор около десяти статей.

[manush.balayan@mail.ru](mailto:manush.balayan@mail.ru)

**Manush Balayan** - Ayb School, teacher of Armenian language. Scientific interests: Modern Armenian literature. Author of about ten articles.

[manush.balayan@mail.ru](mailto:manush.balayan@mail.ru)

*Խմբագրություն է ուղարկվել 14.01.2025թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 24.01.2025թ.*

*Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.*

## ՇԱՀԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԸՆԴՀԱՏԱԿՅԱ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ (1978-1980 ԹԹ.)

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.125

## ԱՄՓՈՓՈՒՄ

1960-ական թթ. ԽՍՀՄ մի շարք հանրապետություններում լայն թափ ստացած այլախոհության ընթացքում ձևավորվեցին մի շարք այլախոհական ընդհատակյա կազմակերպություններ, որոնք առավել կանոնակարգված և կազմակերպված դարձրին այլախոհական պայքարը: Բացառություն չէր նաև Խորհրդային Հայաստանը, որտեղ ակտիվորեն ընթանում էին այլախոհական շարժումներ, որոնք արտահայտում էին հայ հայրենասիրական շրջանակների ձգտումներն ու պահանջները՝ սկսած ազգային հարցերի բարձրաձայնումից, մարդու իրավունքների պաշտպանությունից մինչև Հայաստանի անկախության վերականգման համար պայքար:

Խորհրդային Հայաստանում հիմնադրված այլախոհական ընդհատակյա կազմակերպություններից իր ուրույն դերն ու նշանակություն է ունեցել 1978 թ. հիմնադրված «Հայ երիտասարդների միությունը» (այսուհետ՝ ՀԵՄ):

ՀԵՄ-ն ուներ ծրագիր, կանոնադրություն, երդման տեքստ: Կազմակերպության հիմնական նպատակն է եղել անջատել Խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ-ից, վերամիավորել Հայաստանից բռնազավթված և Թուրքիային փոխանցված հայկական տարածքները և վերականգնել Հայաստանի անկախությունը: Ըստ նախատեսված ծրագրի՝ Կոմունիստական կուսակցությունը պետք է երկրում հռչակվեր օրենքից դուրս:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել Հայաստանի անկախության վերականգման համար պայքար մղած այս կազմակերպության հիմնադրման ընթացքը, գաղափարախոսական հիմքերը և առաջնահերթությունները, նրա

անդամների ծավալած գործունեությունը և հետագա զարգացումները՝ Պետական անվտանգության կոմիտեի (այսուհետ՝ ՊԱԿ) կողմից բացահայտվելուց հետո:

**Քանալի բառեր և արտահայտություններ.** Հայ երիտասարդների միություն, Ազգային միացյալ կուսակցություն, այլախոհություն, Հայաստանի անկախություն, «կոմունիստական բռնապետություն», «Երբ բոլշևիկները գլուխ բարձրացրին», «Ռուսները տիրեցին մեզ»

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1978 թվականին Խորհրդային Հայաստանում հիմնվում է ընդհատակյա կազմակերպություն, որը, ըստ էության, վերջին կանոնակարգված այլախոհական կառույցն էր Խորհրդային Հայաստանում: 1966թ. հիմնադրված Ազգային միացյալ կուսակցության (այսուհետ՝ ԱՄԿ) (**Հարությունյան Շ., 2024, «Գիտական Արցախ»**) հիմնադիրներից Շահեն Հարությունյանի եղբայրը՝ ԱՄԿ անդամ Մարգարետ Հարությունյանը, 1978 թվականին հիմնում է «Հայ երիտասարդների միություն» այլախոհական կազմակերպությունը (**Հարությունյան Շ., 2024, «Լրաբեր»**): Այս կազմակերպությունն ուներ խիստ հակախորհրդային կեցվածք, որի գաղափարական առանցքում էր Հայաստանի անկախության վերականգման համար պայքարը: ՀԵՄ-ը, ըստ էության, գտնվում էր Խորհրդային Հայաստանի այլախոհության երեք հիմնական ուղղություններից մեկի՝ անկախության պայքարի գաղափարական դաշտում (**Հարությունյան Շ., 2024, «Գիտական տեղեկագիր»**):

### ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածը շարադրվել է պատմական, պատմահամեմատական մեթոդների միջոցով: Իրականացվել է, պետական և անձնական արխիվային նյութերի, հարցազրույցների, հուշագրությունների կոնտենտ վերլուծություն:

### ՔՆՆԱՐԿՈՒՄ

1978թ. հիմնադրված «Հայ երիտասարդների միության» անդամ Վարդան Հարությունյանը վերհիշում է ընդհատակյա կազմակերպության ստեղծման մասին՝ պատմելով. «ԱՄԿ հիմնադիրներից Շահեն Հարությունյանի եղբայրը՝

Մարզպետ Հարությունյանը, 1977-78թթ. Շահեն Հարությունյանի և Հայկազ Խաչատրյանի հերթական դատապարտումներից հետո ստեղծում է «Հայ երիտասարդների միություն» անվամբ ԱՄԿ երիտասարդական մասնաճյուղը: Մարզպետը պատմում էր, որ նման մասնաճյուղ ունենալու ծրագիրը եղել է 1975-76թթ., բայց տարբեր պատճառներով անընդհատ ձգձգվել էր: Ծրագրի հեղինակների կալանավորումը թելադրել էր Մարզպետին ի կատար ածել մասնաճյուղի հիմնումը» (**Հարությունյան Վ., 2022**):

Մարզպետ Հարությունյանը, հիմնելով ՀԵՄ-ը, կազմակերպության ղեկավար է նշանակել Իշխան Մկրտչյանին, իսկ ինքը եղել է խորհրդատու և ընդհանուր ղեկավար (**ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 23**):

1979թ. մայիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում ՀԵՄ-ին են միանում Հովհաննես Աղաբաբյանը, Վարդան Հարությունյանը և Սամվել Եղիազարյանը: ՀԵՄ-ի ծրագիրը նախատեսում էր աստիճանաբար ընդլայնել կազմակերպությունը և նոր մարդկանց ներգրավել շարժմանը: Այս նպատակի իրագործման համար կազմակերպության անդամներն իրականացնում են տարաբնույթ գաղափարական հանդիպումներ Խորհրդային Հայաստանի տարբեր շրջաններում: Թեև այդ ժամանակահատվածում տարբեր մարդիկ ուղղակիորեն կամ անուղղակիորեն համագործակցում են ՀԵՄ-ի կամ նրա անդամների հետ, այնուամենայնիվ կազմակերպության առանցքը կազմել են վերոնշյալ մարդիկ, որոնք հետագայում դատապարտվեցին ազատագրկման ծավալած գործունեության համար:

1979թ. Մարզպետ Հարությունյանը և Իշխան Մկրտչյանը, գրել և տարածել են «Ազգային ազատագրական և հայրենասիրական շարժման շարքերը» ու «Ազգային ազատագրական կազմակերպությունների անվտանգության կանոնները» խորագրերով հոդվածներ, որոնք ունեին հակախորհրդային բովանդակություն (**ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 23**): Այդ հոդվածներում հեղինակները պնդել են, որ ԽՍՀՄ-ում գոյություն ունեն ազգային ազատագրական շարժումներ: Քննադատելով Խորհրդային իշխանություններին՝ հոդվածներում նշում են.

«Խորհրդային պետությունը ղեկավարվում է հակամարդկային օրենքներով՝ վարելով դեսպոտիզմի և մտրակի քաղաքականություն»: Հողվածների վերջում հայ ժողովրդին կոչ էր արվում դուրս գալ պայքարի հանուն ազատության և անկախության:

Իշխան Մկրտչյանը ձեռնամուխ է եղել տարաբնույթ հողվածների տպագրմանն ու տարածմանը, որոնք արտացոլում էին ՀԵՄ-ի շուրջ հավաքված մարդկանց գաղափարական համոզմունքները: Ի. Մկրտչյանի նախաձեռնությամբ հայկական այլախոհական շրջանակներում լայնորեն տարածվել են «Մայրենի լեզու», «Խորթ անուններ», «Չսպիացած վերք», «Ավ. Ահարոնյանի նամակները ուղղված Չիչերինին», «Ազգային իրավունք» և այլ հողվածներ (**ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 23**): Սույն հողվածների բովանդակությունը խիստ քննադատություններ և մեղադրանքներ էր ուղղում ԽՍՀՄ-ի դեմ, որտեղ մասնավորապես նշված էր, որ բոլշևիկները վաճառել են հայկական ազգային շահերը, օգնել են հայ ժողովրդի թշնամիներին և 1918 թվականից հանդիսացել են հայերի գերեզմանոցը:

1979-1980թթ. ընթացքում Վարդան Հարությունյանը կազմել և տարածել է մի շարք ազգային, հակախորհրդային և հայրենասիրական բովանդակություն ունեցող բանաստեղծություններ, ինչպիսիք էին «Հայ կոմունիստներին», «Իմ աստվածներին», «Հիշատակ», «Արդարություն ես երագում, ով մարդ», «Պատգամ իմ ընկերներին», «Ես նորից կգամ», «Մորթեցիք, մորթեցիք դուք», «Ես կգամ հեթանոս երգերով», «Հավատացեք իմ երդմանը, ընկերներ՛ր», «Եղել է եղեռն ու կռիվ» «Հաճախ է սիրտս գոռում ու գոչում», «Ինչու դու, հայ ժողովուրդ», «Ռուսները տիրեցին մեզ», «Ահա ովքեր են մեր եղբայրները» և այլն (**ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 23**): Վ. Հարությունյանը բոլոր այս գրվածքներում կոչ է անում դուրս գալ պայքարի Խորհրդային Միության դեմ, պայքարել Հայաստանի անկախության վերականգման համար: Բացի այդ, հեղինակը պնդում էր, որ հայ բոլշևիկները Հայաստանը վաճառել են թուրքերին, իսկ Սոցիալիստական համակարգում գործում էր կեղծ օրենքներ:

1979թ. Սամվել Եղիազարյանը պատրաստել է «Մարքսիզմ-Լենինիզմի տեսությունները և ընդհանուր նպատակները» վերնագրով հոդված (**ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 23**), որի բովանդակության մեջ, հեղինակը այս տեսությունը համարում է ուտոպիա, որը նպատակ ունի ստրկացնել փոքր ազգերին: Բացի այդ, խիստ քննադատաբար է ներկայացված Խորհրդային իրականությունը, իսկ ԽՍՀՄ-ը ներկայացված է որպես միջազգային դահիճ:

Նույն թվականի ընթացքում Հովհաննես Աղաբաբյանը պատրաստել է ազգային գաղափարախոսությամբ, հակախորհրդային մի շարք բանաստեղծություններ, ինչպիսիք են «Գորովակով երկիր հայոց», «Կռացել է հարվածների տակ», «Բազում սմբակների տակ», «Պատգամավոր դարձած» խորագրերով բանաստեղծությունները (**ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 23**): Վերոնշյալ աշխատանքներում հեղինակը ներկայացրել է իր դիրքորոշումներն առ այն, որ Խորհրդային Ռուսաստանը ստրկացրել է Հայաստանը և հարստահարում է այն: Հ. Աղաբաբյանը կոչ է արել հայ ժողովրդին պայքարել Հայաստանի անկախության վերականգման համար:

ՀԵՄ-ի անդամների մոտ եղած թոուցիկները, բանաստեղծությունները, հոդվածներն ու այլ արժեքավոր նյութեր լայնորեն տարածվել են հայկական այլախոհական միջավայրում և մասնավորապես, լայն տարածում են գտել անկախության պայքարն առաջնային համարող շրջանակներում:

1980թ. մայիս-հունիս ամիսներին ՊԱԿ-ը բացահայտում և կալանավորում է ՀԵՄ հինգ անդամներին՝ Մարգարետ Հարությունյանին, Իշխան Մկրտչյանին, Վարդան Հարությունյանին, Սամվել Եղիազարյանին, Հովհաննես Աղաբաբյանին (**Հարությունյան Շ., 2024, «Լրաբեր»**):

ՀԵՄ անդամների նկատմամբ առաջադրվել է մեղադրանք ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա և պրոպագանդա) և 67-րդ հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպման գործունեությունը, ինչպես նաև հակասովետական կազմակերպությանը

մասնակցելը) (A Chronicle of Current Events): 1981թ. մայիսի 28-ին դատարանի կայացրած վճռով Մարզպետ Հարությունյանը և Իշխան Մկրտչյանը դատապարտվում են 7 տարի ազատազրկման և 5 տարի աքսորի, Վարդան Հարությունյանը՝ 5 տարի ազատազրկման և 3 տարի աքսորի, Սամվել Եղիազարյանը՝ 4 տարի ազատազրկման, Հովհաննես Աղաբաբյանը՝ 3 տարի ազատազրկման (**ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 23**):

Կալանավորումից հետո նույնպես, գրեթե բոլորը շարունակում էին հավատարիմ մնալ այն համոզմունքներին և գաղափարներին, ինչի համար ձերբակալվել էին: Այսպես. Մարզպետ Հարությունյանը կալանավորվելուց հետո քննչական մեկուսարանում պատրաստել է հակախորհրդային, ազգայնական բովանդակությամբ հոդված՝ «Երբ բոլշևիկները գլուխ բարձրացրին» վերնագրով (**ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 23**): Այս հոդվածում հեղինակը նշել է, որ բոլշևիկներն ամենասկզբից վաճառել են հայ ժողովրդի շահերը, ԽՍՀՄ-ում գոյություն ունի կոմունիստական բռնապետություն, չկա ազատություն, իսկ հայ ժողովուրդը ենթարկվում է հետապնդման: Իսկ Սամվել Եղիազարյանը կալանավորումից հետո քննչական մեկուսարանում պատրաստել է հակախորհրդային, հայրենասիրական հոդվածներ, որոնք ունեին հետևյալ վերնագրերը. «Ազգի ոգին մի անգամ», «Շիրազ ունենք բիրիական», «15 թ. Մեծ եղեռն», «Հայոց քաջեր և դուք սիրով», «Մարտական է քարոզը Մուհամեդի», «Եթե դու հարուստ ես՝ քո լեզվով», «Եվ մեր հեթանոս նախնիները», «Սպիտակ լուսություն» (**ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 23**): Այս հոդվածներում ներկայացված էին հեղինակի դիրքորոշումները Խորհրդային Միության մասին: Նշված էր, որ ԽՍՀՄ-ում բացակայել են ժողովրդավարություն, ազգերի ազատություն և հավասարություն: Հայ ժողովրդի շահերը ոտնահարվել են, ազգը զրկված է եղել ինքնուրույնությունից, դատապարտված է եղել տարրալուծման և օգտագործվել է ռուսների կողմից իրենց շահերի համար:

Վարդան Հարությունյանն իր հուշերում մանրամասն ներկայացրել է ՀԵՄ անդամների՝ կալանավայրում անցկացրած տարիները, որոնք եղել են փորձություններով և դժվարություններով լեցուն: Չնայած բանտային դժվար

կյանիքին և հալածանքներին՝ տեսնում ենք ՀԵՄ անդամների անզիջում նվիրվածությունը Հայաստանի անկախության պայքարին: Ինչպես հիշում է Վ. Հարությունյանը, բանտում գտնվելու ժամանակ որոշել են նշել Հայաստանի առաջին Հանրապետության հռչակման օրը՝ մայիսի 28-ը, որի ընթացքում վերահաստատել են պայքարի ճիշտ ճանապարհի ընտրելու մասին իրենց որոշումը, խոսել Հայաստանի անկախության անհրաժեշտության մասին **(Հարությունյան Վ., 2022):**

ՀԵՄ-ի խիստ հակախորհրդային կեցվածքը և Հայաստանի անկախության պայքարի անմնացորդ նվիրվածությունը խստագույնս պատժվել է Խորհրդային իշխանությունների կողմից: ՀԵՄ անդամները դժվարին բանտային ճանապարհ են անցնում: Ռուս նշանավոր ակադեմիկոս, այլախոհ, իրավապաշտպան Յուրի Օլովը, որը ՀԵՄ հիմնադիր-ղեկավար Մարգարետ Հարությունյանի հետ գտնվելով նույն կալանավայրում, նրան համարելով իր լավագույն ընկերը, իր հուշերն ամփոփող գրքում մանրամասն ներկայացրել է Մարգարետ Հարությունյանի դժվարին բանտային տարիները **(Orlov Y., 1991):**

Մարգարետ Հարությունյանի նկատմամբ իրականացված դաժան վերաբերմունքի մասին է պատմում Վարդան Հարությունյանը. «Հատկապես դաժան են վարվում Մարգարետ Հարությունյանի հետ: Ջարդում են նրա կողոսկրերն ու վնասում կրծքավանդակն այնպես, որ Մ. Հարությունյանն առանց կողմնակի օգնության շարժվել կամ խորը շնչել չի կարողանում: Մեկը պետք է սեղմած պահեր կրծքավանդակը, որպեսզի նա կարողանար խորը շնչել կամ հազալ: Ջարդված կողոսկրերից մեկը վնասել էր թոքը, որի հետևանքները պարզվեց ազատ արձակվելուց հետո՝ 7 տարի անց: Էտապի ընթացքում Մ. Հարությունյանն այնքան ծանր վիճակում է եղել, որ քաղաքական կալանավորների համար նախատեսված կալանավայրերը հրաժարվել են ընդունել նրան, որպեսզի նրա շատ հավանական մահվան դեպքում պատասխանատվություն չկրեն» **(Հարությունյան Վ., 2014):**

1981թ. ՀԵՄ անդամ և երակարատև ազատագրկման ու արքայի դատապարտված Իշխան Մկրտչյանը Ռոստովի կալանավայրից փախուստի է դիմել: Ամիսներ անց հայտնաբերվել է ՊԱԿ աշխատակիցների կողմից և նրան կրկին տեղափոխել են Ռոստովի բանտ: Խորհրդային իշխանությունները դաժան հաշվեհարդար են տեսնում Ի. Մկրտչյանի նկատմամբ՝ դաժանագույն կտտանքների ու հալածանքների ենթարկելով նրան, որից հետո 24-ամյա երիտասարդի առողջությունը քայքայվում է: Այս կտտանքներից բացի, Ի. Մկրտչյանի պատժաչափին ավելացրին ևս 3 տարի ազատագրկում՝ ընդհանուր դարձնելով 10 տարի ազատագրկում և 5 տարի արքայ: 1985թ. ապրիլի 24-ին՝ Եղեռնի զոհերի հիշատակի օրը, պատժիչ մեկուսարանի մենախցում 28 տարեկանում, անհասկանալի և մինչև օրս չպարզված հանգամանքներում մահացել է Իշխան Մկրտչյանը (**Հարությունյան Վ., 2014**):

Հակախորհրդային անկախական գաղափարներին հավատարիմ մնալու տեսանկյունից կարևոր է ընդգծել ՀԵՄ ամենաերիտասարդ անդամի՝ Վարդան Հարությունյանի նամակը արքայավայրից, որը հրապարակվել է 1987 թվականին: Արքայավայրից գրված նամակում, որը կոչվում է «Ինչո՞ւ ես ներում չեմ գրում», Վարդան Հարությունյանը բացատրում է, թե ինչպես է ձեռք բերել հակախորհրդային գաղափարներ և ինչու է պայքարում անկախ Հայաստանի համար, և թե ինչու ներման խնդրանքով չի դիմում Խորհրդային իշխանություններին: Նամակի բովանդակությունն ըմբոստության հերթական դրսևորումն էր անկախության պայքարի համար բանտարկված Վարդան Հարությունյանի կողմից (**Гласность, 1987**):

### **ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

«Հայ երիտասարդների միություն» ընդհատակյա կազմակերպությունը առանցքային նշանակություն է ունեցել Հայաստանի անկախության վերականգման համար պայքարում: Այս կազմակերպությունն ամբողջովին հարել է անկախության պայքարի այլախոհական ուղղությանը և եղել է, ըստ էության,

վերջին ձևավորված ընդհատակյա կազմակերպությունը Խորհրդային Հայաստանում:

ՀԵՄ-ն իր ազդեցիկ դերակատարումն է ունեցել Խորհրդային Հայաստանում ծավալվող այլախոհական շարժումների և այլախոհների գաղափարական մտածողության ձևավորման վրա: Հատկանշական կարևորություն ունի այն հանգամանքը, որ ՀԵՄ անդամները շարունակել են Հայաստանի անկախության վերականգման պայքարում անդրդվելի կեցվածք դրսևորել ՊԱԿ-ի կողմից կալանավորվելուց, այնուհետև բանտային դժվարին պայմաններում: Այս ամենի ցայտուն օրինակն է ՀԵՄ անդամների թե՛ կալանավորման սկզբնական ժամանակահատվածում գրված հոդվածները, արժանապատիվ կեցվածքը և թե՛ արդեն բանտային տարիների ընթացքում դրսևորած գաղափարական համոզմունքները: Այս համատեքստում կարևոր է ընդգծել, թե ինչպես են բանտային խիստ պահման վայրում գտնվելու պայմաններում անգամ ՀԵՄ անդամները նշել Հայաստանի անկախության հռչակման օրը՝ մայիսի 28-ը, վստահություն հայտնելով, որ իրենք կհասնեն իրենց նպատակին և կազատագերն Հայաստանը՝ վերականգնելով կորսված անկախությունը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Հարությունյան Շ. (2024)**, Այլախոհության գաղափարական ուղղվածությունները Խորհրդային Հայաստանում 1960-80-ական թթ.-ին, «Գիտական տեղեկագիր», N 1 (46), Երևան, էջ 67-78:
2. **Հարությունյան Շ. (2024)**, Ազգային միացյալ կուսակցության հիմնադրումը և նրա դերն ու նշանակությունը Խորհրդային Հայաստանում 1960-80-ական թթ. ընթացող այլախոհական շարժման ընթացքում, «Գիտական Արցախ», № 1(20), Երևան, էջ 34-50:
3. **Հարությունյան Շ. (2024)**, Այլախոհական շարժումների ուժգնացման երկրորդ շրջանը Խորհրդային Հայաստանում (1968-1978թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդես, N 1 (670), Երևան, էջ 95-105:

4. **Հարությունյան Վ. (2014)**, Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում, Երևան, «Վան Արյան» հրատ.:
5. **Հարությունյան Վ. (2022)**, Քաղաքատարկյալի պատմություն, Երևան, «Հայկական ուսումնասիրությունների Անի հիմնադրամ» հրատ.:
6. **Orlov Y. (1991)**, Dangerous Thoughts: Memoirs of a Russian Life, New York, William Morrow & Co.
7. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1191, ց. 20, գ. 23:
8. A Chronicle of Current Events, The Trial of Marzpet Arutyunyan, Vartan Arutyunyan, Ishkan Mkrtchyan, Samvel Egiazaryan and Oganeg Agababyan, 14 July 1981.
9. **Гласность (1987)**, выпуск II, Москва.

#### REFERENCES

1. **Harutyunyan Sh. (2024)**, Aylaxohowt'yan gaghap'arakan owghghvac'owt'yownnery' Xorhrdayin Hayastanowm 1960-80-akan t't'.-in /Ideological tendencies of dissent in Soviet Armenia in the 1960s and 1980s/, "Scientific bulletin", №1(46), Yerevan, p. 67-78.
2. **Harutyunyan Sh. (2024)**, Azgayin miacyal kowsakcowt'yan himnadrowmy' & nra dern ow nshanakowt'yowny' Xorhrdayin Hayastanowm 1960-80-akan t't'. y'nt'acogh aylaxohakan sharjhman y'nt'acqowm /The establishment of the National United Party and its function and importance in Armenian society during the 1960s–1980s dissent movement/. "Scientific Artsakh", №1(20), Yerevan, p. 34-50.
3. **Harutyunyan Sh. (2024)**. Aylaxohakan sharjhowmneri owjhgnacman erkrord shrjany' Xorhrdayin Hayastanowm (1968-1978t't'.) /The second round of the Soviet Armenian dissident movements' strengthening (1968-1978)/, Journal of Social Sciences "Lraber", №1 (670), Yerevan, p. 95-105.

4. **Harutyunyan V. (2014)**, Aylaxohowt'yowny' Xorhrdayin Hayastanowm /Dissent in Soviet Armenia/, Yerevan, “Van Aryan” publishing house.
5. **Harutyunyan V. (2022)**, Qaghbantarkyali patmowt'yown /Story of a political prisoner/, Yerevan, ““Ani” Foundation for Armenian Studies” publishing house.
6. **Orlov Y. (1991)**, Dangerous Thoughts: Memoirs of a Russian Life, New York, William Morrow & Co.
7. **Hayastani azgayin arxiv** /National Archives of Armenia/, (HAA), F.1191, c.20, g.23.
8. A Chronicle of Current Events, The Trial of Marzpet Arutyunyan, Vartan Arutyunyan, Ishkan Mkrtychyan, Samvel Egiazaryan and Oganeg Agababyan, 14 July 1981.
9. **Glastnost (1987)**, Issue II, Moscow.

Шаген Арутюнян

## "Союз армянской молодежи" подпольная организация(1978-1980)

### Заключение

**Ключевые слова и выражения:** *Союз армянской молодежи, Национальной Объединенной Партии, Инакомыслие, Независимость Армении, «Коммунистическая диктатура», «Когда большевики подняли голову», «Русские правила нами».*

В 1960-х годах формирование нескольких диссидентских подпольных групп во время диссидентского движения, которое набирало обороты в нескольких странах СССР, помогло координировать и управлять диссидентской борьбой. То же самое было и в Советской Армении, где активная диссидентская деятельность формулировала цели и задачи армянских патриотических кругов. Они варьировались от защиты прав человека до продвижения национальных проблем и борьбы за независимость Армении.

Создание в 1978 году «Союза армянской молодежи» (далее именуемого САМ) было одной из диссидентских подпольных групп в Советской Армении с особой функцией и значением.

САМ имел формулировку присяги, устав и программу. Восстановление независимости Армении, воссоединение оккупированных армянских территорий, которые были отобраны у Армении и переданы Турции, и отделение Советской Армении от СССР были основными целями организации. План призывал страну объявить Коммунистическую партию незаконной.

Целью данной статьи является представление процесса создания организации, ее идеологической основы и приоритетов, а также деятельности ее членов и последующих событий после их раскрытия Комитетом государственной безопасности (далее — КГБ).

Shahen Harutyunyan

**"Union of Armenian Youth" underground organization(1978-1980)****Conclusion**

**Key words and expressions:** *Union of Armenian Youth, United National Party, Dissent, Independence of Armenia, "Communist Dictatorship", "When the Bolsheviks Raised Their Heads", "The Russians Ruled Us".*

In the 1960s, the formation of several dissident underground groups during the dissident movement that gained traction in several USSR countries helped to coordinate and govern the dissident fight. The same was true in Soviet Armenia, where active dissident activities articulated the goals and objectives of Armenian patriotic circles. These ranged from the defense of human rights to the promotion of national problems to the fight for Armenia's independence.

The 1978 establishment of the " Union of Armenian Youth" (henceforth referred to as the UAY) was one of the dissident underground groups in Soviet Armenia with a distinct function and importance.

The UAY had an oath wording, a charter, and a program. Restoring Armenia's independence, reunifying the occupied Armenian areas that had been taken from Armenia and given to Turkey, and separating Soviet Armenia from the USSR were the organization's primary objectives. The plan called on the country to declare the Communist Party illegal.

The aim of this article is to present the organization's founding process, ideological underpinnings, and priorities—as well as the activities of its members and subsequent developments following their disclosure by the State Security Committee (henceforth, KGB).

**Շահեն Հարությունյան** - Երևանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետի Հայոց պատմության ամբիոնի հայցորդ,  
[sh.harutyunyan.edu@gmail.com](mailto:sh.harutyunyan.edu@gmail.com).

**Шаген Арутюнян** - Соискатель кафедры Истории факультета Истории Ереванского государственного университета, [sh.harutyunyan.edu@gmail.com](mailto:sh.harutyunyan.edu@gmail.com).

**Shahen Harutyunyan**- Yerevan State University Department of History Chair of the History Ph.D. student., [sh.harutyunyan.edu@gmail.com](mailto:sh.harutyunyan.edu@gmail.com).

*Խմբագրություն է ուղարկվել 14.01.2025թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 23.01.2025թ.*

*Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.*

## ԱՆՆԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ.  
ՀՈՒՅՍԵՐ ԵՎ ՀԻԱՍԹԱՓՈՒԹՅՈՒՆ*DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.126*

## ԱՄՓՈՓՈՒՄ

Սևրի պայմանագիրը Առաջին աշխարհամարտի ավարտն վերաբերող վերսայան համակարգի վերջին պայմանագիրն էր: Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի հիմքում դրվել էին մեծ տերությունների՝ Սան Ռեմոյի վեհաժողովի որոշումները, որոնք քննարկվեցին և հաստատվեցին Փարիզից ոչ հեռու Սևր փոքրիկ քաղաքում՝ 1920 թ. օգոստոսի 10-ին: Պայմանագիրը կնքվեց մի կողմից Թուրքիայի սուլթանական կառավարության, մյուս կողմից՝ գլխավոր դաշնակիցներ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի և Թուրքիայի դեմ պատերազմող մի շարք երկրների՝ Հայաստանի, Բելգիայի, Հունաստանի, Լեհաստանի, Պորտուգալիայի, Ռումինիայի, Չեխոսլովակիայի, Սերբա-խորվաթա-սլովակյան թագավորության (Հարավսլավիայի), Հեջազի միջև: Հայաստանի Հանրապետության անունից պայմանագիրը ստորագրել է Ա. Ահարոնյանը: Միջազգային իրավունքի տեսակետից Հայաստանի Հանրապետությունը՝ որպես պայմանագրի մասնակից, դե յուրե (ըստ օրենքի) ճանաչվում էր պայմանագիր ստորագրած մյուս բոլոր պետությունների կողմից:

Պայմանագիրը բաղկացած էր 13 մասերից, որոնք բոլորը միասին պարունակում էին 433 հոդված: Այն Թուրքիային զրկում էր իր նախկին տարածքի 3/4 մասից, թուրքական տիրապետությունից ազատվում էին հայերը, արաբները, քրդերը և այլ ժողովուրդներ: Ըստ պայմանագրի, որպես մանդատային տարածք, Ազգերի լիգայի միջոցով Պաղեստինը և Իրաքը տրվում էին Անգլիային, Սիրիան և Լիբանանը՝ Ֆրանսիային: Թուրքիան հրաժարվում էր Արաբական թերակղզու և Հյուսիսային Աֆրիկայի նկատմամբ ամեն տեսակի հավակնություններից,

ճանաչում էին Անգլիայի պրոտեկտորատը Եգիպտոսի և Կիպրոսի նկատմամբ: Իտալիային էր անցնում Դոդեկանեզի կղզիները, Հունաստանին՝ Արևելյան Թրակիան՝ Էդիրնեյի հետ, Գալլիպոլի թերակղզին և Իզմիրը:

Նեղուցների գոտին ենթարկվում էր լրիվ ապառազմականացման և անցնում էր Անտանտի կողմից ստեղծված նեղուցների կառավարման միջազգային հանձնաժողով հսկողության տակ: Սևրի հաշտության պայմանագրի համաձայն՝ Թուրքիային մնում էին Կոստանդնուպոլիսը և շրջակայքը՝ բարեխիղճ կատարման պայմանով, իսկ Ասիական Թուրքիան սեղմվում էր մինչև Արևմտյան Անատոլիայի սահմանը: Վերականգնվում էր կապիտուլացիոն ռեժիմը, որով դաշնակից տերությունները իրավունք ունեին միջամտելու Թուրքիայի ներքին գործերին:

***Քանալի բառեր և արտահայտություններ.** Սևրի պայմանագիր, Մեծ տերություններ, Տարածքային պահանջներ, Քեմալական Թուրքիա, Հայաստանին վերաբերվող հոդվածներ, Վ. Վիլսոնի իրավարար վճիռ, Միջազգային իրավունք:*

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սևրի հաշտության պայմանագիրը վերջին հարյուրամյակների կտրվածքով թերևս ամենահայամետ փաստաթուղթն էր, որը կարող էր նպաստել Հայկական հարցի լուծմանը և հայկական պետականության համար ապահովել բավարար տարածք: Սակայն Սևրի հաշտության պայմանագիրը մնաց թղթի վրա: Այն չվավերացրեց նույնիսկ սուլթանական կառավարությունը: Միջազգային իրավունքի տեսանկյունից Սևրի պայմանագիրը չվավերացված, բայց միևնույն ժամանակ ոչ էլ ուժը կորցրած պայմանագիր է:

Իրավական տերմինաբանությամբ Սևրի պայմանագիրը թեև չի վավերացվել մասնակից երկրների կողմից, բայց նաև չի դենոնսացվել Լոզանի 1923թ. հուլիսի 23-ի պայմանագրով: Ավելին. իրավունքի տեսանկյունից ուժի մեջ է համարվում Սևրի պայմանագրի օրգանական մաս հանդիսացող Վուդրո Վիլսոնի 1920թ. նոյեմբերի 22-ի իրավարար վճիռը, որով սահմանվում են Հայաստանի սահմանները: Այսպիսով՝ այս երկու փաստաթղթերը Սևրի պայմանագիրը և

դրանից ածանցվող ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճիռը Հայաստանի համար ունեն անկյունաքարային նշանակություն, և դրանց վրա պետք է խարսխվեն մեր ինչպես արտաքին, այնպես էլ իրավական քաղաքականությունները միջազգային հարաբերություններում: Սևրի պայմանագիրը թեև վավերացված չէ, այսուհանդերձ այն կատարման համար պարտադիր փաստաթուղթ է (binding document), քանի որ ստորագրվել է «բարձր պայմանավորվող կողմերի միջև»:

Պետք է արձանագրել, որ Սևրի պայմանագիրն ու դրանից ածանցվող այլ միջազգային փաստաթղթերն ունեն ոչ միայն ու ոչ այնքան պատմական, որքան նաև արդիական նշանակություն և համապատասխան աշխատանքի դեպքում կարող են կռվան հանդիսանալ միջազգային հարթակներում, այդ թվում և առաջին հերթին Թուրքիայի հետ հարաբերություններում Հայաստանի դիրքավորման համար: Իսկ դա նշանակում է, որ Սևրի պայմանագրի անգամ քննարկումը, այն օրակարգ բերելը միջազգային ասպարեզում կարող է դառնալ բավական գործնական լծակ Հայաստանի արտաքին քաղաքականության համար: Սևրի պայմանագիրը իրավապատմական նշանակություն ունեցող փաստաթուղթ է: Առավելապես մեզանից՝ Հայաստանից, հայկական ներուժից է կախված այն երբևէ կվերակենդանանա՞ որպես պայմանագիր, թե՞ կշարունակի մնալ պատմության գգրոցներում՝ սոսկ որպես հուշագիր:

### **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Սևրի պայմանագիրը ունի արդի նշանակություն Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների միջազգայնորեն ճանաչման առումով: Ըստ այդմ՝ հետազոտությունը կատարվել է պատմահամեմատական, վերլուծության և համադրման մեթոդներով:

## ՔՆՆԱՐԿՈՒՄ

### Սևրի պայմանագիրը և Հայաստանին վերաբերվող հողվածները

Սևրի պայմանագիրը Առաջին աշխարհամարտի ավարտին վերաբերող վերսայյան համակարգի վերջին պայմանագիրն էր: Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի հիմքում դրվել էին մեծ տերությունների՝ Սան Ռեմոյի վեհաժողովի որոշումները, որոնք քննարկվեցին և հաստատվեցին Փարիզից ոչ հեռու Սևր փոքրիկ քաղաքում՝ 1920 թ. օգոստոսի 10-ին: Պայմանագիրը կնքվեց մի կողմից՝ Թուրքիայի սուլթանական կառավարության, մյուս կողմից՝ գլխավոր դաշնակիցներ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի և Թուրքիայի դեմ պատերազմող մի շարք երկրների՝ Հայաստանի, Բելգիայի, Հունաստանի, Լեհաստանի, Պորտուգալիայի, Ռումինիայի, Չեխոսլովակիայի, Սերբա-խորվաթա-սլովակյան թագավորության (Հարավսլավիայի), Հեջազի միջև: Հայաստանի Հանրապետության անունից պայմանագիրը ստորագրել է Ա. Ահարոնյանը: Միջազգային իրավունքի տեսակետից Հայաստանի Հանրապետությունը, որպես պայմանագրի մասնակից, դե յուրե (ըստ օրենքի) ճանաչվում էր պայմանագիր ստորագրած մյուս բոլոր պետությունների կողմից:

Պայմանագիրը բաղկացած էր 13 մասից, որոնք բոլորը միասին պարունակում էին 433 հոդված: Այն Թուրքիային զրկում էր իր նախկին տարածքի 3/4 մասից, թուրքական տիրապետությունից ազատվում էին հայերը, արաբները, քրդերը և այլ ժողովուրդներ: Ըստ պայմանագրի, որպես մանդատային տարածք, Ազգերի լիգայի միջոցով Պաղեստինը և Իրաքը տրվում էին Անգլիային, Սիրիան և Լիբանանը՝ Ֆրանսիային: Թուրքիան հրաժարվում էր Արաբական թերակղզու և Հյուսիսային Աֆրիկայի նկատմամբ ամեն տեսակի հավակնություններից, ճանաչում էին Անգլիայի պրոտեկտորատը Եգիպտոսի և Կիպրոսի նկատմամբ: Իտալիային էր անցնում Դոդեկանեսի կղզիները, Հունաստանին՝ Արևելյան Թրակիան՝ Էդիրնեյի հետ, Գալլիպոլի թերակղզին և Իզմիրը:

Նեղուցների գոտին ենթարկվում էր լրիվ ապառազմականացման և անցնում էր Անտանտի կողմից ստեղծված նեղուցների կառավարման միջազգային

հանձնաժողովի հսկողության տակ: Սևրի հաշտության պայմանագրի համաձայն՝ Թուրքիային մնում էին Կոստանդնուպոլիսը և շրջակայքը՝ բարեխիղճ կատարման պայմանով, իսկ Ասիական Թուրքիան սեղմվում էր մինչև Արևմտյան Անատոլիայի սահմանը: Վերականգնվում էր կապիտուլացիոն ռեժիմը, որով դաշնակից տերությունները իրավունք ունեին միջամտելու Թուրքիայի ներքին գործերին: Սահմանափակվում էր Թուրքիայի զինված ուժերը՝ 50 հազ. զինվոր և 35 հազ. ոստիկանություն (**Ключникова Ю., 1927**):

Սևրի պայմանագրի 3-րդ մասի 6-րդ բաժինը՝ 88-93-րդ հոդվածները ամբողջությամբ վերաբերում էին Հայաստանին: Մասամբ կամ անուղղակիորեն Հայաստանին կամ հայերին էին վերաբերում նաև 125, 142, 144, 277, 349, 351, 352-րդ հոդվածները: Հաշվի առնելով Սևրի պայմանագրի բացառիկ նշանակությունը որպես Հայ դատը հիմնականում լուծող փաստաթուղթ՝ Հայաստանին և հայությանը վերաբերող հոդվածները ներկայացնում ենք ամբողջությամբ (**Կիրակոսյան Ջ., 1972**):

**Հոդված 88.** Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ բանն արդեն արել են Դաշնակից տերությունները, որպես ազատ և անկախ պետություն:

**Հոդված 89.** Թուրքիան և Հայաստանը, ինչպես և Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանատուներ թողնել ԱՄՆ-ի որոշմանը և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես և այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տերիտորիաների ապառազմականացման վերաբերյալ:

**Հոդված 90.** Այն դեպքում, եթե 89-րդ հոդվածի համաձայն՝ սահմանագիծը որոշելիս հիշյալ վիլայեթների ամբողջ տարածքը կամ նրա մի մասը հանձնվի Հայաստանին, Թուրքիան այսօր արդեն հայտարարում է, որ որոշման օրից սկսած ինքը հրաժարվում է հանձնված տերիտորիայի նկատմամբ բոլոր

իրավունքներից և իրավահիմունքներից: Սույն պայմանագրի որոշումները, որոնք կիրառվելու են Թուրքիայից անջատվող տերիտորիաների նկատմամբ, այս պահից սկսած կգործադրվեն նաև այդ տարածքի նկատմամբ:

Հայաստանի սուվերենությանը հանձնվող տարածքի կապակցությամբ նրա վրա դրվող Թուրքիայի ֆինանսական պարտավորությունների բաժինը, և դրանց բնույթն ու այն իրավունքները, որոնցով նա կարող է փաստարկել, կսահմանվեն սույն Պայմանագրի 8-րդ մասի (ֆինանսական դրույթներ) 241-244-րդ հոդվածների համաձայն:

**Հոդված 91.** Եթե 89-րդ հոդվածում նշված տերիտորիայի մի մասը հանձնվի Հայաստանին, ապա Սահմանագծման հանձնաժողով, որի կազմը կորոշվի հետագայում, կստեղծվի երեք ամսվա ընթացքում այն բանից հետո, երբ արդեն ընդունված կլինի Հայաստանի և Թուրքիայի միջև տեղում սահմանագիծ անցկացնելու վերաբերյալ հիշյալ հոդվածում նախատեսվող որոշումը:

**Հոդված 92.** Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմաններն ըստ պատկանելուն կորոշվեն շահագրգռված պետությունների ընդհանուր համաձայնությամբ:

Երբ 89-րդ հոդվածում նախատեսված որոշումն արդեն ընդունված կլինի և եթե դրանից հետո այս կամ այն շահագրգռված պետությունները չենք կարողանա ընդհանուր համաձայնությամբ որոշել իրենց սահմանագիծը, վերջինս կորոշեն Գլխավոր դաշնակից տերությունները, որոնք դրա հետ միասին պետք է հոգ տանեն սահմանագատումը տեղում գծանշելու մասին:

**Հոդված 93.** Հայաստանը ընդունում է՝ համաձայնվելով դրանք մտցնել Գլխավոր տերությունների հետ պայմանագրի մեջ այն որոշումները, որոնք այդ տերություններն անհրաժեշտ կհամարեն Հայաստանում այն բնակիչների շահերը պաշտպանելու համար, որոնք ռասայի, լեզվի և կրոնի առումով տարբերվում են ազգաբնակչական մեծամասությունից: Հայաստանը նմանապես համաձայնվում է Գլխավոր տերությունների հետ Պայմանագրի մեջ մտցնել այն որոշումները, որոնք

այդ տերություններն անհրաժեշտ կհամարեն տրանզիտի ազատությունը և այլ ազգերի առևտրի համար արդարացի պայմանակարգը պաշտպանելու համար:

**Հոդված 125.** Տասնութից բարձր տարիք ունեցող այն անձինք, որոնք սույն Պայմանագրի համապատասխան բնակություն են հաստատել Թուրքիայից անջատված տերիտորիայում, և որոնք ռասայի առումով տարբերվում են ազգաբնակչական մեծամասությունից, սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո միանյա ժամանակաշրջանում կարող են քաղաքացիություն ընդունեն հոգուտ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Հունաստանի, Հեջասի, Միջագետքի, Սիրիայի, Բուլղարիայի կամ Թուրքիայի, եթե այն պետության ազգաբնակչության մեծամասությունը, որի օգտին կատարվում է քաղաքացիության ընտրությունը, պատկանում է նույն ռասային, ինչ և քաղաքացիության ընտրության իրավունքը կենսագործող ազգը:

**Հոդված 142.** Նկատի առնելով, որ 1914 թվականի նոյեմբերի 1-ից հետո Թուրքիայում գոյություն ունեցող տեռորիստական ռեժիմի պատճառով չէին կարող նորմալ կարգով տեղի ունենալ քրիստոնյաների դավանափոխություններ, այդ ամսաթվից հետո կատարված դավանափոխությունները չեն ընդունվում, և այն բոլոր անձինք, որոնք մինչև 1914 թվականի նոյեմբերի 1-ը չեն եղել մուսուլման, կղիտվեն որպես ոչ մուսուլմաններ, եթե միայն նրանք, վերականգնելով իրենց ազատությունը, իրենց սեփական կամքով չեն կատարի այն բոլոր ձևականությունները, որոնք անհրաժեշտ են իսլամն ընդունելու համար:

### **Սևրի պայմանագրի հետևանքները**

Նույն օրը չորս Գլխավոր դաշնակիցները Սևրում առանձին հատուկ պայմանագիր կնքեցին ՀՀ-ի հետ, որը ստորագրեցին Ա. Ահարոնյանը և Պ. Նուբարը: Դրանով դաշնակիցները կանոնարկում էին իրենց պահանջները Հայաստանի Հանրապետության նկատմամբ՝ ընդհուպ ընտրական համակարգի մշակումը (**Կարապետյան Մ., 2003**): Սևրի պայմանագիրը կարող էր ուժի մեջ մտնել միայն այն դեպքում, եթե նախ վավերացվեր մի կողմից՝ Թուրքիայի, մյուս կողմից՝ Ֆրանսիայի, Իտալիայի կամ էլ սրանցից մեկի փոխարեն Ճապոնիայի

կողմից: Մինչև այդ ակտը տեղի չունենար, դաշնակից մյուս պետությունների, այդ թվում Հայաստանի Հանրապետության կողմից պայմանագրի վավերացումը չէր կարող լինել: Պայմանագիր ուժի մեջ մտնելու այդ խրթին գործընթացը մեծապես նպաստեց Թուրքիայի կողմից նրա վավերացումը ձգձգելուն և ի վերջո չվավերացնելուն (Սահակյան Տ., 2007):

Սևրի պայմանագրի մշակման խնդրում վճռական նշանակություն ունեցավ այն հանգամանքը, որ Թուրքիայում փաստական իշխանությունն իրենց ձեռքը վերցրած քեմալականները դաշինքի մեջ էին մտել Խորհրդային Ռուսաստանի հետ, ուստի Սևրի պայմանագրի հետապնդած նպատակներից մեկը քեմալականների վրա ճնշում գործադրելն ու Խորհրդային Ռուսաստանին հակադրելն էր: Անկախ Հայաստանի ստեղծումը մի կողմից՝ կթուլացներ քեմալական Թուրքիայի դիրքերը, իսկ մյուս կողմից՝ հուսալի պատենշ կլիներ Խորհրդային Ռուսաստանի և նոր Թուրքիայի միջև (Գալոյան Գ., 1999):

Սևրի պայմանագրի Հայաստանին վերաբերող հոդվածները կարծես թե իրականություն էին դարձնում Արևմտյան Հայաստանի ազատագրումը, որը Արևելյան Հայաստանի հետ միասին կազմելու էր Միացյալ և Անկախ Հայաստան: Սևրի պայմանագիրը Արևմտյան հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների միջազգային ճանաչումն էր, անկախ այն հանգամանքից որ պայմանագիրը կյանքի չկոչվեց (Գալոյան Գ., 1999):

Ըստ ակադեմիկոս Գ. Գալոյանի՝ «Սևրի պայմանագրի ձգձգումը բացասական հետևանք ունեցավ, քանի որ թուրքերին հնարավորություն տվեց ոտքի կանգնելու և դաշնակիցների հետ ուժի դիրքերից խոսելու: Եվ այն հանգամանքը, որ այդ ընթացքում Թուրքիայում իսկական իշխանությունը իրենց ձեռքն էին վերցրել քեմալականները, Սևրի պայմանագիրը դարձնում էր անհնարին»: Նա գտնում էր նաև, որ Սևրի պայմանագիրը ստորագրած խոշոր տերություններից և ոչ մեկը չի հավատացել, որ Հայաստանին վերաբերող նրա հոդվածները կարող են իրականանալ, քանզի նրանց բոլորին հայտնի էր որ Մ. Քեմալն արդեն զենքի տակ ուներ 150 հազ. լավ զինված և կարգապահ բանակ,

որի դեմ եվրոպական դաշնակիցներից և ոչ մեկը զենք գործադրելու մտադրություն չունեն։ Դրանով Սևրի պայմանագիրը մարտահրավեր էր Թուրքիային և անխուսափելի էր դարձնում հայ-թուրքական պատերազմը **(Գալոյան Գ., 1999)**:

Ինչ վերաբերում է Խորհրդային Ռուսաստանին, որը դեռ 1917 թ. դոկտեմբերին «Թուրքահայաստանի» մասին դեկրետով էր ճանաչել Արևմտյան Հայաստանի ազգային ինքնորոշման իրավունքը, ընդհուպ ազգային պետություն ստեղծելը, չէր ցանկանում, որ հայերը իրենց անկախությունը ստանան Անտանտի տերություններից և դրանով իսկ ընդմիջտ կախված լինեն նրանցից։ Այդ Հայաստանը կխանգարեր «համաշխարհային հեղափոխության» ալիքի տարածումը Արևելքում և Խորհրդային Ռուսաստանին ու «հեղափոխական» Թուրքիային կբաժաներ իրարից **(Գալոյան Գ., 1999)**:

Դաշնակից տերությունները Սևրի պայմանագիրը կնքել էին Թուրքիայի սուլթանական կառավարության հետ, սակայն Սևրի հաշտության պայմանագիրը մնաց թղթի վրա։ Այն չվավերացրեց նույնիսկ սուլթանական կառավարությունը։ Դաշնակից պետությունները չկարողացան ստիպել քեմալական Թուրքիային ճանաչելու այդ պայմանագիրը։ 1920թ. օգոստոսի 14-ին Մ. Քեմալը հրաժարվեց ընդունել Սևրի պայմանագիրը և հայտարարեց որ պատրաստվում է գրավել Կարսը, Սարիղամիշը, Արդահանը, Բաթումը, որոնք, ըստ Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերի, պատկանում են Թուրքիային ու քայլեր ձեռնարկել կանխելու հայերի հնարավոր հարձակումը Էրզրումի վրա **(Ататюрк К., 1966)**:

Սևրի պայմանագիրը ստորագրվեց Փարիզի կոնֆերանսի հրավիրումից ավելի քան մեկուկես տարի անց, այդ ընթացքում քաղաքական ուժերի վերադասավորումն ընթացավ Թուրքիայի օգտին և վերջինս սկսեց ուժի դիրքերից խոսել դաշնակիցների հետ։ Այդ ընթացքում Անտանտի տերությունների հակաթուրքական դիրքորոշումը փոխարինվեց Մ. Քեմալի հետ համաձայնության գալու և նրան Խորհրդային Ռուսաստանի դեմ ուղղելու քաղաքականությամբ:

Դրանով Եվրոպայի հրաժարվում էր Թուրքիան մասնատելու ծրագրերից և արդեն ստորագրած Սևրի պայմանագրից (**Գալոյան Գ., 1999**):

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Մոտ 100 տարի առաջ Թուրքիայի սուլթանական կառավարության և Անտանտի երկրների միջև կնքվեց պայմանագիր, որում կար անդրադարձ Հայկական հարցին: Թուրքիան ճանաչում էր Հայաստանի անկախությունը: Ըստ այդ պայմանագրի՝ առաջարկում էր Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնին՝ գծելու ապագա անկախ Հայաստանի սահմանները: Այդ սահմանները պետք է անցնեին Էրզրոմի, Վանի, Բիթլիսիի, Տրապիզոնի շրջանակներում:

Վուդրո Վիլսոնն ընդունեց սահմանների վերաբերյալ արբիտրաժային վճիռը սակայն բավական ուշ՝ 1920թ.-ի նոյեմբերի 22-ին: Հետո Սևրի պայմանագիրը, ըստ էության, չիրականացավ: Բայց մի բան փաստ էր, որ Բագրատունյաց Հայաստանի ցավալի կործանումից 875 տարի հետո, ինչպես նաև Կիլիկյան Հայաստանի թագավորության անկումից 545 տարի հետո միջազգայնորեն ընդունվեց, ճանաչվեց հայ ժողովրդի իրավունքն իր պատմական հողերի վրա՝ Հայկական լեռնաշխարհում վերաստեղծելու անկախ պետությունը:

Սա մի երևույթ էր, որն անանց արժեք ունի, որովհետև ճանաչվեց հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքն իր իսկ պատմական տարածքում, և սա շատ հուսադրող փաստ էր Հայկական հարցի լուծման համար, բայց պայմանագրի դրույթները չիրագործվեցին: Այս խնդիրը միշտ մեր գիտական և պատմագիտական մտքի կենտրոնում է եղել: Շատ հետազոտություններ, գրքեր և հոդվածներ են նվիրվել այդ խնդրին, և այսօր՝ 100 տարի անց, տարիների հեռվից փորձ է արվում դիտարկելու Սևրի պայմանագրի փիլիսոփայությունը, և թե ինչ պատճառներով այն հնարավոր չեղավ իրագործել:

### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. **Գալոյան Գ. (1999)**, Հայաստանը և Մեծ տերությունները 1917-1923թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
2. **Կարապետյան Մ. (2003)**, Հայաստանը 1912-1920 թվականներին, Երևան, «Զանգակ-97» հրատ.:
3. **Կիրակոսյան Ջ., Սահակյան Ռ. (1972)**, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երևան, «Հայաստան» հրատ.:
4. **Սահակյան Տ. (2007)**, Ցավալի պայմանագրեր, Երևան, «Լուսական» հրատ.:
5. **Ататурк К. (1966)**, Избранные речи и выступления, Москва, «Прогресс».
6. **Ключникова Ю., Сабанина А. (1927)**, Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, Москва, Литиздат НКВД.

#### REFERENCES

1. **Galoyan G. (1999)**, Hayastany' ev Mec' terowt'yownnery' 1917-1923t't' /Armenia and the Great Powers 1917-1923/, Yerevan, RA NAS "Science".
2. **Karapetyan M. (2003)**, Hayastany' 1912-1920 t'vakannerin /Armenia in 1912-1920/, Yerevan, "Zangak-97" ed..
3. **Kirakosyan J., Sahakyan R. (1972)**, Hayastany' mijazgayin divanagitowt'yan & sovetakan artaqin qaghaqakanowt'yan p'astat'ght'erowm (1828-1923) /Armenia in the Documents of International Diplomacy and Soviet Foreign Policy (1828-1923)/, Yerevan, "Armenia" ed..
4. **Sahakyan T. (2007)**, Cavali paymanagrer /Painful Contracts/, Yerevan, "Lusakan".
5. **Ataturk K. (1966)**, Izbrannyye rechi i vystupleniya /Selected speeches and appearances/, Moscow, Progress.
6. **Klyuchnikova Yu., Sabanina A. (1927)**, Sevrskiy mirnyy dogovor i akty, podpisannyye v Lozanne /The Treaty of Sevres and the acts signed in Lausanne/, Moscow, Litizdat NKID.

Анна Мелконян

## Севрский договор и судьба Армянского вопроса. надежды и разочарования

### Заключение

*Ключевые слова и выражения:* Севрский мирный договор, великие державы, территориальные претензии, Кемальская Турция, статьи об Армении, В. Арбитражное решение Вильсона, международное право.

Около 100 лет назад между султанским правительством Турции и странами Антанты был подписан договор, в котором упоминался армянский вопрос. Турция признала независимость Армении. Согласно этому соглашению, президенту Соединённых Штатов Америки Вудро Вильсону было предложено провести границы будущей независимой Армении. Эти границы должны были пройти в пределах Эрзурума, Вана, Битлиси, Трабзона(Трапезунд). Однако Вудро Вильсон довольно поздно принял арбитражное решение о границах, 22 ноября 1920 года. Севрский договор , однако, так и не вступил в силу.

Но одно оставалось фактом. через 875 лет после болезненного падения Багратидской Армении, а также через 545 лет после падения Киликийского царства, право армянского народа на восстановление независимого государства на Армянском нагорье на международном уровне было признано недействительным. Это было явление, имеющее огромное значение, поскольку оно признавало право армянского народа на самоопределение на своей исторической территории, и это являлось весьма обнадеживающим фактом для решения армянского вопроса.

Однако положения договора не были реализованы. Эта проблема всегда находилась в центре нашей научной и исторической мысли. Данной проблеме было посвящено множество исследований, книг и статей, и сегодня, 100 лет спустя, делается попытка еще взглянуть на философию Севрского договора и

понять, причины, почему он так и не был реализован. Мы надеемся, что будет создана историческая ситуация, при которой эта проблема будет решена.

**Anna Melkonyan**

## **The Treaty of Sevres and the fate of the Armenian question. hopes and disappointments**

### **Conclusion**

**Key words and expressions:** *Treaty of Sevres, great powers, territorial claims, Kemal Turkey, articles on Armenia, V. Wilson's Arbitral Award, international law.*

About 100 years ago, a treaty was signed between the Turkish Sultanate and the Entente countries, where there was a reference to the Armenian question. Turkey recognized the independence of Armenia. According to this treaty, the President of the United States of America Woodrow Wilson was asked to draw the borders of the future independent Armenia. These borders were to pass within within the boundaries of Erzurum, Van, Bitlisi, Trabzon (Trebizond). However, Woodrow Wilson made an arbitration decision on the borders quite late, on November 22, 1920. However, the Treaty of Sevres never came into force. But one thing remained a fact: 875 years after the painful fall of Bagratid Armenia, as well as 545 years after the fall of the Cilician Kingdom, the right of the Armenian people to restore an independent state on the Armenian Highlands was recognized as invalid at the international level.

This was a phenomenon of great importance, since the right of the Armenian people to self-determination on their historical territory was recognized, and this was a very encouraging fact for the solution of the Armenian Question, but the provisions of the treaty were not implemented. This problem has always been at the center of our scientific and historical thought. There are many studies, books and articles devoted to this problem, and today, 100 years later, an attempt is being made to examine the philosophy of the Treaty of Sèvres and why it could not have been realized. We hope that a historical situation will be created in which this problem will be solved anyway.

**Աննա Մելքոնյան** – Երևանի Խ. Արովյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի ուսուցիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց պատմություն, համաշխարհային պատմություն: [annamel1984@mail.ru](mailto:annamel1984@mail.ru).

**Анна Мелконян** – г. Ереван, учитель истории в основной школе №2 им. Х. Абовяна. Научные интересы: История Армении, всемирная история. [annamel1984@mail.ru](mailto:annamel1984@mail.ru).

**Anna Melkonyan** – Yerevan, history teacher at Secondary School No. 2 named after Kh. Abovyan. Research interests: Armenian history, world history. [annamel1984@mail.ru](mailto:annamel1984@mail.ru).

*Խմբագրություն է ուղարկվել 01.12.2024թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 13.12.2024թ.*

*Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.*

## ԱՍՏՈՒԱԾՈՒԹՅՈՒՆ

ՄՈՎՍԵՍ ՔՇՆ. (ԴԱՎԻԹ) ՍԱՀԱԿՅԱՆ

«ԱՍՏՈՒԱԾ», «ԱՆՁՆ» «ԷՈՒԹԻՒՆ» ԵՎ «ԲՆՈՒԹԻՒՆ»  
ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.127

### ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածը նվիրված է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դավանանքի ընկալման համար հիմնարար «Աստուած», «անձն», «էութիւն» և «բնութիւն» եզրույթների վերլուծությանը:

Ուսումնասիրելով հիշյալ եզրույթների ծագումը, իմաստաբանական նրբությունները և փիլիսոփայական ու աստվածաբանական նշանակությունը, այլև կապը հունական և եբրայական աստվածաբանական ավանդույթների հետ՝ ցույց ենք տվել դրանց աստվածաբանական զարգացումը և դերը Հայոց Եկեղեցու աստվածաբանական մտածողության մեջ: Ընդգծվում է նաև այդ եզրույթների ճշգրիտ ըմբռնման անհրաժեշտությունը՝ աստվածաբանական ընկալումները պատշաճ կերպով փոխանցելու և դրանց խորքային իմաստը պահպանելու համար:

*Բանալի բառեր և արտահայտություններ. Աստված, անձ, էություն, բնություն, աստվածաբանություն, փիլիսոփայություն, լեզվաբանություն:*

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աստվածաբանությունը, գիտական համակարգ լինելուց բացի, նաև մարդկային գիտակցության և հավատքի ամենախոր ոլորտներից մեկն է, որը միավորում է մտավոր ու հոգևոր ճշմարտության որոնումները և Աստծո հետ փոխհարաբերության ու Աստծո մասին գիտելիքի փոխանցումը: Այն իր էությամբ

միաժամանակ պարզ է ու բարդ: Պարզ, քանի որ անփոփոխ են հավատքի հիմնական դրույթները, բայց և բարդ, քանի որ դրանք պահանջում են գաղափարական և լեզվաբանական վերլուծության ու մեկնության անխուսափելի գործընթաց:

Հայոց Եկեղեցին, լինելով քրիստոնեական հավատքի կրողն ու հայ ժողովրդի հոգևոր ինքնության կարևորագույն հիմքը, դարեր շարունակ ձևավորել է եզակի աստվածաբանական բառագանձ և մտածողություն, որոնք բացառիկ են ինչպես իրենց բովանդակությամբ, այնպես էլ բխող հարցադրումների խորությամբ: Աստվածաբանական այս լեզվամտածողության և գաղափարների ուսումնասիրությունն անգնահատելի է՝ հասկանալու ոչ միայն նրա դավանաբանական հիմքերը, այլև եկեղեցու հոգևոր փորձառությունն ու հավատքի էությունը:

Երբ անդրադառնում ենք Հայոց Եկեղեցու աստվածաբանությանը, հաճախ հանդիպում ենք արտահայտությունների, որոնք կիրառված աստվածաբանական եզրույթների խորության պատճառով ընթերցողի համար կարող են դժվար ըմբռնելի թվալ: Օրինակ՝ «Հաճախապատում» ճառերում ընթերցում ենք, որ Հայր Աստված իր Որդու բնության Հայրն է, և ավելին. նա իր բնությամբ է Հայր Որդու համար, թեև Հոր և Որդու բնությունների միջև որևէ տարբերություն չկա՝ այն մեկն է և նույնը: Որդին, որ Հոր հետ ունի նույն բնությունը, «հագնում» է ամբողջական «մարդկային բնություն» (մարմին և հոգի) ու «խառնում» է այն իր Աստվածությանը **(Յաճախապատում, 2003):**

Այսպիսի արտահայտություններն արդեն իսկ առաջացնում են բարդ հարցեր, ինչպես օրինակ՝ ի՞նչ է բնությունը, ի՞նչ է նշանակում, որ Հայրը Որդու բնության Հայրն է, կամ ինչպե՞ս է Որդին «հագնում» մարդկային բնությունը և «խառնում» այն իր աստվածությանը, երբ «բնություն հագնելը» կարծես ենթադրում է, որ այն չի «խառնվում»:

Այսպիսի հարցերի պատասխանները պահանջում են եզրութաբանական մանրակրկիտ քննություն: Եզրույթների սահմանումը, դրանց բովանդակության



է ոչ թե եզակի լոճ-ը, այլ՝ հոգնակի օրհնոճ-ը, մինչդեռ, որպես այդպիսին, գրեթե բոլոր հաջորդող բայերն ու ածականները դրվում են եզակի թվով՝ ցուց տալով հոգնակի թվով ներկայացվող այդ Աստծո եզակի լինելը, ինչը, քրիստոնեական աստվածաբանությունը կապում է Սուրբ Երրորդության խորհրդի հետ: Համաձայն քրիստոնեական վարդապետության՝ Աստված մի էություն է, որը ներկայանում է իբրև Սուրբ Երրորդություն՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի. երեք անձ, մի աստվածություն: Այս վարդապետությունը հասկանալու համար կարևոր է անդրադառնալ նաև «Աստված» եզրույթի հունարեն նշանակությանը և կիրառմանը Սուրբ Գրքում:

Հին Կտակարանի հունարեն՝ Յոթանասնից թարգմանության մեջ օրհն եզրույթի փոխարեն դրված է *թեոճ* (թեոս) եզրույթը, որը կրկնակի կիրառում է ունեցել հունա-հռոմեական միջավայրում: Նախ՝ *թեոճ* են անվանվել այն անդրանցական էակները կամ անգամ երևույթները, որոնք գերակա են համարվել մարդկանց նկատմամբ և ի զորու՝ անբնական եղանակներով միջամտելու նրանց գործերին, ուստի և պաշտամունքի առարկա են եղել նրանց համար: Երկրորդ՝ *թեոճ* են անվանվել նաև ոչ անդրանցական, բայց հատուկ հարգանքի արժանի անձինք, օրինակ՝ ծնողները, համատարած ընդունելություն վայելող փիլիսոփաները և պաշտոնյաները (**GELNT, 2021**): Նման կիրառության ենք հանդիպում նաև Հին Կտակարանում, որտեղ «աստուած» եզրույթը երբեմն-երբեմն կիրառվում է նաև հրեշտակների և մարդկանց պարագային՝ իբրև գերակա և միակ Աստծո շնորհները վայելողների (**Աստուածաշունչ, 1997**):

Քրիստոնեական շրջանակներում արդեն *թեոճ* են սկսում անվանվել միայն Սուրբ Երրորդության երեք անձերը, որոնցից Որդու Աստված լինելու ընկալման շրջանակներում յուրահատուկ տեղ է զբաղեցնում Հովհաննու Ավետարանը, որտեղ և՛ բացարձակապես հաստատվում, և՛ բացահայտորեն մերժվում է «Աստված» եզրույթի կիրառությունը Հիսուս Քրիստոսի պարագային:

Եզրույթի ամենաշեշտված կիրառումը մենք տեսնում ենք հենց Քրիստոսի կողմից. «Այս են յափտենական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ»

Աստուած, եւ զոր առաքեցեր՝ զՅիսուս Քրիստոս», «... ելանեմ եւ առ Հայրն իմ եւ առ Հայր ձեր, եւ Աստուածն իմ եւ Աստուած ձեր» (Աստուածաշունչ, 1997): Քրիստոսի շուրթերից հնչած այս խոսքերով հստակ զանազանում է դրվում Նրա և Իր Հոր՝ Աստծո միջև: Մյուս կողմից հեղինակն իր Ավետարանի և՛ սկզբում, և՛ վերջում Քրիստոսին հռչակում է Աստված: Նախ՝ իր նախաբանի հենց առաջին համարում Ավետարանիչը վկայում է. «Աստուած էր Բանն», ապա Ավետարանի վերջում Թովմաս առաքյալը ուղղակիորեն խոստովանում է Հիսուսի Աստվածությունը՝ կոչելով. «Տէր իմ եւ Աստուած իմ» (ὁ κύριός μου καὶ ὁ θεός μου) (Աստուածաշունչ, 1997):

Ավետարանի հեղինակը շատ հստակ կերպով ցույց է տալիս, որ Հայր Աստծո և Քրիստոսի միջև առկա է տարբերություն. Քրիստոս Հայրը չէ, սակայն, միևնույն ժամանակ Նա և Հայրը «մի են» և «Աստված են»:

Ամփոփելով վերոգրյալը կարող ենք ասել, որ Աստված, լինելով Արարիչ, Ինքն Իրեն Իր արարչությանը հայտնում է իբրև Ամենասուրբ Երրորդություն՝ մի Աստված միմյանց հավասար երեք կատարյալ անձերով. Հայր, Որդի և Սուրբ Հոգի՝ մի կամքով, մի բնությամբ, մի իսկությամբ, մի էությամբ և մի զորությամբ: Անձերից երկուսը՝ Որդին, իբրև ծննդյան, և Հոգին՝ իբրև բխման պատճառ ունեն Հայր Աստծո բնությունը, սակայն, բնությունների միջև տարբերություն չկա, այն նույնն է: Նրանք մի ամբողջություն և մի Աստվածություն են, որ տարբերվում են միմյանցից անձնային հատկություններով և դրսևորումներով, օրինակ՝ Հայրը անծին է, իսկ Որդին՝ ծնված Հորից, Որդին ծնվում է, բայց չի բխում, Հոգին՝ բխում է, բայց չի ծնվում և կամ. «մի է Աստուած Հայր, յորմէ ամենայնն. եւ մի Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայնքս. եւ մի Սուրբ Հոգի նորոգող. Երրորդութիւն Սուրբ» (Յաճախապատում, 2003):

### Անձն

«Անձն» եզրույթը ընդհանուր առմամբ հայերեն «ինձ» դերանվան լծորդությունն է, որն էլ իր հերթին «ես» անձնական դերանվան տրական հոլովն է: Այս իմաստով այն ցույց է տալիս **բանավոր էակի** (մարդ, հրեշտակ, Աստված)

**ինքնությունը** (ՆԲՀԼ, 1979), օրինակ. «փոթացեալ վասն անհաւարիցն դնել զանձն» (Ագաթանգեղոս, 2003) արտահայտության մեջ «անձն» եզրույթն ուղղակի ցույց է տալիս, թե ով է զոհաբերվում. «շտապեց ինքն իրեն զոհաբերել հանուն անհավատների»: Մեկ այլ օրինակ. «պահեա զանձինս մեր» (Ժամագիրք, 1999) արտահայտության մեջ «անձն» եզրույթը մատնանշում է ենթակաների ինքնությունը, որով արտահայտությունն ուղղակի թարգմանվում է որպես «պահիր մեզ»:

«Անձն» եզրույթը կարող է ժամանակակից հայերենի վերածվել նաև իբրև «մարդ», «մարմին» և կամ «հոգի»: Օրինակ. «ամենայն անձն՝ որ ընդ իշխանութեամբ իցէ» նշանակում է՝ «յուրաքանչյուր մարդ, որ իշխանության տակ է», «որպես գլուխ առանց անձին»՝ «ինչպես գլուխը առանց մարմնի», և «ախտանամք յանձն եւ ի մարմին»՝ «հիվանդանում ենք հոգով և մարմնով» (ՆԲՀԼ, 1979):

«Անձն» (ինչպես նաև «անձնատրություն») եզրույթի հունարեն համարժեքն է *ὑπόστασις* (հյուպոստասիս) եզրույթը, որը հավանաբար հունարան դպրոցի ազդեցության ներքո սկսել է թարգմանվել նաև իբրև «ենթակայություն» (*ὑπο* = ներքո, *στάσις* = կայունություն) (ՆԲՀԼ, 1979):

*ὑπόστασις* եզրույթը առաջացել է *ὑφίστημι* (հյուֆիստեմի) բայի հիման վրա, որը բառացի նշանակում է «տակը դնել, տեղադրել որպես հենարան»: Կիրառվելով տարբեր՝ գիտական, պատմական և փիլիսոփայական շրջանակներում՝ այն ձեռք է բերել տարատեսակ իմաստներ, ինչպես օրինակ՝ «աջակցություն», «հիմնավորում» և կամ՝ «իրականություն» (TDNT, 1978):

Ի սկզբանե, ավելի գիտական համատեքստում *ὑπόστασις* եզրույթով մատնանշում էին նյութական մնացորդը՝ ցույց տալով մի բան, որը «նստելով գետնին»՝ ստանում է նյութական ձև, ինչպես օրինակ՝ որևէ հեղուկի նստվածքը անոթի հատակին: Նման իմաստ ենք տեսնում նաև պատմական կամ գրական երկերի մեջ, որտեղ *ὑπόστασις*-ը ենթադրում է «այն, ինչ տակն է»՝ իրականությունը երևույթի հետևում, ինչպես օրինակ՝ թաքնված պատերազմական

ծրագրերը, կամ՝ դամբարանի ճարտարապետական նախագիծը՝ այն հիմքը, ծրագիրը, ըստ որի կատարվում էր գործողությունը **(TDNT, 1978)**:

Մեծավ մասամբ նույն իմաստի փոխառությունն է տեսանելի նաև փիլիսոփայության մեջ, որտեղ սփոստասուց-ը, ընդհանրացված կերպով, ընկալվում էր իբրև որևէ երևույթի և կամ հավերժական, սկզբնական գոյության (οὐσία) իրականացումը, դրսևորումը, ակտուալացումը՝ առանցքում ունենալով այն ընկալումը, որ սփոստասուց-ը նշանակում է այդ գոյության կամ երևույթի տեսանելի մասը, տալիս է կոնկրետ ձև՝ արդիականացնելով այդ գոյությունը և կամ երևույթը **(TDNT, 1978)**:

Ընդհանուր առմամբ, թեև անհնար է հիշյալ բոլոր շրջանակների պարագաներին սփոստասուց-ը թարգմանել նույն եզրույթով, բայցևայնպես, գաղափարական առումով սփոստասուց-ը խորհրդանշում է մեկ ընկալում, այն է՝ երևույթի կամ գոյության տեսանելի կողմը, լինի դա գործողության ծրագիրը, նյութի նստվածքը, և թե որևէ գոյության կամ երևույթի դրսևորումը:

Նման ընկալման ենք հանդիպում նաև Նոր Կտակարանում, որտեղ եզրույթը օգտագործվում է Եբրայեցիներին և Կորնթացիներին ուղղված նամակներում:

Ամենահայտնի կիրառություններն են, երբ Եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակը.

ա. Որդուն (Քրիստոսին) անվանում է Աստծո «էության նկարագիր» և էություն եզրույթի տեղը օգտագործելով սփոստասուց-ը՝ ուղղակի մատնանշում է, որ Քրիստոս Աստծո իրականացումն է՝ հավիտենական գոյության մարմնացումը, տեսանելի կողմը. «նկարագիր էութեան (τῆς ὑποστάσεως) նորա» **(Աստուածաշունչ, 1997)**,

բ. երբ խոսում է հուսացած բաների հաստատման մասին, հաստատումը՝ սփոստասուց-ը, ընդունելով իբրև հավատքի (երևույթի) տեսանելի դրսևորում. «Զի՞նչ են հաւատք, եթէ ոչ յուսացելոց իրաց հաստատութիւն (սփոստասուց)» **(Աստուածաշունչ, 1997)**:

Այսպիսով, Եբրայեցիներին ուղղված նամակում մենք տեսնում ենք, որ սփոստասիւքը հայերեն է թարգմանված իբրև «էուֆին», ինչը, բնականաբար, պատահական չէ: Կրթությունը եզրույթի ընկալման լայն շրջանակով պայմանավորված՝ Ընդհանրական Եկեղեցում մինչև Նիկիայի 325թ. ժողովը այն, կարելի է ասել, կիրառվում էր ուսուցիչ (ուսիս)՝ էուֆյուն եզրույթի հետ գրեթե փոխադարձաբար, քանի որ երկուսն էլ խորհրդանշում էին նույն գոյությունը: Միայն Կապադովկյան հայրերի ժամանակ է, որ վերջնականապես տարանջատում է դրվում սփոստասիւքի և ուսուցիչի միջև, որով ուսուցիչն սահմանափակվում է գոյավոր էակի ներքին իրականության սահմանմամբ (Աստված մեկն է), իսկ սփոստասիւքը՝ արտաքին, տեսանելի և հարաբերվելի իրականության սահմանմամբ (Աստված Հայր է, Որդի և Սուրբ Հոգի) (NDT, 1997, Winkler G., 2000, Dorfmann-Lazarev I., 2016):

### Էուֆին

«Էուֆին» (ուսուցիչ) եզրույթը, որի հիմքում ընկած է «լինել» (εἶμι) բայը, ցույց է տալիս այն, **ինչը գոյություն ունի՝** գոյությունը, լինելությունը, իսկությունը, բնությունը, այն՝ ինչ է: Մեծավ մասամբ այն բնորոշում է առարկաների և երևույթների ներքին հիմունքը, ներքին կապերը, հարաբերություններն ու բովանդակությունը, որոնք դրսևորվում և ճանաչվում են այդ առարկաների և երևույթների մեջ (ՆԲԸԼ, 1979, GELNT, 2021, ԺԸԼԲԲ, 1972):

Աստվածաբանական տեսանկյունից «էուֆին» եզրույթը, որ ժառանգվել է դասական հունական փիլիսոփայությունից, քրիստոնեական աստվածաբանների կողմից հիմնականում կիրառվում է՝ ցույց տալու համար Սուրբ Երրորդության երեք անձերի մի Աստվածությունը, աստվածային էությունը, ինչը նշանակում է՝ Աստված լինելը:

«Հաճախապատում» ճառերում, օրինակ, ընթերցում ենք. ««Ես եմ, ասէ, Աստուած՝ որ էն» (Աստուածաշունչ, 1997): Ես այսպէս սփռեաց յարարածս զլոյս աստուածային էութանն, զի անմոլար գիտութեամբն խոստովանեսցին զանբաւ մեծութիւն փառացն, զանծին Իսկութիւնն եւ զանսկիզբն էութեանն ճշմարտութիւն»

**(Յաճախապատում, 2003):** «Եղծ աղանդոցում» ընթերցում ենք. *«Մի էութիւն մշտնջենատրական է եւ պարճառ ամենեցուն լինելոյ]], «Հայիոյութանն է, եթէ էութիւնն Աստուածոյ ի մասունս բաժանիցի եւ ի բազում շունչս կոտորիցի», «Որ ճշմարիտ Աստուածն է, զամենայն ինչ զիր մշտնջենատրութեամբ ունի, որպէս զէութիւնն, նոյնպէս եւ՝ զյաւժ կենդանութիւնն»* **(Եղծ Աղանդոց, 2003):**

Լինելով Սբ. Երրորդություն՝ Աստված մեկն է հենց Իր «էությամբ»: Ըստ Գրիգոր Նյուսացու՝ «Աստված» բառը հենց ինքնին ցույց է տալիս աստվածային էության եզակիությունը: Եթե «Աստված» անվանումը ցույց տար Սբ. Երրորդության երեք Անձերին, ապա, ասելով երեք Անձ, անհրաժեշտաբար կասեինք երեք Աստված, բայց քանի որ «Աստված» անունը վերաբերում է էությանը, ապա, խոստովանելով Սուրբ Երրորդության միասնական էությունը, ոչ առանց հիմքի փառավորում ենք Միակ Աստծուն **(PG, 1863):** Այլ կերպ ասած՝ խոստովանելով Սուրբ Երրորդության էությունը (ինչ լինելը)՝ խոստովանում ենք Սուրբ Երրորդության երեք Անձերի մի Աստված լինելը:

### **Բնութիւն**

«Բնութիւն» եզրույթի հիմքում ընկած է «բուն» գոյականը, որը նշանակում է՝ սկիզբ, հիմունք, արմատ, աղբյուր: Օրինակ՝ ծառի վերգետնյա հատվածը, որից արդեն բաժանվում են ճյուղերը, կոչվում է «բուն», որովհետև այն ծառի հիմքն է, որը տեսանելի է: Այս իմաստով՝ «բնութիւն»-ը ցույց է տալիս **գոյության հիմքը**, իսկությունը, ծագման պատճառը և կամ հենց՝ ծագումն ու գոյացումը **(ՆԲՀԼ, 1979):**

Հունարենում «բնութիւն» եզրույթի համարժեքն է *φύσις*-ը (*Ֆյուսիս*), որը խորհրդանշում է նույն տեսակի գոյացություններին բնորոշ հատկությունների ամբողջությունը կամ այն կացությունը, վիճակն ու հանգամանքը, որում այդ տեսակի գոյացությունները գտնվում են ի սկզբանե (շնչավորների պարագային՝ ի ծնե, ոչ կամավոր կերպով, ժառանգաբար) **(GELNT, 2021):**

Օրինակ. *«զի էզք նոցա փոխանակեցին զպէտս բնականս ի պէտս անբնականս»* **(Աստուածաշունչ, 1997)** արտահայտության մեջ բնական՝

բնությունից եկած (φύσις) են համարվում մարդկային այն կարիքները, որոնք բնորոշ են բոլոր մարդկանց: «*Զի մեք բուն հրեայք եմք*» (Աստուածաշունչ, 1997) հատվածում հրեա լինելը, ինչը որոշվում է ծննդյամբ՝ ծնողներից ժառանգելով, և ոչ թե կամավորաբար ընտրելով, բնական վիճակ է դիտարկվում: Կամ. «*եւ զայն եւա զոր բնութեամբ իբրեւ զանխօս անասուն գիտեն*» (Աստուածաշունչ, 1997) հատվածում՝ կենդանիների չխոսելը բնական վիճակ է դիտարկվում, քանի որ բոլոր կենդանիներին է բնորոշ:

Այսպիսով, «բնութիւն» եզրույթը ցույց է տալիս գոյացության սկզբնական կամ հիմնական վիճակն ու սահմանված իսկությունը և իբրև այդպիսին նաև այդ գոյացության ինչ և ինչպիսին լինելը՝ որպես ամբողջություն:

Այս իմաստով «բնութիւն» եզրույթը, օրինակ, Որդի Աստծո պարագային կարող է վերաբերվել ինչպես Նրա էությանը, այնպես էլ՝ անձնավորությանը, քանզի Որդին բնությամբ՝ Իր կարգավիճակով, ի սկզբանե և՛ Սուրբ Երրորդության Բ անձն է, և՛ Աստված է (ՆԲՀԼ, 1979):

Նման կիրառության հանդիպում ենք նաև հայկական աղբյուրերի քննության շրջանակներում:

Օրինակ, «Հաճախապատում» ճառերում, երբ ասվում է, թե «*եւր մեզ Որդին Աստուծոյ Հայր կոչել զբնութեան Հայրն իւր*» (Յաճախապատում, 2003), ընդգծվում է, որ Հայրը Որդու բնության Հայրն է, ինչը նշանակում է, որ Որդու բնությունը՝ իր սկզբնական վիճակը իր ամբողջության մեջ, Որդի և Աստված լինելն է: Նա Որդի է, որովհետև ի սկզբանե ծնվում է Հայր Աստծուց: Ի տարբերություն Որդու՝ մարդիկ չեն կարող ասել, որ Հայրը իրենց բնության Հայրն է, որովհետև, թեև մարդիկ ևս Աստծուն «Հայր» են անվանում, սակայն չեն ծնվում նրանից, ուստի «Աստծո որդի» չեն բնությամբ, այլ՝ «Աստծո որդիներ» են շնորհով, որը տվեց «Որդին Աստված»:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրված եզրույթներից յուրաքանչյուրը կրում են իրենց խորքային իմաստն ու նշանակությունը քրիստոնեական և աստվածաբանական

մտածողության համատեքստում, որոնց անդրադարձը կարևոր է ոչ միայն լեզվաբանական և փիլիսոփայական, այլև հենց աստվածաբանական ընկալումների սահմանման տեսանկյունից:

«Աստուած» եզրույթը ինքնին խորհրդանշում է Արարչին՝ գոյության սկզբնավորողին, ով, ըստ քրիստոնեակա վարդապետության, ներկայանում է իբրև Սուրբ Երրորդություն՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի. երեք անձ, մի աստվածություն:

«Անձն» եզրույթը խորհրդանշում է ինքնություն ունեցող որևէ էակի: Երրորդութենաբանական տեսանկյունից այն իրենից ենթադրում է Սուրբ Երրորդության անձերի առանձնահատկությունների դրսևորում, յուրաքանչյուր անձի արտաքին, ինքնուրույն դրսևորումը և փոխհարաբերության կերպը Սուրբ Երրորդության մնացյալ անձերի հետ: Միևնույն ժամանակ, «էություն» եզրույթը ցույց է տալիս Աստծո ներքին գոյությունը՝ բացատրելով Սուրբ Երրորդության երեք անձերի մեկ Աստված լինելը, անփոփոխ բնույթը և մշտնջենականությունը:

«Բնութիւն» եզրույթը իր հերթին նկարագրում է էակի ներքին հատկությունները, ըստ տվյալ գոյության սկզբնական վիճակի: Ընդգրկելով այն ամենը, ինչը տվյալ էակին բնորոշ է իսկզբանե, «բնություն» եզրույթը աստվածաբանական տեսանկյունից օգնում է հասկանալ, թե ինչպես է Աստված մեկ էությանմբ, բայց երեք՝ անձերով:

Սույն եզրույթների վերլուծությունը կարևոր է քրիստոնեական աստվածաբանության հիմնարար դրույթները հասկանալու և Աստծո մի էության ու Սուրբ Երրորդության մեջ միասնության խորհրդին հաղորդ դառնալու համար:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ագաթանգեղոս (2003)**, Մատենագիրք Հայոց, Ե դար, հ. Բ, Անթիլիաս-Լիբանան:
2. **Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց (1997)**, Հայաստանի Աստուածաշնչային Ընկերութիւն:

3. **Եղծ Աղանդոց (2003)**, Մատենագիրք Հայոց, Ե դար, հ. Ա, Անթիլիաս-Լիբանան:
4. **Ժամագիրք (1999)**, 2 տպ., Վաղարշապատ:
5. **ԺԿԼԲԲ (1972)**, **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, հ. 2, Երևան» ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
6. **Յանախապատում (2003)**, Մատենագիրք Հայոց, Ե դար, հ. Ա, Անթիլիաս-Լիբանան:
7. **ՆԲՀԼ (1979)**, **Աւետիքեան Գաբրիէլ վրդ., Սիրմէլեան Խաչատուր վրդ., Աւգերեան Մկրտիչ վրդ.**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Տպարան ի Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1836, վերատպություն՝ Երևան, ԵՊՀ հրատ.:
8. **NBHL (New Dictionary of the Armenian Language) (1979)**, compiled by Avetikian Gabriel Vardapet, Surmelian Khachatur Vardapet, and Avgerian Mkrtich Vardapet, Vol. 1, printed at the St. Lazarus Press, Venice, 1836, reprint: Yerevan, Yerevan State University Press.
9. **Dorfmann-Lazarev I. (2016)**, '*Chapter I. Christ's "Being" and "Activity": Some Aspects of the Development of Armenian Christological Vocabulary from its Origins to the Tenth Century*', in: **Dorfmann-Lazarev**, *Christ in Armenian Tradition: Doctrine, Apocrypha, Art (Sixth–Tenth Centuries)*, Journal of Eastern Christian Studies 68(3-4), Leuven, pp. 231-254, doi: 10.2143/JECS.68.3.3191687.
10. **GELNT (2021)**, **A Greek-English Lexicon of the New Testament and Other Early Christian Literature**, Fourth edition, revised and edited by **Frederick William Danker**, based on **Walter Bauer's** Griechisch-Deutsches Wörterbuch zu den Schriften des Neuen Testaments und der Frühchristlichen Literatur, Sixth edition, edited by **Kurt Aland** and **Barbara Aland**, with **Viktor Reichmann** and on previous english editions by **William F. Arndt**, **F. Wilbur Gingrich**, and **F. W. Danker**, The University of Chicago Press, Chicago and London, 2021.

11. **NDT (1997), New Dictionary of Theology: Historical and Systematic**, Second edition, edited by **Martin Davie, Tim Grass, Stephen R. Holmes, John McDowell, T. A. Noble**, Inter-Varsity Press London, England, InterVarsity Press Downers Grove, Illinois, USA, 2016.
12. **PG (1863), Patrologiae: Cursus Completus, SEU Bibliotheca Universalis, Integra, Uniformis, Commoda, Oeconomica, Omnium SS. Patrum, Doctoreum Scriptorumque Ecclesiasticorum ...** ; Series Græca In Qua Prodeunt Patres, Doctores Scriptorumque Ecclesie Græce As. Barnaba Ad Photium, Accurante **Jacques Paul Migne** (J. P. Migne), Tomus XLV. S. Gregorius Nyssenus, Tomus Secundus.
13. **TDNT (1978), Theological Dictionary of the New Testament**, edited by **Gerhard Friedrich**, Translator And Editor **Geoffrey W. Bromiley**, D. Litt., D. D., in 10 volumes, Wm. B. Eerdmans Publishing Company, Grand Rapids, Michigan, volume VIII, T-Y, Michigan, 1978.
14. **Winkler G. (2000)**, Über die Entwicklungsgeschichte des armenischen Symbolums: Ein Vergleich mit dem syrischen und griechischen Formelgut unter Einbezug der relevanten georgischen und äthiopischen Quellen, *Orientalia Christiana analecta* 262, Pontificio istituto orientale, Roma.

## REFERENCES

1. **Agathangelos (2003)**, *Matenagirq Hayoc* (Book of the Armenian Writers), 5th century, Vol. II, Antelias-Lebanon.
2. **Astowac'ashownch matean Hin & Nor ktakaranac /Old and New Testaments/ /The Holy Bible/ (1997)**, The Bible Society of Armenia.
3. **Eghc' Aghandoc (Refutation of Heresies) (2003)**, *Matenagirq Hayoc* (Book of the Armenian Writers), 5th century, Vol. I, Antelias-Lebanon.
4. **Jhamagirq (Book of Hours) (1999)**, 6th edition, Vagharshapat.

5. **JHLBB (1972), (Modern Armenian Explanatory Dictionary)**, Jhamanakakic hayoc lezvi bacatrakan bar'aran /Institute of Language Named After Hrachya Acharyan/, Vol. 2, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR,
6. **Yatwaxapatowm (2003) (The Oft-Repeated Discourses)**, Matenagirk Hayots (Book of the Armenian Writers), 5th century, Vol. I, Antelias-Lebanon.
7. **NBHL (1979)**, Nor bar'girq haykazean lezo (New Dictionary of the Armenian Language), compiled by Avetikian Gabriel Vardapet, Surmelian Khachatur Vardapet, and Avgerian Mkrtich Vardapet, Vol. 1, printed at the St. Lazarus Press, Venice, 1836, reprint: Yerevan, Yerevan State University Press.
8. **Dorfmann-Lazarev I. (2016)**, 'Chapter I. Christ's "Being" and "Activity": Some Aspects of the Development of Armenian Christological Vocabulary from its Origins to the Tenth Century', in: **Dorfmann-Lazarev**, Christ in Armenian Tradition: Doctrine, Apocrypha, Art (Sixth–Tenth Centuries), Journal of Eastern Christian Studies 68(3-4), Leuven, pp. 231-254, doi: 10.2143/JECS.68.3.3191687.
9. **GELNT (2021), A Greek-English Lexicon of the New Testament and Other Early Christian Literature**, Fourth edition, revised and edited by **Frederick William Danker**, based on **Walter Bauer's** Griechisch-Deutsches Wörterbuch zu den Schriften des Neuen Testaments und der Frühchristlichen Literatur, Sixth edition, edited by **Kurt Aland** and **Barbara Aland**, with **Viktor Reichmann** and on previous english editions by **William F. Arndt**, **F. Wilbur Gingrich**, and **F. W. Danker**, The University of Chicago Press, Chicago and London, 2021.
10. **NDT (1997), New Dictionary of Theology: Historical and Systematic**, Second edition, edited by **Martin Davie**, **Tim Grass**, **Stephen R. Holmes**, **John McDowell**, **T. A. Noble**, Inter-Varsity Press London, England, InterVarsity Press Downers Grove, Illinois, USA, 2016.
11. **PG (1863), Patrologiae: Cursus Completus, SEU Bibliotheca Universalis, Integra, Uniformis, Commoda, Oeconomica, Omnium SS. Patrum**,

**Doctorem Scriptorumque Ecclesiasticorum ...** ; Series Græca In Qua Prodeunt Patres, Doctores Scriptoresque Ecclesie Græce As. Barnaba Ad Photium, Accurante **Jacques Paul Migne** (J. P. Migne), Tomus XLV. S. Gregorius Nyssenus, Tomus Secundus.

12. **TDNT (1978), Theological Dictionary of the New Testament**, edited by **Gerhard Friedrich**, Translator And Editor **Geoffrey W. Bromiley**, D. Litt., D. D., in 10 volumes, Wm. B. Eerdmans Publishing Company, Grand Rapids, Michigan, volume VIII, T-Y, Michigan, 1978.
13. **Winkler G. (2000)**, Über die Entwicklungsgeschichte des armenischen Symbolums: Ein Vergleich mit dem syrischen und griechischen Formelgut unter Einbezug der relevanten georgischen und äthiopischen Quellen, *Orientalia Christiana analecta* 262, Pontificio istituto orientale, Roma.

**Иерей Мовсес (Давид) Саакян**

### **Анализ терминов «Бог», «ипостась», «сущность» и «природа»**

#### **Заключение**

**Ключевые слова и выражения:** Бог, ипостась, сущность, природа, богословие, философия, лингвистика.

Статья посвящена анализу богословских таких ключевых терминов Армянской Церкви, как «Бог», «ипостась», «сущность» и «природа».

Каждый из изученных терминов несёт в себе глубинное значение и смысл в контексте христианского и богословского мышления, и их рассмотрение важно не только с лингвистической и философской точки зрения, но и с позиции определения самих богословских представлений.

Автор рассматривает происхождение, семантическое содержание и богословское значение этих терминов, акцентируя внимание на их философскую и богословскую эволюцию, а также на их роль в формировании богословской

мысли Армянской Церкви. Исследование подчеркивает их важность для передачи ключевых христианских идей, особенно в контексте учения о Святой Троице.

Особое внимание уделяется семантическим нюансам терминов, их связи с греческой и ивритской богословскими традициями, а также их роли в сохранении духовного и богословского наследия Армянской Церкви. Подчеркивается необходимость точного понимания терминов для правильной передачи богословских идей и сохранения их глубинного значения. Показано, как эти понятия отражают духовное наследие Армянской Церкви и способствуют более глубокому пониманию её богословской мысли.

Fr. Movses (Davit) Sahakyan

## An Analysis of Terms “God”, “Person”, “Essence” and “Nature”

### Conclusion

**Keywords and expressions:** God, person, essence, nature, theology, philosophy, linguistics.

This article is dedicated to the analysis of theological key terms of the Armenian Church, such as "God," "hypostasis," "essence," and "nature."

Each of the examined terms carries a profound meaning and significance in the context of Christian and theological thought, and their analysis is important not only from a linguistic and philosophical perspective but also in defining theological concepts themselves.

The author examines the origin, semantic content, and theological significance of these terms, emphasizing their philosophical and theological evolution and their role in shaping the theological thought of the Armenian Church. The study highlights their importance in conveying key Christian ideas, especially in the context of the doctrine of the Holy Trinity.

Special attention is given to the semantic nuances of these terms, their connection to Greek and Hebrew theological traditions, and their role in preserving the spiritual and theological heritage of the Armenian Church. The necessity of accurately understanding these terms is underscored for correctly transmitting theological ideas and preserving their profound meaning. The article demonstrates how these concepts reflect the spiritual heritage of the Armenian Church and contribute to a deeper understanding of its theological thought.

**Մովսես քհն. (Դավիթ) Սահակյան** – Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ասպիրանտ, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դասախոս: Գիտական հետաքրքրությունը՝ աստվածաբանություն: Հեղինակ է երկու գիտական հոդվածի: [fr.movses@gmail.com](mailto:fr.movses@gmail.com):

**Иерей Мовсес (Давид) Саакян** – Аспирант Геворгянской духовной семинарии Первопрестольного Святого Эчмиадзина, педагог Геворгянской духовной семинарии. Сфера научных интересов: богословие. Автор двух статей. [fr.movses@gmail.com](mailto:fr.movses@gmail.com).

**Fr. Movses (Davit) Sahakyan** - Graduate Student of the Gevorgian Theological Seminary, Lecturer at the Gevorgian Theological Seminary, Mother See of Holy Etchmiadzin. Scientific interests: Theology, [fr.movses@gmail.com](mailto:fr.movses@gmail.com).

*Խմբագրություն է ուղարկվել 12.01.2025թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 22.01.2025թ.*

*Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.*

**ՄՇԱԿՈՒՅԹ****ԱՐՓԻՆԵ ԹՈՐԻԿՅԱՆ****ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ****DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.128****ԱՄՓՈՓՈՒՄ**

Հոդվածում ներկայացնում ենք սիյուոքահայ նկարիչ Սարգիս Խաչատուրյանի արվեստի առաջին փուլը, երբ պատանին սկզբնական քայլերն էր անում դեպի արվեստի աշխարհ: Առանձնահատուկ կարևորել ենք պատմաքաղաքական և բոլոր արտաքին գործոնները, որոնք նպաստել են արվեստագետի կայացմանը:

Խաչատուրյանի ստեղծագործական առաջին շրջանը որոշակիորեն կապված է եղել իր ժողովրդի ողբերգության և տառապանքի հետ, որի ականատեսն է նաև նկարիչը: Դեռ մանկուց Համիոյան ջարդերից մազապուրծ եղած նկարչի ու իր ստեղծագործության վրա այս ամենը, բնականաբար, իր հետքն է թողել:

Եղեռնն իր արտացոլումը գտավ նկարչի շուրջ 500 գրաֆիկական և գեղանկարչական աշխատանքներում: Իր կյանքի ընթացքում այդ գործերը Խաչատուրյանը ներկայացրեց ողջ Եվրոպային:

Խաչատուրյանը մշտապես գտնվել է փնտրտուքի մեջ, ինչով էլ պայմանավորված է արվեստագետի գործերի բազմաթեմատիկ, տարբեր տեխնիկաներով կատարած, բազմաոճ և բազմաժանր լինելը: Նա իրեն փորձում էր ամենուր՝ ստեղծելով ուրույն «խաչատուրյանական» արվեստ:

Հոդվածում ներկայացված են Խաչատուրյանի՝ «Հայկական շրջան»-ի արվեստի նկարագիրը և վերջինիս ներհատուկ պատմական և քաղաքական իրադարձությունները, որոնք ձևավորեցին նկարչի ստեղծագործական կայացման առաջին շրջանը: Հոդվածը միտված է նոր հայացքով դիտարկելու նկարչի

արվեստը և ի մի բերելու այս շրջանի պատմական առանձնահատկությունները, որոնք արժարժվել են նրա՝ եղեռնի թեմայով աշխատանքներում:

***Քանայի բառեր ու բառակապակցություններ.** Սարգիս Խաչատրյան, արվեստ, Եղեռն, գաղթականներ, Սարգիս Խաչատրյան, Արարատ, Կոստանանդնուպոլիս, հայկական շրջան, հոգեբանական գործեր:*

### **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Հայ ժողովուրդն իր մշակույթը կերտել է ոչ միայն մայր հողում, այլ նաև նրա սահմաններից դուրս: Դարերի ընթացքում քաղաքական պայմանները, ինչպես նաև մշակութային, կրթական օջախների բացակայությունը ստիպել են հայ արվեստագետներից շատերին ապրել և ստեղծագործել այլ երկրներում: Անցած դարի սփյուռքահայ արվեստի կարկառուն ներկայացուցիչներից մեկն է Սարգիս Խաչատրյանը: Սերը դեպի ճանապարհորդությունն ու նոր բացահայտումները նրա վրձնին բազմերանգություն է տվել՝ բաժանելով Սարգիս Խաչատրյանի արվեստը երեք շրջանի՝ «Հայկական», «Պարսկական» և «Հնդկական»:

### **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Սարգիս Խաչատրյանի արվեստը, կյանքը ու գործունեությունը, արվեստաբանական լայնածավալ վերլուծության չեն ենթարկվել: Հետևյալ ուսումնասիրությունները միտված են ավելի ընդգրկուն և ամբողջական ներկայացնելու նկարչի կյանքի և ստեղծագործական գործունեության բոլոր փուլերը, որոնց շնորհիվ ճշգրիտ պատմաժամանակագրական հաջորդականությամբ կկառուցվեն նրա կյանքի և ստեղծագործական գործունեության փուլերը: Ելնելով այդ ամենից՝ աշխատանքը կատարվել է պատահամեմատական, վերլուծական, նկարագրական մեթոդներով:

## ՔՆՆԱՐԿՈՒՄ

Սարգիս Խաչատուրյանը ծնվել է 1886 թվականին Արևմտյան Հայաստանի Մալաթիա քաղաքում: Խաչատուրյանի հայրը Թավրիզից էր, իսկ մայրը՝ Մալաթիայից (**Կենսագրական տեղեկություններ ...**, 1939): Սարգիսը մեծացել է նյութապես չափազանց համեստ ապրուստ ունեցող ընտանիքում՝ մոր և երեք եղբայրների հետ: Մանկուց՝ դեռևս հինգ տարեկանից, ի հայտ է եկել նրա շնորհը դեպի նկարչությունը:

Շուտով՝ 1894-1896թթ., սկսվեցին հայերի զանգվածային ջարդերը Արևմտյան Հայաստանում: Նկարչի հայրենի քաղաք Մալաթիայի հայ բնակչությունը ևս ենթարկվեց այդ սոսկալի ջարդերին, որից պատանի նկարիչը բարեբախտաբար փրկվեց՝ ապաստանելով եկեղեցում:

Տեղի Ազգային վարժարանում նախնական կրթություն ստանալուց հետո 16-ամյա Սարգիսը 1902 թվականին մեկնում է Սանասարյան վարժարան, որտեղ սովորում է անվճար հիմունքներով:

Այդ տարիներին երիտասարդ Խաչատուրյանը քիչ էր մասնակցում աշակերտների խաղերին: Նա ազատ ժամանակ նկարում էր, ձեռքում միշտ պահում թուղթ և մատիտ: Սանասարյան վարժարանն ավարտելուց հետո վերադառնում է հայրենի քաղաք Մալաթիա ու մի կարճ ժամանակահատված գծագրություն է դասավանդում հայրենի կրթօջախում՝ Մայր վարժարանում: Ապա նորաթուխ նկարիչը Մալաթիայից տեղափոխվում է Այնթապ, որտեղ դասավանդում է Վարդանեան վարժարանում (**Թորանեան Թ.**, 1983): Ավելի ուշ Գևորգ Արքեպիսկոպոս Արսլանյանի հորդորով Խաչատուրյանը մեկնում է Հալեպ, որտեղ նկարագարում է Սուրբ Քառասնից Մանկաց եկեղեցին և Օթել Պարոնը<sup>1</sup>:

Արդարև, 22-ամյա Խաչատուրյանի առաջին լուրջ քայլերը կարող ենք համարել Սուրբ Քառասնից Մանկաց եկեղեցու պատերի և առաստաղի նկարագարումները: Նա եկեղեցու կուսակալի դիմանկարի համար

<sup>1</sup> Գևորգ Արքեպիսկոպոս Արսլանյան (1869-1951) Պոլսի Պատրիարքական տեղապահ, ուսուցիչ և տեսուչ Սեբաստիայի և Եվրոկիայի հայկական որբանոցներում:

վարձատրվում է և այդ գումարով մեկնում Պոլիս՝ մի կարճ ընթացք մնալով այնտեղ<sup>2</sup>: Խաչատուրյանը աչքի է ընկնում իր ընդունակություններով: Տեղի ազդեցիկ իշխանավոր Գաբրիել Նորատունկյանը, որը միաժամանակ Սանասարյան վարժարանի խնամակալների նախանդամ էր, միջնորդում է իրենց նախկին սանի՝ երիտասարդ Խաչատուրյանի համար, որպեսզի մեկնի Հռոմ՝ ուսանելու Գեղարվեստի ակադեմիայում<sup>3</sup>: 1908թ. Սարգիսը ընդունվում է Հռոմի Գեղարվեստի ակադեմիա (այժմ՝ Հռոմի Գեղեցիկ արվեստների ակադեմիա), որը 1911 թվականին ավարտում է գերազանցությամբ՝ ոսկե մեդալով: Ինչպես ընդունված էր այն ժամանակ, ակադեմիան ավարտելուց հետո շրջանավարտները շրջագայում էին եվրոպական քաղաքներով, ուսումնասիրում մշակույթը, թանգարանները: Խաչատուրյանը ևս շրջեց մոտ մեկ տարի և միայն դրանից հետո՝ 1912 թվականին վերադարձավ Պոլիս, Սանասարյան վարժարանում նկարչություն դասավանդելու համար: Սակայն շուտով՝ նույն թվականին, շնորհը կատարելագործելու նպատակով մեկնում է Փարիզ՝ ընդունվում Դեկորատիվ արվեստների դպրոց, որտեղ սովորում է 1912 թվականից մինչ 1914 թվականը (Այժմ՝ Փարիզի Գեղեցիկ արվեստների ազգային բարձրագույն դպրոց (ֆր.՝ École nationale supérieure des Beaux-Arts, (ENSBA), գեղարվեստի ազգային դպրոց Փարիզում):

Հերթական անգամ գերազանցությամբ ավարտելով ուսումը՝ արվեստագետը մեկնում է Շվեյցարիա՝ Ժնև, որտեղ սովորում է մանկավարժություն, հոգեբանություն և փիլիսոփայություն, ապա Մյունխեն՝ կատարելագործելու համար նկարչական հմտությունները:

Փոքր անց Խաչատուրյանը վերադարձի ճանապարհ է բռնում դեպի Էրզրում, որպեսզի դասավանդի Սանասարյան վարժարանում, սակայն սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը: Նկարիչը կարողանում է ազատվել

<sup>2</sup> Սրբոց Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցի՝ հայկական եկեղեցի Սիրիայի Հալեպ քաղաքում: Եկեղեցին 15-րդ դ. կառույց է:

<sup>3</sup> Գաբրիել Նորատունկյան (1882-1936), հայ խոշոր քաղաքական գործիչ, դիվանագետ, մշակույթի գործիչ այդ տարիներին Թուրքիայի հանրային աշխատանքների նախարար:

զինվորագրելուց և մեկնում է Կովկաս՝ Թիֆլիս (այժմ՝ Թբիլիսի), որտեղ իջևանում է Արտաշես Սարյանի տանը: Թիֆլիսից մեկենաս Ալեքսանդր Մելիք-Ազարյանցը Խաչատուրյանին տրամադրում է և՛ բնակարան, և՛ արվեստանոց: Այստեղ էր կարճ ժամանակով ապրում նաև զորահրամանատար, պետական գործիչ զորավար Անդրանիկը: 1920թ. Խաչատուրյանը ամուսնանում է Արտաշես Սարյանի աղջկա՝ Վարդանուշ Սարյանի (նկարչուհի՝ Վավա Սարգիս Խաչատուրյան) հետ:

Թիֆլիսը այս տարիներին լեցուն էր հայ արվեստագետներով: Այստեղ էին հավաքվել անցած դարի հայ մշակույթի կարկառուն ներկայացուցիչները: Թիֆլիսում Սարգիս Խաչատուրյանը ծանոթություն է հաստատում իր ժամանակաշրջանի մտավորականների հետ, մտերմանում Եղիշե Թադևոսյանի, Գևորգ Բաշինջաղյանի, Վարդգես Սուրենյանցի, Փանոս Թերլմեզյանի, Վանո Խոջաբեկյանի, Մարտիրոս Սարյանի, Դերենիկ Դեմիրճյանի, Երվանդ Քոչարի, Ալեքսանդր Շիրվանզադեի, Վահան Տերյանի, Ռոմանոս Մելիքյանի, Գարեգին Հովսեփյանի, ինչպես նաև ամենայն հայոց բանաստեղծի՝ Հովհաննես Թումանյանի հետ, որը շատ էր հավանել Խաչատուրյանի գործերը: Հովհաննես Թումանյանը մի առիթով ասում է. «Սարգիս ջան, ինչ որ դու պարզել ես մեզ քո վրձնով, մենք չենք կարող վերարտադրել մեր գրչով: Քո այս կտավներն օտարներին լավագույնս պիտի ծանոթացնեն մեր ժողովրդի տառապանքների հետ» (**Հայաստանի ազգային պատկերասրահ, տես նաև՝ Վարսյան Շ., 1974, Խաչատուրեան Ա., 1971**):

Եվ հենց այս միջավայրում էլ ստեղծագործում է նկարիչը: 1914թ. Խաչատուրյանը ստեղծում է «Հայերի տեղահանությունը» կտավը, որից էլ սկիզբ է առնում նրա՝ հայոց ցեղասպանությանը նվիրված նկարների շարքը: Այս թեմայով ստեղծել է տարբեր չափերի ավելի քան 500 նկար: Տարաբախտորեն, թե ճակատագրորեն, նկարչի ստեղծագործական առաջին շրջանը կապված է դարասկզբի ոճագործության՝ 1915 թվականի Հայոց ցեղասպանության հետ:

Նկարչի վրձնի շնորհիվ ծնվում են հայ ժողովրդի ողբերգության, կոտորածների ու տառապանքի մասին պատմող կտավներ:

Այս շրջանում ստեղծված գործերը տեսաձևի և վերապրածի պատկերումն են՝ ողողված սուր զգացմունքներով, հոգեբանական ծանր վիճակի դուրսժայթքմամբ: Դրանցում լսելի է հայ ժողովրդի հոգու ճիչը: Ցայտուն, արտահայտիչ ու տիպական կերպով են պատկերված կանանց և երեխաների կերպարները: Միաժամանակ այս գործերը ներկայացնում են անկոտրում ոգու տեր մի ժողովրդի պատմություն, ժողովուրդ, որն ունի տոկուն և դիմացկուն բնավորություն, ինչպիսին էր նաև Խաչատուրյանը: Մի շարք ստեղծագործություններում՝ «Բամբակահավաք (Արարատ լեռը)», «Գյուղացիները պարում են գյուղի հրապարակում», «Ձոհաբերություն և պարային ուխտագնացություն», «Կլոր պար», «Հարսանեկան երթ», «Վարագի տոներ», նրա պատկերած հայ գաղթականների կերպարներում արվեստագետը որսացել է ապագայի հանդեպ լավատեսական սպասումները: Խաչատուրյանը հայ ժողովրդին պատկերել է ոչ միայն դժվարին, սոսկալի պայմաններում, ողբերգական իրավիճակներում, այլ նաև դեռ նոր մազապուրծ եղած ու վիշտը չամոքված սրտով ուրախ առիթների շուրջ համախմբած ժամանակ: Այդպիսի աշխատանքներից են՝ «Պարող սասունցիները», «Հարսանիքից առաջ», «Տոն Վարագա վանքի մոտ» և մի շարք այլ ստեղծագործություններ, որոնք հայ ժողովրդի վերապրելու կամքի վկայությունն են: Խաչատուրյանի աշխատանքներում մարդիկ նույնիսկ տեղահանության ժամանակ նման չեն իրենց գլուխը կորցրած ամբոխի:

1916 թվականին Խաչատուրյանը մասնակից է դառնում Թիֆլիսում հիմնված «Հայ արվեստագետների միության» (ՀԱՄ) կազմակերպմանը:

Կովկասում նկարիչը 1914-1917թթ. եռանդուն ստեղծագործական գործունեություն է ծավալում՝ շրջագայելով տարբեր վայրերում: Լինում է Բաթումում, Դիլիջանում, Ալեքսանդրապոլում (այժմ Գյումրի), Ղարաքիլիսայում (այժմ Վանաձոր), ինչպես նաև Երևանում և Էջմիածնում, որտեղ ապաստանել էին հայ գաղթականները: Բացօթյա կացարանները, եկեղեցիների բակերը, կայարանամերձ շինությունները լի էին

գաղթականներով: Նա շրջում էր ամենուր և հավերժացնում է իր տեսածը, եղեռնի պատմությունը:

Խաչատուրյանի վրձնով կերտվում են նաև Հայոց բնաշխարհի խորհրդանիշները՝ Արարատ լեռը և Սևանա լիճը: 1916 թվականին, երբ նկարիչն արդեն գտնվում էր Հայաստանում, գերվում է հայկական բնաշխարհով, մասնավորապես Արարատով, ստեղծում նկարների շարք՝ նվիրված բիբլիական լեռին. «Արարատ» (1916), (1919), (1921), «Արարատ և Արարատյան դաշտավայր» (1916-1917), «Հայկական պար Արարատ լեռան դիմաց», «Արարատը երկաթուղային կայարանից» և այլ աշխատանքներ: Այդ գործերը տարբերվում են թե՛ կատարողական տեխնիկայով, թե՛ հորինվածքով: Ակներև է, որ Խաչատուրյանի համար Արարատ լեռը սրբություն է, հայ ժողովուրդի դարավոր խորհրդանիշը և ներշնչանքի աղբյուրը:

Խաչատուրյանի «Հայկական շրջան»-ի ստեղծագործությունները ներկայացնում են հայրենի բնաշխարհը, հայ մարդուն իր տառապանքով, վշտով, աշխատանքով և նաև ուրախության ու տոնախմբությունների ժամանակ: Այդ թեմաները ներկայացվում են կենցաղային և բնանկարի ժանրերի միջոցով, հաճախ նաև դրանք միասին են հանդես գալիս: Կտավներում տեսնում ենք ազգային տարբեր տարածաշրջանների տարազով հայ գաղթականների, որոնք ապաստանել են Էջմիածնի վանքի բակում:

Աշխատանքներից շատերը պարզ գծագրություններ են՝ անավարտության տպավորությամբ, սակայն դրանցում երևում է, որ Խաչատուրյանը ոչ միայն գույնով փայլուն աշխատող արվեստագետ է, այլև ծավալների և ձևի վարպետ: Այս գործերը մոտ են բացօթյա նկարչության սկզբունքներին, այդուհանդերձ, նկարիչը կարողացել է մի քանի գծերի օգնությամբ, իսկ որոշ աշխատանքներում էլ՝ թույլ, թեթև, ջրաներկին հատուկ երանգային անցումներով տալ կեցվածքների ու դեմքերի ակնհայտ բնութագրումները: Նկարիչն իր կտավներով Եվրոպային ցույց է տալիս հայ ժողովրդի ցավն ու տառապանքը, իսկ Եվրոպան այդպես էլ լուռ էր՝ չլսելով Խաչատուրյանի հոգու ճիչը: Սարգիս Խաչատուրյանին նույնիսկ անվանում

էին «Հայոց վշտի երգիչ», «Հայաստանի երգիչ» (**Կուրդինյան Կ., 1971, Կուրդինյան Կ., 1967**) :

Հայ մեծագույն գրող Ա. Իսահակյանը նրան անվանում է «Ազգային մեծ նկարիչ» և ասում. «Մենք գրչով չենք կարող տալ այն, ինչ որ դու անում ես վրձնով» (**Հայաստանի ազգային պատկերասրահ, տես նաև՝ Խաչատուրեան Ա., 1971**):

Գաղթականության ողբերգական օրերը պատկերող նկարների շարքում Խաչատուրյանը հանդես է գալիս որպես իր ժողովրդի ծանր հոգեբանական ապրումները տեսած և վերապրած նկարիչ: Խաչատուրյանի աշխատանքների առաջին փուլում տեսնում ենք տարբեր գեղանկարչական եղանակներով կատարված ստեղծագործություններ: Այս շարքում ոչ շատ մանրամասներով մշակված աշխատանքներում դրսևորվում է բովանդակությունը: Որոշ գործերում՝ «Գաղթականներ» (1915), «Հայ կինը ազգային տարագով (Գաղթական կինը)» (1915), «Հայ փախստական աղջիկ» (1919), «Հայկական ֆիգուրներ. նստած և կանգնած կանայք» (1919) և (1921) և այլ, նկարիչը օգտագործել է ներդաշնակ, թեթև երանգներ ջրաներկով, իսկ որոշ գործեր էլ կատարված են յուղաներկի, գուաշի ընդգրկուն, ամբողջական, հնչեղ, խիտ ու վառ հյութալի գամմայով:

Խաչատուրյանը հմուտ կերպով արտահայտել է որբերի դեմքերի արտահայտությունները, կարողացել է տպավորիչ պատկերել մենավոր կանանց, ջարդերից հազիվհազ ճողոպրած հայ գաղթականության թշվառության տեսարանները, որի արդյունքում ստեղծել է սուր հոգեբանական իրատեսական պատկերներ: Կարծես հենց նկարչի հոգու պատառիկներ լինեն հայ գաղթականներ պատկերող այս գործերը:

Արվեստագետը «Հայկական շրջան» պատկերող մի շարք գործերում, մասնավորապես հայ գաղթականությանը վերաբերվող ստեղծագործություններում, սինթեզել է պատմական ժանրը բնանկարի ժանրի հետ: Դրանցում մանրակրկիտ պատկերված է բնությունն ամենայն մանրամասնությամբ: «Գաղթականներ» (1915), «Գաղթական կանայք» (1915),

«Հայ գաղթականներ» (1920-ական թթ), «Գաղթական որբեր» (1922-24) և այլ աշխատանքներն իրենց հնչեղ երանգապնակով ու լուսի առկայությամբ գերում են դիտողի ուշադրությունը: Դրանցում երևում են տաք ու վառ երանգներ՝ կարմիր, դեղին, վարդագույն, մանուշակագույն և լաջվարդ: Վառ գույներով կատարված այս ստեղծագործություններում ակնառու է ներդաշնակությունը՝ գույնի, ձևի և կոմպոզիցիայի հավասարակշռությունը, ամբողջականությունը: Խաչատուրյանը գույնի վարպետ է, որի աշխատանքներում գույները նրբորեն մերված են միմյանց հետ: Այստեղ օգնության են գալիս միջանկյալ գույները, որոնց սահուն, աստիճանական, մեղմ երանգները մի առանձին հմայք են հաղորդում ստեղծագործություններին:

1919թ. Պոլսում բացվում է արվեստագետի առաջին անհատական ցուցահանդեսը, ապա դրան հաջորդում է 1920թ. Թիֆլիսում բացված «Հայաստանն ու հայ ժողովուրդը» խորագիրը կրող ցուցահանդեսը:

1921թ. Խորհրդային Հայաստանի իշխանությունները Սարգիս Խաչատուրյանին տալիս են պատվեր, ստեղծելու ՀԽՍՀ առաջին փոստային նամականիշների գծանկարներ: ՀՍԽՀ առաջին 16 փոստային նամականիշները տպվեցին Խաչատուրյանի ինքնօրինակ գծանկարներով:

1921թ. Խաչատուրյանը մեկնում է Պոլիս, որտեղ ցուցադրում է իր ստեղծագործությունները: Որոշ ժամանակ անց՝ նույն տարում, Եգիպտոսում Խաչատուրյանը կազմակերպում է իր հերթական անհատական ցուցահանդեսը: Պոլսում եղած ժամանակ ստեղծում է Կոնստանդնուպոլիսը պատկերող նկարների շարք՝ «Կ. Պոլիս. Հայ կղզի» (1919), «Կ. Պոլիս. Գաղ գյուղ» (1919), «Կոստանդնուպոլիսի տեսարներ» շարքը (1919) և «Տրապիզոնի տեսարան» (1919) աշխատանքները, որոնք կատարված են օդային վետվետումներով, ջրաներկին ներհատուկ նրբերանգային անցումներով:

1922թ. Խաչատուրյան ամուսինները մեկնում են Վիեննա, որտեղ էլ սկսվում է նկարչի ստեղծագործական գործունեության երկրորդ շրջանը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ կերպարվեստի մեծագույն վարպետ Ս. Խաչատուրյանը իր ստեղծագործական գործունեության առաջին շրջանի աշխատանքներով մի ողջ ժողովրդի պատմություն ներկայացրեց համայն աշխարհին: Դրանցում հավերժացված են հայոց պատմության ողբերգական էջերը՝ հիշեցնելով հայ ժողովրդի դեմ կատարված ոճիրը: Դրանք թե՛ իրենց պատմական արժեքով, թե՛ գեղագիտական ընկալումներով համարվում են հայ կերպարվեստի անդաստանի աննման գանձեր: Մենք խոսեցինք դրանցից մի քանիսի մասին, սակայն ստեղծագործությունները բազմաթիվ են, և յուրաքանչյուրն իր կատարման եղանակով և հորինվածքային ինքնատիպ լուծումներով դարձել է արվեստի իրական արժեք:

Չնայած այն բանին, որ հետագայում Խաչատուրյանը քանիցս վերադառնում է «Հայկական շրջանի» թեմայով աշխատանքներին, այդուհանդերձ նկարչի ստեղծագործական կյանքում սկսվում է նոր փուլ:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Թորանեան Թ. (1983)**, Արուեստի երկու երկրպագուներ Սարգիս եւ Վավա Խաչատուրեան, Նիւ Եորք, աղբյուր՝ [djvu](#).
2. **Խաչատուրեան Ա. (1971)**, Նկարչուհի Վավան Սարգիս Խաչատուրեանի մասին, «Սփիւռք», Բեյրութ, 14 մարտ, էջ 14-15, տպ. «Սեան»:
3. **Կենսագրական տեղեկություններ եւ ամփոփ տեսություններ արուեստագետներու մասին (1939)**, Սարգիս Խաչատուրեան, «Հայաստանի Կոչնակ», Նյու Յորք, թիվ 41, էջ 1122, «Կոչնակ» հրատ., Chrome-extension://efaidnbmnnnibpcajpcgiclfindmkaj/https://tert.nla.am/archive/NLA%20A MSAGIR/Haygotchnag/1939/1939(41).pdf
4. **Կուրդինյան Կ. (1967)**, Պանդուխտ նկարներ, «Սովետական Հայաստան», Երևան, թիվ 4, էջ 18-19, Հայպետհրատ:
5. **Կուրդինյան Կ. (1971)**, Սարգիս Խաչատուրյան, ցուցահանդեսի կատալոգ, Երևան, ԳԱ հրատարակչության էջմիածնի տպարան:

6. **Վարսյան Շ. (1974)**, Փշեր ու վարդեր, «Հայրենիքի ծայն», Երևան, թիվ 17, 24 ապրիլ, էջ 6-7, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե:
7. **Հայաստանի ազգային պատկերասրահ**, Հուշածեղագրային բաժին, Ֆոնդ 70, Ինվ.-19620:
8. **Հայաստանի ազգային պատկերասրահ**, Հուշածեղագրային բաժին, Ֆոնդ 70, Ինվ.-14246:

## REFERENCES

1. **Toranyan T. (1983)**, Two Art Admirers: Sarkis and Vava Katchadourian, New York, without a publisher, source: [djvu](http://djvu).
2. **Khachaturyan A. (1971)**, The artist Vava about Sarkis Katchadourian, “Spurk” , Beirut, March 14, publisher Sevan.
3. **Biographical Information and Brief Essays on Artists (1939)**, Sarkis Katchadourian, Gotchnag Hayastani, New York, No. 41, p. 1122, The Gotchnag Publishing Company, Inc.  
Chrome-extension://efaidnbnmnnibpcajpcglclefindmkaj/https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Haygotchnag/1939/1939(41).pdf
4. **Kurginyan K. (1967)**, Exile Paintings, “Soviet Armenia”, Yerevan, No. 4, pp. 18-19, Haypethrat.
5. **Kurginyan K. (1971)**, Sarkis Katchadourian, Exhibition Catalog, Yerevan, GA Publishing, Etchmiadzin Printhouse.
6. **Varysyan Sh. ( 1974)**, Thorns and Roses, “Hayreniky dzayn”, Yerevan, No.17, April 24, pp. 6-7, Committee for Cultural Relations with Diaspora Armenians.
7. **National Gallery of Armenia**, Manuscript Department, Fund 70, Inv.-19620.
8. **National Gallery of Armenia**, Manuscript Department, Fund 70, Inv.-14246.

## Первый период творческой деятельности Саркиса Хачатуряна

### Заключение

*Ключевые слова и выражения:* Геноцид, беженцы, Саркис Хачатурян, Арарат, Константинополь, армянский период, психологические произведения в искусстве Саркиса Хачатуряна.

В статье мы представляем первый этап творчества художника из армянской диаспоры- Саркиса Хачадуряна, когда он начал делать первые шаги в мир большого искусства. Мы придали особое значение историческим, политическим и всем остальным внешним факторам, которые способствовали становлению художника в процессе его развития. Первый творческий период Хачатуряна был в значительной степени связан с трагедией и страданиями его народа, свидетелем которых был и сам художник. С детства, переживший ужасы резни в годы правления Абдул-Хамида, художник и его творчество естественно были отмечены этими событиями.

Геноцид оказал большое влияние на Хачадуряна как на армянина, а также на его творчество, особенно в первый период. Это нашло отражение примерно в 500 графических и живописных работах художника.

Хачадурян постоянно находился в поиске, пытаясь найти себя в нескольких учебных заведениях, а так же в разных странах, и именно этот факт повлиял на многогранность выполненных работ художника разных тем разнообразной техникой. Он пробовал себя везде, создавая уникальное "хачатуряновское" искусство.

В статье описывается творчество Хачатуряна "армянского периода" и связанные с ним исторические и политические события, которые составили первый период творчества художника. Цель статьи - по-новому взглянуть на творчество художника и представить исторические особенности этого периода, которые были затронуты в его работах, посвященных геноциду.

Arpine Torikyan

## The first period of Sarkis Katchadourian's creative work

### Conclusion

**Key words and expressions:** *Genocide, refugees, Sarkis Katchadourian, Ararat, Constantinople, the Armenian period, psychological works in the art of Sargis Katchadourian.*

In the article, we present the first stage of the work of an artist from the Armenian Diaspora, Sarkis Katchadourian, when he began to take his first steps into the world of great art. We have attached special importance to historical, political, and all other external factors that contributed to the formation of the artist in the process of his development.

Katchadourian 's first creative period was closely linked to the tragedy and suffering of his people, which the artist himself witnessed. From a young age, having narrowly survived the Hamidian massacres, these events inevitably left a deep mark on both the artist and his work.

The genocide had a great impact on Katchadourian as an Armenian, as well as on his work, especially in the first period. This is reflected in about 500 graphic and pictorial works by the artist.

Katchadourian was constantly on the lookout and it was this fact that influenced the versatility of the artist's works on various topics with a variety of techniques. He tried himself everywhere, creating a unique "katchadourian" art.

The article describes Katchadourian's work of the "Armenian period" and related historical and political events that made up the first period of the artist's work. The purpose of the article is to take a fresh look at the artist's work and present the historical features of this period, which were touched upon in his works on the genocide.

**Արփինե Թորիկյան** - Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի հայցորդ, Երևանի պետական հումանիտար քոլեջի դասախոս, ուսուցիչ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանում: Գիտական հետաքրքրությունները՝ Հին աշխարհի արվեստ, հայկական մանրանկարչություն և սիյուռքահայ արվեստ: Ուսումնասիրության հիմնական թեման Սարգիս Խաչատուրյանի արվեստն է: Հեղինակ է երկու գիտական հոդվածի: [arpine0306@gmail.com](mailto:arpine0306@gmail.com)

**Арпине Торикян** - Соискатель кафедры истории, теории искусства и культурологии в АГПУ им. Х. Абовяна, преподаватель Ереванского государственного гуманитарного колледжа, учитель в базовой гимназии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна. Сфера научных интересов: Искусство Древнего мира, армянская миниатюра и армянское искусство диаспоры: Основная тема исследования искусство Саркиса Хачатуряна. Автор двух научных статей. [arpine0306@gmail.com](mailto:arpine0306@gmail.com)

**Arpine Torikyan** - Applicant of Chair of Art History, Theory and Cultural Studies at the Kh. Abovyan ASPU, lecturer at Yerevan State Humanitarian College, a teacher at the basic high school of the Armenian State Pedagogical University named after Khachatur Abovyan. Scientific interests: The art of the Ancient World, the Armenian miniature and the Armenian art of the Diaspora. The main focus of the research is the art of Sarkis Katchadourian. Author of two scientific articles. [arpine0306@gmail.com](mailto:arpine0306@gmail.com)

*Խմբագրություն է ուղարկվել 16.11.2024թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 25.11.2024թ.*

*Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.*

## ՌԱՖԻԿ ԳԱՐԻԵԼՅԱՆ

ԴԱՐԱՎԱՆԴԱՅԻՆ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ  
(ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ)

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.129

## ԱՄՓՈՓՈՒՄ

Դարավանդային երկրագործությունը հայկական մշակույթի ինքնատիպ ճյուղերից է: Դեռ շատ հին ժամանակներից դարավանդման միջոցով հնարավորինս կանխվում էր հողամաշումը: Դարավանդների շնորհիվ յուրացվում ու մշակվում են զառիվայր տարածքները: Միևնույն ժամանակ, դրանց միջոցով ջրային ռեսուրսները դառնում են կառավարելի: Դարավանդը որպես երևույթ դրսևորվում է մշակույթի տարբեր բնագավառներում, օրինակ՝ բնակավայրերի ու տների կառուցապատման մեջ: Երկրագործական դարավանդները, ըստ նախնական դիտարկումների, լինում են երկու տեսակ՝ այգեգործական ու դաշտավարական: Այգեգործական դարավանդներն ունենում են քարե հենապատեր, իսկ դաշտավարական դարավանդները ձևավորվում են լանջային տարածքները հատուկ եղանակով մշակելու արդյունքում: Վերջինիս դեպքում պատվարի դեր է կատարում հողաթումբը:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** *դարավանդ, երկրագործական մշակույթ, զառիվայր, հենապատ, լանդշաֆտ, այգեգործություն, դաշտավարություն, լեռներ:*

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երկրագործության առաջացմամբ ինտենսիվանում է մարդու կողմից ռելիեֆը ձևափոխելու գործընթացը<sup>1</sup>: Այս տեսանկյունից որպես առանձին երևույթ պետք է

<sup>1</sup> Հոդվածը պատրաստվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում իրականացվող «Հայոց դարավանդային երկրագործությունը» գիտական թեմայի շրջանակում՝

դիտարկել երկրագործական դարավանդները: Դրանք բնական լանդշաֆտի յուրացման և այն փոխելու ամենացայտուն դրսևորումներից են: Երկրագործական դարավանդների հիմնական գործառույթը, հատկապես սակավահողության պայմաններում, լեռների և բլուրների թեք լանջերի յուրացումն է, որը կարևոր նշանակություն է ունեցել նաև հողամաշումը (էրոզիան) կանխելու առումով: Դարավանդ ստեղծելով, երկրագործն ունենում էր հարթ մակերեսով տարածքներ, որոնք, ըստ Գարեգին Սրվանձտյանցի գնահատականի՝ լեռնեցիների մխիթարանքն էին (Սրուանձտեան Գ., 1879):

Սույն ուսումնասիրության նպատակն է ազգագրական, պատմական, աշխարհագրական և այլ բնույթի նյութերի կիրառմամբ ներկայացնել հայոց դարավանդային երկրագործության ընդհանուր պատկերը: Գրանցել ու հետազոտել պահպանված աղբյուրները և հնարավորինս ամբողջացնել թեման: Սույն հետազոտությունը կարևորվում է նրանով, որ մինչև այժմ չկան թեմային վերաբերող նմանատիպ աշխատություններ: Երևույթը ներկայացնող հիմնական տեղեկությունները առանձին հանդիպում են տարբեր գավառներին և բնակավայրերին վերաբերող նյութերում և որոշ ուսումնասիրություններում:

### ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունն իրականացվել է ազգագրության բնագավառում դասական համարվող նկարագրողական և վերակազմողական-վերլուծական մեթոդներով՝ առկա տեղեկությունների համալիր մշակման ու համադրման արդյունքում:

### ՔՆՆԱՐԿՈՒՄ

**Տարածքը և գոտիականությունը:** Ըստ նախնական դիտարկումների և գրավոր նյութերի՝ հայոց դարավանդային մշակույթի հիմնական կենտրոնը Հայկական լեռնաշխարհն է, որտեղից հայերի զանգվածային տեղաշարժերի հետ

---


բազային ֆինանսավորմամբ: Ես իմ երախտագիտությունն եմ հայտնում Անի Սարատիկյանին, Արսեն Բորոխյանին, Արտյոմ Անանյանին, Արտակ Գնունուն, Ռոման Հովսեփյանին, Սուրեն Հորոսյանին և բոլոր նրանց, ում հետ քննարկել եմ աշխատանքում արձարձված խնդիրները և ովքեր աջակցել են հոդվածի ստեղծմանը:

այս երևույթը անցել է Կիլիկիա և այլ տարածքներ, ինչպիսին է նաև Մարմարա ծովից արևելք ընկած շրջանը, որը համապատասխանում է Նիկոմեդիայի կամ Իզմիրի գավառին [Քարտեզ 1]: Այստեղ հայերը սկսել են բնակվել 1550-1700 թթ. **(Գասապեան Մ., 1913)** և հիմնականում ապրել են մինչև 1915-1923 թթ.:

Ստորև ներկայացված շարքում նշված են որոշ բնակավայրեր, որոնց բնակչությունը զբաղվել է դարավանդային երկրագործությամբ: Տրված են նաև տվյալ բնակավայրի դարավանդային գոտու ծովի մակարդակից ունեցած ստորին և վերին նիշերը: Գնիշիկ (Վայոց ձոր) 1950-2350, Մաջադիա (Զավախք) 1740-2000, Խնածախ (Սյունիք) 1300-1600, Կյուրին 1350-1500, Արաբկիր 1180-1380, Հաճն 1070-1300, Ջեյթուն 900-1200, Գետաշեն 970-1170, Չմշկածագ 890-1170, Ակն 870-1050, Բալու 890-1040, Կարճևան (Սյունիք) 850-970, Արդվին 260-800, Պիրթաս (Մուսա լեռ) 400-570, Գընճըլար (Նիկոմեդիա) 100-350, Սիս 150-300<sup>2</sup>:

Այգեգործական դարավանդները գտնվում են մինչև 1500 մ բարձրություն ունեցող գոտիներում, իսկ դրանից ավելի բարձր տարածքները հիմնականում զբաղեցնում են հացազգի բույսեր մշակելու համար նախատեսված՝ դաշտավարական դարավանդները: Ընդ որում, 1500-ից ներքև գտնվող հատվածներում նույնպես առկա էին դաշտավարական դարավանդներ:

<sup>2</sup> Տվյալները վերցված են՝ Google Earth Pro համակարգի միջոցով:



Քարտեզ 1. Դարավանային երկրագործության տարածվածությունը հայկական մշակույթում<sup>3</sup>: Քարտեզագիր՝ Ռաֆիկ Գաբրիելյան

**Դարավանդը որպես կենսատարածքի կազմակերպման միջոց:**

Դարավանդը որպես երևույթ ավելի ընդգրկուն է, քան զուտ երկրագործության բնույթ ունենալը: Դարավանդային համակարգերի ստեղծումը դրսևորվել է հայոց կեսապահովման մշակույթի տարբեր բնագավառներում: Այդ դրսևորումներն իրենց արտահայտությունն են ստացել բնակավայրերի կառուցապատման մեջ: Դա կապված է այն հանգամանքի հետ, որ հայոց մեջ բնակավայրերը հիմնվում էին միջին բարձրություն ունեցող գոտիներում. հիմնականում ջրային աղբյուրներին մոտ՝ ձորերում ու կիրճերում: Տեղանքի նման ընտրության կարևոր պատճառները հետևյալներն էին՝ միջին կամ նախալեռնային գոտում, ի տարբերություն լեռնայինի, կլիման ավելի բարեխառն էր, ուստի և բնակության համար նպաստավոր: Միջին գոտին որոշակի առավելություններ ուներ նաև ցածրադիր

<sup>3</sup> Քարտեզը կազմվել է՝ Quantum Geographic Information Systems ծրագրով: Աշխարհագրական հիմքի համար օգտագործվել է՝ SRTM GL3 90m թվային բարձրությունների մոդելները:

հարթավայրերի նկատմամբ, որտեղ ճահճուտների պատճառով ստեղծվում էր ծանր առողջապահական վիճակ՝ բնակության համար դառնալով վտանգավոր (Գասապեան Մ., 1913):

Ձորերի լանջերին բնակավայրեր հիմնելն ուներ էական նշանակություն: Անգամ արտադրական և տնտեսական բնույթի կառույցների և գերեզմանոցների համար, հնարավորության դեպքում ընտրվում էին բնակավայրերի մերձակա ոչ պիտանի տարածքները: Մշակության համար պիտանի բոլոր հողերի նկատմամբ ավանդաբար ձևավորվել էր բացառիկ հոգատար վերաբերմունք, քանի որ դրանք մարդու կենսական կարիքները բավարարելու հիմնական միջոցն էին: Պատահական չէ, որ ինչպես շատ վայրերում, այնպես էլ Սյունիքի Խնձորեսկ գյուղում, հարթ հողակտորի վրա տուն կառուցելը համարվել է խորթ երևույթ (Ջոհրաբյան Է., 2003):

Դարավանդային բնակավայրերի նկարագրություններում հաճախ հանդիպում ենք, որ մի տան կտուրը պարտեզ (Պարսամեան Մ., Քէչեան Ա., 1952) է ծառայում մյուսի համար: Կամ ծառայում է որպես՝ բակ (Չիլինգարյան Ռ., Սիսյան Բ., 2007), փողոց (Պարսամեան Մ., Քէչեան Ա., 1952): Ձեյթունում, օրինակ, ամռան ամիսներին անմիջապես կտուրների վրա էին քնում (Ալլահվերտեան Յ., 1884): Ղևոնդ Ալիշանը այսպես է նկարագրում այս գյուղաքաղաքը. «ի գառիվայր լերին դար՝ ի դար, որպես թե մէն փուն այլոյ փան սանդուղ իցէ վերելից. փողոցք առապարք և ծամածուռք ստիպեն զուղևորս մեծաւ զգուշութեամբ գնալ՝ եթէ կամիցին մնալ ողջանդամ (Ալիշան Ղ., 1885)»:

Հայկական բնակավայրի տնտեսական համալիրի պարտադիր մասն էր կազմում հացահատիկներ կալսելու հարթ տարածքը՝ կալը: Դարավանդային բնակավայրերում, թեք տեղանքի պայմաններում դրա ստեղծումը բարդ աշխատանք էր: Լանջի մի հատված՝ փորվում, հարթեցվում էր, ու փլուզումները կանխելու համար՝ հենապատերով ամրացվում: Մոկսում հարմար տարածք չլինելու պատճառով, երբեմն կալատեղ էր ծառայում թոնրատան, գոմի կամ տան կտուրը (Բդոյան Վ., 1972):

Այսպիսով, դարավանդները մարդկային գործունեության համար ոչ միայն կարևոր գործառույթ ունեն երկրագործության համատեքստում, այլև իրենցից ներկայացնում են կենսագործունեության կազմակերպման մի ամբողջ համակարգ, որն իր մեջ ներառում է և՛ բնակավայրը, և՛ բնակարանը, և իհարկե երկրագործական լանդշաֆտը: Մեծ հաշվով այս բոլոր դրսևորումները ենթադրում են զառիվայր տարածքի կազմակերպում և դրա արդյունավետ օգտագործում:

**Երկրագործական դարավանդներ:** Զառիվայր տարածքներն այգեգործական նպատակներով օգտագործելու համար, հավասար հեռավորությամբ երկայնակի հենապատեր էին շարում, այնպես, որ դրանց վերին եզրը մոտավորապես հավասար լիներ հաջորդի խարսխին: Դրանից հետո լանջի ու հենապատի միջև, ծավալային առումով առաջանում էր եռանկյունաձև դատարկ տարածություն, որը հենապատին անմիջապես մոտ հատվածում ավելի խորն էր լինում և գնալով դեպի լանջը բարձրանում էր՝ հանդիպելով վերևի հենապատի հիմքին: Առաջացած դատարկ տարածության ստորին շերտը նախ լցնում էին մանր քարերով, ապա նաև հողով (**Պարսամեան Մ., Քէչեան Ա., 1952**): Ակնում և այլ վայրերում դարավանդի լիցքի համար օգտագործում էին լանջերից հավաքած քարերն ու խիճը (**Պարսամեան Մ., Քէչեան Ա., 1952**), իսկ Քղիում քարը բերում էին հանքից (**Սրապեան Լ., 1960**): Քանի որ միայն լանջի հողը բավարար չէր, հող էին բերում նաև այլ վայրից: Հիմնականում այն տեղերից, որտեղ հնարավոր չէր ոռոգման ջուր անցկացնել: Խիճն ու հողը տեղափոխում էին հիմնականում մարդու ուժով կամ գրաստներին բեռնելով: Հյուսիսային Կովկասում հողը տեղափոխում էին պարկերով, սահնակներով և հատուկ սայլերով (**Калоев Б., 1981**): Այգեգործական դարավանդների հենապատերը ամեն տարի հարկ էր լինում նորոգել, վերակառուցելով փլված հատվածները (**Պարսամեան Մ., Քէչեան Ա., 1952**): Այս տիպի դարավանդային համակարգը [Նկ. 1] երկրագործից պահանջում էր նաև արհեստների տիրապետել, տվյալ դեպքում՝ շինարարական հմտություններ ունենալ: Դարավանդային այգիների ստեղծումը հնարավոր էր դարձնում լանջերի ոռոգումը, քանի որ առանց դրանց ջրային ռեսուրսները

անկառավարելի կլինեին: Ջրի անկանոն հոսքը հողամաշման հիմնական պատճառն է:



Նկար 1. Այգեգործական դարավանդ Երևանի Արաբկիր շրջանում:


Լուսանկարի հեղինակ՝ Ռաֆիկ Գաբրիել

Որոշ ազգագրական աշխատություններում՝ այգեգործական դարավանդները ներկայացվում են որպես ամենաընտիր և բերքատու հողամասեր (Գալուստեան Գ., 1934): Թերևս դրանք ունեին մի քանի կարևոր առավելություններ. առաջին՝ դարավանդից ավելի բարձր գտնվող լանջերից, անձրևների հետևանքով օգտակար նյութերը սահում էին ներքև՝ կուտակվելով դարավանդներում: Հենապատերը, ջրի և նրա մեջ առկա միկրոտարրերի համար արգելակող դեր էին կատարում: Հենապատերի հաշվին ապահովվում էր նաև խոնավության որաշակի մակարդակ (Քելեշեան Մ., 1949): Երկրորդ՝ արեգունի լանջերին գտնվող դարավանդները ողջ ցերեկվա ընթացքում կլանում էին արեգակի ջերմությունը: Ընդ որում, հենապատերի շնորհիվ հողը արևից հավելյալ ջերմություն էր ստանում: Երրորդ՝ բարձրադիր տեղանքում գտնվող այգիները, քիչ են վարակվում հիվանդություններով (Քելեշեան Մ., 1949):

Ակնում, ինչպես Հայաստանի այգեգործական բոլոր շրջաններում,

դարավանդային այգիներում հնձաններ էին կառուցվում, որոնք ծառայում էին նաև որպես ամառանոցային բնակարաններ (Պարսամեան Մ., Քէչեան Ա., 1952): Ձեյթունում, հողագործությամբ զբաղվող ընտանիքները մայիսին տեղափոխվում էին պարտեզներ և վերադառնում էին հոկտեմբերին (Ալլահվերտեան Յ., 1884): Սիսեցիք նույնպես աշնանը տեղափոխվում էին բարձրադիր այգիներ և իջնում էին այնտեղից բերքահավաքի՝ *այգեկույթի* ավարտին: Այս երևույթը կոչվում էր *օդափոխություն*, որի մեկ այլ գործառույթն էր պաշտպանել այգին վայրի կենդանիների հարձակումներից (Քէլեչեան Մ., 1949):

Սյունիքում ավելի շատ տարածված էր որոշակի թեքություն ունեցող լանջերին, դարավանդային դասավորություն ունեցող վարելահողերում հացահատիկների մշակությունը: Դաշտավարական դարավանդները [Նկ. 2] այգեգործականի համեմատ ունեն զգալի տարբերություններ:



Նկար 2. Դաշտավարական դարավանդ. Վայոց ձորի Գնիշիկ գյուղում: Լուսանկարի հեղինակ՝ Բորիս Գասպարյան:

Ըստ Ստեփան Լիսիցյանի՝ դրանք առաջացել են դարերի ընթացքում, հողը անընդհատ հատուկ եղանակով մշակելու արդյունքում (Լիսիցյան Ս., 1969): Այս գործընթացը տեղի էր ունենում հետևյալ կերպ. լանջի վրա ընտրվում էին երկայնական հատվածներ, որոշվում էին դրանց սահմանները: Նախ հերկում էին այդ սահմանագծերի վերին հատվածները, հողը շրջելով դրանց վրա՝ առաջացնելով որոշակի թումբ: Ժամանակի ընթացքում այս թմբի վրա էին կուտակում նաև քարամաքրման աշխատանքների՝ *քարհավքի* ժամանակ հողից հեռացված քարերը: Ամեն հաջորդ ներքևի հատվածի մնացած մասը նույնպես հերկում էին դեպի ներքև: Հերկը կատարվում էր միայն մի կողմից: Հերկի այս ձևը Տեղ գյուղում կոչվում էր՝ *մընթըվանի վար* (միաթևանի վար, այսինքն վար մի եզրից), այսինքն մի եզրի՝ թևի կողմից կատարված հերկ (Зелинский С., 1886): Ենթադրաբար դարավանդ ստանալու այս եղանակը հնարավոր էր փոքր թեքություն ունեցող լանջերի պարագայում: Ընդամին, հարկավոր էր նաև, որ լանջը սակավահող չլիներ:

Այսպիսով, ըստ նախնական դիտարկումների կարելի է առանձնացնել երկրագործական դարավանդների երկու տիպ: Առաջինը՝ այգեգործական դարավանդներն են, որոնք հիմնականում խաղողի այգիներ էին: Երկրորդը՝ դաշտավարական դարավանդներն են, որոնք նախատեսված են հացահատիկային բույսերի համար: Հիմնական տարբերությունն այն է, որ առաջին տիպի դարավանդները պահանջում են հատուկ ճարտարապետական կառուցապատում, իսկ երկրորդ տիպը առաջացել է հերկի հատուկ եղանակի կիրառման արդյունքում:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քանի որ դարավանդ կառուցելը բավականին բարդ և ժամանակատար գործընթաց էր, պետք է ենթադրել, որ այն կառուցած ցանկացած խումբ կամ անհատ երկարաժամկետ բնակության մտայնություն է ունեցել այն տարածքում որտեղ ստեղծել է դրանք: Այգեգործական դարավանդը պահանջում է անընդհատական խնամք՝ նորոգումներ, իսկ դաշտավարական դարավանդը

մշակման նույն եղանակի շարունակական կիրառում տարիների ընթացքում, ինչը պահանջում էր բազմաթիվ սերունդների տարաժամանակյա համաձայնեցված աշխատանք: Այս երևույթի օրինակով արտահայտվում է մշակույթի այն սահմանումը, համաձայն որի՝ մշակույթը միջոց է, որով մարդկային գործունեության տեսակները փոխանցվում և վերարտադրվում են արտագենետիկորեն՝ սոցիալական շփման միջոցով (**Арутюнов С., и др. 1983**):

Դարավանդների ստեղծումը նպատակ ունի յուրացնելու դժվարամատչելի տեղանքը: Այն հնարավորություն է տալիս երկրագործական մշակույթ ունեցող հասարակություններին, իրավիճակից ելնելով զբաղեցնելու բարձրադիր տարածքներ: Որոշ դեպքերում այս անհրաժեշտությունը առաջանում էր իշխանությունների ազդեցությունը թուլացնելու նպատակով: Ասվածի փայլուն օրինակն է այգեգործական դարավանդներով հարուստ Արաբկիր քաղաքը, որը ձևավորվել է 19-րդ դարի ընթացքում, Անդի քաղաքից բնակչության աստիճանաբար տեղափոխման հետևանքով (**Բախտիկեան Ս., 1934**):

Այսպիսով, դարավանդային համակարգերը պետք է դիտարկել ավելի լայն՝ ընդհանուր լեռնային ապրելակերպի և տարածության կազմակերպման համատեքստում, որը ենթադրում է դարավանդման բոլոր դրսևորումների ուսումնասիրություն՝ որպես մեկ ամբողջական երևույթ:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ալիշան Ղ. (1885)**, Սիսուան, Վենետիկ, Ս. Ղազար հրատ.:
2. **Ալլահվերտեան Յ. (1884)**, Ունիա կամ Ձէյթուն, Կ. Պոլիս, Գ. Պաղտատլեան հրատ.:
3. **Բախտիկեան Ս. (1934)**, Արաբկիր և շրջակայի գիւղերը, Պէյրուֆ, «Վահագն» հրատ.:
4. **Բդոյան Վ. (1972)**, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

5. **Գալուստեան Գ. (1934)**, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զէյթուն, Նիւ Եորք, «Կոչնակ» հրատ.:
6. **Գասապեան Մ. (1913)**, Հայերը Նիկոմիդիոյ գաւառին մէջ, Պարտիզակ, «Ազատամարտ» հրատ.:
7. **Ջոհրաբյան Է. (2003)**, Խնձորեսկ, Երևան, «ՎՄՎ ՊՐԻՆՏ» հրատ.:
8. **Լիսիցյան Ս. (1969)**, Զանգեզուրի հայերը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
9. **Չիլինգարյան Ռ., Սիսյան Բ. (2007)**, Գետաշեն, Երևան, «Գասապրինտ» հրատ.:
10. **Պարսամեան Մ., Քէչեան Ա. (1952)**, Ակն և ակնցիք, Փարիզ, Ամերիկայի Ակնայ հայրենակցական միութեան հրատ.:
11. **Սրապեան Լ. (1960)**, Քրի. տեղագրական եւ ազգագրական, Անթիլիաս, Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ հրատ.:
12. **Սրուանձտեան Գ. (1879)**, Թորոս Աղբար: Հայաստանի ճամփորդ: Մասն առաջին, Կ. Պոլիս, Ե. Մ. Տնտեսեան հրատ.:
13. **Քէլէշեան Մ. (1949)**, Սիւ-Մատեան, Պէյրութ, «Հայ ճեմարան» հրատ.:
14. **Агларов М. (2018)**, Хиндалал, Махачкала, изд. МавраевЪ.
15. **Арутюнов С., и др. (1983)**, Культура жизнеобеспечения и этнос, Ереван, изд. АН АССР.
16. **Зелинский С. (1886)**, Исследование экономического быта государственных крестьян в Зангезурском уезде, Елисаветпольской губернии, Тифлис, изд. Г. Меликова.
17. **Калоев Б. (1981)**, Земледелие народов Северного Кавказа, Москва, изд. “Наука”.

#### REFERENCES

1. **Alishan Gh. (1885)**, Sisowan /Sisvan/, Venice, St. Ghazar ed.
2. **Allahverdean Y. (1884)**, Ownia kam Ze'yt'own /Ulnia or Zeytun/, Constantinople, G. Baghdatlean ed.

3. **Bakhtikian S. (1934)**, Arabkir ev shrjakayi giwghery' /Arabkir and surrounding villages/, Beirut, "Vahagn" ed.
4. **Bdoyan V. (1972)**, Erkragorc'akan mshakowyt'y' Hayastanowm /Agriculture in Armenia/, Yerevan, ed. Academy of Sciences of Armenian SSR.
5. **Galousdean G. (1934)**, Marash kam Germanik ev heros Ze'yt'own /Marash or German and Heroic Zeytun/, New York, "Kochnak" ed.
6. **Gasabean M. (1913)**, Hayery' Nikomidioy gawar'in me'j /Armenians in the Province of Nicomedia/, Bardizag, "Azatamart" ed.
7. **Zohrabyan E. (2003)**, Xnd'oresk /Khndzoresk/, Yerevan, VMV PRINT ed.
8. **Lisitsyan S. (1969)**, Zangezowri hayery' /The Armenians of Zangezur/, Yerevan, ed. of the Academy of Sciences of the ASSR.
9. **Chilingaryan R., Sisyan B. (2007)**, Getashen /Getashen/, Yerevan, "Gasprint" ed.
10. **Parsamyan M., Kechean A. (1952)**, Akn ev aknciq /Akn and its citizen/, ed. House of the Akn Patriotic Union of America
11. **Srapean L. (1960)**, Qghi. teghagrakan ew azgagrakan Keghi. /Topographical and Ethnographic/, Antelias, Armenian Catholicosate of the Great House of Cilicia ed.
12. **Srvandzteants G. (1879)**, T'oros Aghbar: Hayastani twamp'ord /Toros Aghbar: A Traveler of Armenia/. Part One, Constantinople, E. M. Tentsyan ed.
13. **Keleshean M. (1949)**, Sis-Matean /Sis-Book/, Beirut, Armenian seminary ed.
14. **Aglarov M. (2018)**, Khindalal /Khindalal/, Makhachkala, "Mavraev" ed.
15. **Arutyunov S., et al. (1983)**, HindalalKul'tura zhizneobespecheniya i etnos /Life support culture and ethnos/, Yerevan, ed. Academy of Sciences of the ASSR.
16. **Zelinsky S. (1886)**, Issledovaniye ekonomicheskogo byta gosudarstvennykh krest'yan v Zangezurskom uyezde /A study of the economy of state peasants in the Zangezur district/, Elizavetpol province, Tiflis, G. "Melikov" ed.

17. **Kaloev B. (1981)**, *Zemledeliye narodov Severnogo Kavkaz /Agriculture of the peoples of the North Caucasus/*, Moscow, "Science" ed.

**Рафик Габриелян**

### **Террасное земледелие в армянской культуре. предварительные замечания**

#### **Заключение**

*Ключевые слова и выражения:* Терраса, Земледелие, Крутой склон, Подпорная стена, Ландшафт, Садоводство, Хлебопашество, Горы.

Террасное земледелие одно из важнейших явлений армянской культуры. Функция сельскохозяйственных террас заключается в предотвращении эрозии почвы. Благодаря им присваиваются крутые склоны гор. Террасирование важный фактор для управления водных ресурсов. В данной статье, на примере армянской культуры рассматриваются различные явления террасирования, их создание и типология. В Армянском нагорье, сельскохозяйственные террасы распространены в различных регионах и на разных высотах. Террасное земледелие типична для многих регионах Армении, например: Сюника, Вайоц Дзора, Джавахка, Арабкира, Акна, Зейтуна, Ачна, Ардвина, Мусалера и др. В районах, где развито террасное земледелие, встречаются и поселения с террасными строениями. В таких поселениях крыша одного дома является двором для другого.

Сельскохозяйственные террасы бывают двух типов, садоводческие террасы и хлебопашеские террасы. Садоводческие террасы имеют подпорные стены из камня, которые время от времени нужно ремонтировать. В некоторых этнографических работах садовые террасы представлены как наиболее продуктивные участки земли. У них было несколько важных преимуществ. Благодаря подпорным стенам почва получала дополнительное тепло от солнца. Подпорные стенки служили барьером для воды и содержащихся в ней микроэлементов, обогащая почву. Хлебопашеские террасы создавались со временем за счет особого способа вспашки. В участке каждая борозда делается с

одного и того же края. Сделав одну борозду, возвращают плуг обратно тот же края и делают следующую борозду. Насыпь использовалась для них как подпорная стена.

**Rafik Gabrielyan**

### **The terrace farming in Armenian culture. preliminary observations**

#### **Conclusion**

**Key words and expressions:** *Terrace, Arable Farming, Steep Slope, Breast-wall, Landscape, Horticulture, Tillage, Mountains.*

Terrace farming is one of the most important phenomena of Armenian culture. The function of agricultural terraces is to prevent soil erosion. Thanks to them, are appropriated the steep slopes of the mountains. Terracing is important to manage water flow, slowing runoff. This article, on the example of Armenian culture, focuses on issues of various phenomena of terracing, their creation and typology. In Armenian highlands, agricultural terraces are distributed in various regions and at different heights. Terraced farming is typical for many regions of Armenia, for example, Syunik, Vayots Dzor, Javakhk, Arabkir, Akn, Zeytun, Achn, Ardvin, Musaler, etc. In areas where terraced farming is developed, there are also settlements with terraced buildings. In such settlements, the roof of one house is the courtyard of another.

The agricultural terraces are two types, horticultural terraces and tillage terraces. The horticultural terraces have breast-wall from stone, which needs to be repaired from time to time. In some ethnographic works, horticultural terraces are presented as productive plots of land. They had several important advantages. Thanks to the retaining walls, the soil received additional heat from the sun. The retaining walls acted as a barrier for water and the microelements it contained, enriching the soil. The tillage terraces were created over time in virtue of a special way of plowing. In the plot, each furrow is made from the same edge. Having made one furrow, the

plow is returned to the same edge and the next furrow is made. The soil embankment was used as a breast wall for them.

**Ռաֆիկ Գաբրիելյան** - ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, կրտսեր գիտաշխատող, հայցորդ: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց տնտեսական մշակույթ, հայոց դարավանդային երկրագործություն: Հեղինակ է 2 հոդվածի: ORCID: 0009-0005-5965-2614, [rafik.gabrielyan.iae@gmail.com](mailto:rafik.gabrielyan.iae@gmail.com)

**Рафик Габриелян** - *Институт археологии и этнографии НАН РА, младший научный сотрудник, соискатель. Научные интересы: хозяйственная культура армян, террасное земледелие армян. Автор 2 статьи. ORCID: 0009-0005-5965-2614, [rafik.gabrielyan.iae@gmail.com](mailto:rafik.gabrielyan.iae@gmail.com)*

**Rafik Gabrielyan** - *Institute of Archaeology and Ethnography of NAS RA, Junior Researcher, Applicant. Scientific interests: Economic Culture of the Armenians, Terraced Farming of the Armenians. Author of 2 article. ORCID: 0009-0005-5965-2614, [rafik.gabrielyan.iae@gmail.com](mailto:rafik.gabrielyan.iae@gmail.com)*

*Խմբագրություն է ուղարկվել 08.01.2025թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 24.01.2025թ.*

*Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.*

## ԼՈՒՍԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄՈՆՈԿՄԵՆՏԱԼ ԱՐՎԵՍՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ  
ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՒՄ XX-XXI ԴԱՐԵՐՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.130

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացված է մոնումենտալ արվեստի դրսևորումները թանգարանների գեղարվեստական ձևավորման մեջ: Բերված են օրինակներ Հայաստանի թանգարանների ձևավորումներում մոնումենտալ արվեստի՝ հատկապես որմնանկարչության կիրառման վերաբերյալ: Տարված են զուգահեռներ Եվրոպական մի քանի թանգարանների ձևավորումների միջև: Ժամանակային սահմանները ընդգրկում են հիմնականում XX դարից մինչև մեր օրեր ընկած ժամանակահատվածը: Ուսումնասիրությունը նպատակ ունի ներկայացնելու մոնումենտալ արվեստի կիրառության բազմազանությունը և կարևորությունը հասարական շենքերի՝ մասնավորապես թանգարանների գեղարվեստական ձևավորման մեջ: Կարևորելով այս արվեստի հետագա զարգացումը՝ հոդվածը կարող է օգտակար նյութ հանդիսանալ ուսումնասիրողների, արվեստաբանների և արվեստագետների համար:

*Բանալի բառեր և արտահայտություններ.* մոնումենտալ արվեստ, թանգարան, ձևավորում, որմնանկար, խճանկար:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մոնումենտալ արվեստը, ունենալով տարածության հետ փոխազդեցության յուրահատուկ հատկություններ, ոչ միայն գեղարվեստական արտահայտման ձև է, այլև կարևոր գործիք միջավայրի կազմակերպման և վերափոխման համար: Մոնումենտալ արվեստը բնական կերպով ներգրավվում է ճարտարապետական տարածության մեջ և ստեղծում յուրահատուկ մթնոլորտ դիտորդի համար: Գեղագիտական, խորհրդանշական և գործնական գործոնները մոնումենտալ

արվեստը դարձնում են ուժեղ գործիք տարածական միջավայրի կազմակերպման մեջ: Մոնումենտալ արվեստը ճարտարապետական տարածական միջավայրի անբաժանելի մաս է, որից կախված է քաղաքի, շենքի, շինության ներքին կամ արտաքին կերպարը: Արվեստների սինթեզը ճարտարապետության մեջ ներկայացնում է տարբեր արվեստների տեսակների՝ նկարչության, քանդակագործության, դեկորատիվ-կիրառական արվեստի ներգրավումը ճարտարապետական միջավայրի մեջ, որի արդյունքում ձևավորվում է որակապես նոր գեղագիտական, պատկերային միասնություն: Այս գործընթացը չի սահմանափակվում տարբեր արվեստի գործերի մեխանիկական զուգակցմամբ մեկ ճարտարապետական օբյեկտի կամ համալիրի շրջանակներում, նույնիսկ եթե դրանք ստեղծվում են միաժամանակ: Իրական համադրման կարելի է հասնել գեղարվեստական բնական փոխազդեցության միջոցով, որտեղ յուրաքանչյուր բաղադրիչ ունի իր անկախ գեղագիտական արժեքը, իսկ դրանց համակցումը ստեղծում է արվեստի նոր համալիր՝ յուրահատուկ հատկություններով, որը դուրս է գալիս առանձին տարրերի անհատական հատկանիշներից՝ ստեղծելով սինթեզիա: Ճարտարապետական միջավայրում կիրառված մոնումենտալ արվեստի դրսևորումները կամ կրում են որոշակի էներգետիկ լիցք էսթետիկ ազդեցություն՝ ձևավորելով բնակիչների էմոցիոնալ վիճակը, կամ սառը, անտարբեր և առանձնացված՝ շարունակում են իրենց գոյությունը՝ ստեղծելով անհատական միջավայր (**Προχορος C., 2012**):

Այս արվեստը կարևոր դեր ունի հասարակության մշակութային, պատմական և գաղափարական դիմագծի ձևավորման գործում՝ արտահայտելով ժողովրդի անցյալն ու ներկան, արժեքներն ու հավատամքները: Հասարակական շենքերի գեղարվեստական ձևավորման մեջ մոնումենտալ արվեստն ընդգրկում է ճարտարապետական լուծումներ, որմնանկարներ, քանդակներ, խճանկարներ, վիտրաժներ և այլ գեղարվեստական ձևեր, որոնք ներդաշնակորեն միահյուսվում են միջավայրի ընդհանուր պատկերին: Այն ծառայում է ոչ միայն գեղագիտական

խնդիրների լուծմանը, այլև գործառական, սոցիալական, կրթական ու գաղափարական նպատակների:

### **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Ուսումնասիրությունը կատարվել է հետևյալ թանգարանների այցելությամբ՝ Պարույր Սևակի տուն-թանգարան, Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ, Կարեն Դեմիրճյանի թանգարան, Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան, Հայաստանի ազգային պատկերասրահ, Գաֆեսճյան արվեստի կենտրոն, Վիեննայի արվեստի պատմության թանգարան, “Vitra” դիզայնի թանգարան, նաև հասանելի գիտական աղբյուրներից օգտվելով՝ միտք ունենալով կատարել մանրամասն հետազոտություն տվյալ ոլորտում:

### **ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Թանգարանները՝ որպես ազգային, մշակութային ժառանգության կենտրոններ, առանձնահատուկ դեր ունեն մոնումենտալ արվեստի պահպանման և ներկայացման գործում: Թանգարանները ոչ միայն ներկայացնում են հանրահայտ արվեստագետների կյանքն ու գործունեությունը, այլև հաճախ ներառում են մոնումենտալ արվեստի բացառիկ նմուշներ, որոնք իրենց հերթին խորհրդանշում են մշակութային գաղափարները: Այս տեսանկյունից դիտարկելով հայ մեծերի տուն-թանգարանները՝ օրինակ կարելի է բերել Արարատի մարզի Զանգակատուն գյուղում գտնվող Պարույր Սևակի տուն-թանգարանի ներքին միջավայրը ձևավորող ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Սարգիս Մուրադյանի (1927-2007) 1985-1986թթ իրականացրած որմնանկարները, որտեղ ներկայացված են գրողի կյանքի և ստեղծագործության կարևոր շրջափուլերը: Թանգարանի գլխավոր սրահը երկարավուն ուղղանկյունանիստ տեսք ունի, որի մեկ ամբողջական պատին նկարված է որմնանկարը: Այն պատկերված է հատակից 50սմ բարձրության վրա՝ հաշվի առնելով, որ դիմացը կարող է դրվել սեղան կամ այլ գույք: Որմնանկարը արված է մոխրագույն և կապտավուն երանգներով, տեղ-տեղ նաև առկա են տաք դարչնագույն երանգներ: Որմնանկարում

ամբողջությամբ արտահայտված են Պարոյր Սևակի կյանքի դրվագները և այն տրամադրությունը ու զգացողությունները, որը բանաստեղծը փոխանցում է իր ստեղծագործություններում: Այս որմնանկարը հիանալի կերպով արտահայտում է թանգարանի գործառույթը և ներկայացնում Պարոյր Սևակի կյանքը և գործունեությունը՝ դառնալով միջավայրի ձևավորման կարևոր և անփոխարինելի մաս:

Մոնումենտալ արվեստի դրսևորումներից համարվում են նաև պանոնները, որոնք մոնումենտալ արվեստի ինքնատիպ ձևերից են, որոնք արտահայտվում են մեծածավալ մակերեսների գեղարվեստական ձևավորման միջոցով: Այն համադրում է գեղանկարչության, գրաֆիկայի, խեցեգործության, երբեմն ճարտարապետության տարրերը՝ ստեղծելով գաղափարական, գեղագիտական և տարածական ազդեցություն: Պանոն հիմնականում կիրառվում է հանրային շենքերի, մշակութային հաստատությունների և քաղաքային տարածքների ձևավորման համար՝ ներառելով հասարակական հիշողության, ազգային ինքնության և պատմական իրադարձությունների արտացոլումը, կամ կարող է կրել միայն գեղագիտական գործառույթ: Պանոնների թեմատիկան հաճախ առնչվում է հերոսական պատումներին, ազգային մշակույթին և կոլեկտիվ արժեքներին, ինչը այն դարձնում է ոչ միայն գեղարվեստական, այլև քարոզչական ու կրթական կարևոր միջոց: Այս ձևաչափը նպաստում է հասարակության մեջ գաղափարների հաղորդմանը՝ միաժամանակ հարստացնելով միջավայրը գեղագիտական տեսանկյունից:

Մոնումենտալ պանոնի բարձրարժեք օրինակ է Հայաստանի վաստակավոր նկարիչ Ռուբեն Ղևոնդյանի (1942-2019) «Անի քաղաքի համայնապատկերի վերականգնումը» պանոն, որը իրականացվել է 2005-2010թթ., չափսը՝ 500x300սմ, նյութը՝ կտավ, յուղաներկ, գտնվում է Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտում (**Հակոբյան Թ., 1988**): Նկարիչը երկար տարիներ ուսումնասիրել էր Անի քաղաքի եկեղեցիների, շինությունների վերաբերյալ առկա տեղեկատվությունը, մարդկանց

հագուստների, զինանշանների և քաղաքի արտաքին տեսքի վերաբերյալ նյութերը, պատրաստել էր եկեղեցիների ստվարաթղթե մանրակերտները, որպեսզի կարողանա ճշգրտորեն եռաչափ կառուցմամբ վերարտադրել այն կտավի վրա: Պանոյի էսքիզը և եկեղեցիների մանրակերտները նույնպես գտնվում են Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտում: Պատկերված է Ախուրյան գետը, Սմբատաշենի պարիսպը և պարսպի ներսում տեղակայված մայրաքաղաքը՝ իր եկեղեցիներով, մատուռներով, տներով: Վերապատկերված է նաև Անի մայրաքաղաքի զինանշանը, կենտրոնում՝ առյուծը, կողքերում՝ երաժշտական և զիվորական գործիքներ, զծագրական կարկին, պատկերված է կշեռք, որի նժարներից մեկի վրա ոսկի է, մյուսին՝ գիրք, ամենայն հավանականությամբ Ավետարանը, գիրքը ավելի ներքևում է, ավելի ծանր կշիռ ունի քան ոսկիով լի նժարը: Զինանշանի ծախս կողմում կարելի է նկատել հեղինակի անվան և ազգանվան առաջին տառերը, որը հանդիպում է նրա այլ որմնանկարներում ևս: Պանոն բոլոր կողմերից կարծես շրջանակված լինի. աջ և ծախս կողմերում պատկերված են զարդաքանդակներ, վերևում գրված է՝ ԱՐԵՎԵԼԵԱՆ ՔԱՂԱՔԴ ԱՆԻ ԵՐԲԵՄՆ ԵՎ ԴՈՒ ԷԻՐ ՎԱՅԵԼՉԱԿԱՆ ՀԱՐՄՆԻՔՈՂԻ ՄԵՐՁԱՎՈՐԱՑ ՅՈՅԺ ՅԱՆԿԱԼԻ ՀԵՌԱՎՈՐԱՑ ՓԱՓԱԳԵԼԻ, ներքևում գրված է՝ ՈՒՐ ԵՆ ԽՆԿՈՅՆ Ի ՔԵՁ ԲՈՒՐՄՈՒՆՔ ԱՆԵՐԵՎՈՒՅԹ ԵՎ ԵՐԵՎԵԼԻ ԿԱՄ ԺՈՂՈՎՈՅՆ ԳՈՒՄԱՐՈՒՄՆ ՅԱՎՈՒՐ ՏՕՆԻՅՆ ՏԵՐՈՒՆԻ: Կենտրոնում պատկերված է քաղաքի մուտքը և մարդկանց բազմություն, տոնախմբություն՝ մրգերով լի զամբյուղներով, երաժշտությամբ, երգով և նվագով, պատկերված է Գագիկ Ա Բագրատունին, կինը՝ Կատրանիդեն, դիմացը՝ Անիի Մայր տաճարի մանրակերտը, կողքին՝ Սահակ Ա Սևանցի կաթողիկոսը: Այստեղ պատկերված որոշ կերպարներ կարելի է տեսնել նաև Ռ. Ղևոնդյանի Երևան հյուրանոցի դահլիճի առաստաղի որմնանկարներում: Հեղինակն իր այս աշխատանքը նվիրել է Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտին, և պանոյի վերին աջ անկյունում կարել է նկատել գրություն՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ՀԱՅ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼՆԵՐԻ ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐԸ ՆԿԱՐԵՑ ՌՈՒԲԵՆ ՂԵՎՈՆԴՅԱՆԸ 2005-2010ԹԹ: Հետաքրքրական է, որ Ռ. Ղևոնդյանը, մասնագիտությամբ լինելով նկարիչ, վարպետորեն կատարել է այս բարդ, ճարտարապետական գիտելիքներ պահանջող աշխատանքը, և նրա ձեռագիրը յուրահատուկ է և առանձնացող:

Թանգարանային որմնանկարի օրինակ է նաև Կարեն Դեմիրճյանի թանգարանի հիմնական սրահի որմնանկարը, որն իրականացրել է Հայաստանի վաստակավոր ճարտարապետ, նկարիչ, քանդակագործ Ալբերտ Սոխիկյանը (1947-2017) 2002թ.: Որմնանկարում վարպետորեն միահյուսված են Երևան քաղաքի այն կարևոր կառույցներն ու համալիրները, որոնք կառուցվել և շահագործման են հանձնվել Կարեն Դեմիրճյանի ղեկավարման տարիներին և որոշ կառույցներ էլ կրում են նրա անունը: Պատկերված է Զվարթնոց միջազգային օդանավակայանը, որի հետին պլանում գծային կատարմամբ կանգնած է Զվարթնոցի տաճարը, երևում է Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի շենքը, Երիտասարդական պալատը, Կարեն Դեմիրճյանի անվան մետրոպոլիտենի Երիտասարդական կայարանի շինության արտաքին հատվածը, կենտրոնում պատկերված է Կարեն Դեմիրճյանի դիմանկարը, հետևում՝ Արարատ լեռը: Որմնանկարի գունային համադրությունը ևս հետաքրքրական է. այն իրենից ներկայացնում է ընդհանուր գունային անցում՝ կապույտից դեպի բաց կանաչակապտավուն երանգներ, առկա են նաև մարմնագույն և շագանակագույն տոներ: Որմնանկարը իրականացված է հետաքրքիր երկրաչափական ոճավորմամբ: Չնայած նրան, որ պատկերված են մի քանի կառույցներ, դրանք չեն խանգարում և չեն ծանրացնում որմնանկարի տեսքը, քանի որ միահյուսվում են միմյանց և իրականացված են բաց տոներով և գծային գրաֆիկայով: Կ. Դեմիրճյանի դիմանկարը կատարված է առավել շեշտադրմամբ և ակադեմիական նկարվածքով: Որմնանկարը ամբողջությամբ փոխանցում է մեծ քաղաքական գործչի ներդրումը հայրենաշինության գործում:

Մեկ այլ նման օրինակ է Երևանում Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանում գտնվող [ԽՍՀՄ](#) վաստակավոր նկարիչ Միհրան Սոսոյանի (1928-1992) 1987թ. իրականացած «Աբովյանը և Պարոտը» մոնումենտալ խճանկարը: Խճանկարի չափսը 150x210սմ, իրականացված է ֆլորենտական խճանկարի տեխնիկայով, նյութը՝ հայկական տուֆ և ֆելզիտ: Այս խճանկարը որոշակի առումով Մ. Սոսոյանի «Հայոց մեծերը» խճանկարների շարքի տրամաբանական շարունակությունն էր, որը պատրաստած էր 1985թ. [Մոսկվայի](#) գրքի միջազգային ցուցահանդեսի հայկական տաղավարի ձևավորման համար (Սոսոյան Ս., 2003): Այն իրականացված է ֆլորենտական խճանկարի տեխնիկայով (Прыгов В., 2019): Խճանկարների շարքը այժմ գտնվում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի առաջին հարկի սրահում: Խճանկարների իրակացման աշխատանքներին նաև մասնակից է եղել հեղինակի մտերիմ ընկերը՝ գեղանկարիչ Գրիգոր Խանաղյանը: Օգտագործված են հայկական տուֆ և ֆելզիտ: Խճանկարների շարքը բաղկացած է տասներեք աշխատանքից, որոնցից չափերով մեծը՝ Մեսրոպ Մաշտոցի խճանկարն է՝ 200x200սմ, մնացած խճանկարների չափերը նույնն են՝ 100x200սմ: Շարքում ներկայացված են հետևյալ հայ մեծերը՝ Մեսրոպ Մաշտոց, Գրիգոր Լուսավորիչ, Անանիա Շիրակացի, Մովսես Խորենացի, Գրիգոր Նարեկացի, Եղիշե, Մխիթար Հերացի, Հակոբ Մեղապարտ, Թորոս Ռոսլին, Խաչատուր Աբովյան, Կոմիտաս, Հովհաննես Թումանյան, Եղիշե Չարենց:

Թանգարանի ձևավորման ևս մեկ օրինակ է «Հայաստան» խճանկարը [Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի](#) ճակատամասին, էսքիզը՝ Մարտիրոս Սարյանի<sup>1</sup>, իրականացրել է ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Գարրի (Գառնիկ) Սմբատյանը (1929-2003), 1967թ. (համահեղինակներ՝ Հարություն (Հատիկ) Պողոսյան, Զարգանդ Հարությունյան (1929-1993)) (Գրիգորյան Ս., 2018): Գարրի (Գառնիկ) Սմբատյանը Լենինգրադի մոնումենտալ գեղանկարչության դպրոցի

<sup>1</sup> Մ. Սարյանի թանգարանի պաշտոնական կայքում գրված է, որ խճանկարը կատարված է Մ. Սարյանի էսքիզով, <http://sarian.am/index.html> (վերջին այցելություն 22.12.2024):

վառ ներկայացուցիչներից մեկն է Հայաստանում: Նրա մոնումենտալ խճանկարները, որմնանկարները, ինչպես նաև բազմաթիվ յուղանկարներ հավաստում են, որ նա բազմաժանր նկարիչ է, որը վարպետորեն ստեղծագործել է տարբեր ոճերում: Սմբատյանի ստեղծագործությունը կարևոր ներդրում է հայկական մոնումենտալ գեղանկարչության և խճանկարի զարգացման պատմության մեջ: Նա եղել է մոնումենտալ արվեստի հիմնադիրը Հայաստանում, հենց այդ պատճառով նրա աշխատանքներում բավականին մեծ տեղ են զբաղեցնում խճանկարները: Նկարիչը ստեղծել է մի շարք հիշարժան գործեր Հայաստանի տարբեր քաղաքներում: Գարրի (Գառնիկ) Սմբատյանը հեղինակ է մի շարք այլ մոնումենտալ աշխատանքների, որոնցից են Ստեփանավանում «Արգիշտին որսի ժամանակ», Գյումրիում «Գյումրվա հարսանիք» (ավերվել է 1988 թ. երկրաշարժից), Սևանում «Աստղիկի ծնունդը» խճանկարների հեղինակն է: Աշխատանքների մոնումենտալությունը, տաք և սառը գույների զուգորդումը յուրահատուկ դինամիկություն և թեթևություն են հաղորդում (**Գրիգորյան Ա., 2018**):

Դիտարկելով միջազգային հանրահայտ թանգարանները՝ կարելի է նկատել, որ որոշ թանգարաններում մոնումենտալ արվեստի ձևավորումներն առավել ցայտուն դրսևորումներ ունեն. դրանցից կարելի է առանձնացնել Վիեննայի արվեստի պատմության թանգարանը, որտեղ ամբողջ ներքին միջավայրը ձևավորված են որմնանկարներով և զարդաքանդակներով: Եթե համեմատենք այն Հայաստանի ազգային պատկերասրահի հետ, ապա կտեսնենք, որ Հայաստանի ազգային պատկերասրահում միջավայրի ձևավորումը առավել զուսպ է՝ առավելություն տալով հենց ցուցադրություններին: Առկա են սրահների գունային լուծումներ և տեղեկատվական տարրերի անմիջական տպագրություն պատերի մակերերևույթներին, որոնք ևս կարող ենք համարել որմնանկարային գրաֆիկա: Վիեննայի արվեստի պատմության թանգարանի ներքին միջավայրի ձևավորման մեջ, հատկապես նախասրահների և առաջին հարկից երկրորդ հարկ տանող սանդուղքների դիմացի պատերի հատվածներում, կարելի է տեսնել

ականավոր ավստրիացի և եվրոպացի արվեստագետների ստեղծած որմնանկարներ և հարթաքանդակներ: Որմնանկարների հեղինակներից են **Գուստավ Կլիմտը**, նրա եղբայր **Էրնստ Կլիմտը** և նրանց գործընկեր **Ֆրանց Մաուշը** (Kerrigan M., 2015, [Rychlik O.](#), 2007): Եռյակը հանձն առավ թանգարանի գլխավոր աստիճանավանդակի և այլ ներքին տարածքների դեկորատիվ նկարազարդման աշխատանքը 1890-1891թթ: Դրանք պատկերում են տարբեր ժամանակաշրջանների և մշակույթների, այդ թվում՝ հին Եգիպտոսի, Հունաստանի, Իտալիայի և Միջնադարյան Եվրոպայի արվեստի դրվագներ: Կլիմտի աշխատանքները կենտրոնանում են առավելապես կերպարային և ոճային պարզության վրա, որոնք հարստացնում են թանգարանի միջավայրը: Այս որմնանկարները Կլիմտի կարիերայի վաղ շրջանի աշխատանքներից են՝ մինչ նա կզարգացներ իր խորհրդանշական ու բնորոշիչ ոճը, սակայն այստեղ ևս հեշտությամբ առանձնանում է նկարչի ձեռագիրը: Այս որմնանկարները նշանակալի են, քանի որ արտացոլում են Կլիմտի կարիերայի անցումային փուլը՝ ավանդական ակադեմիական արվեստից դեպի նրա նորարար, խորհրդանշական և զարդարուն ոճը, որով նա դարձավ աշխարհահռչակ: Կենտրոնական սանդուղքների կողապատերը զարդարված են սյունաշարով: Որմնանկարները հիմնականում արված են առաստաղի և գմբեթի հատվածներում, որոնք ներկայացնում են ավեգորիաներ՝ արվեստի, գիտության և մարդկային ստեղծագործականության թեմաներով: Որմնանկարներն արվել են դասական ոճով՝ արտացոլելով թանգարանի ճարտարապետական շքեղությունը, որը նախագծել են **Գոտֆրիդ Ջեմպերը** և **Կարլ Ֆոն Հազենաուերը** (Mallgrave H., 2001, O'Hara J., 2013): Գմբեթի հատվածի որմնանկարները պատկերում են աստվածություններ, արքայական կերպարներ և մշակութային գործիչներ: Կերպարներից զատ՝ ամբողջ առաստաղը և պատերը պատված են զարդապատկերներով: Գմբեթը համարվում է ողջ շենքի կենտրոնական գեղարվեստական շեշտադրումը: Թանգարանի արտաքին և ներքին հատվածներում առկա են բազմազան հարթաքանդակներ: Դրանցից շատերը

պատկերում են հռոմեական դիցաբանության և պատմության թեմաներ, ինչպիսիք են Մուսաները, Ապոլլոնը, Հռոմեական հերոսներն ու փիլիսոփաները: Հարթաքանդակների հիմնական նպատակն է գեղագիտական կապ հաստատել շենքի ճարտարապետական ձևերի և թանգարանի հավաքածուների միջև՝ ընդգծելով թանգարանի մշակութային հարստությունը:

Յուրահատուկ են նաև թանգարանի հունահռոմեական արվեստի նմուշների և եգիպտական արվեստի սրահների որմնանկարային ձևավորումը: Յուրաքանչյուրն արված են իր ժամանակաշրջանի և տարածաշրջանի արվեստի և մշակույթի բնորոշ ոճավորմամբ և թեմատիկայով: Թանգարանի որմնանկարներն ու հարթաքանդակները ոչ միայն գեղարվեստական, այլև պատմական արժեք ունեն: Դրանք խորհրդանշում են 19-րդ դարի եվրոպական արվեստի բարձրագույն նվաճումները: Ժամանակի ընթացքում այս արվեստի գործերը պարբերաբար վերականգնվում են՝ պահպանելու դրանց գույնն ու մանրամասները: Այս պարագայում կարելի է ասել որ թանգարանի ձևավորումը արվեստի ստեղծագործություն է:

Վիեննայի Արվեստի պատմության թանգարանի որմնանկարներն ու հարթաքանդակները կարևոր են նաև 21-րդ դարի մշակութային զարգացման համար, քանի որ դրանք ներշնչանք են ինչպես այցելուների, այնպես էլ ժամանակակից արվեստագետների համար:

Ժամանակակից թանգարանային ձևավորումներում մոնումենտալ գեղանկարչությունը ևս իր տեղն ունի: Ժամանակակից միջազգային օրինակներից ուսումնասիրվել է Գերմանիայի՝ Վայլ ամ Ռայն քաղաքում գտնվող “Vitra” դիզայնի թանգարանի գեղարվեստական ձևավորումը: Թանգարանը բաղկացած է տարբեր մասնաշենքերից, և յուրաքանչյուր մասնաշենքի ներքին ձևավորումը իրականացվել են որմնանկարային յուրօրինակ նկարազարդումներով: Նկարազարդումները արված են ձեռքով, ունեն որոշակի մանկական ձեռագիր, հիշեցնում են գունավոր իլյուստրացիաներ, այս ոճը և նկարազարդումների թեմատիկան փոխանցում են թեթևության զգացողություն և

հիանալի կերպով ներգրավվում են միջավայրում: Նկարագարողումները տեղ-տեղ գծային են, տեղ-տեղ գունավորված, իրականացված են ակրիլային ներկերով: Այս նկարագարողումները միջավայրի գեղարվեստական ձևավորման մեջ ժամանակակից աշխարհում որմնանկարչության նորովի մատուցման հիանալի օրինակ են: Եթե զուգահեռենք այն Գաֆեսճյան արվեստի կենտրոնի ցուցասրահների հետ, ապա այստեղ մոնումենտալ արվեստը ներկայանում ոչ թե որպես ձևավորում, այլ հենց ցուցադրություն, որն ունի ազդեցիկ ընկալում, գեղագիտական, մշակութային նշանակություն: Դրանիցից են գեղարվեստական բարձր արժեք ունեցող Գրիգոր Խանջյանի (1926-2000) «Հայոց այբուբեն», «Վարդանանք», «Վերածնունդ» եռամաս որմնանկարները, Հակոբ Կոջոյանի (1883-1959) «Սասունցի Դավիթ» ստեղծագործության հիման վրա Արտաշես Հովսեփյանի որմնաքանդակը: Այս դրսևորումը, իհարկե, միջավայրի ձևավորում չի համարվում, այն մոնումենտալ ստեղծագործության ցուցադրություն է, որը նաև ձևավորում է սրահի միջավայրը:

Հետաքրքրական դրսևորում է նաև «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում Վան Խաչատուրի (Վանիկ Խաչատրյան (1926-2019)) կողմից արված ՀՀ Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ համարվող «Վարդանանք» խճանկարը ([1956-1960](#)) և «Հայ մշակույթի պատմություն»՝ եռամաս որմնանկարները ([1956](#)): Այս ձևավորումը առանձնահատուկ է նրանով, որ ի սկզբանե այն իրականացվել է միջավայրի ներքին հարդարման նպատակով, բայց ժամանակի ընթացքում վերածվել է առանձին արվեստի ստեղծագործությունների:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Կատարված ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել, որ մոնումենտալ արվեստի կիրառությունը թանգարաններում միավորում է արվեստի տարբեր տեսակներ՝ որմնանկարչություն, խճանկարչություն, քանդակ, և այլն, որոնք ինտեգրվում են ճարտարապետական միջավայր և ստեղծում միասնական, ուժեղ գեղագիտական ու գաղափարական ազդեցություն: Այն նաև

ծառայում է կրթական ու գաղափարական նպատակներին, հատկապես հանրության մեջ մշակութային արժեքների ու պատմական հիշողության պահպանմանը: Թանգարանների միջավայրի ձևավորման մեջ մոնումենտալ արվեստի կիրառումը ընդգծում են մեր մշակութային ժառանգությունը և պատմությունը՝ դրանք դարձնելով տպավորիչ և ուսուցողական: Մոնումենտալ արվեստի միջոցով թանգարանների ձևավորումը նաև հետաքրքրական միաձուլում է. մի կողմից այն միջավայրի ձևավորում է, մյուս կողմից կարող է դառնալ արվեստագետի գլուխգործոց, որն էլ այցելուին փոխանցում է կրկնակի տպավորություններ և գեղագիտական հաճույք: Որոշ օրինակներ փաստում են այն մասին, որ մոնումենտալ արվեստի ստեղծագործությունները թանգարանի գեղարվեստական ձևավորման մեջ կարող են հանդես գալ նաև որպես առանձին արվեստի ստեղծագործություն: Սակայն հարկ է նշել, որ եթե թանգարանը դադարի գործել և այդ տարածքում գործունեություն ծավալի այլ կազմակերպություն, ապա վտանգը մեծ է, որ թանգարանում առկա մոնումենտալ ստեղծագործության լինելիությունը կլինի վտանգված, քանի որ այդ ձևավորումները արտահայտում են թանգարանի կամ տուն-թանգարանի բուն գործունեությունը: Այսպիսով, թանգարանային ձևավորումներում առկա մոնումենտալ արվեստի աշխատանքները խոցելի են հետագա պահպանման տեսանկյունից, և կարիք կա մշակել որոշակի ընթացակարգ, ինչպես այլ, այնպես էլ թանգարանային գեղարվեստական ձևավորումներում առկա մոնումենտալ արվեստի ստեղծագործությունների հետագա պահպանման համար թանգարանի գործունեության դադարի դեպքում:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Գրիգորյան Ս. (2018)**, Խճանկարը խորհրդային Հայաստանում, «Կանթեղ» գիտական հանդես, N 3(76), էջ 158-165:
2. **Հակոբյան Թ. (1988)**, Անի մայրաքաղաք, Երևան, ԵՊՀ հրատ.:

3. **Սոսոյան Տ. (2003)**, Միհրան Ռուբենի Սոսոյան, Աշխատանքների կատալոգ՝ գրքերի նկարազարդումներ, գեղանկար, գրաֆիկա, խճանկար, Երևան, Առերեսում - Անի, էջ 87-94:
4. **Прохоров С. (2012)**, Проблема синтеза искусств в архитектуре, Мир науки, культуры, образования. № 5 (36), с. 224 – 226.
5. **Прыгов В., Беляков А. (2019)**, Истоки, развитие и расцвет флорентийской мозаики в Западной Европе, Природа, N 12, с. 32-40.
6. **Kerrigan M. (2015)**, Gustav Klimt: Art Nouveau and the Vienna Secessionists (Masterworks), Flame Tree Illustrated.
7. **Mallgrave H. (2001)**, Gottfried Semper. Ein Architekt des, N 19, pp. 74-129.
8. **O'Hara J. (2013)**, A visit to the Vienna Museum with a brief history of the tachinid collection, The Tachinid Times, N 26, pp. 30-38.
9. **Rychlik O. (2007)**, Gustav Klimt, Franz Matsch und Ernst Klimt im Burgtheater, [Kunst-Agentur, N 4](#), p. 111.
10. Մ. Սարյանի թանգարանի պաշտոնական կայք էջ, <http://sarian.am/index.html> (վերջին այցելություն 22.12.2024):

## REFERENCES

1. **Grigoryan S. (2018)**, Xtwankary' xorhrdayin Hayastanowm /Mosaic Art in Soviet Armenia/, "Kantegh" Scientific Journal, N 3(76), pp. 158-165:
2. **Hakobyan T. (1988)**, Ani mayraqaghaq /Ani Capital/, Yerevan, YSU ed..
3. **Sosoyan T. (2003)**, **Mihran Ruben Sosoyan, Catalog of Works: Book Illustrations, Painting, Graphics, Mosaic, Yerevan, Confrontation – Ani**, pp. 87-94:
4. **Prokhorov S. (2012)**, Problema sinteza iskusstv v arkhitekture /**The Problem of the Synthesis of Arts in Architecture**/, *World of Science, Culture, Education*, № 5 (36), pp. 224 – 226.

5. **Prygov V., Belyakov A. (2019)**, Istoki, razvitiye i rastsvet florentiyskoy mozaiki v Zapadnoy Yevrope /**Origins, Development, and Flourishing of Florentine Mosaic in Western Europe**/, *Nature*, N 12, pp. 32-40.
6. **Kerrigan M. (2015)**, Gustav Klimt: Art Nouveau and the Vienna Secessionists (Masterworks), Flame Tree Illustrated, 192 p.
7. **Mallgrave H. (2001)**, Gottfried Semper. Ein Architekt des, N 19, pp. 74-129.
8. **O'Hara J. (2013)**, A visit to the Vienna Museum with a brief history of the tachinid collection , *The Tachinid Times*, N 26, pp. 30-38.
9. **Rychlik O. (2007)**, Gustav Klimt, Franz Matsch und Ernst Klimt im Burgtheater, [Kunst-Agentur, N 4](#), p.111.
10. M. Saryani t'angarani pashtonakan kayq /Official Website Page of the Martiros Saryan/ Museum, <http://sarian.am/index.html> (last viewed 22.12.2024):

Лусине Петросян

## Монументальное искусство в оформлении музеев в Армении в XX-XXI веках

### Заключение

**Ключевые слова и выражения:** Монументальное искусство, музей, оформление, фреска, мозаика.

В результате проведенного исследования можно утверждать, что использование монументального искусства в музеях объединяет различные виды искусства — настенную роспись, мозаику, скульптуру и другие, которые интегрируются в архитектурную среду и создают единое, мощное эстетическое и идеологическое воздействие. Оно также служит образовательным и идеологическим целям, особенно в сохранении культурных ценностей и исторической памяти среди общественности. Применение монументального искусства в оформлении музейной среды подчеркивает наше культурное наследие и историю, делая их впечатляющими и познавательными. Оформление музеев с помощью монументального искусства также представляет собой интересное

сочетание: с одной стороны, оно формирует среду, с другой — может стать шедевром художника, что передает посетителю двойные впечатления и эстетическое наслаждение. Некоторые примеры свидетельствуют о том, что произведения монументального искусства в художественном оформлении музея могут также выступать в качестве самостоятельных произведений искусства. Однако следует отметить, что если музей прекратит свою деятельность и в этом помещении начнет функционировать другая организация, существует высокая вероятность того, что существование монументального произведения искусства в музее окажется под угрозой, так как эти оформления отражают саму деятельность музея или дома-музея. Таким образом, работы монументального искусства, присутствующие в музейных оформлениях, уязвимы с точки зрения их дальнейшего сохранения, и необходимо разработать определенный порядок по сохранению произведений монументального искусства в музейных и иных художественных оформлениях в случае прекращения деятельности музея.

**Lusine Petrosyan****Monumental art in museum design****Conclusion**

**Keywords and expressions:** *Monumental art, museum, design, mural, mosaic.*

As a result of the conducted research, it can be asserted that the use of monumental art in museums unites various art forms - mural, mosaic, sculpture, and others that integrate into the architectural environment and create a unified, powerful aesthetic and ideological impact. It also serves educational and ideological purposes, especially in the preservation of cultural values and historical memory among the public. The application of monumental art in museum design highlights our cultural heritage and history, making them impressive and educational. The design of museums through monumental art also represents an interesting fusion: on one hand, it shapes the environment, while on the other, it can become an artist's masterpiece, providing the visitor with a dual impression and aesthetic pleasure. Some examples indicate that monumental art pieces in the artistic design of a museum can also serve as independent works of art. However, it should be noted that if the museum ceases its activities and another organization starts operating in the same space, there is a high risk that the existence of the monumental artwork in the museum will be endangered, as these designs reflect the core activities of the museum or house-museum. Thus, monumental art pieces present in museum designs are vulnerable in terms of their future preservation, and it is necessary to develop a specific procedure for the preservation of monumental artworks in both museum and other artistic designs in the event of the museum's closure.

**Լուսինե Պետրոսյան** - Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոս, արվեստաբանության ամբիոնի ասպիրանտ: Գիտական հետաքրքրությունները՝ մոնումենտալ արվեստը (որմնանկարչություն, խճանկարչություն,) հասարակական շենքերի գեղարվեստական ձևավորման մեջ: Հեղինակ է 3 հոդվածի: [Lus8990@gmail.com](mailto:Lus8990@gmail.com)

**Лусине Петросян** - Преподаватель факультета дизайна и декоративно-прикладного искусства Государственной академии художеств Армении, аспирант кафедры искусствоведения. Научные интересы: Монументальное искусство

(настенная роспись, мозаика), в художественном оформлении общественных зданий. Автор 3 статей. [Lus8990@gmail.com](mailto:Lus8990@gmail.com)

**Lusine Petrosyan** - A lecturer at the faculty of Design and Decorative Applied Arts of the State Academy of Fine Arts of Armenia and a PhD student at the department of Art History. Her research interests include monumental art (mural, mosaic) in design of public buildings. She is the author of 3 articles.

[Lus8990@gmail.com](mailto:Lus8990@gmail.com)

*Խմբագրություն է ուղարկվել 04.02.2025թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 17.02.2025թ.*

*Հրատարակման է ներկայացվել 20.03.2025թ.*

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼԱՆՅԱ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ  
ԱՄԱԼՅԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՈՉ ԼԵՁՎԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐՈՒՄ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՏՈՒՄՆԵՐ**

**DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.131**

**ԱՄՓՈՓՈՒՄ**

Սույն հոդվածը նվիրված է ոչ լեզվական բուհում ընդհանուր բովանդակությանը ծանոթանալու ընթերցանության՝ որպես ընկալողական խոսքային գործունեության տեսակի ուսուցման խնդրին: Ընթերցանության վերը նշված տեսակի հիմքում ընկած են այնպիսի էական գործոններ, ինչպիսիք են տեղեկատվության պերցեպտիվ և իմաստային վերամշակումը: Նշված երկու գործընթացները, ինչպես նշվում է մեթոդական գրականության մեջ, սերտորեն կապված են միմյանց հետ և ընթանում են միաժամանակ: Եվ հենց տեղեկատվության ամբողջականության և ճշգրտության աստիճանի չափանիշներն են ընկած ընթերցանության տարբեր տեսակների՝ թռուցիկ, մանրակրկիտ, ընդհանուր բովանդակությանը ծանոթանալու և փնտրողական, հիմքում, որոնցից յուրաքանչյուրն ունի իրեն բնորոշ առաջադրանքները և ստուգման ձևերը (Фоломкина С., 2005):

**Բանալի բառեր և արտահայտություններ.** *ռեցեպտիվ խոսքային գործունեություն, ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանություն, ընթերցանության ուսուցում, ընթերցանության տեսակներ, լեզվական միավորներ, ընկալում, տեղեկատվության չափանիշներ, ստուգման օբյեկտներ*

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Բուհերի ոչ լեզվական ֆակուլտետներում օտար լեզվով ընթերցանության ուսուցումը որպես խոսքային գործունեության ընկալողական տեսակ ուղղված է մասնագիտական տեքստերի հասկացման գործընթացին:

Ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության ուսուցման մեթոդիկան և տեքստի բովանդակության ըմբռնման ստուգումը կարևորագույն բաղադրիչ են ինչպես հանրակրթական, այնպես էլ բուհական ուսուցման համակարգերում, մասնավորապես՝ ոչ լեզվական ֆակուլտետներում օտար լեզուների, (մեր դեպքում՝ գերմաներենի) ուսուցման մեթոդաբանության զարգացման համար:

Հիմնվելով օտար լեզուների դասավանդման մեթոդիկայում ընթերցանության ոլորտում կատարված հետազոտությունների վրա՝ անհրաժեշտություն առաջացավ բացահայտել ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության էությունը՝ որպես վերլուծական-համադրական և ընկալողական-մտածական խոսքային գործունեությանը բնորոշ և էական նշանակություն ունեցող չափանիշներ, ինչպիսիք են՝

- տեքստի հիմնական բովանդակության ըմբռնումը 70-75%-ի սահմաններում,
- դասավանդման գործընթացում ստուգման՝ այնպիսի լայն տարածում ունեցող ձևի սահմանափակումը, ինչպիսին է տեքստի բովանդակության վերարտադրումը,
- հիմնական, կարևոր տեղեկատվության ընկալման ծավալը,
- տեղեկատվության *լիակապարտությունը* (հասկացած փաստերի քանակը), *ճշգրտությունը* (հեղինակի մտահղացման համարժեք ընկալումը) և *խորությունը* (տեղեկատվության մեկնաբանության բնույթը):

Ստացվող տեղեկատվության հասկացման վրա ազդող էական գործոն է տեքստի տարբեր մակարդակների ըմբռնման կարողությունը՝ սկսած բառային միավորների իմաստավորումից, քերականական կառույցների ճանաչումից և վերջացրած հեղինակի մտահղացման բացահայտումից:

Բուհերի ոչ լեզվական ֆակուլտետներում օտար լեզվով ընթերցանության ուսուցումը՝ որպես խոսքային գործունեության ընկալողական տեսակ, ուղղված է մասնագիտական տեքստերի հասկացման գործընթացին: Ներկա փուլում համալսարանի սովորողներից/շրջանավարտներից պահանջվում է զարգացնել ընկալման կարողությունը և տեքստից դուրս բերած տեղեկատվությունը կիրառել մասնագիտական խնդիրները լուծելու համար:

- բացահայտել ծանոթացնող ընթերցանության առանձնահատկությունները, մշակել լեզվական նյութի ներմուծման, բացատրման և իմաստավորման եղանակները
- տեքստի կառուցվածքում կողմնորոշվելը,
- սահմանել տվյալ տիպի ընթերցանության կարողությունների ստուգման օբյեկտները:

Հատկապես ընթերցանության նպատակադրումը կարգավորում է անհրաժեշտ և կարևոր տեղեկատվության որոնումը, օգնում է աշակերտներին և ուսանողներին դաստիարակվել և բազմակողմանի զարգանալ տարբեր բնույթի տեքստերի օգնությամբ (**Зюкова В., 2016**):

Տեքստի բովանդակության ըմբռնման ստուգման գործիքակազմում հատուկ տեղ են գրավում մշակված թեստերի համակարգը, հատկապես այսպես կոչված cloze-test-ը, որը պետք է լայնորեն կիրառվի որպես բազմագործառուության ստուգման միջոց: Թեստային առաջադրանքները խմբավորվում են համապատասխան «բլոկներում», որոնք անմիջականորեն համակցվում են թե՛ ստուգման օբյեկտների դասակարգմանը, թե՛ լեզվական տարբեր մակարդակներին, թե՛ առարկայական-բովանդակային կողմին (բառային, քերականական, հնչյունաբանական):

Սովորողներին առաջարկվում է գործիք, որն ուղղված է ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության տեքստերի շուրջ տարվող գործողությունների աստիճանակարգի յուրացմանը, ինչպես նաև բովանդակության ընկալման ստուգմանը:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմում հետևյալ հայեցակարգային դրույթները.

1. Ընթերցանության ուսուցման մեթոդաբանությունը, որտեղ դիտարկվում են ընթերցանության ուսուցման ինչպես մասնավոր, այնպես էլ ընդհանուր հարցերը:
2. Ընթերցանության բովանդակության ստուգման համար թեստերի ներմուծումը ուսումնական գործընթաց որպես սովորողների՝ օտար լեզուների ուսուցման բնագավառում ձեռքբերումների գնահատման/ինքնագնահատման այլընտրանքային տեխնոլոգիա, գիտելիքների օբյեկտիվ չափելիություն՝ սովորողների գործողությունների և գոյություն ունեցող ցուցիչների հարաբերակցության հիման վրա:

## ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ժամանակակից աշխարհում առաջնային են դարձել արդի հասարակությունների զարգացման այնպիսի միտումները, ինչպիսիք են գլոբալացումը, միջազգայնացումը, տեխնոլոգիացումը, սոցիալական շարժունության դերի մեծացումը, հանրային կյանքի բոլոր ոլորտների տեղեկատվայնացումը, բազմալեզվությունն ու բազմամշակութայնությունը:

Համաշխարհային զարգացման այս միտումներն էլ իրենց հերթին հանգեցնում են կրթական համակարգում հիմնական հայեցակարգային դրույթների փոփոխության անհրաժեշտության:

Կրթության համակարգում այսօր ամրագրվում է մարդաբանական, հումանիստական մոտեցումը, որի հիմքում ընկած է անձնակենտրոն հարացույցը: Հենց հումանիստական մոտեցումն է ուրվագծում կրթական համակարգի զարգացման գլխավոր ռազմավարական ուղղությունները (**Մանկավարժական կրթության ..., 2025**):

21-րդ դարում փոխվել են հասարակության արժեքային կողմնորոշիչները, կրթության և դաստիարակության համակարգը վերախմաստավորել է իր գերակայությունները՝ շեշտը դնելով «մարդկային գործոնի» և անձի զարգացման հիմնախնդիրների վրա: Որպես բարձրագույն արժեք է դիտարկվում ազատ, կրթված,

զարգացած անհատը, որն ընդունակ է ապրել ու ստեղծագործել հարավոփոխ աշխարհում, լինել մրցունակ, ինտեգրվել համաշխարհային հանրության մեջ (**Бим Н., 2005**):

Ժամանակակից հասարակությունների զարգացման համաշխարհային միտումներում, ինչպես նաև մեր երկրի հասարակական քաղաքական կյանքում տեղի ունեցող արմատական փոփոխություններն իրենց արտացոլումն են գտնում նաև կրթության, մասնավորապես՝ լեզվակրթության համակարգում: Ինչպես նշվում է «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ»-ում, այսօր սկզբունքորեն փոխվել է լեզվակրթության նպատակը: «Այն այլևս մեկ կամ երկու կամ նույնիսկ երեք լեզուների տիրապետելը չէ, որոնցից յուրաքանչյուրը դիտարկվում է առանձին՝ որպես իդեալ ունենալով լեզուն կրողի կատարյալ մակարդակը: Այս դեպքում նպատակն այնպիսի լեզվական «խաղացանկի» մշակումն է, որտեղ բոլոր լեզվական կարողություններն իրենց ուրույն տեղն ունեն» (**ԼԻԻՀՀ, 2005**):

Այսօր խիստ է դրված օտար լեզուների, այդ թվում նաև հարևան երկրների և ազգային փոքրամասնությունների լեզուների իմացության պահանջի խնդիրը: Այս խնդրի լուծման հետ կապված ծագում է նաև ուսուցանվող լեզուների դասավանդման որակը բարելավելու նպատակով օպտիմալ և համապատասխան մեթոդիկա մշակելու անհրաժեշտություն: Այս համատեքստում ժամանակակից մեթոդիկայի գլխավոր ուղղություններից մեկը ընթերցանության ուսուցումն է որպես օտարալեզու (մասնավորապես՝ գերմաներենի) հաղորդակցական և միջմշակութային իրազեկության հիմնական բաղադրիչ:

Ընթերցանության՝ որպես հաղորդակցական-ճանաչողական գործունեության դերը դժվար է գերազնահատել հասարակության զարգացման ժամանակակից փուլում: Չնայած մեդիակրթության սրընթաց զարգացմանը, ու նաև դրա շնորհիվ ընթերցանությունը շարունակում է մնալ տեղեկատվության ձեռքբերման հուսալի աղբյուր թե՛ որպես գրավոր տեքստ, թե՛ որպես դիգիտալ:

Ոչ լեզվական բուհում օտար լեզվի դասավանդման հիմնական նպատակներից մեկը ընթերցանության ուսուցումն է: Սակայն առարկայական չափորոշիչներում և ծրագրերում ներկայացված պահանջներն ամբողջությամբ չեն արտացոլում ընթերցանության առանձին տեսակների և դրանց առանձնահատկությունների ուսուցման խնդիրները: Ըստ էության, առարկայական ծրագրերում սահմանված են ընթերցանության նախապայմանները, նպատակները և ընթերցածը ստուգելու միջոցները, առավելագույնս՝ ավանդական միջոցները: Սակայն պատշաճ տեղ չեն գտել ընթերցանության առանձին տեսակների ուսուցման առանձնահատկությունները՝ ելնելով ընթերցանության նպատակից:

Հարկ է նշել, որ բավականաչափ մշակված չէ հատկապես ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության ուսուցման մեթոդիկան: Մեթոդական գրականության մեջ այսօր կարելի է գտնել հետազոտություններ և աշխատություններ, որոնք ուղղված են կամ ընթերցանության ուսուցման մեթոդիկայի ընդհանուր սկզբունքներին կամ ընթերցանության տիրապետման կարողությունների ստուգման եղանակներին, ինչպես նաև ընթերցանության ուսուցման առանձին խնդիրներին, ինչպիսիք են, օրինակ, տեքստին ներկայացվող պահանջները, լեզվական նյութի ընտրության ընթացակարգը, լեզվական նյութի ներմուծումը: Սակայն առկա հետազոտություններում տեղ չի գտել ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության ուսուցման ուսումնական մշակումը:

Ընթերցանության հիմնահարցին նվիրված բազմաթիվ աշխատություններ կան ինչպես հանրակրթական դպրոցի, այնպես էլ լեզվական ու ոչ լեզվական մասնագիտացման բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, այդ թվում նաև Հայաստանում:

Այսպես, ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ առանձնահատուկ կարևորվում են այն հետազոտությունները, որոնք նվիրված են ընթերցանության ուսուցման մեթոդիկային (ժամհարյան Վ., Сыздыкова З. Ж., Циммерман Г. А.,

Иванова О. Н., Карпов Д. А.), ոչ լեզվական ֆակուլտետներում ընթերցանական կարողությունների ձևավորման և ընթերցանության տեխնիկայի զարգացման ուղիներին (Петрушевская Н. Н., Շահիրյան Ծ., Гокжаева Т. Г., Артемьева О. Н., Кулешова А. Ю.), մասնագիտական կողմնորոշման ուսումնական տեքստերի բառապաշարի և քերականական նյութի ընտրության ու կազմակերպման հիմնախնդրին (Պետրոսյան Ռ., Լուսուկյան Ս.), ընթերցանության ուսուցման և ստուգման ձևերին (Товма Е. Л., Путинцева Т. В., Պապոյան Ա., Աթոյան Լ. և այլք):

Առանձնահատուկ պետք է նշել Ս. Կ. Ֆոլոմկինայի աշխատությունները, որոնք հսկայական ներդրում են ունեցել օտար լեզուների դասավանդման մեթոդիկայում, հատկապես ընթերցանության ուսուցման ասպարեզում (**Фоломкина С., 2005**):

Նա ոչ միայն նոր մոտեցում է մշակել ընթերցանության հիմնախնդրին և հիմնավորել, այլ նաև իր շնորհիվ նորովի է տրված ընթերցանության տարբեր տեսակների ուսուցման սկզբունքների դասակարգումը, ինչպես նաև դրանցից յուրաքանչյուրի ուսուցման մանրակրկիտ մեթոդաբանությունը, ներառյալ՝ իր աշակերտների և հետևորդների հետազոտությունները (**Витковская Ж., 1975, 1985, 2013, Шевченко Н., 1978, Соомере К., 1986** և այլք):

Պետք է նշել, որ հիմնականում թվարկված աշխատություններում ընթերցանության տեսակների դասակարգումը կատարվել է **ըստ տեքստի շուրջ տարվող աշխատանքի կազմակերպման ձևերի**: Այդ իսկ պատճառով հեղինակները ելնում էին կամ **ընկալման գործընթացի որևէ գերակայող գործոնից (վերլուծական-համադրական, թարգմանական-ոչ թարգմանական)** կամ **տեքստի լեզվական նյութի շուրջ փարվող աշխատանքի բնույթից (ինտենսիվ-էքստենսիվ, նախապատրաստված-հանպատրաստից ընթերցանություն)**: Նման մոտեցումները հիմնականում չեն արտացոլում օբյեկտիվ ընթերցանության գործընթացի բուն էությունը՝ կիրառելով գլխավորապես բազմընտրանքային (multiple choice), ճիշտ/սխալ (true-false) կամ համակցման (matching) տեխնիկան և անտեսելով այլ հնարավորությունները:

Վճռորոշ է այն փաստը, որ ինչպես իրավացիորեն նշում է Ս.Կ.Ֆոլոմկինան, ընթերցանության տեսակները դասակարգելիս, հատկապես ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության պարագայում շեշտը պետք է դնել հաղորդակցական նպատակների վրա, այսինքն՝ հաշվի առնել տեղեկատվության խորության և ճշգրտության չափանիշները (նույն տեղում): Ըմբռնման այդ չափանիշները հանդիսանում են հիմնարար՝ ընթերցանության այս կամ այն տեսակները բնութագրելիս: Ինչպես ցույց է տալիս մեր աշխատանքային փորձը, ոչ լեզվական ֆակուլտետների սովորողների զգալի մասի մոտ բավարար մակարդակով չեն զարգացած տեքստերի ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող կարողություններն ու հմտությունները:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Ընթերցանությունը լինելով խոսքային գործունեության տեսակ ունի բարդ կառուցվածք, որի հոգեբանական հիմքը տեքստի բովանդակության ընկալումը և հասկանալն է:
2. Ստացվող տեղեկատվության հասկացման վրա ազդող էական գործոն է տեքստի տարբեր մակարդակների ըմբռնման կարողությունը՝ սկսած բառային միավորների իմաստավորումից, քերականական կառույցների ճանաչումից և վերջացրած հեղինակի մտահղացման բացահայտումից:
3. Ուսուցման, մասնավորապես ընդհանուր բովանդակությանը ծանոթանացնող ընթերցանության կարողությունների թեստավորման՝ որպես հայտորոշման և ստուգման մեթոդի կիրառման ընթացքում շեշտը պետք է դնել ստուգման օբյեկտների ճիշտ սահմանման և ստուգման վրա:
4. Տեքստի բովանդակության ըմբռնման ստուգման գործիքակազմում հատուկ տեղ են գրավում մշակված թեստերի համակարգը, հատկապես այսպես կոչված cloze-test-ը, որը պետք է լայնորեն կիրառվի որպես բազմագործառութային ստուգման միջոց:
5. Թեստային առաջադրանքները խմբավորվում են համապատասխան «բլոկներում», որոնք անմիջականորեն համակցվում են թե՛ ստուգման

օբյեկտների դասակարգմանը, թե՛ լեզվական տարբեր մակարդակներին, թե՛ առարկայական-բովանդակային կողմին (բառային, քերականական, ինտեգրված):

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **ԼԻԻՀՀ (Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ) (2005)**, Ուսումնառություն, դասավանդում, գնահատում, Երևան, «Նորք» գրատուն:
2. **Մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգ (2015)**, Խ. Արսլյանի անվան ՀՊՄՀ, Երևան:
3. **Бим И. (2005)**, Модернизация. Структуры и содержания школьного языкового образования , Иностранные языки в высшей школе, N 8, с. 2–5.
4. **Витковская Ж. (1975)**, Методические требования к тестам для проверки уровня владения ознакомительным чтением на иностранном языке, Автореф. дисс. канд. пед. наук, Москва.
5. **Витковская Ж. (1985)**, Возможности использования тестов для контроля при чтении, Fremdsprachenunterricht, 29 – 7, с. 331-334.
6. **Витковская Ж. (2013)**, Объекты контроля в текстах по чтению, Иностранные языки в высшей школе, Вып. 8, с. 52-57.
7. **Зюкова, В. (2016)**, Роль чтения в методике преподавания иностранного, Молодой ученый, № 7.5 (111.5), с. 46-47.) **URL:** <https://moluch.ru/archive/111/27946/>
8. **Шевченко Н. (1978)**, Методика обучения ознакомительному чтению на английском языке в неязыковом вузе, Автореф. дисс. канд. пед. наук, Москва.
9. **Соомере К. (1986)**, Использование тестов восстановления в обучении иностранным языкам, Автореф. дисс. канд. пед. наук, Москва.

10. **Фоломкина С. (2005)**, Обучение чтению на иностранном языке в неязыковом вузе, Москва, “Высшая школа”.

## REFERENCES

1. **LIHH (Lezowneri imacowt'yan/irazekowt'yan hamaevropakan hamakarg) /Common European Framework of Reference for Languages/ (2005). [Learning, Teaching, Assessment](#), Yerevan, “Nork” print.**
2. **Mankavarjhakan krt'owt'yan zargacman hayecakarg /Development Concept of Pedagogical Education/ (2015)**, Kh. Abovyan State University, Yerevan.
3. **Bim I. (2005)**, Modernizatsiya. Struktury i sodержaniya shkol'nogo yazykovogo obrazovaniya /Modernisation. Structures and Contents of School Language Education/, Foreign Languages in Higher School, N 8, p. 2 – 5.
4. **Vitkovskaya Dsh. (1975)**, Metodicheskiye trebovaniya k testam dlya proverki urovnya vladeniya oznakomitel'nym chteniyem na inostrannom yazyke /Methodological Requirements for Tests to Check the Level of Proficiency in Introductory Reading in a Foreign Language/, Author's abstract. diss. Ph.D., Moscow.
5. **Vitkovskaya Dsh. (1985)**, Vozmozhnosti ispol'zovaniya testov dlya kontrolya pri chtenii /Possibilities of Using Tests for Control in Reading/, Foreign Language Lessons, vol. 29 – 7, p. 331-334.
6. **Vitkovskaya Dsh. (2013)**, Ob'yekty kontrolya v tekstakh po chteniyu /Objects of Control in Reading/, Foreign Languages in Higher School, vol. 8, p. 52-57.
7. **Zyukova V. (2016)**, Rol' chteniya v metodike prepodavaniya inostrannogo /The Role of Reading in the Methodology of Teaching a Foreign Language/, Young Scientist, № 7.5 (111.5), p. 46-47. URL: <https://moluch.ru/archive/111/27946/>

8. **Shewchenko N. (1978)**, Metodika obucheniya oznakomitel'nomu chteniya na angliyskom yazyke v neyazykovom vuze /Methodology of Teaching Introductory Reading in English at a non-language University/, Author's abstract. diss. Ph.D., Moscow.
9. **Soomere K. (1986)**, Ispol'zovaniye testov vosstanovleniya v obuchenii inostrannym yazykam /The Use of Recovery Tests in Foreign Language Teaching/, Author's abstract. diss. Ph.D, Moscow.
10. **Folomkona S. (2005)**, Obucheniye chteniyu na inostrannom yazyke v neyazykovom vuze /Teaching Reading in a Foreign Language at a non-language University/, Moscow, "Higher School".

**Мелания Аствацатрян, Амалия Петросян**

### **Современные тенденции в обучение чтению неязыковых факультетах**

#### **Заключение**

***Ключевые слова и выражения:** рецептивные виды речевой деятельности, ознакомительное чтение, виды чтения, языковые единицы, восприятие, обучение иноязычному чтению, критерии информации, объекты контроля.*

1. Чтение как один из видов речевой деятельности имеет сложную структуру, психологической основой которого является восприятие и понимание содержания текстов.
2. Важным фактором, влияющим на понимание полученной информации, является способность понимать разные уровни текста, начиная со значения словесных единиц, распознавания грамматических структур и заканчивая раскрытием авторской задумки.
3. При тестировании способностей к чтению при ознакомлении с общим содержанием, как методу выявления и проверки, следует делать упор на правильное определение и проверку объектов контроля.

4. Особое место в инструментарии проверки понимания текстового контента занимает система разработанных тестов, особенно так называемый клоуз-тест, который должен широко использоваться как средство многофункционального тестирования.
5. Тестовые задания группируются в соответствующие «блоки», которые непосредственно сочетаются с классификацией тестовых объектов, различными языковыми уровнями и предметно-содержательным аспектом (лексика, грамматика, интегрированность)

**Melanya Astvatsatryan, Amalya Petrosyan**

### **Current Trends in Reading Instruction in Non-Linguistic Faculties**

#### **Conclusion**

**Key words and expressions:** *receptive language activities, reading for gist, teaching foreign language reading, types of reading, language units, criteria of information, objects of control.*

1. Reading as one of the types of speech activity has a complex structure, the psychological basis of which is the perception and understanding of the content of texts.
2. An important factor affecting the comprehension of the information received is the ability to understand different levels of text, from the meaning of verbal units, to recognizing grammatical structures, to discovering the author's intent.
3. When testing reading ability in reading ability in general content familiarization as a detection and verification method, emphasis should be placed on the correct identification and verification of control objects.
4. A special place in the toolkit for checking textual content comprehension is occupied by a system of developed tests, especially the so-called cloze test, which should be widely used as a means of multifunctional testing.

5. A special place in the toolkit for checking textual content comprehension is occupied by a system of developed tests, especially the so-called cloze test, which should be widely used as a means of multifunctional testing).

**Մելանյա Աստվածատրյան** – Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր: Գիտական հետաքրքրությունները՝ օտար լեզուների դասավանդման մեթոդիկա: Հեղինակ է շուրջ 150 հոդվածի: [mastvatsatryan@yahoo.com](mailto:mastvatsatryan@yahoo.com)

**Ամալյա Պետրոսյան** – Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունները՝ օտար լեզուների դասավանդման մեթոդիկա: Հեղինակ է շուրջ 15 հոդվածի: [petrosyanamalya47@aspu.am](mailto:petrosyanamalya47@aspu.am)

**Мелания Аствацатрян** – Профессор кафедры романо-германских языков и методики преподавания иностранных языков АГПУ им. Х. Абовяна, доктор педагогических наук. Сфера научных интересов: методика преподавания иностранных языков. Автор около 150 статей. [mastvatsatryan@yahoo.com](mailto:mastvatsatryan@yahoo.com)

**Амалия Петросян** – Преподаватель кафедры романо-германских языков и методики преподавания иностранных языков АГПУ им. Х. Абовяна, кандидат педагогических наук. Сфера научных интересов: методика преподавания иностранных языков. Автор около 15 статей. [petrosyanamalya47@aspu.am](mailto:petrosyanamalya47@aspu.am)

**Melanya Astvatsatryan** - Professor of the Chair of Romano-Germanic Languages and Foreign Language Teaching Methodology at the Kh. Abovyan ASPU, Doctor of Pedagogical Sciences. Scientific interests: Methodology of Foreign Languages Teaching. About 150 scientific articles . [mastvatsatryan@yahoo.com](mailto:mastvatsatryan@yahoo.com)

**Amalya Petrosyan** - Lecturer of the Chair of Romano-Germanic Languages and Foreign Language Teaching Methodology at the Kh. Abovyan ASPU. Scientific interests: Methodology of Foreign Languages Teaching. About 15 scientific articles. [petrosyanamalya47@aspu.am](mailto:petrosyanamalya47@aspu.am)

*Խմբագրություն է ուղարկվել 10.06.2024թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 27.06.2024թ.*

*Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.*

ԳՐԵՏԱ ՅԱԿՈՐԵԱՆ  
ՔՆԱՐԻԿ ԱՐԱՀԱՄԵԱՆ

ՊՈԼՍՈՅ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ ԱԶԳԱՅԻՆԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ  
ԽԱԶՈՒԴԻՆԵՐՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.132

**ԱՄՓՈՓՈՒՄ**

Յօդուածում դիտարկուած են Պոլսոյ Կեդրոնական վարժարանի հիմնադրման եւ գործունէութեան հետ կապուած հարցեր: Վարժարանի պատմութեան ընթացքը վերլուծուած է աշխարհաքաղաքական եւ գրամշակութային իրադարձութիւնների համապատկերում: Ներկայացուած են նաեւ վարժարանի նշանաւոր ուսուցիչներն ու շրջանաւարտները: Բնութագրուած են վարժարանի կառավարման, ուսումնական ծրագրերի եւ կրթական արդի չափորոշիչներին դրանց համապատասխանութեան հետ կապուած հարցեր: Դիտարկուած է վարժարանի գործունէութիւնը՝ որպէս կրթական եւ մշակութային նշանակալի իրադարձութիւն արդի մարտահրաւերների համատեքստում: Վարժարանի եւ Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀ-ի համագործակցութիւնը բնութագրուած է Հայրենիք-Սփիւռք կրթամշակութային փոխազդեցութեան շրջանակներում:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Պոլսոյ Կեդրոնական վարժարան, կրթամշակութային ասանդոյթներ, կրթական ծրագրեր, Հայրենիք-Սփիւռք համագործակցութիւն, ազգային դիմագիծ:

**ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ**

Հայ ժողովուրդն իր պատմական հայրենիքից մինչեւ աշխարհի հեռաւոր ծայրերը բոլոր ժամանակներում նպատակ է ունեցել կենսունակ պահելու իր

դպրոցը, որը բախտորոշ դեր է կատարել գոյապայքարի ոգորումներում: Հայ ազգային դպրոցի գաղափարական հիմքերի ձեւաւորման սկզբնական օրերից մինչեւ ներկայ ժամանակներ դպրոցը կատարել է ազգապահպան կենսականօրէն կարեւոր գործառոյթ՝ յատկապէս Սփիւռքում անգնահատելի դեր խաղալով ազգային ինքնութեան պահպանման եւ հայ կրթամշակութային պատմութեան ընթացքի մէջ:

Հայ դպրոցի պատմութեան մեջ պատմական Պոլիսը իր ուրոյն տեղն ունի: Այստեղ հաստատուած հայկական վարժարաններն ամփոփում են Պոլսոյ պատմութեան, սոցիալական ու կրթամշակութային կեանքի, ժողովրդագրական տեղաշարժերի վերաբերեալ ուշագրաւ վաւերագրեր:

139 տարի առաջ ուսուցիչ եւ մտաւորական պատրաստելու նպատակով Պոլսոյ Հայոց Պատրիարք Ներսէս Վարժապետեանի, նուիրեալ մտաւորականների ու բարերարների միասնական ջանքերով հիմնուած Ազգային Կեդրոնական վարժարանը սոսկ ուսումնական հաստատութիւն չէ, այլ ազգային ոգու, մշակոյթի ջահակիր, որ պահպանում է հայ դպրութեան դարաւոր ասանդոյթները: Վարժարանի՝ Հայաստանի կրթական միջավայրի հետ համագործակցութիւնը նոյնպէս ուսանելի վկայութիւն է:

### **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹԻՒՆ**

Յօդուածը պատրաստուել է Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի եւ Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի՝ 2023 թ. յայտարարած «Ուսեալ ազգի վկայագրերը» մրցոյթի շրջանակներում՝ իբրեւ նախագծային աշխատանք, որին մասնակցութիւն են բերել մանկավարժական համալսարանի բանասիրական բաժանմունքի ուսանողներ Տատիանա Աբոյեանը, Նարէ Ալվանդեանը, Անահիտ Բաղալեանը, Ելենա Թումոյեանը, Նինա Ճուղուրեանը, Լուսինէ Սաղղեանը եւ Մարիամ Վարդանեանը: Աշխատանքը ներկայացուել է 2023 թ. Ապրիլ-Յունիս ամիսներին երկու փուլով տեղի ունեցած մրցոյթում եւ արժանացել երկրորդ մրցանակի:

Յօդուածը շարադրուած է պատմահամեմատական մեթոդով: Կեդրոնական վարժարանի ուսումնական գործունէութեան նկարագիրը տրում է կրթական չափանիշների այսօրուայ ըմբռնումների համատեքստում:

### ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայ դպրոցի պատմութիւնը նաեւ հայ ժողովրդի պատմութիւնն է՝ նրա ինքնութեանը սպառնացող վտանգներով, ուսուցիչների բոլորանուէր զոհաբերութիւններով: Հայ մտաւորականութեան «դպրոցասէր» մօտեցումը վկայում է մի կողմից անցեալի փառաւոր օրերի հարստութիւնը, միւս կողմից՝ դժուարութիւններն ու դրանց յաղթահարման անկասելի կամքը:

Անցյալի յիշատակները վառ պահելն ու դրանց խորհուրդը վերըմբռնելը կարեւոր է՝ գիտակցելու ներկայի մարտահրաւէրները եւ քայլելու դէպի ապագայ. *«Ժողովուրդ մ'իր անցեալէն զարեւը լիովին մահացնել է, մի միայն անցեալին մէջ պահելը՝ հաշմեր»* («Հայկական նամականի», 1872), – նկատում է արեւմտահայ մանկավարժութեան երեւելիներից Մատթէոս Մամուրեանը: Իսկ դեռեւս 19-րդ դարում ձեւաւորուած ու դժուարին ճիգերով մինչ օրս իրենց գոյութիւնը պահպանող վարժարանների ու մանկավարժական մտքի պատմութեան ուսումնասիրութիւնը հնարաւորութիւն է ընձեռում ոչ միայն արձանագրել ու ճանաչել անցեալի ձեռքբերումները, այլեւ իմաստաւորել դրանք, մանաւանդ որ Պոլսում եւ Սփիւռքում (Պոլիսը դասական իմաստով Սփիւռք անուանել դժուար է) այդ վարժարանների գոյութիւնը օրինակելի է նաեւ հայրենի ուսանողութեան ու վաղուայ մանկավարժների համար:

Գրիգոր Փեշտիմալճեան, Մատթէոս Մամուրեան, Մատաթիա Գարագաշեան, Ռեթէոս Պէրպէրեան, Մկրտիչ Էսայեան, Թովմաս Թերզեան, Յովհաննէս Հինդլեան եւ էլի շատ ուրիշներ ստեղծել են մանկավարժական մի ամբողջ «դպրոց» եւ ուսանելի ճանապարհ ուրուագծել յետագայ սերունդների համար:

Աներկբայ է Օսմանեան կայսրութեան մէջ հայերի ներդրման դարաւոր պատմութիւնը (Ստեփանեան Յ., 2012), ակնյայտ է նաեւ արեւմտահայ կրթական

կեանքի աննախադէպ վերելքը թէ՛ գաւառներում, թէ՛ Պոլսում: Յիշենք Խարբերդի, Զմիւռնիայի, Կարինի կրթական հարուստ անցեալը, Պոլսոյ մէջ հաստատուած հայկական վարժարանները: Պոլսի եւ գաւառների հայկական վարժարանների ու նրանց հարուստ պատմութեան մասին ուսումնասիրութիւններ է կատարել պոլսահայ մտաւորական Գէորգ Յակոբեանը: Դրանք ամփոփուել են «Պատմութիւն իսթանպուլահայ ուսումնական կեանքի եւ կրթական հաստատութիւններու» (2016) եւ «Հայոց կրթական հաստատութիւններու պատմութիւն՝ օսմանեան գաւառներու մէջ» ծաւալուն հատորներում (**Յակոբեան Գ., 2024**):

20-րդ դարի սկզբին Օսմանեան կայսրութեան տարածքում շուրջ 2000 վարժարաններից այսօր Պոլսոյ մէջ գործող 17 դպրոցներով համայնքը անհաւատալի ջանասիրութեամբ մաքառում է հայեցի սերունդներ պատրաստելու մտահոգութեամբ, վկան՝ Ազգային Կեդրոնական վարժարանը:

Պոլսոյ պատմական Ղալաթիա թաղամասում՝ հնագոյն Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու հարեանութեամբ գտնուող Կեդրոնականը հիմնուել է 1886-ին՝ որպէս «մանչերու վարժարան», որ «ոչ միայն համապարասխանէ մայրաքաղաքիս մէջ հաստատուելու բազմաթիւ վարժարանաց, այլ նաեւ... տայ այն արդիւնքները, զորս անկարելի է յուսալ օտար կրթարանաց մէջ» (**Յուշամատեն..., 1986**): Այստեղ յատկանշական է ոչ միայն ընդունելի մակարդակի ապահովման պահանջը, այլեւ առաջին հերթին «յուսալ» բառի նշանակութիւնը, որ ուղիղ իմաստով կապում է ինքնութեան եւ ազգային դաստիարակութեան տեսլականի հետ:

1884 թուականին «մեծ խասգիւղցին, որ էր Վարժապետեան Պատրիարքը» (**ԳԱԹ, թիւ 810-X**), վախճանուեց՝ այդպէս էլ չտեսնելով իր յղացած կրթօջախի գործունէութիւնը: Իսկ թէ ինչ կարեւորութիւն ուներ վարժարանի հաստատումն ազգային-հոգեւորական մեծ գործչի համար, կարելի է պատկերացնել՝ ելնելով Պատրիարքարանի նորոգութեան եւ վարժարանի հաստատման հարցում հենց վերջինիս նախապատուութիւն տալու հանգամանքից:

Վարժարանի բացումը կարելի էր իրադարձություն էր հայտնի կենսում. այդ փաստին արձագանգել է ժամանակի հայ մամուլը, ինչպես «Մասիս», «Արևելք» եւ այլ թերթեր: Մասնատրապես «Արևելք»-ը, այն «*շաբթուս կարելորագոյն դէպքը*» համարելով հանդերձ, շատ ակտիվ առարկայական ու խոր հարցադրումների ճանապարհով է գնում, որ քննության նիւթ է նաեւ այսօրուայ դպրոցի համար: Ելնելով մուտքի քննութիւն յանձնաձ աշակերտների գիտելիքների անբաւարար մակարդակից՝ դնում է Կեդրոնականին մատակարարող «*ազգային հանրային վարժարանաց միջուկ կրթական համերաշխութեան*», «*ուսմանց յայրագրի եւ մեթոդի միօրինակութեան*», այն է՝ ուսումնական ծրագրի եւ մօտեցումների նոյնականութեան խնդիրը («**Արևելք**», 1886 - ընդգծումը՝ բնագրում - հեղինակներ), մի յանձնառութիւն, որ, ինչպէս ցոյց է տուել ժամանակը, յաջողութեամբ է իրագործուել. «*Կեդրոնականը բազմաթիւ ծառայութիւնների հետ նաեւ կարելոր դեր է խաղացել թաղային վարժարանների վիճակը բարելաւելու, կրթական ծրագրերը բեռնաթափելու եւ նախակրթարանների ուսումնադասարարական աշխատանքները համակենտրոնացնելու... գործում*» (Ոսկանեան Շ., 2009):

Վարժարանի ուսման ընթացքը սահմանուած էր 5 տարի՝ 2 շրջաններով: Առաջին շրջանի համար առանձնացուած էր 3, իսկ երկրորդի համար՝ 2 տարի ժամանակահատուած: Ուսումնական ծրագիրը կազմում էին հետեւեալ առարկաները՝ կրօնագիտութիւն, հայոց լեզու եւ գրականութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, թուաբանութիւն, բնական գիտութիւն, օսմանեան լեզու, ֆրանսիական լեզու, վաճառականութիւն, սղագրութիւն, իրաւագիտութիւն: Ուսումնական ծրագրերում ներառուած էին նաեւ արհեստագործական առարկաներ: Ուսանողները վարժարան ընդունուելու համար պարտաւոր էին յաջողութեամբ յանձնել բանաւոր քննութիւններ հետեւեալ առարկաներից՝ Հին եւ Նոր Կտակարանի պատմութիւն, աշխարհաբար շարադրութիւն, գրաբարից աշխարհաբարի թարգմանութիւն եւ հակառակը, ֆրանսերէն ուղղագրութիւն, թուաբանութիւն, երկրաչափութիւն: Միջանձնային յարաբերութիւնների եւ

ծրագրերի մասին մանրամասն ներկայացուած է «Պաշտօնագիր, կանոնագիր եւ յայտագիր խնամակալութեան Ազգային Կեդրոնական Վարժարանին Ղալաթիոյ» գրքոյկում («**Պաշտօնագիր...**», 1886):

Վարժարանի հիմնադրման օրից ի վեր միմեանց յաջորդող ուսուցիչներ եւ տնօրէններ Մինաս Չերագի, Յարութիւն Մոստիչեանի, Գառնիկ Բարունակեանի, Յովհաննէս Հինդլեանի, Մարտիրոս Նալբանդեանի, Աստուածատուր Խաչատուրեանի, Գեղամ Գավաթեանի, Պետրոս Ատրունու, Յովհաննէս Մերտինեանի, Համբարձում Յարութիւնեանի, Հրանդ Տէր-Անդրէասեանի եւ այդ պաշտօններում բարենորոգչական լայն ձեռնարկումներ իրականացրած այլ մտաւորականների ջանքերի շնորհիւ վարժարանը ունեցաւ վերելքների, երբեմն նաեւ՝ անկումների շրջաններ: Կեդրոնականը տնօրէնութեան եւ խնամակալութեան համագործակցութեան արդիւնքում ցայսօր շարունակում է իր ազգանուէր գործունէութիւնը Սիլվա Գոյումճեան-Մարկոսեանի՝ արդէն 45 տարիների պատկառելի շրջան բոլորած ղեկավարութեամբ՝ պահպանելով ազգային դիմագիծը:

Կեդրոնական վարժարանում տարբեր տարիներին սովորել կամ դասաւանդել են հայ մշակոյթի նշանաւոր գործիչներ, մտաւորականներ Մատաթիա Գարագաշեանը, Յովսէփ Շիշմանեանը (Ծերենց), Ռեթէոս Պէրպէրեանը, Գաբրիէլ Նորատունկեանը, Եղիա Տէմիրճիպաշեանը, Յակոբ Պարոնեանը, Ստեփան Կուրտիկեանը, Հրանդ Ասատուրը, Տիրան Չրաքեանը (Ինտրա), Լեւոն Շանթը, Յակոբ Օշականը, Վահան Թէքէեանը, Արշակ Չօպանեանը, Կոստան Չարեանը, Չապէլ Ասատուրը (Սիպիլ), Մատթէոս Իզմիրլեանը, Մաղաքիա Օրմանեանը, Եղիշէ Դուրեանը, Գարեգին Սրուանձտեանցը, Կոմիտասը: Կեդրոնականի նշանաւոր սաներից են եղել Հրաչեայ Աճառեանը, Արշակ Ալպոյաճեանը, Յակոբ Սիրունին, Միսաք Մեծարենցը, Լեւոն-Չաւէն Սիւրմէլեանը, Երուխանը, Յակոբ Մնձուրին, Օննիկ Չիֆթէ-Սարաֆը, Նիկողոս Սարաֆեանը եւ ուրիշներ: Այս առումով հետաքրքրական է Պոլսոյ Պատրիարք Շնորհք Արք. Գալուստեանի խօսքը

վարժարանի 100-ամեակի առիթով. *«Կեդրոնականը եթէ մինչեւ իսկ ոչինչ տրուած ըլլար, եւ լոկ նպաստէր կազմաորումի Աճառեանի մը, Չօպանեանի մը, Ալպօյաճեանի մը, Չաքըրեանի մը, Երուանդ Մանուէլեանի մը եւ Մեծարեանցի մը ու նմաններուն, արդէն իսկ ծառայած կ'ըլլար իր նպատակին...»* (**«Կեդրոնական...», 1986**):

Յատկապէս ուշագրաւ է ուսուցիչ եւ աշակերտ Չօպանեանի վերաբերմունքը իր «պաշտած» վարժարանի հանդէպ: 1952-ի Յունուարի 16-ին Փարիզից Պոլսի Պատրիարք Գարեգին Արք. Խաչատուրեանին գրուած նամակում յոյս է յայտնում, որ իր ժամանակին *«արեւմտահայութեան ամէնէն հեղինակաւոր մտաւորական, ուսուցչական ուժերը, ինչպէս եւ ֆրանսիացի կարող ուսուցչապետներ»* համախմբած վարժարանը *«նոյն համակրական նկարագիրն ունի»* (**Չօպանյան Ա., 1980**): Չանազան առիթներով եւ այս նամակում էլ խոստանում է վարժարանի մասին իր յուշերը հրատարակել: Վարժարան մուտքի մասին մէկ պատասխան միայն լոյս է տեսել «Պայքար» օրաթերթի 1950-ի Դեկտեմբերի 16-ի համարում (**«Պայքար», 1950**): Իսկ ուսուցիչների մասին բառական ծաւալուն սեւագիր նօթերը «Իմ կեանքիս վէպը» («Կեանքիս վէպը») կամ «Իմ յուշերս» խորագրերի տակ եւ գրեթէ նոյնական բովանդակութեամբ պահում են Եղիշէ Չարեանցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանի Չօպանեանի ֆոնդում (**ԳԱԹ, թիւ 808-811-Ճ, 812-813-Ճբ**):

Նոյն այդ շրջանում (1947) Թորոս Ազատեանը իր համար պատասխանատու յանձնարարութիւն էր դիտարկում Կեդրոնականի 60-ամեակի յիշատակարանի պատրաստութիւնը (**«Արեւմտահայ գորողների նամականի», 1972**):

Վարժարանի առաջին տասնամեակների գործունէութեան ուշագրաւ դրուագներից մէկն էլ վկայում է վարժարանի սան՝ *«Կեդրոնականի... 17-րդ տնօրէնը»*՝ Յակոբ Սիրունին, որ սանի հանգամանքով 1908-ին թուրքական բանտն էր ճաշակել, ապա եւ Սահմանադրութեան թոհուրոհի մէջ դարձել «տնօրէն»՝ *«հոգ չէ թէ հազիւ մէկ-երկու շաբաթ: Մէկ օրուան իշխանութիւնը մի՛շտ իշխանութիւն է»* (**Սիրունի Յ., 2006**):

Յատուկ նախագծի համար մեր խնդրանքով պատրաստուած ուղերձում վարժարանի տնօրէն Սիլվա Գոյումճեանը մեր օրերի համար տալիս է սաների նոր անուններ՝ Արա Կիլեր, Մկրտիչ Մարկոսեան, Շահան Արծրունի «եւ դեռ քանի քանիներ»:

Այժմ Կեդրոնական վարժարանն ընդունում է երկսեռ աշակերտութիւն՝ «քառամեայ լիսէի բաժինով» (Յակոբեան Գ., 2016), ինչը համապատասխանում է մեր աւագ դպրոցի կրթական մակարդակին:

Պոլսահայ եւ առհասարակ Ափիւռքի վարժարանների շարքում Կեդրոնականը բարձր համբաւ ունի. շրջանաւարտները նշանակալի յաջողութիւններ են ունենում նաեւ համալսարաններ ընդունուելիս: Վարժարանը շարունակում է իր գործունէութիւնը շուրջ 200 աշակերտներով եւ 45 ուսուցիչներով եւ հաւատարիմ է շուրջ մէկուկէս դար առաջ որդեգրած սկզբունքներին՝ դրանք համապատասխանեցնելով ժամանակակից կրթութեան չափանիշներին, չնայած հանդիպող ամենատարբեր դժուարութիւններին: Այս առումով բնութագրական է մտաւորական, թարգմանիչ Արփի Թորոյեանի խօսքը. «...Շաբեր ամէն վերամուտի անձկութեամբ քննեցին օրաթերթերու չորրորդ էջերը, հոն Կեդրոնականի վերաբացումի ծանուցումը չգտնելու վախով. սակայն ծանուցումը միշտ ներկայ, տարուէ տարի ճոխացած, եկաւ հեգնելու այդ մտահոգութիւնը, կրթական նորագոյն զարգացումներու – լեզուի աշխատանոց, համակարգիչ սարքաւորում – աւելիսն ալ բերելով» («Յուշապրակ...», 1977):

Արեւմտահայ դպրոցների կողքին կրթամշակութային իւրայատուկ առաքելութիւն ունեն նաեւ սանուց միութիւնները, որոնք ինչ-որ տեղ խօսում են կրթական հաստատութիւնների ձեւաւորած արժեհամակարգի մասին: Դեռեւս 1914 թուականին հրատարակուել է «Կանոնագիր Ազգային Կեդրոնական վարժարանի նախկին սաներու միութեան» գրքոյկը, որտեղ սահմանուում էին միութեան նպատակը, անդամների ընտրութեան կարգն ու գործունէութեան շրջանակը: Իսկ 1947 թուականին Պոլսում հիմնադրուեց Կեդրոնական սանուց միութիւնը, որի կարեւոր նախաձեռնութիւններից մէկը դարձաւ «Հանդէս

մշակոյթի» պարբերականի՝ շուրջ երկու տասնամեակ տեսած հրատարակութիւնը: 1967 թուականին բացուեց Ամերիկայի Էսայեան-Կեդրոնական սանուց միութիւնը, որը 1977-ին լոյս է ընծայել «Էսայեան-Կեդրոնական սանուց միութիւն. 1967-1977» գիրքը: Կեդրոնական սանուց միութիւններ հիմնուել են Ֆրանսիայում եւ Կանադայում, որոնցից առաջինը 1996-ին լոյս է ընծայել «Լուսատուներ. սաները կը յիշեն» յուշագիրքը:

Կեդրոնականն այսօր ոչ միայն «ուսեալ ազգի վկայագիր» է, այլեւ «վկայագրում է» յիշարժան իրադարձութիւնները, ինչպէս տարբեր «Տարեգրութիւնները», «Յուշամատենան Կեդրոնական վարժարանի հարիւրամեակին» (1986թ.), «Յարգանք կեդրոնականցիներու Շիշլիի գերեզմանատան մէջ / 29 Ապրիլ, 2012» (2012թ.), «Դանիէլ Վարուժան: Անմահ բանաստեղծ, ուսուցիչ, մտատրական: 1884-1915» (2015թ.), «Հայ դպրոցը անցեալէն դէպի այսօր» (2017թ.), «Յիշելով Կոմիտասը» (2019թ.) եւ այլ գրքոյկներն են ապացուցում: Վերջերս վարժարանը հրամցրեց եւս մէկ ուսանելի ձեռնարկ՝ «Հայ կինը մշակութային եւ հասարակական կեանքի մէջ» հանդիսութիւնը, որը բեմադրուել է պոլսահայ տարբեր վարժարաններում ու մշակութային օջախներում: *«Որքան որ ծանօթ ենք Սփիւռքէն կամ Հայաստանէն հասած լրատուութիւններուն, աննախընթաց ու աննախադէպ միջոցառում մըն էր Կեդրոնականցիներու պարբերական ձեռնարկը, արժանի՝ մեծ ու անվերապահ գնահատանքի»*, - նկատում է «Մարմարա» օրաթերթի փոխսմբագիր Նաիրա Մկրտչեան-Սիւզմէն (<https://www.normarmara.com/arsiv2023-1/050623lu.html>):

Կեդրոնականի պատմութեան հրաշալի վկայութիւններից մէկն էլ 2012թ. Գրիգոր աւագ քահանայ Տամատեանի կազմած «Քայլեր դէպի Կեդրոնական Ազգային վարժարան» գիրքն է, որտեղ վաւերագրերից եւ տեղեկագրերից քաղուած հարուստ նիւթի վրայ շարադրուած են դեռեւս Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի գործունէութեան շրջանից սկիզբ առնող Պոլսոյ կրթական

համայնապատկերը եւ այդ համատեքստում Կեդրոնականի անցած ճանապարհը **(Տամատեան Գ., 2012)**:

Վարժարանի պատմության մէջ պակաս ուշագրաւ չեն նաեւ հայրենիքի հետ համագործակցության էջերը, որոնք գալիս են դեռ նախանցեալ դարից՝ 1898-ից, երբ Հրաչեայ Աճառեանը ծառայության անցաւ Մայր Աթոռում: Տարիների ընթացքում հայրենիքում են հաստատուել ամենատարբեր մասնագիտութիւնների շրջանաւարտներ, այդ թւում՝ բանաստեղծներ Հայկազուն Գալուստեանն ու Վարդերես Գարակէօզեանը:

Յատկանշական պիտի դիտուել նաեւ վարժարանի հիմնադրման 90-ամեակի տօնակատարութիւնների շարքում Հայաստանում առաջացած ոգետրիչ մթնոլորտը, ինչի մասին կարդում ենք յայտնի արխիւագէտ, բանասէր Գոհար Ազնաւուրեանի՝ ամերիկահայ արձակագիր Յակոբ Ասատուրեանին ուղղուած նամակում. *«Ամսի (Ապրիլի - հեղինակներ) 29-ին Սփիւռքի կոմիտէում Պոլսի Կեդրոնական վարժարանի հիմնադրման 90-ամեակն են նշելու, ուզում եմ գնալ եւ լսել» (ԳԱԹ, թիւ 417)*:

Արդէն անկախության տարիներին, մասնաւորաբար 1993-ից, Հայաստանի համալսարաններում ուսում են ստանում նոր սերնդի կեդրոնականցիները: Պետական մի շարք ծրագրերի շրջանակներում աշակերտները եւ ուսուցիչներն այցելում են հայրենիք, ճանաչում իրենց ակունքները, մասնակցում տարատեսակ վերապատրաստումների, գիտաժողովների ու հանդիսութիւնների: Վարժարանը համագործակցում է Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի հետ:

Կեդրոնական վարժարանն այսօր սերտ կապեր ունի նաեւ Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ: 2016-ին «Հայկական ինքնության քննական մօտեցումներ 21-րդ դարում. խոցելիութիւն, առաձգականութիւն եւ փոխակերպութիւն» թեմայով միջազգային գիտաժողովի շրջանակներում Ստամբուլ այցի ընթացքում ՀՊՄՀ-ի Վաչէ Պարտիզունու անուան հայ նոր եւ նորագոյն գրականության եւ նրա դասաւանդման մեթոդիկայի

ամբիոնի վարիչ, «Սփիւռք» գիտաուսմանական կենտրոնի տնօրէն Սուրէն Դանիէլեանը եղել է Կեդրոնական վարժարանում, աշակերտների հետ հանդիպում ունեցել եւ դաս վարել, ինչպէս նաեւ աւագ դասարանների աշակերտներին ներկայացրել համալսարանի գործունէութիւնն ու հրաւիրել ուսումը շարունակելու հայրենիքում

([https://aspu.am/hy/content/suren\\_danielyany\\_masnakcec\\_mijazgayin\\_gitazhog\\_hovi/#sthash.3RjSJGf6.dpbs](https://aspu.am/hy/content/suren_danielyany_masnakcec_mijazgayin_gitazhog_hovi/#sthash.3RjSJGf6.dpbs)):

Նոյն տարուայ Մայիսի 26-27-ին ՀՊՄՀ-ի «Սփիւռք» կենտրոնի, հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի, մասնագիտական կրթութեան եւ կիրառական մանկավարժութեան (այժմ՝ մանկավարժութեան ամբիոն) ամբիոնների նախաձեռնութեամբ կազմակերպուել է միջազգային երկօրեայ գիտաժողով՝ նուիրուած Յովհաննէս Հինդլեանի 150-ամեակին, որին մասնակցել է Պոլսի Կեդրոնական վարժարանի տնօրէն Սիլվա Գոյումճեանը եւ հանդէս եկել մեծ մանկավարժի գործունէութեան մասին «Յովհաննէս Հինդլեան՝ մտաւորական մանկավարժը» զեկոյցով, ներկայացրել կրթական գործչին՝ որպէս Կեդրոնական վարժարանի ուսուցիչ եւ տնօրէն, մանկավարժ, հրապարակագիր, անդրադարձել աշակերտների յուշերին եւ վկայութիւններին (**«Յովհաննէս Հինդլեան 150»**, 2016):

2017-ին Կեդրոնական վարժարանը նշեց կազմաւորման 130-ամեակը: «Հայ դպրոցը անցեալէն դէպի այսօր» յրբելենական հանդիսութեանը մասնակցել է հայ նոր եւ նորագոյն գրականութեան ամբիոնի դոցենտ, «Սփիւռք» կենտրոնի գիտական աշխատող Ք. Աբրահամեանը, ընթերցել ՀՊՄՀ ռեկտոր, Պրոֆեսոր Ռուբէն Միրզախանեանի շնորհատրագիրը, հանդէս եկել ելոյթով (**«Ժամանակ»**, 2017): Իր հերթին վարժարանի տնօրինութիւնը կենտրոնի տնօրինութեանը եւ Ք. Աբրահամեանին յանձնել է շնորհակալագրեր:

2019 թ. Հոկտեմբերի 18-19-ը Կոմիտաս Վարդապետի ծննդեան 150-ամեակի առթիւ Կեդրոնական վարժարանի նախաձեռնութեամբ Պոլսում տեղի ունեցած

«Յիշելով Կոմիտասը» խորագրով երկօրեայ հանդիսություններին Բ. Աբրահամեանը խօսել է Կոմիտասի դերի, վարժարանի որդեգրած հայապահպան առաքելության ու միջոցառումից ստացած տպավորությունների շուրջ: Նա մասնակցել է վարժարանի ուսուցիչների եւ հիւրերի համար կազմակերպուած կլոր սեղան-քննարկմանը, հանդիպումներ ունեցել պոլսահայ մտավորականների, գրողների

հետ

([https://aspu.am/hy/content/gnarik\\_abrahamyany\\_masnakce\\_hishelov\\_komitasin\\_mijoc\\_armany/#sthash.6YmbFY9N.2iWu04eb.dpbs](https://aspu.am/hy/content/gnarik_abrahamyany_masnakce_hishelov_komitasin_mijoc_armany/#sthash.6YmbFY9N.2iWu04eb.dpbs)):

2023-ի Հոկտեմբերին Թարգմանչաց տօնի շրջանակներում կազմակերպուած «Պոլսահայ նորագոյն գրականութիւնը 20-րդ դարի կեսից մինչեւ մեր օրերը» ժողովածուի շնորհանդէսի համար Պատրիարք Նորին Ամենապատուութիւն Սահակ Բ. Մաշալեանի հրաւերով Ա. Դանիէլեանը եւ Բ. Աբրահամեանը դարձեալ Պոլսում էին: Նրանք բանախօսութեամբ հանդէս եկան Էսայեան, Սահակեան-Նունեան, Սուրբ Խաչ Դպրեվանքի եւ, արդէն ձեւատրուած ասանդոյթի համաձայն, Կեդրոնական վարժարանի աշակերտութեան համար (<http://www.normarmara.com/arsiv2023-2/181023lu.html>):

Այս նախաձեռնությունների շարքին գալիս է միանալու ՀՊՄՀ-ի ստորաբաժանումների՝ տուեալ պարագային մանկավարժութեան ամբիոնի եւ «Սփիւռք» կենտրոնի համագործակցութեամբ «Ուսեալ ազգի վկայագրերը» խորագրով նախագիծ-օրինակը՝ ուսանող-դասախօս համատեղ աշխատանքի ձեւաչափով, վարժարանի տնօրէնի՝ ուսանողներին ուղղուած ոգետրիչ խօսքով ([https://aspu.am/hy/content/ampopvec\\_usyal\\_azgi\\_vkayagrery\\_mrcuyty/#sthash.Fm3CKg3k.dpbs](https://aspu.am/hy/content/ampopvec_usyal_azgi_vkayagrery_mrcuyty/#sthash.Fm3CKg3k.dpbs)):

Կեդրոնական վարժարանը նաեւ գիտահետազօտական աշխատանքի նիւթ է կրթօջախի մասին թեզի վրայ է աշխատում (գիտական ղեկավար՝ Բ. Աբրահամեան) վարժարանի շրջանաւարտ, այժմ մանկավարժական համալսարանի մագիստրոս Պետրոս Չալիքեանը:

**ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ**

Հայ դպրոցի ու մանկավարժության պատմության ուսումնասիրությունը նախեսառաջ մեր մշակոյթի ու ինքնության կարեւոր բաղադրիչներից մէկի ճանաչողութեան անհրաժեշտութեամբ է պայմանաւորուած: Այն կարեւոր կոտան է աանդոյթի ու շարունակականութեան յարաբերակցութեան մէջ տեսնելու երեւոյթները: Ուշադիր «ընթերցման» պարագայում այդ պատմութեան էջերում կարելի է տեսնել այնպիսի շեշտադրումներ, որոնք, թւում է, մանկավարժական միտքը, եւ ոչ միայն հայ, նոր նոր է փորձում բացայայտել: Սա են վկայում այն համադրումները, որոնք փորձ է արուել կատարել այս աշխատանքում:

Կեդրոնական վարժարանի օրինակով հայրենիքի ու Սփիւռքի միջեւ երեւան բերուած կրթամշակութային երկխօսութեան այս ձեռնարկումները երկուստեք հարստացնում են ոչ միայն կրթօջախների պատմութիւնը, այլեւ համահայկական նոր նախաձեռնութիւնների հուն բացում:

### ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. «Արեւելք» (1886), Օրագիր քաղաքական եւ ազգային, Կ. Պոլիս, Գ. տարի, 6 Սեպտեմբեր, թիւ 802:
2. «Արեւմտահայ գրողների նամականի» (1972), Երեւան, Երեւանի համալսարանի հրատ.:
3. ԳԱԹ (Եղիշէ Չարենցի անուան գրականութեան ու արուեստի թանգարան), Յակոբ Ասատուրեանի ֆոնդ, թիւ 417:
4. ԳԱԹ (Եղիշէ Չարենցի անուան գրականութեան ու արուեստի թանգարան), Արշակ Չօպանեանի ֆոնդ, թիւ 810-X:
5. «Ժամանակ» (2017), Քաղաքական ժողովրդական օրաթերթ, Իսթանպուլ, 15 Մայիս:
6. «Կեդրոնական ազգային վարժարանի դարադարձի հանդիսութիւն (1886-1986), Հոկտեմբեր 11, 12» (1986), Նիւ Եորք, հրատ. «Ոսկետառ»:
7. «Հայկական նամականի» (1872), գրեց Վրոյր, Չմիւռնիա, տպ. Տէտէեան:

8. **«Յովհաննէս Հինդլեան 150» (2016)** / միջազգային երկօրեայ գիտաժողովի նիւթեր, Երեւան, հրատ. «Զանգակ 97»:
9. **Յակոբեան Գ. (2016)**, Պատմութիւն Իսթանպուլահայ ուսումնական կեանքի եւ կրթական հաստատութիւններու, Իսթանպուլ, հրատ. “Paros Yayincilik”, Ա. տպ.:
10. **Յակոբեան Գ. (2024)**, «Հայոց կրթական հաստատութիւններու պատմութիւն՝ օսմանեան գաւառներու մէջ», Ա. հատոր, Բ. հատոր, Իսթանպուլ, հրատ. «Paros Yayincilik»:
11. **«Յուշամատեան Կեդրոնական վարժարանի հարիւրամեակին. 1886-1986» (1986)**, խմբագիր Հրանդ Աճէմեան, Փարիզ, հրատ. Կեդրոնական սանուց միութեան:
12. **«Յուշապրակ նուիրուած Կեդրոնական վարժարանի 90 ամեակին» (1977)**, պատրաստեց Վարդան Կոմիկեան, Իսթանպուլ:
13. **Ոսկանեան Շ. (2009)**, Ուրուագծեր արեւմտահայ դպրոցի եւ մանկավարժական մտքի պատմութեան (1850-1920), Երեւան, 2-րդ հրատ.:
14. **Զօպանեան Ա. (1980)**, Նամականի, Երեւան, հրատ. «Սովետական գրող»:
15. **«Պայքար» (1950)**, Օրաթերթ ազգային, քաղաքական, գրական, թիւ 303(12670), 16 Դեկտեմբեր, Բոստոն:
16. **«Պաշտօնագիր, կանոնագիր եւ յայտագիր խնամակալութեան Ազգային Կեդրոնական Վարժարանին Ղալաթիոյ» (1886)**, Կ. Պոլիս, տպ. Մ. Գ. Սարրեան:
17. **Սիրունի Յ. (2006)**, Ինքնակենսագրական նօթեր, Երեւան, Սարգիս-Խաչենց:
18. **Ստեփանեան Յ. (2012)**, Հայերի ներդրումն Օսմանեան կայսրութիւնում, 2-րդ վերամշակուած հրատ., Երեւան, ԵՊՀ հրատ.:
19. **Տամատեան Գ. (2012)**, Քայլեր դէպի Կեդրոնական Ազգային վարժարան, Իսթանպուլ:

20. [https://aspu.am/hy/content/suren\\_danielyany\\_masnakcec\\_mijazgayin\\_gitazhoghov\\_i/#sthash.3RjSJGf6.dpbs](https://aspu.am/hy/content/suren_danielyany_masnakcec_mijazgayin_gitazhoghov_i/#sthash.3RjSJGf6.dpbs) / դիտուել է 14.06.2023. /Սուրեն Դանիելյանը մասնակցեց գիտաժողովի/
21. [https://aspu.am/hy/content/qnarik\\_abrahamyany\\_masnakce\\_hishelov\\_komitasin\\_mijocarmany/#sthash.6YmbFY9N.2iWu04eb.dpbs](https://aspu.am/hy/content/qnarik_abrahamyany_masnakce_hishelov_komitasin_mijocarmany/#sthash.6YmbFY9N.2iWu04eb.dpbs) /դիտուել է 14.06.2023. /Քնարիկ Աբրահամյանը մասնակցեց «Յիշելով Կոմիտասը» միջոցառմանը /
22. [https://aspu.am/hy/content/ampopvec\\_usyal\\_azgi\\_vkayagrery\\_mrcuyty/#sthash.Fm3CKg3k.dpbs](https://aspu.am/hy/content/ampopvec_usyal_azgi_vkayagrery_mrcuyty/#sthash.Fm3CKg3k.dpbs) / դիտուել է 08.02.2024. /Անփոփուեց «Ուսեալ ազգի վկայագրերը» մրցույթը/
23. <http://www.normarmara.com/arsiv2023-2/181023lu.html/> մուտք 10.02.2024: /Պէյտլուի մէջ հիւրեր/
24. <https://www.normarmara.com/arsiv2023-1/050623lu.html> / դիտուել է 14.06.2023:

## REFERENCES

1. **“Arewelq” /“East”/ (1886)**, O’ragir qaghaqakan ew azgayin /Political and national daily/, Constantinople, C. year, September 6, N 802.
2. **“Arewmtahay groghneri namakani” /“Literary Correnspondence of Western Armenian Writers”/ (1972)**, Yerevan, YSU publishing house.
3. **GAT (Museum of literature and art after Yeghishe Charents)**, Hagop Assadourian’s archive, N 417.
4. **GAT (Museum of literature and art after Yeghishe Charents)**, Arshak Chopanyan’s archive, N 810-X.
5. **“Jhamanak” /“Time”/ (2017)**, Political national daily, Istanbul, May 15.
6. **«Kedronakan azgayin varjharani daradard’i handisowt’iwn (1886-1986) /“Ceremony of Getronagan lyceum 100<sup>th</sup> anniversary (1886-1986)/, October 11, 12” (1986)**, N.Y., “Vosketar”.
7. **“Haykakan namakani” /“Armenian letters”/ (1872)**, written by Vruyr, Smyrna, publ. Teteyan.
8. **“Hovhannes Hindlian 150” (2016)**, materials of two day international conference, Yerevan, “Zangak 97”.
9. **Hagopian K. (2016)**, Patmowt’iwn Ist’anpowlahay owsowmnakan keanqi ew krt’akan hastatowt’iwnnerow /History of educational life and educational institutions of Constantinoplean Armenian/, Istanbul, 1<sup>st</sup> publ, publ. Paros Yayincilik.
10. **Hagopian, K. (2024)**, «Hayoc krt’akan hastatowt’iwnnerow patmowt’iwn’ o’smanean gawar’nerow me’j» /History of educational institutions in Ottoman Provinces/, Vol. 1, Vol. 2, Istanbul, publ. Paros Yayincilik.
11. **“Yowshamatean Kedronakan varjharani hariwrameakin. 1886-1986” /“Memory book of Getronagan’s 100<sup>th</sup> anniversary”/ (1986)**, edited by Hrand Ajemian, Paris, publ. Union of Getronagan alumni.

12. **“Yowshaprak nowirowac' Kedronakan varjharani 90 ameakin” /“Memory book donated to Getronagan’s 90<sup>th</sup> anniversary”/ (1977)**, compiled by Vartan Komikian, Istanbul.
13. **Voskanyan Sh. (2009)**, Owrowagc'er arewmtahay dproci ew mankarjhan mtqi patmowt'ean (1850-1920) /Shapes of history of Western Armenian school and teaching mind (1850-1920)/, Yerevan, 2<sup>nd</sup> publ.
14. **Chopanyan A. (1980)**, Namakani /Letters/, Yerevan, “Sovetakan grogh”.
15. **“Payqar” /“Struggle”/ (1950)**, national, political, literary daily, N 303(12670), 16 December, Boston.
16. **Pashto'nagir, kanonagir ew yaytagir xnamakalowt'ean Azgayin Kedronakan Varjharanin Ghalat'ioy /“Official Document, Rulebook and programm of Guardianship of Getronagan National Lyceum”/ (1886)**, Constantinople, publ. M. G. Sariyan.
17. **Siruni H. (2006)**, Inqnakensagrakan no't'er /Autobiographical notes/, Yerevan, Sargis Khacehents.
18. **Stepanyan H. (2012)**, Hayeri nerdrown O'smanean kaysrowt'iwnowm /The Input of Armenians in the Ottoman Empire/, second edition, Yerevan, YSU publishing house.
19. **Damadian K. (2012)**, Qayler de'pi Kedronakan Azgayin varjharan /Steps to Gedronagan Armenian High School/, Istanbul.
20. [https://aspu.am/hy/content/suren\\_danielyany\\_masnakcec\\_mijazgayin\\_gitazhoghov\\_i/#sthash.3RjSJGf6.dpbs](https://aspu.am/hy/content/suren_danielyany_masnakcec_mijazgayin_gitazhoghov_i/#sthash.3RjSJGf6.dpbs) / access: 14.06.2023. /Suren Danielyan Participated in an International Conference/
21. [https://aspu.am/hy/content/ampopvec\\_usyal\\_azgi\\_vkayagrery\\_mrcuyty/#sthash.Fm3CKg3k.dpbs](https://aspu.am/hy/content/ampopvec_usyal_azgi_vkayagrery_mrcuyty/#sthash.Fm3CKg3k.dpbs) / access: 08.02.2024: /Results of “Evidence of an Educated Nation” competition summed up/

22. [https://aspu.am/hy/content/qnarik\\_abrahamyany\\_masnakce\\_hishelov\\_komitasin\\_mijocarmany/#sthash.6YmbFY9N.2iWu04eb.dpbs](https://aspu.am/hy/content/qnarik_abrahamyany_masnakce_hishelov_komitasin_mijocarmany/#sthash.6YmbFY9N.2iWu04eb.dpbs) / access: 14.06.2023. /Knarik Abrahamyan Participated in a ceremony “Remembering Komitas”/
23. <http://www.normarmara.com/arsiv2023-2/181023lu.html> / access: 10.02.2024. /Guests in Beyoglu/
24. <https://www.normarmara.com/arsiv2023-1/050623lu.html>, access: 14.06.2023.

**Грета Акопян, Кнаррик Абрамян**

**Центральный лицей Константинополя в пересечении путей  
сохранения национальной**

**Заключение**

***Ключевые слова и выражения:** Центральный лицей Константинополя, образовательные и культурные традиции, образовательные программы, сотрудничество между родиной и диаспорой, национальный облик.*

Статья подготовлена в рамках конкурса «Свидетельства образованной нации», объявленного в 2023 году Армянским Государственным Университетом имени Х. Абовяна и Музеем-институтом геноцида армян, как проектная работа и пример сотрудничества преподавателей и студентов.

В статье обсуждаются вопросы, связанные с основанием и деятельностью Центрального лицея в Константинополе. Деятельность лицея анализирована на фоне геополитических и литературно-культурных событий в течении всей истории лицея. Представлены также известные учителя и выпускники лицея. Охарактеризованы вопросы школьного управления, учебных программ и их соответствии к современным образовательным стандартам. Рассмотрена деятельность лицея в настоящее время как важное образовательное и культурное событие в контексте современных вызовов. Охарактеризовано сотрудничество

лица и армянского государственного педагогического университета им. Х. Абовяна в рамках связи и культурного-образовательного взаимодействия Родина-Диаспора.

Работа написана с использованием историко-сравнительного метода. Образовательная деятельность Центрального лица представлена в контексте современных представлений об образовательных стандартах.

**Greta Hakobyan, Knarik Abrahamyan**

**Getronagan Armenian High School (Lyceum) in Constantinople (Istanbul) in the  
Crossroads of Preserving the National Identity**

**Conclusion**

**Keywords and expressions:** *Getronagan Armenian High School, educational and cultural traditions, curricula, cooperation between the homeland and the Diaspora, national profile.*

The article was prepared within the framework of the “Documents of an Educated Nation” competition announced in 2023 by the Khachatur Abovian Armenian State Pedagogical University and the Armenian Genocide Museum-Institute, as a project work and an example of lecturer-student collaboration.

The article discusses matters related to the establishment and activities of the Getronagan Armenian High School in Istanbul (Constantinople), Turkey. The history of the High School has been analysed against the backdrop of geopolitical and literary-cultural events. Eminent scholars and alumni of the High School have been presented. Matters concerning the High School management, curricula and their alignment with contemporary educational standards have been characterised. The current activity of the High School has been presented as a significant educational and cultural establishment in the context of modern world challenges. The cooperation of the High School and Kh. Abovian Armenian State Pedagogical University has been observed in

the context of the relationship between the homeland and the Diaspora as well as from the perspective of educational and cultural interaction.

The work is written using a historical-comparative method. The educational activities of the Getronagan Armenian High School are presented within the context of contemporary understandings of educational standards.

**Գրետա Յակոբեան** - Մանկավարժական գիտությունների թեկնածու, Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀ մանկավարժության ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ անձի հոգեւոր զարգացում, սովորողների գիտելիքների գնահատման նորագոյն միջոցներ, ակմէոլոգիայի, ուսուցիչների վերապատրաստման արդի հիմնախնդիրներ, մանկավարժական պրակտիկայի կազմակերպման մեթոդաբանական հարցեր, կրթության փիլիսոփայության հիմնահարցեր, մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն, էթնոմանկավարժություն: Հեղինակ է ուսումնամեթոդական 5 ձեռնարկի եւ 76 գիտական յօդուածի: [hakobyangreta@gmail.com](mailto:hakobyangreta@gmail.com)

ORCID ID <https://orcid.org/0000-0002-0038-3983>

**Քնարիկ Աբրահամեան** – Բանասիրական գիտությունների թեկնածու, Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի Վ. Պարտիզոնու անուան հայ նոր եւ նորագոյն գրականության եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ: Հեղինակ է երկու գրքի եւ չորս տասնեակից ւելի յօդուած-ուսումնասիրությունների, խմբագրել է Սփիւռքի գրականութանը վերաբերող տասնեակ ժողովածուներ: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է արեւմտահայ դասական եւ սփիւռքահայ գրական հարցադրումները, օտարագիր գրականությունը, արեւմտահայերէնը: [abrahamyanknarik21@aspu.am](mailto:abrahamyanknarik21@aspu.am)

ORCID ID: <https://orcid.org/0000-0002-7151-2172>

**Грета Акопян** - Кандидат педагогических наук, доцент кафедры педагогики АГПУ им. Х Абовяна. Научные интересы: Духовное развитие личности, новейшие

средства оценивания знания учащихся, современные проблемы акмеологии, переподготовки учителей, методологические вопросы организации педагогической практики, вопросы философии образования, методология педагогических исследований, этнопедагогика. Является автором пяти учебно-методических пособий и 76 научных статей.

[hakobyangreta@gmail.com](mailto:hakobyangreta@gmail.com)

ORCID ID <https://orcid.org/0000-0002-0038-3983>

**Кнарик Абраамян** - Кандидат филологических наук, доцент кафедры новой и новейшей армянской литературы и методики ее преподавания им. Вачэ Партизуни АГПУ им. Х. Абовяна. Автор 2 монографий и 40 статей, редактировала десятки книг по западноармянской литературе. Сфера научных интересов – история западноармянской и зарубежной армянской литературы, западноармянский язык. [abrahamyanknarik21@aspu.am](mailto:abrahamyanknarik21@aspu.am)

ORCID ID: <https://orcid.org/0000-0002-7151-2172>

**Greta Hakobyan** - PhD of Pedagogical Sciences, Associate Professor, Chair of Pedagogy Kh. Abovyan ASPU. Scope of Academic Interests: Individual's spiritual development, modern means of assessing learners' knowledge, current issues in acmeology and teacher training, methodological issues in organising pedagogical internship, philosophy of education, methodology of pedagogical research, ethnopedagogy. Author of five educational-methodological manuals and 76 scientific articles. [hakobyangreta@gmail.com](mailto:hakobyangreta@gmail.com)

ORCID ID <https://orcid.org/0000-0002-0038-3983>

**Knarik Abrahamyan** - Candidate of Philological Sciences, Associate Professor of the Department of New and Contemporary Armenian Literature and Methods of Teaching it named after Vache Partizuni of the Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan. Author of 2 monographs and 40 articles, edited dozens of books on Western Armenian literature. Her research interests include the history of

Western Armenian and foreign Armenian literature, and the Western Armenian language. [abrahamyanknarik21@aspu.am](mailto:abrahamyanknarik21@aspu.am)

ORCID ID: <https://orcid.org/0000-0002-7151-2172>

*Խմբագրություն է ուղարկվել 30.12.2024թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 17.01.2025թ.*

*Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.*

ՆԱՐԻՆԵ ՀՈՒՆԱՆՅԱՆ  
ԱՐՄԵՆՈՒՀԻ ԴԵՄՈԿՐԱՏԻԱ

ԳՈՅԱԿԱՆԻ ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ  
ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸԹԱՑՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.133

**ԱՄՓՈՓՈՒՄ**

Ուսումնասիրության ընթացքում բացահայտվել և ներկայացվել են օտարազգի ուսանողների հայերենի (որպես օտար լեզու) ուսուցման գործընթացում հանդիպող խնդիրները և մատնանշվել դրանց լուծման ուղիները:

Աշխատանքի նպատակն է բացահայտել հնդեվրոպական երկու լեզուների (հայերեն-անգլերեն) քերականական համակարգերի նմանությունները և տարբերությունները, ինչպես նաև ցույց տալ լեզուների համեմատական վերլուծության կիրառման արդյունավետությունը հայերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման գործընթացում:

Երկու հնդեվրոպական լեզուների (հայերեն-անգլերեն) քերականական համակարգերի՝ մասնավորապես գոյականի թվի համեմատական վերլուծությունը և դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառումը հնարավորություն են տալիս բարձր արդյունքներ գրանցել օտարազգիների հայոց լեզվի ուսուցման գործընթացում:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** *հնդեվրոպական լեզվաընտանիք, համեմատական վերլուծություն, գոյական անուն, եզակի և հոգնակի թիվ, քերականական սխալներ, մեթոդներ:*

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի բուհերի միջազգայնացմանը զուգահեռ տարեցտարի աճում է օտարազգի ուսանողների թիվը: Բնականաբար օտարազգիները Հայաստանում

նախ պետք է սովորեն հայերեն, որպեսզի կարողանան հաղորդակցվել և մասնակից լինել հասարակական կյանքին:

Հայերենը որպես օտար լեզու դասավանդողները տարեցտարի կատարելագործում են ուսուցման մեթոդները և հնարները, ստեղծում անրաժեշտ նյութեր, ձեռնարկներ, որոնք հնարավորություն են տալիս բարձրացնելու ուսուցման որակը և մոտեցնելու միջազգային ընդունված չափանիշներին:

Մտածողությունը և լեզուն անխզելիորեն կապված են. չկա լեզու առանց մտածողության և մտածողություն՝ առանց լեզվի: Շատ մեծ է լեզվի դերը մարդու մտածողության և մտավոր կարողությունների զարգացման մեջ: Ուրեմն եթե հարստացնում ենք ուսանողների բառապաշարը և քերականական գիտելիքները, ապա մտածելու լայն հնարավորություններ ենք ստեղծում նրա համար (Գյուլբուդաղյան Ա., 1987):

#### **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Այս հոդվածում հետազոտությունը և ուսումնասիրությունը կատարելիս կիրառել ենք լեզուների համեմատական վերլուծության մեթոդը:

#### **ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Հայոց լեզուն և անգլերենը, պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքին և ունեն ինչպես բազմաթիվ նմանություններ, այնպես էլ տարբերություններ (բառապաշարի, քերականության), որոնց ճիշտ օգտագործումը հնարավորություն է տալիս զգալի արդյունքներ գրանցել լեզուների ուսուցման գործընթացներում:

Վերը նշվածը հիմնավորենք փաստերով: 19-րդ դարի կեսերից լեզվաբանության մեջ իշխող է դառնում լեզուների ուսումնասիրության պատմահամեմատական եղանակը, որի հիմքում ընկած էր լեզուների ցեղակցության կամ ծագումնաբանական ընհանրությունների սկզբունքը: Ըստ որում, լեզուների ցեղակցությունը որոշվում էր նրանց միջև եղած ծագումնաբանական ընդհանրությունների միջոցով: Այսպես. համեմատելով մի շարք լեզուներ (հունարեն, լատիներեն, ռուսերեն, գերմաներեն հայերեն և այլն)՝

լեզվաբանները ցույց տվեցին, որ այդ լեզուներում կան ընդհանուր ծագում ունեցող բազմաթիվ արմատներ և քերականական ձևեր, ինչպես՝ հայերեն՝ մայր, ռուսերեն՝ мать, գերմաներեն՝ Mutter, հունարեն՝ meter, պարսկերեն՝ madar և այլն, կամ հայերեն՝ տասը, ռուսերեն՝ десять, լատիներեն՝ decem, հունարեն՝ deca և այլն, ինչպես նաև քերականական որոշ ձևեր՝ բերեմ, բերես, բերի, берём, берёшь, берёт, կամ հայերեն՝ ես-իմ, գերմ. Ich-mein, ռուսերեն я-меня և այլն: Լեզվական այս փաստերն էլ ցույց տվեցին, որ այդ ընդհանրությունները ծագում են մեկ ընդհանուր աղբյուրից, որից հետագայում առաջացել են բազմաթիվ այլ լեզուներ: Այսինքն՝ ցեղակից կարող են համարվել այն լեզուները, որոնք ունեն հիմնական բառային կազմի և քերականության որակ կազմող ծագումնաբանական ընդհանրություններ: Ցեղակցական կապերի և ծագումնաբանական ընդհանրությունների հիման վրա առանձնանում և դասակարգվում են լեզվական տարբեր միավորներ կամ, ինչպես ընդունված է լեզվաբանության մեջ անվանել, լեզվաընտանիքներ: Ուրեմն ցեղակից են համարվում մեկ ընդհանուր հիմքի վրա զարգացած լեզուները, իսկ այդ լեզուների ամբողջությունը կոչվում է լեզվական ընտանիք: Նշված սկզբունքներով աշխարհի լեզուները բաժանվում են մեկ տասնյակից ավելի լեզվաընտանիքների: Դրանցից են՝ հնդեվրոպական, իբերո-կովկասյան, ուգրո-ֆիննական, աֆրիկյան, ամերիկյան, թուրքական, մոնղոլական և այլն (**Եզեկյան Լ., 2005**):

Լեզուների ծագումնաբանական դասակարգումը կատարվել է ամենից առաջ հնդեվրոպական լեզուների նյութական ընդհանրությունների հիման վրա, որոնք հաստատվել են պատմահամեմատական մեթոդի տվյալներով: Լեզուների ծագումնաբանական դասակարգման հարցում կարևոր ծառայություններ ունեն Ֆ. Բոպը, Ա.Շլեյխերն ու Ֆ.Դիցը, որոնք հնդեվրոպաբանության հիմքը դրեցին: Հնդեվրոպական լեզուների դասակարգման օրինակով առանձնացվեցին և դասակարգվեցին մյուս լեզուները (**Խաչատրյան Լ., 2008**):

Ամենաուսումնասիրված և ամենաբազմալեզու լեզվաընտանիքը հնդեվրոպականն է, որն ունի 12 ճյուղ՝ հայերեն, հնդ-իրանական, թիբարական,

խեթական, սլավոնական, բալթիական, կելտական, ռոմանական, գերմանական, հունարեն, այբաներեն և այլն:

Հնդեվրոպական լեզուներով խոսող ժողովուրդը այսօր երկրի մոլորակի վրա ամբողջ բնակչության կեսից ավելին է կազմում: Հնդեվրոպական մայր լեզվի տրոհումը սկսվում է մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջերից սկսած (**Ղազարյան Բ., 2002**):

Գերմանական լեզուները բաժանվում են երեք ենթաճյուղի՝ արևելյան, արևմտյան և հյուսիսային կամ սկանդինավյան: Արևմտյան գերմանական լեզուներից է անգլերենը (Մեծ Բրիտանիայում, նրա գաղութներում և ԱՄՆ-ում)՝ ավանդված 8-րդ դարից (**Աղայան Է., 1987**):

Հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքում առանձին ճյուղ է: Այս փաստը հաստատել է նախ՝ գերմանացի հայագետ Հայնրիխ Հյուբշմանը «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շարքում» աշխատությամբ (1875թ.), ապա՝ ակադեմիկոս Հրաչյա Աճառյանը:

Իր բազմադարյան գոյության ընթացքում հայոց լեզուն անցել է որակական զարգացման տարբեր փուլեր 5-րդ դարից մինչև մեր օրերը: Մինչև 5-րդ դարը տարբերակվում է հայերենի նախագրային շրջանը: Հայ պատմագրության փաստերը մատնանշում են, որ նախագրային հայերենը՝ իբրև հայ ժողովրդի ընդհանուր լեզու, իր հիմնական առանձնահատկություններով կայունացել է 5-րդ դարից դեռևս շատ ու շատ առաջ (**Եգեկյան Լ., 2005**):

Այսպիսով, հիմք ընդունելով լեզուների ուսումնասիրության պատմահամեմատական եղանակը՝ որոշեցինք հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզուների (անգլերեն-հայերեն) համեմատությունը կիրառել նոր օտար լեզու սովորեցնելիս:

Երկու լեզուները (անգլերեն-հայերեն) համեմատության մեջ դնելը, նմանությունները և տարբերությունները վեր հանելը օգնում են հայերենի (որպես օտար լեզվի) քերականության և բառապաշարի յուրացմանը:

Անգլերենը, լինելով միջազգային լեզու, տարածված է աշխարհում: Օտարազգի ուսանողների մեծ մասը գիտի անգլերեն: Նրանք ունեն լեզվական կայուն գիտելիքներ (առնվազն միջին մակարդակ), ինչը հեշտացնում է նոր օտար լեզվի ուսուցումը: Այսպես օրինակ. եթե օտարազգի ուսանողը գիտի՝ ինչ է գոյականը, ինչ հարցերի է պատասխանում կամ ինչպես է կազմվում հոգնակի թիվը անգլերենում, ապա նա հեշտությամբ նույնը կսովորի հայերեն՝ համեմատելով երկու լեզուները միմյանց հետ, վեր հանելով նմանությունները և տարբերությունները:

Երկու լեզուները համեմատության մեջ դնելը, նմանությունները և տարբերությունները վեր հանելը օգնում են հայոց լեզվի քերականության և բառապաշարի յուրացմանը:

Եվ՛ հայոց, և՛ օտար լեզուների (անգլերեն) քերականական համակարգերում իր ուրույն տեղն ունի գոյականը- **the noun**: Երկու լեզուներում էլ այն սահմանվում է նույն ձևով և պատասխանում նույն հարցերին: Այսպես՝ իմաստային տեսակետից գոյական անվան խոսքիմասային կարգի մեջ մտնող բառերը բնորոշվում են նրանով, որ արտահայտում են առարկայական հասկացություն (**Ասատրյան Մ., 2002**): Պատասխանում է (ո՞վ, ովքե՞ր (who), ի՞նչ, ինչե՞ր (what) հարցերին)՝ գիրք-book, քաղաք-city, սեր-love, ուսանող-student: Որպես առարկայական հասկացություն արտահայտող բառերի կարգ՝ գոյական անունը ձևաբանորեն բնորոշվում է թվի, հոլովի, որոշյալի և անորոշի, անձի և իրի քերականական կարգերով (**Ասատրյան Մ., 2002**):

Սույն հոդվածում քննարկել ենք հոգականի թվի քերականական կարգը: Գրեթե բոլոր լեզուների համար ընդհանուր է քերականական թվի կարգը, որը, սակայն, բազմատեսակ արտահայտություններ ունի տարբեր լեզուներում:

Որոշ լեզուներում քերականական թիվը արտահայտվում է քանակ ցույց տվող բառերով՝ առանց գոյական անվան փոփոխության (դասական տիրեթերենում), որոշ լեզուներում արտահայտվում է ներքին թեքմամբ (արաբերենում), ուրիշ լեզուներում՝ օժանդակ բառերով (չինարենում), բառի կամ

նրա մի մասի կրկնությամբ (ճապոներենում) և կամ քանակային հարաբերություն ցույց տվող վերջավորություններով (հայերենում, անգլերենում): Բոլոր այդ եղանակներն էլ ծառայում են մի նպատակի՝ արտահայտել առարկաների քանակային հատկանիշը: Սակայն հենց այդ հատկանիշն էլ տարբեր լեզուներում տարբեր է **(Աղայան Է., 2008)**:

Գոյականի ուղիղ ձևը նշանակում է մեկ առարկա (մարդ, տուն, կին): Ձևափոխվելով, հատուկ վերջավորություն ստանալով՝ գոյականը նշանակում է տվյալ տեսակի մեկից ավելի առարկաներ (մարդիկ, տներ, կանայք): Գոյականի՝ առարկայի քանակի մեկ կամ ավելի լինելը նշանակելու հատկությունը կոչվում է գոյականի թիվ **(Ավետիսյան Յ., Չաքարյան Հ., 2008)**:

Գոյական անունը և՛ հայերենում, և՛ անգլերենում ունի երկու թիվ՝ եզակի (singular) և հոգնակի (plural): Եզակին (singular) նշանակում է մեկ առարկա, իսկ հոգնակին (plural)՝ նույն տեսակի մեկից ավելի առարկաներ:

ժամանակակից հայերենում հոգնակի թիվը կազմվում է՝ -եր, -ներ, -ք, -իկ մասնիկներով, որոնցից ամենահաճախականը -եր- և -ներ մասնիկներն են **(Եզեկյան Լ., 2005)**: Միավանկ բառերի հոգնակին կազմվում է -եր-ով՝ տուն-տներ, սիրտ-սրտեր, երգ-երգեր, ծառ-ծառեր (և ոչ թե ծառներ, որ հաճախ բանավոր խոսքում սխալ օգտագործվում է), իսկ բազմավանկները՝ -ներ-ով՝ խաղալիք-խաղալիքներ, ուսանող-ուսանողներ, քաղաք-քաղաքներ, այգի-այգիներ և այլն:

Անգլերենում հոգնակի թիվը կազմվում է -s, -es վերջավորություններով: Անգլերենում գոյականների մեծ մասի հոգնակի թիվը կազմվում է -s վերջավորությամբ, իսկ ss, ss, x, ch, sh, o, z տառերով և տառակապակցություններով վերջացող հիմքերի դեպքում -es վերջավորությամբ **(Թորքմաջյան Հ., 1995)**: Եթե գոյականը վերջանում է o տառով և այն փոխառություն է այլ լեզվից, միայն -s է ավելանում (radio-s, photo-s, piano-s, kilo-s, kimano-s, video-s):

Examples:

Օրինակներ՝

singular	plural	եզակի թիվ	հոգնակի թիվ
book	books	գիրք	գրքեր
horse	horses	ծի	ծիեր
class	classes	դաս	դասեր
village	villages	գյուղ	գյուղեր
student	students	ուսանող	ուսանողներ
photo	photos	լուսանկար	լուսանկարներ

Եթե գոյականի հիմքը վերջանում է -y տառով, որին նախորդում է բաղաձայն, ապա գրավոր խոսքում նախքան -es վերջավորությունն ավելացնելը -y-ը փոխարինվում է -i-ով. օրինակ՝ (examples)՝ city- cities (քաղաք- քաղաքներ) country - countries (երկիր- երկրներ): Մի շարք գոյականների դեպքում, որոնց հիմքը վերջանում է -f-ով կամ -fe- ով, նախքան -es ավելացնելը -f-ը փոխարինվում է -v-ով օրինակ՝ (examples)՝ shelf-shelves (դարակ-դարակներ), knife-knives (դանակ-դանակներ), wife-wives (կին-կանայք): Կան գոյականներ, որ չեն ենթարկվում այս փոփոխությանը և կազմում են հոգնակին -s վերջավորությամբ, օրինակ՝ roof-roofs (տանիք-տանիքներ), cliff-cliffs (ժայռ-ժայռեր), proof-proofs (ապացույց-ապացույցներ), chief- chiefs (ղեկավար-ղեկավարներ) (**Թոքմաջյան Հ., 1995**):

Հոգնակի թվի կազմությունը և՛ հայերենում, և՛ անգլերենում ունի բացառություններ, սակայն միշտ չէ, որ դրանք համընկնում են:

### **Բացառությունները հայոց լեզվում**

Որոշ միավանկ բառերի հոգնակի թիվը կազմվում է -ներ-ով (այս բառերը նախկինում գրաբարում, վերջացել են -ն հնչյունով, որը ժամանակակից հայերենում ընկել է, սակայն հոգնակի թվի կազմության ժամանակ վերականգնվում է՝ միանալով -եր վերջավորությանը՝ դուռ(ն)-դռներ, թոռն-թոռներ, լեռ(ն)-լեռներ, ձուկ(ն)-ձկներ, հարս(ն)-հարսներ):

եզակի թիվ	հոգնակի թիվ	singular	plural
նուռ(ն)	նո՞նեք	pomgranate	pomgranates
հարս(ն)	հարսնեք	bride	brides
լեռ(ն)	լեռնեք	mountain	mountains
դուռ(ն)	դռնեք	door	doors

Անգլերենում վերը նշված բառերի հոգնակի թիվը կազմվում է ըստ ընդհանուր կանոնի:

Հայոց լեզվում բազմավանկ բառերի հոգնակի կազմության ժամանակ որոշակի օրինաչափություններ են դրսևորում այն բառերը, որոնց վերջին բաղադրիչը միավանկ է, ինչպես՝ բանասեք, մատենագիր, հաշվապահ, վիպագիր, անձրևաջուր, ձեռագիր, դասագիրք և այլն. դրանց հոգնակին կարող է կազմվել և՛ -եր, և՛ -ներ մասնիկներով (Եզեկյան Լ., 2005): Եթե բազմավանկ բառի վերջին միավանկ բաղադրիչը պահպանում է իր գոյականական նշանակությունը, հոգնակին կազմվում է -եր-ով՝ անձրևաջուր-անձրևաջրեր, ձեռագիր- ձեռագրեր, դասագիրք-դասագրքեր, իսկ եթե չի պահպանում -ներ-ով՝ բանասեք-բանասեքներ, մատենագիր-մատենագիրներ, վիպագիր-վիպագիրներ:

Անգլերենում տվյալ բառերի հոգնակի թիվը կազմվում է ըստ ընդհանուր կանոնի:

եզակի թիվ	հոգնակի թիվ	singular	plural
դեղատուն	դեղատներ	drugstore	drugstores
բուժքույր	բուժքույրեր	nurse	nurses
ծրագիր	ծրագրեր	programme	programmes
հաշվապահ	հաշվապահներ	accountant	accountants
ժամացույց	ժամացույցներ	watch	watches

Անգլերենում մի խումբ բառերի հոգնակի թիվը կազմվում է բառարմատի ձայնավորի փոփոխությամբ: Հայերենում վերը նշվածից միայն **կին և մարդ** բառերի հոգնակի թվի կազմությունն է շեղվում ընդհանուր օրինաչափությունից: Օրինակներ (examples)՝

singular	plural	եզակի թիվ	հոգնակի թիվ
man	men	(մարդ) տղամարդ	(մարդիկ) տղամարդիկ
woman	women	կին	կանայք
tooth	teeth	ատամ	ատամներ
foot	feet	ոտք	ոտքեր
mouse	mice	մուկ	մկներ
goose	geese	սագ	սագեր

#### Բացառությունները հայոց լեզվում

եզակի թիվ	հոգնակի թիվ
մարդ	մարդիկ
կին	կանայք (և ոչ թե կիներ կամ կնիկներ, որ հաճախ սխալ է օգտագործվում)
տիկին	տիկնայք, տիկիններ
պարոն	պարոնայք, պարոններ
անձ	անձինք, անձեր

Երեխա (child) գոյականի հոգնակի թիվը հայոց լեզվում կազմվում է ըստ ընդհանուր կանոնի՝ երեխաներ, իսկ անգլերենում բառարմատի ձայնավորի փոփոխության և -(r)en վերջավորության միջոցով (children) (**Թորմաջյան Հ., 1995**):

Անգլերենում fish (ծուկ) և fruit (միրգ) գոյականները ունեն նաև հոգնակի ձևեր՝ fishes (ծկներ), fruits(մրգեր), որոնք գործածվում են, երբ խոսքը **տարբեր տեսակի** ձկների կամ մրգերի մասին է հմնտ. ( Do you prefer fresh or dried fruit - Դու նախնտրում ես թարմ թե չոր միրգ: What tropical **fruits** do you prefer? - Ի՞նչ արևադարձային մրգեր ես դու նախընտրում):

Հայոց լեզվում պետք է զգուշանալ երկու կամ ավելի միանման մասերից կազմված առարկաներ ցույց տվող գոյականների (ակնոց, ականջակալ, տաբատ, ձեռնոց) սխալ գործածությունից, քանի որ օտար լեզվում (անգլերեն) վերը նշված բառերը անեզական են (ունեն միայն հոգնակի թիվ)՝ glasses (ակնոց-ակնոցներ), scissors (մկրատ-մկրատներ), gloves (ձեռնոց- ձեռնոցներ)...: Օրինակ չի կարելի ասել՝ Նա դրեց իր ակնոցները (փոխ.՝ ակնոցը):

Սովորաբար և՛ հայերենում, և՛ անգլերենում հոգնակի թիվ չեն ստանում որոշ վերացական (կամք-will, ազնվություն-honesty), անհաշվելի (օդ-air, նավթ-oil, երկաթ-iron), բացառիկ (լուսին-moon, տիեզերք-space) գոյականներ (**Ավետիսյան Յու., Ջաքարյան Հ., 2005**):

Անգլերենում news գոյականը և մի շարք գիտությունների անուններ, որոնք վերջանում են -ics վերջածանցով (physics, optics և այլն), գործածվում են որպես եզակի. What is the news this morning? Optics is a branch of physics.

Նույն -ics վերջածանցն ունեցող որոշ գոյականներ (mathematics, phonetics, politics) կարող են դիտվել կա՛մ եզակի, կա՛մ հոգնակի: **Mathematices is** his weak subject. (եզակի) His **mathematices are** weak (հոգնակի) (**Թոքմաջյան Հ., 1995**):

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարելով գոյականի թվի քերականական կարգի համեմատական վերլուծությունը հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող երկու լեզուներում՝ հայոց լեզու և անգլերեն, հիմնվելով բազմաթիվ լեզվական օրինակների վրա՝ վեր հանեցինք և ապացուցեցինք, որ այս երկու լեզուները, լինելով տարբեր, միաժամանակ ունեն բազմաթիվ նմանություններ, որոնց արմատները շատ խորն են և հենց այդ նմանությունները և տարբերությունները

օգնում են կայուն լեզվամտածողություն ունեցող անհատին, կիրառելով անգլերենից ունեցած գիտելիքները և հիմնվելով դրանց վրա, սովորել նոր օտար լեզու, մանավանդ բավականին հասուն տարիքում, երբ բավական դժվար է նոր օտար լեզու սովորելը:

Այսպիսով, աշխատանքում ներկայացված լեզուների համեմատական վերլուծության մեթոդի շնորհիվ մի քանի տարի շարունակ (2020-2024թթ.) բարձր արդյունքներ են գրանցվում հայերենի որպես օտար լեզվի ուսուցման գործընթացում: Օտարազգի ուսանողները (տարբեր ազգերի ներկայացուցիչներ՝ արաբներ, պարսիկներ, աֆրիկացիներ, ռուսներ) ընդամենը մի քանի ամսվա ընթացքում սովորում են հայերեն. կարողանում են գրել, կարդալ, հաղորդակցվել, օր օրի զարգանում է նրանց գրավոր և բանավոր խոսքը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աղայան Է. (1987)**, Լեզվաբանության հիմունքներ, Երևան, ԵՊՀ հրատ.:
2. **Աղայան Է. (2008)**, Լեզվաբանության ներածություն, Երևան, «Մակմիլան-Արմենիա» հրատ.:
3. **Ասատրյան Մ. (2002)**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, ԵՊՀ հրատ.:
4. **Ավետիսյան Յ., Զաքարյան Հ. (2005)**, Հայոց լեզու, Ձևաբանություն, Երևան, «Զանգակ» հրատ.:
5. **Գյուլբուդաղյան Ս. (1987)**, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատ.:
6. **Եգեկյան Լ. (2005)**, Հայոց լեզու, Երևան, ԵՊՀ հրատ.:
7. **Թոքմաջյան Հ. (1995)**, Ժամանակակից անգլերենի քերականությունը, «Փյունիկ» հրատ.:
8. **Խաչատրյան Լ. (2008)**, Լեզվաբանության ներածություն, Երևան, «Զանգակ» հրատ.:
9. **Ղազարյան Բ., Փարենուզյան Լ., Մալոյան Ռ., Ստեփանյան Ջ., Ծոկիչնյան Ք., Երվանդյան Ջ., Ստեփանյան Լ. (2002)**, Հայոց լեզվի

դասընթաց տնտեսագիտական բուհերի ուսանողների համար, Երևան,  
«Տնտեսագետ» հրատ.:

## REFERENCES

1. **Aghayan E. (1987)**, Lezvabanowt'yan himownqner /Fundamentals of Linguistics/, Yerevan, YSU ed..
2. **Aghayan E, (2008)**, Lezvabanowt'yan nerac'owt'yown /Introduction to Linguistics/, Yerevan, "Makmillan-Armenia" ed.
3. **Asatryan M. (2002)**, Jhamanakakic hayoc lezow/ Modern Armenian Language/, Yerevan, YSU publish.
4. **Avetisyan Yo., Zakaryan H., (2005)**, Hayoc lezow, D'&abanowt'yown /Armenian Language/, Morphology, Yerevan, "Zangak" ed.
5. **Gulbudaghyan S. (1987)**, Hayoc lezvi dasavandman met'odika /Armenian language teaching methodology/, Yerevan, "Luys" ed.
6. **Ezekyan L. (2005)**, Hayoc lezow, Erevan /Armenian language/, Yerevan, "University" ed.
7. **Tokmajyan H. (1995)**, Jhamanakakic anglereni qerakanowt'yowny' /Modern English grammar/, "Pyunik" ed.
8. **Khachatryan L. (2008)**, Lezvabanowt'yan nerac'owt'yown / Introduction to Linguistics/, Yerevan, "Zangak" ed.
9. **Ghazaryan B., Paremuzyan L., Maloyan R., Stepanyan J., Choklinyan K., Yervandyan J., Stepanyan L. (2002)**, Hayoc lezvi dasy'nt'ac tntesagitakan bowheri owsanoghneri hamar /Armenian language course for students of economics universities/, Yerevan, "Tntesaget" ed.

Нарине Унанян, Арменуи Демирчян

## Применение метода сравнительного анализа грамматического порядка числа существительных в процессе обучения армянскому языку как иностранному

### Заключение

*Ключевые слова и выражения:* индоевропейская языковая семья, сравнительный анализ, имя существительное, единственное и множественное число, грамматические ошибки, методы.

Проблемы, изучаемые в работе, а также пути и методы их решения являются актуальными, поскольку по мере интернационализации университетов с каждым годом увеличивается число иностранных студентов, а преподаватели используют различные методы и приемы для повышения эффективности изучения армянского языка.

В работе были освещены особенности преподавания армянского языка, как иностранного, представлены проблемы, с которыми сталкиваются преподаватели во время преподавания и студенты – во время обучения, и показаны пути их решения.

Цель работы – выявить сходство и различия грамматических систем двух индоевропейских языков – армянского и английского, а также показать эффективность использования метода сравнительного анализа языков в процессе обучения. Армянский – как иностранный язык.

С помощью вышеуказанного метода в статье проведен сопоставительный анализ грамматического порядка числа существительного, и на многих примерах показаны сходства и различия структуры множественного числа существительного, при этом уделено особое внимание к исключениям, которые встречаются в обоих языках.

Помимо армянского и английского, примеры сравнения множественного числа приведены как внутри индоевропейской языковой семьи, так и в языках, не принадлежащих к индоевропейской языковой семье.

Представленные в статье методы и приемы обучения проверены годами на практических занятиях и дали положительные результаты. Повысился уровень знания армянского языка среди иностранных студентов, развилась их письменная и устная речь.

Narine Hunanyan, Armenuhi Demirchyan

**Application of the method of comparative analysis of the grammatical order of noun number in the process of teaching Armenian as a foreign language.**

**Conclusion**

**Keywords and expressions:** *Indo-European language family, comparative analysis, noun, singular and plural, grammatical mistakes, methods.*

The issues studied in the work and the ways and methods of their solution are relevant, since the number of foreign students is increasing year by year in parallel with the internationalization of universities, and lecturers use various methods and means to increase the effectiveness of their teaching of the Armenian language.

The work highlights the peculiarities of teaching Armenian as a foreign language, presents the problems that lecturers face when teaching and students when learning, and shows the ways to solve them.

The purpose of this work is to reveal the similarities and differences between the grammatical systems of two Indo-European languages, Armenian and English, as well as to show the effectiveness of applying the method of comparative analysis of languages in the process of teaching Armenian as a foreign language.

In the work, a comparative analysis of the grammatical order of the noun number was carried out using the above-mentioned method, and through numerous examples, the similarities and differences in the formation of the plural of the noun were shown, special attention was paid to the exceptions that are found in both languages.

In addition to Armenian and English, examples of the comparison of the plural number were given both within the Indo-European language family and within the framework of languages that do not belong to the Old European language family.

The teaching methods and techniques presented in the article have been tested for years during practical classes and have yielded positive results: the level of knowledge of the Armenian language of foreign students has increased, and written and oral speech has developed.

**Նարինե Հունանյան** - Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի (ՀՖԿՍՊԻ) հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ պատմահամեմատական լեզվաբանություն, մշակութաբանություն, հայոց պատմություն, ժամանակակից հայոց լեզու և գրականություն, օտար լեզուներ: Հեղինակ է մեկ ձեռնարկ-դասագրքի և տասյակ հոդվածների: [narine.hunanyan@sportedu.am](mailto:narine.hunanyan@sportedu.am)

**Արմենուհի Դեմիրճյան** - Բանասիրական գիտությունների թեկնածու, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի (ՀՖԿՍՊԻ) հասարակական հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս, ԳԱԹ մ/ճ Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարանի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ ժամանակակից հայոց լեզու, արդի և սփյուռքահայ գրականություն, մշակութաբանություն, վաղնջական, հնագույն և հին շրջանների պատմություն, հայ ազգի ծագումնաբանության ուսումնասիրություն: Հեղինակ է երկու ձեռնարկ-դասագրքի, տասնյակ հոդվածների, գիտահանրամատչելի ֆիլմերի և գեղարվեստական գրքերի: [armenuhidemirchyan@gmail.com](mailto:armenuhidemirchyan@gmail.com)

**Нарине Унанян** – Преподаватель кафедры социально-гуманитарных наук сравнительное языкознание, культурология, история Армении, современный армянский язык и литература, иностранные языки. Автор одного пособия-

учебника и десятков статей. Государственного института физической культуры и спорта Армении. Научные интересы: историческое

[narine.hunanyan@sportedu.am](mailto:narine.hunanyan@sportedu.am)

**Арменуи Демирчян** – Кандидат филологических наук, преподаватель кафедры социально -гуманитарных наук Государственного института физической культуры и спорта Армении, заведующая домом-музеем Сильвы Капутикян. Научные интересы: современная армянская литература и литература Диаспоры, культурология, история древнейших и древних регионов, изучение генеалогии армянского народа. Автор двух учебников, десятков статей, научно-популярных фильмов и художественных книг.

[armenuhidemirchyan@gmail.com](mailto:armenuhidemirchyan@gmail.com)

**Narine Hunanyan** - Lecturer of the Chair of Social Sciences and Humanities of the ASIPCS. Scientific interests: historical comparative linguistics, cultural studies, Armenian history, modern Armenian language and literature, foreign languages. She is the author of one manual-textbook and dozens of articles.

[narine.hunanyan@sportedu.am](mailto:narine.hunanyan@sportedu.am)

**Armenuhi Demirchyan** - Doctor of philological sciences, lecturer of the Chair of Social Sciences and Humanities of the ASIPCS, director of the house-museum of Silva Kaputikyan. Scientific interests: modern and Diaspora Armenian literature, cultural studies, history of ancient regions, study of the genealogy of the Armenian nation. She is the author of two textbooks, dozens of articles, popular science films and art books.

[armenuhidemirchyan@gmail.com](mailto:armenuhidemirchyan@gmail.com)

*Խմբագրություն է ուղարկվել 14.10.2024թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 21.10.2024թ.*

*Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.*



## ԱՇԽԵՆ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

ՀԱՅԱԽՈՍ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՖՐԱՆՍԵՐԵՆ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ  
ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ*DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.134*

## ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում ներկայացվում են ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման որոշ ժամանակակից տեխնոլոգիաներ: Ընդհանուր գծերով ներկայացվում են տեղեկատվական-հաղորդակցական, անձնակողմնորոշիչ, քննադատական մտածողության զարգացման, նախագծային, պրոբլեմային, խաղայնացման տեխնոլոգիաները, կոնկրետ օրինակներով լուսաբանվում է քննադատական մտածողության զարգացման շրջանակներում ձևավորված ԽԻԿ (խթանում, իմաստավորում, կշռադատում) համակարգը ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման տեսանկյունից: Ըստ փուլերի հստակեցված են դարձվածային միավորների ուսուցման մեթոդները՝ մտազրոհ, խմբավորում, պրիզմա, «Մտածի՛ր-զո՛ւյգ կազմիր-քննարկի՛ր», նաև մեթոդական հնարները կամ գծագրական դասակարգիչները՝ T-աձև աղյուսակ, գաղափարների քարտեզագրում, Վենի դիագրամ, փոխգործուն նշանների համակարգ, բանավեճ, զրույց, համառոտ դասախոսություն, կարուսել և այլն: Բացահայտվում է նախագծային մեթոդի կիրառման հաղորդակցական բնույթը: Կարևորվում է հոգեբանական ինքնորոշման ուսուցման տեխնոլոգիան, որն օգնում է ուսանողներին՝ ինքնուրույնություն դրսևորելու տարբեր դարձվածային միավորներ ճանաչելու, ներկայացնելու կամ ակտիվ խոսքում գործածելու նպատակով: Հիմնավորվում է «խաղայնացում» տեխնոլոգիայի արդյունավետությունը՝ հաշվի առնելով ՏՀՏ, ինչպես նաև ռեֆլեքսիա տեխնոլոգիաների համադրման նպատակահարմարությունը՝ ըստ ֆրանսերենի ակտիվ բառապաշարի ուսուցման առանձնահատկությունների:

**Քանալի բառեր և արտահայտություններ.** տեղեկատվական-հաղորդակցական, անձնակողմնորոշիչ, քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիա, նախագծային, պրոբլեմային մեթոդ:

### **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Լեզվադիդակտիկայում մշակվում են բառապաշարի ուսուցման տարբեր տեխնոլոգիաներ, որոնց հիմքում ընկած են ինչպես ընդհանուր դիդակտիկական, այնպես էլ բուն մեթոդական սկզբունքներ: Խնդիր է դրվում հստակեցնել, թե ինչպե՛ս են համադրվում դարձվածային պաշարի և բառապաշարի ուսուցման սկզբունքները, ինչպես նաև ընտրել բառապաշարի և կոնկրետ դարձվածքների ուսուցման տեխնոլոգիաները:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Շտապոտության հիմնախնդիրը կապված է ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման տեխնոլոգիաների ընտրության և կիրառման անհրաժեշտության հետ: Բառապաշարի և դարձվածքների ուսուցման տեխնոլոգիաների ընտրությունը հնարավոր է միայն այն դեպքում, եթե հաշվի ենք առնում «ուսուցման տեխնոլոգիա» հասկացությունը: Մեթոդաբանական և մեթոդական տեսանկյուններից դժվարություն է ներկայացնում որոշակի օրինակներով հիմնավորել ուսուցման տեխնոլոգիայի արդյունավետությունը: Հատուկ ուշադրություն է պահանջում նաև դարձվածային միավորների ընտրության հիմնավորումը և դրանց ուսուցողական նպատակներով կիրառման նպատակահարմարությունը:

Ուսումնասիրվել է դարձվածքների ուսուցման տեխնոլոգիաների ընտրության, կիրառման վերաբերյալ մեթոդական գրականություն, հիմնավորվել են խոսքային տարբեր իրադրություններում տարաբանույթ ուսուցման տեխնոլոգիաների կիրառման հնրավորությունները և արդյունավետությունը:

Շտապոտության արդյունքները կարող են կիրառել ֆրանսերեն դասավանդողները (ուսուցիչներ, դասախոսներ) դասավանդելու և

գիտահետազոտական աշխատանք իրականացնելու, իսկ ֆրանսերեն ուսումնասիրող ուսանողները՝ ուսումնառության ժամանակ: Հետազոտության մեթոդները ներառում են գիտական հասկացությունների պատմահամեմատական վերլուծությունը, դիտումը և մեթոդական ռեֆլեքսիան:

Կիրառվել են գիտական հասկացությունների պատմահամեմատական վերլուծության, դիտման, մեթոդական ռեֆլեքսիայի մեթոդները:

## **ՔՆՆԱՐԿՈՒՄ**

### **Ուսուցման տեխնոլոգիա**

Հեղինակներից շատերը, խոսելով «ուսուցման տեխնոլոգիայի» մասին, որոշակի գործողություններ կատարելիս կենտրոնանում են երաշխավորված վերջնական արդյունքի վրա (Айнутдинова И., 2011): Ըստ այս հեղինակի՝ «տեսականորեն ամեն մի հնար կարելի է հասցնել տեխնոլոգիայի մակարդակի, որը ենթակա է կրկնակի կատարելագործման և օպտիմալ դիդակտիկ գործիքներ և մեթոդական հնարներ գտնելու»:

Կանադացի դասախոս Լ. Դեմարեն տեխնոլոգիաները սահմանում է որպես «այլ միջոցների օգտագործում, որոնք չեն սահմանափակվում դասախոսի ծայնով, ձեռնարկով և թղթային տարբերակի վարժություններով» (Desmarais L., 1998), որ ցույց է տալիս հասկացության լայն ընդգրկումը և որ այն չի սահմանափակվում միայն նոր տեխնոլոգիաներով, թեև վերջիններս (հատկապես ինֆորմատիկան) մեծ տեղ են գրավում:

«Տեխնոլոգիա» հասկացությունը լայն իմաստով ենթադրում է ուսուցման ընթացքում տեղեկատվության մշակման, ներկայացման, փոփոխման մեթոդների և միջոցների ամբողջություն, և «տեխնոլոգիան ներկայացնում է ուսումնական գործընթացի իրացման բովանդակային կամ առարկայական հնարը» (Беспалько Б., 1989):

Ակնհայտ է, որ ֆրանսերենի դարձվածային կազմը բառապաշարի կարևորորագույն բաղադրիչն է: Կարևոր է այն ուսուցանել որպես յուրահատուկ

բառապաշար, որը ոչ միշտ է հնարավոր թարգմանել, այսինքն՝ տալ համարժեք թարգմանություն:

Ինչպես հայտնի է, դարձվածային միավորները հարուստ հանրամշակութային տեղեկատվություն են պարունակում: Այլ հարց է ինչպես պիտի վարվել այդ տեղեկատվության հետ:

Ֆրանսերենի մասնագիտական դասընթացում անհրաժեշտ է կիրառել նոր և նորագույն ուսուցման տեխնոլոգիաներ: Կարելի է առանձնացնել տեղեկատվական-հաղորդակցական, անձնակողմնորոշիչ, քննադատական մտածողության զարգացման, նախագծային, պրոբլեմային, խաղայնացման տեխնոլոգիաները: Մի կողմից խնդիր է դրվում ուսուցանել ֆրանսերեն դարձվածքները որպես բառապաշարի անքակտելի բաղադրիչներ, մյուս կողմից՝ դարձվածային միավորների ուսուցումը դնել հաղորդակցական հիմքերի վրա:

### **Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիա**

Ակնհայտ է, որ տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիան կիրառվում է տարբեր խնդիրների լուծելիս և ժամանակակից օտար լեզվի ուսուցման լսարանը կամ դասարանը հնարավոր չէ պատկերացնել առանց ՏՀՏ-ի կիրառման: ՏՀՏ-ի միջոցով հնարավոր է դառնում շատ արագ ուսումնասիրության առարկա դարձնել այս կամ այն դարձվածային միավորը՝ գտնել, բացահայտել նրա կիրառման ենթատեքստերը և հնարավորությունները, ինչպես նաև այն գործածել որպես ակտիվ խոսքի բաղադրիչ:

Կանադացի հետազոտող Ռ. Բիբոն «թվային կրթական ռեսուրսները» համարում է «Համացանցային ծառայությունների, կառավարման, խմբագրման և հաղորդակցության ծրագրաշար (ծրագրային ապահովում, կրթական հարթակներ և պորտալներ, որոնման համակարգեր, կրթական ծրագրեր) (Bibeau R., 2016): Էլեկտրոնային տեղեկատվությունը և տարբեր տեքստերն օգտակար են, քանի որ դասավանդողների կամ ուսանողների համար որպես տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներով կրթական կամ նախագծային գործունեության մաս են կազմում:

Թվային ռեսուրսները ծառայում են որպես կարևոր աղբյուրներ ուսումնական գործընթացում՝ ապահովելով անհրաժեշտ տեղեկատվություն և գործիքներ հայախոս ուսանողների և դասավանդողների համար:

Ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցումն իրականացնելիս հասանելի են բազում տեղեկատվական հարթակներ և որոնման համակարգեր: Ուսանողները կարող են օգտագործել այդ հարթակներից ստացված համապատասխան տեղեկատվությունը, օգտվել էլեկտրոնային տեղեկատուներից (օրինակ՝ առցանց տվյալների բազաներ), ունենալ սեփական անձնական ռեսուրսներ և հավաքել տեղեկություններ մշակութային, ազգային և մարզական իրադարձությունների մասին:

Ֆրանսիացի լեզվաբաններ Ֆ. Մանժենոն և Տ. Սուբրիեն օրինակ, կարծում են, որ «Le point du FLE» (<http://www.lepointdufle.net>) պորտալը լիովին արտացոլում է մանկավարժական ռեսուրսների դասակարգումը (**Mangenot F., Soubrié T., 2010**), իսկ «Français Facile» (<https://www.francaisfacile.com/>) կայքի միջոցով հնարավոր է դառնում հետևել ֆրանսերենի ուսուցմանն առնչվող մանկավարժների գործունեությանը՝ օգտվելով տարբեր մանկավարժական ռեսուրսներից, ուսուցման նյութերից և վարժություններից ու առաջադրանքներից:

### **Քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիա**

Քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիայի կիրառման վերաբերյալ կարելի է պնդել, որ դարձվածային միավորների վերլուծությունը պարարտ հող է ստեղծում հետաքրքիր բացահայտումների համար: Արդյունավետ է ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման գործընթացում կիրառել ԽԻԿ համակարգը: Այն հնարավորություն է ընձեռում բոլոր՝ խթանման, իմաստավորման, կշռադատման փուլերում ներմուծել, վերլուծել, տարբեր խոսքային իրադրություններում կիրառել այս կամ այն դարձվածային միավորը:

Խթանման փուլում սովորողներին նախապատրաստում են նոր դարձվածքների ընկալմանը: Դա կարելի է կատարել համապատասխան արտահայտության կամ տեքստի վերլուծության ընթացքում: Հաջորդ փուլում

սովորողներին առաջարկվում է բացահայտել նոր դարձվածքի վերաբերյալ նրանց գիտելիքները:

Նպատակահարմար է ընթերցել ֆրանսիական դասական գրականությունից տեքստեր կամ տեքստերի հատվածներ, որոնք պարունակում են դարձվածային միավորներ: Օրինակ՝

- Avoir l'œil américain դարձվածքը, որը նշանակում է «սուր և ճշգրիտ տեսողություն ունենալ՝ նկատելու մանրուքները», հաճախ հանդիպում է Օնորե դը Բալզակի ստեղծագործություններում: Նրա գործերը հայտնի են կերպարների և մանրամասնությունների նկարագրությամբ, որը դարձվածքի կիրառումը խորհրդանշական է դարձնում :
- «Faire de l'œil à quelqu'un» դարձվածքը, որը նշանակում է «սիրալիր կամ հրապուրիչ հայացք նետել մեկի վրա», հանդիպում է Մոլիերի կատակերգություններում, ինչպիսիք են «Տարտյուֆը» կամ «Դոն Ժուանը»: Այն օգտագործվում է սիրային կամ սիրախաղային իրավիճակների նկարագրության ժամանակ:

Ակտիվացման փուլում ուսանողները սկսում են քննարկել դարձվածային միավորի կիրառման իմաստային-զուգորդական դաշտը, կիրառման ենթատեքստը: Նրանք հիմնականում հետաքրքրություն են ցուցաբերում դարձվածային միավորի ծագումաբանության, ստեղծման պատմության, կիրառման հնարավորությունների նկատմամբ: Կարևոր է այն, որ այդ փուլում առաջարկվում է կիրառել մտագրոհի, խմբավորման, պրիզմայի, «Մտածի՛ր-զո՛ւյգ կազմիր-քննարկի՛ր» մեթոդները:

Իմաստի ընկալման փուլում նպատակ է դրվում պահպանելու սովորողների հետաքրքրությունը և խորացնելու նրանց ներգրավվածությունը: Այս փուլում փորձ է արվում համեմատելու տվյալ դարձվածային միավորը հայերեն համարժեքի հետ՝ վեր հանելով լեզվամշակութային առանձնահատկությունները, եթե, իհարկե, դրանք առկա են: Դրա համար կիրառվում են հետևյալ մեթոդներն ու մեթոդական հնարները՝ T-աձև աղյուսակ, գաղափարների քարտեզագրում, Վենի դիագրամ,

փոխգործուն նշանների համակարգ, բանավեճ, զրույց, համառոտ դասախոսություն, կարուսել և այլն:

Կշռադատման փուլում յուրացրած դարձվածային միավորը խոսքային տարբեր իրադրություններում կամ ենթատեքստերում կիրառելու խնդիր է դրվում: Կշռադատման փուլում կիրառվում են «Քառաբաժան», «Խորանարդում», «Երեք բանալի», «Մեկ կողպեք» մեթոդները:

Նախագծի իրականացումը ուսանողների մեջ ձևավորում է անկախության զգացում՝ գիտելիքների ձեռքբերման և կրթական ու ճանաչողական գործունեության ոլորտում փորձ ձեռք բերելու գործում: Նախագծային մեթոդը բնույթով հաղորդակցական է, որը հնարավորություն է ընձեռում ուսանողներին ներգրավելու ուսումնական իրական գործունեության մեջ, սովորեցնում է նրանց հանդուրժող լինել այլ մարդկանց կարծիքների նկատմամբ և արտահայտել իրենց կարծիքը, նրանց հնարավորություն է տալիս դրսևորելու իրենց զգացմունքները, ինչպես նաև ստեղծում է անձնական պատասխանատվության գիտակցում (Ревина П., 2023):

Կարևոր է կրթական գործընթացի յուրաքանչյուր մասնակցի տրամադրել լեզվի իմացության մակարդակին համապատասխան առաջադրանք և կազմակերպել առաջադրանքների կատարումն այնպես, որ բոլոր ուսանողները ակտիվորեն ներգրավվեն (Polat 2000: 7): Նախագծի կատարման ընթացքում ուսանողներին կարելի է առաջարկել համեմատել ֆրանսերեն և հայերեն որևէ դարձվածային միավոր: Օրինակ՝ «faire Caïn» (բառացի՝ «Կայեն անել») արտահայտությունը գալիս է Աստվածաշնչից, որտեղ Կայենը սպանեց իր եղբայր Աբելին՝ նախանձից ելնելով: Ֆրանսերենում այս արտահայտությունը օգտագործվում է, երբ խոսքը վերաբերում է հուսահատ ու մեղավոր գործողություն կատարելուն, կամ երբ մարդը անցնում է ագրեսիվ արարքների՝ նախանձից կամ մրցակցությունից դրդված: Այս արտահայտության իմաստը դասավանդողն ու սովորողը հասկանում են, մինչդեռ հայկական դարձվածային ակտիվ բառապաշարի մեջ այն առկա չէ: Սակայն Պ. Բեդիրյանի դարձվածաբանական

բառարանում (Բեդիրյան Պ., 2011) գրանցված են **Կայեն** բաղադրիչով մի շարք արտահատություններ՝ **Կայենի դրոշմ, ճակատին Կայենի խարանդ կրել, մեկի գլխին Կայենի նզովք կարդալ, Կայենի որդի**: Բոլոր դեպքերի հիմքում եղբայրասպանի, դավաճանի իմաստն է ընկած:

### **Անձնակողմնորոշիչ ուսուցման տեխնոլոգիա**

Անձնակողմնորոշիչ ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է հետևյալ մանկավարժական պայմանների ստեղծմանը.

- մանկավարժը դասի ընթացքում ստեղծում է բարենպաստ հուզական մթնոլորտ, ներառյալ զարգացման մոտիվացիան,
- դասի սկզբում ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցները ձևակերպում են թեման,
- դասավանդողը թույլ է տալիս սովորողներին ընտրել՝ ինչպե՛ս սովորել նյութը (տեքստ, գծապատկերներ, աղյուսակներ և այլն),
- դասավանդողը օգտագործում է խնդրի վրա հիմնված առաջադրանքներ,
- դասավանդողը և ուսանողները միասին վերլուծում են ուսանողի (ճիշտ/սխալ) պատասխանը, բացահայտում պատճառաբանման մեթոդը,
- դասավանդողն ամփոփում է դասը և անդրադարձ անում՝ այդպիսով ապահովելով հետադարձ կապ ոչ միայն դասի ընթացքում ձեռք բերված գիտելիքներին, այլև սովորողների հուզական (հոգեկան) վիճակին,
- դասավանդողը պատճառաբանում է յուրաքանչյուր սովորողի գնահատականները,
- դասավանդողը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր առաջադրանքը մեկնաբանելիս անհատապես տնային առաջադրանք ընտրել (Tyryzbaeva O., 2015):

Այս տեխնոլոգիայի կարևոր առանձնահատկությունն այն է, որ դասավանդողները պետք է հավատան սովորողների ստեղծագործական կարողություններին:

Անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաների մյուս առավելությունն այն է, որ յուրաքանչյուր հարց քննարկվում և վերլուծվում է փոքր կամ մեծ խմբերով աշխատող ուսանողների միջոցով:

### **Հոգեբանական ինքնորոշման և ռեֆլեքսիայի տեխնոլոգիա**

Հոգեբանական ինքնորոշման տեխնոլոգիան օգնում է ուսանողներին ինքնուրույնություն դրսևորելու տարբեր դարձվածային միավորներ ճանաչելու, ներկայացնելու կամ ակտիվ խոսքում գործածելու հարցում: Ամեն մի ուսանող ընտրում է որոշակի իրադրություն, որը հնարավորություն կընձեռի գործածելու ֆրանսերեն այս կամ այն դարձվածային միավորը (**Якиманская И., 2000**):

Ռեֆլեքսիա (լատ. reflexio անդրադարձում) նշանակում է կշռադատություն՝ խորհրդածության տեսակ, որի դեպքում մտածողությունն անդրադառնում է իր սեփական գործունեությանն ու բովանդակությանը, մասնավորապես՝ առարկաների մասին իր պատկերացումներին (**Հայրապետյան Ա., 2011**):

Հոգեբանամանկավարժական գրականության մեջ «ռեֆլեքսիա» հասկացությունը սահմանվում է նախևառաջ գործունեության տեսության տեսանկյունից, այն առումով, որ այդ մեկնաբանվում է սուբյեկտի կողմից՝ որպես իր գործունեության ճանաչողական կամ հուզական մակարդակներում գիտակցման գործընթաց: Հաղորդակցության տեսության համատեքստում այս հասկացությունը ձեռք է բերում գործառական, բովանդակային նոր բնութագրեր, որտեղ առաջնային դեր են ստանում անձի ինքնավերլուծական կարողությունները (**Մատինյան Ն., 2024**):

Օտար լեզվի ապագա ուսուցչի պատրաստման տեսանկյունից առանձնանում է ռեֆլեքսիայի տեխնոլոգիան, երբ սովորողները գիտակցում են, թե ի՞նչ խոսքային գործունեությամբ է կարելի հասնել որոշակի արդյունքի: Բառապաշարի դասավանդման մեջ ռեֆլեքսիայի տեխնոլոգիան միտված է կրթական փորձի

ըմբռնմանը, ուսումնական գործունեության նոր ռազմավարությունների և մոտեցումների մշակմանը և ռեֆլեքսիվ ու վերլուծական հմտությունների զարգացմանը: Ուսանողները փորձում են ի մի բերել, ընդհանրացնել դարձվածային միավորների մասին իրենց փորձը, փորձում են հասկանալ, թե ինչպե՛ս են ներմուծվում, յուրացվում, ամրապնդվում դարձվածքները: Արդյունավետ է, երբ յուրաքանչյուր ուսանող հավաքում է ուսուցման ընթացքում յուրացրած այն դարձվածքները, որոնք ինքը համարում է հետաքրքիր, կարևոր: Ռեֆլեքսիայի մեթոդով, հատկապես նախագծային մեթոդի հետ համադրելով, հնարավոր է հասնել շոշափելի արդյունքների:

Արդյունավետ մոտեցում է խոսքային տարբեր իրադրություններում ուսանողներին ներկայացնել այն դարձվածային միավորները, որոնք երբեմն սխալ են մեկնաբանում անգամ լեզվակիրները: Օրինակ՝ *Ça fait la rue Michel* արտահայտությունը, որն ունի փարիզյան արմատներ, նշանակում է «հաշվարկը ճիշտ է, բավարար է կամ բավարարում է պահանջներին»: Այն ծագում է 19-րդ դարի Փարիզի կյանքից. այժմ հնացած է: Այս արտահայտության ծագումը կապված է Փարիզի 3-րդ շրջանում գտնվող *Michel-le-Comte* փողոցի անվան հետ, որտեղ տեղակայված էին բազմաթիվ թերթերի խմբագրություններ: Արտահայտությունը հավանաբար գործածել են այն ժամանակների կառապանները, որոնք ուղևորին տեղ հասցնելուց և վճար ստանալուց հետո նշում էին, որ գումարը բավարար է: Սկզբնական *ça fait le compte* («հաշիվը համապատասխանում է») արտահայտությունը ժամանակի ընթացքում վերափոխվեց՝ դառնալով *ça fait la rue Michel-le-Comte* և ավելի ուշ՝ *ça fait la rue Michel*:

Ճիշտ է նկատվել, որ օտար լեզվի յուրահատկությունը մարդկային հանրույթի որոշակի գործունեության ուսուցումն է: Ի տարբերություն այլ առարկաների՝ օտար լեզվի օբյեկտը ոչ թե գիտությունն է լեզվի մասին, այլ լեզվի միջոցով ծավալվող խոսքային գործունեությունը. ուսուցման ընթացքում ձեռք բերված գիտելիքները,

կարողություններն ու հմտությունները միջոց են այլ նպատակների իրականացման համար (**Աստվածատրյան Մ., 1985**):

Եվս մեկ օրինակ դիտարկենք՝ la Cour des Miracles արտահայտությունը, որը նշանակում է «Հրաշքների գավիթ»: Միջնադարյան Փարիզում այդպես էին անվանում աղքատներով ու թափառաշրջիկներով բնակեցված թաղամասեր: Մուրացկանները ծանոթ էին հաշմանդամ՝ ողորմություն ստանալու համար, իսկ գիշերը «հրաշքով» առողջանում էին, որ հիմք է դարձել անվանման համար: Ակնհայտ է, որ ժամանակակից լեզվակիրը դժվարությամբ է հասկանում այս դարձվածքը:

Ակտիվ բառապաշարը հարստացնելու նպատակով ուսանողներին կարելի է ներկայացնել մի շարք դարձվածքներ հենց դարձվածաբանական բառարանից (**Բարլեգիզյան Ա., 2018**), որոնք ընդգրկում են «հրաշք» (miracle) բաղադրիչը, օրինակ՝ *comme par miracle* - կարծես հրաշքով, *crier (au) miracle* - զմայլվել, սքանչանալ որևէ բանով, *faire miracle* - հրաշք ազդեցություն, տպավորություն թողնել, *tenir du miracle* - հրաշք թվալ, զարմանահրաշ լինել: Այսպիսի դարձվածքները կօգնեն ուսանողներին ավելի խոր հասկանալու լեզվի ոճական առանձնահատկությունները և դրանց կիրառությունը տարբեր համատեքստերում:

Կարելի է նաև ուսանողներին առաջարկել, որ իրենք գտնեն հայերեն նմանատիպ դարձվածքներ:

### **Խաղայնացում**

Ակնհայտ է, որ, միայն ճիշտ կիրառելով դարձվածային միավորները, հնարավոր չէ պատշաճ յուրացնել դրանք: Խնդիր է դրվում դրանք կիրառել խոսքային տարբեր իրադրություններում: Այդ առումով արդյունավետ է կիրառել խաղայնացում կամ *gamification* տեխնոլոգիան: Այն առաջին անգամ օգտագործվել է 2002 թ. Նիք Փիլլինգի «Բանակցման արվեստը» գրքում (**Peeling N., 2011**): Ըստ հետազոտողների՝ խաղայնացումը խաղային տեխնոլոգիաներից նրանով տարբերվում է, որ «իրականությունը մնում է իրականություն՝ չվերածվելով խաղի» (**Орлова О., Титова В., 2015**): Իսկապես, խաղի ընթացքում

ուսանողը հաճախ այլ դերեր է ստանձնում: Խաղայնացումը ուսուցման կազմակերպման միջոց է, որն ունի ահռելի մանկավարժական ներուժ, քանի որ թույլ է տալիս խթանել հետաքրքրությունը՝ մասնակիցներին թողնելով իրական աշխարհում՝ լուծելով իրական կրթական խնդիրներ:

Ի տարբերություն սովորական խաղի՝ խաղայնացումը առաջին հերթին ուղղված է կրթական արդյունքների հասնելուն, ուստի կրթության մեջ խաղային տեխնոլոգիաների օգտագործումը ցույց է տալիս դրա արդյունավետությունը (Yakovleva A., 2021).

Խաղայնացման առավելություններից մեկն այն է, որ լեզվակիրներին բնորոշ խոսքային իրադրությունները մոդելավորվում են թվային տեխնոլոգիաների միջոցով: Ընդ որում, դարձվածային յուրաքանչյուր միավոր հնարավոր է դառնում «փորձարկել», այսինքն՝ կիրառել ակտիվ խոսքում ոչ միայն երեստերես, այլև առցանց:

Նոր խաղերը ևս կարող են արդյունավետ գործիք դառնալ դարձվածային միավորների ուսուցելիս: Մի դեպքում դրանք նպաստում են ուսանողների միջմշակութային հաղորդակցության հմտությունների զարգացմանը՝ օգնելով նրանց ճիշտ հասկանալու, ապա նաև կիրառելու միջմշակութային տարբեր իրավիճակներում: Մյուս դեպքում խաղերը զարգացնում են ուսանողների միջմշակութային զգայունակությունը՝ առաջարկելով ուսումնասիրել և մեկնաբանել տարբեր մշակույթներին բնորոշ դարձվածքներ ու դրանց նշանակությունները, որոնք հաճախ էապես տարբերվում են մշակութային համատեքստերից կախված:

Այսպիսով, կարելի է պնդել, որ ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցումը հնարավոր է դարձնել արդյունավետ, դնել հաղորդակցական հիմքի վրա՝ կիրառելով ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ: Ուսուցման տեխնոլոգիաների միջոցով հնարավոր է դառնում ֆրանսերեն դարձվածային միավորները ներմուծել, յուրացնել, ամրապնդել, խոսքի ակտիվ միավոր դարձնել ուսուցման տարբեր տեխնոլոգիաների, մեթոդների և հնարների համադրմամբ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆրանսերենի դարձվածային պաշարը այդ լեզուն սովորողի բառապաշարի կարևոր բաղադրիչն է: Ֆրանսերենի դարձվածային միավորների ուսուցմանը նպաստելու համար կարելի է առանձնացնել տեղեկատվական-հաղորդակցական, անձնակողմնորոշիչ, քննադատական մտածողության զարգացման, նախագծային, պրոբլեմային, խաղայնացման տեխնոլոգիաները:

Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիան կարևորվում է հատկապես տեղեկատվության արագ հավաքագրման, համակարգման, համապատասխան դարձվածքի որոնման տեսանկյուններից:

Քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիան նպատակահարմար է կիրառել խնդրահարույց ուսուցում իրականացնելու գործընթացում, երբ ուսումնասիրվող դարձվածքը դիտարկվում է որպես նոր տեղեկատվության աղբյուր, հանրամշակութային բնույթի իրույթ, պատմամշակութային յուրահատուկ իրողություն: ԽԻԿ համակարգն այդ առումով արդյունավետ տեխնոլոգիա է, քանի որ նպաստում է բառապաշարի ակտիվացմանը հատկապես կշռադատման փուլում: Այս տեխնոլոգիան պարունակում է գիտահետազոտական աշխատանքի տարրեր, քանի որ ուսանողները փորձում են իրականացնել դարձվածային միավորի թե՛ համաժամանակյա, թե՛ տարժամանակյա վերլուծություն:

Նախագծային մեթոդի կիրառումը նպաստում է դարձվածքաների ուսուցումը հաղորդակցական հիմքի վրա դնելուն:

Անձնակողմնորոշիչ ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է դասի ընթացքում բարենպաստ հուզական, ստեղծագործական մթնոլորտի ստեղծմանը, ռեֆլեքսիայի նոր մակարդակի ձևավորմանը, գնահատման օբյեկտիվության ապահովմանը:

Հոգեբանական ինքնորոշման և ռեֆլեքսիայի տեխնոլոգիայի կիրառումն օգնում է ուսանողներին ընդհանրացնելու դարձվածային միավորների մասին

իրենց փորձը, յուրացնելու ռեֆլեքսիայի բարձր մակարդակում նոր ներմուծվող դարձվածային միավորները:

Խաղայնացում ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը հիմք է ստեղծում ոչ միայն մոդելավորելու լեզվակիրներին բնորոշ խոսքային իրադրություններ, այլև շարունակաբար ճշգրտելու դարձվածքները կիրառելու գործընթացը՝ օգտվելով հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններից:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աստվածատրյան Մ. (1985)**, Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, Դասագիրք բուհերի համար, Երևան, «Լույս» հրատ.:
2. **Բարլեզիզյան Ա. (2018)**, Դարձվածքների և արտահայտությունների ֆրանսերեն-հայերեն բառարան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
3. **Բեդիրյան Պ. (2011)**, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ.:
4. **Հայրապետյան Ա. (2011)**, Օտար լեզուներ բառարան, Երևան, Հեղինակային հրատ.:
5. **Մատինյան Ն. (2024)**, Ինքնազնահատումը և ինքնազարգացումը որպես ուսուցչի մասնագիտական կարողունակություններ, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Հեղինակային հրատարակություն:
6. **Беспалько В. (1989)**, Слагаемые педагогической технологии, Москва, “Педагогика”.
7. **Айнутдинова И. (2011)**, Инновационные технологии в обучении иностранным языкам в вузе: интеграция профессиональной и иноязычной подготовки конкурентоспособного специалиста: (зарубежный и российский опыт) / Настольная книга педагога-новатора, Казань, Издательство Казанского университета.
8. **Орлова О., Титова В. (2015)**, Геймификация как способ организации обучения, Томск, Вестник ТГПУ, no. 9(162).

- <https://cyberleninka.ru/article/n/geymifikatsiya-kak-sposob-organizatsii-obucheniya/viewer> (մուտք 08.01.2025)
9. **Ревина П. (2023)**, Обучение фразеологии через проектную деятельность на уроках иностранного языка, Казань, Молодой ученый. -№47(494), с. 195-197. URL: <https://moluch.ru/archive/494/108082/>. (մուտք 05.01.2025).
10. **Тугузбаева О. (2015)**, Личностно-ориентированный подход в процессе обучения русскому языку и литературе//Научный вестник ВГАСУ: Лингвистика и международная коммуникация, Воронеж, Вып. №2(16), с. 1-5.
11. **Якиманская И. (2000)**, Личностно-ориентированное обучение в современной школе, Москва, <https://sites.google.com/site/kniznaapolkavmk> (մուտք 08.01.2025).
12. **Bibeau R.**, Taxonomie des ressources numériques et des projets éducatifs et quelques-unes d'intégration des TIC en classe, <http://www.robertbibeau.ca/taxonomie.doc>. (մուտք 08.01.2025).
13. **Lise Desmarais (1998)**, Les technologies et l'enseignement des langues, Montréal, Canada: Les Éditions Logiques, [https://www.researchgate.net/publication/345302618\\_Analyse\\_de\\_Les\\_technologies\\_et\\_l'enseignement\\_des\\_langues](https://www.researchgate.net/publication/345302618_Analyse_de_Les_technologies_et_l'enseignement_des_langues) (մուտք 08.01.2025)
14. **Mangenot F., Soubrié T. (2010)**, "Créer une banque de tâches Internet: quels descripteurs pour quelles utilisations?". In A.-L. Foucher, M. Pothier, C. Rodrigues & V. Quanquin (dir). La tâche comme point focal de l'apprentissage. Actes du 2ème colloque international Tidilem (Tice et Didactique des Langues Étrangères et Maternelles), Clermont-Ferrand 2010, p.2. <https://edutice.hal.science/edutice-00495054/PDF/Mangenot.pdf> (մուտք 08.01.2025).
15. **Peeling N. (2011)**, Brilliant Negotiations: What the Best Negotiators Know, Do and Say, Harlow, England; New York: Prentice Hall, Available at:

- <https://archive.org/details/brilliantnegotia0000peel> (մուտք 08.01.2025).
16. **Yakovleva A. (2021)**, Gamification: how to turn a lesson into a game and not to overdo it // Educational portal Mel.fm: website. Available at: <https://mel.fm/ucheba/shkola/6783041-gamification> (մուտք 06.01.2025).
17. <https://www.armedu.am/> «Հայկական կրթական միջավայր» պորտալ (մուտք 10.01.2025)
18. <https://dlc.armedu.am/> «Հեռավար ուսուցման կենտրոն» պորտալ (մուտք 10.01.2025)
19. <https://esource.armedu.am/> «Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ» հարթակ (մուտք 10.01.2025)

## REFERENCES

1. **Astvatsatryan M. (1985)**, O'tar lezowneri dasavandman met'odika /Methodology of Teaching Foreign Languages/, A Textbook for Universities, Yerevan, "Luys".
2. **Barlezizyan A. (2018)**, Dard'vac'qneri & artahaytowt'yownneri franseren-hayeren bar'aran /French-Armenian Dictionary of Idioms and Expressions/, Yerevan, NAS RA "Gitutyun" Publishing.
3. **Bediryan P. (2011)**, Hayeren dard'vac'qneri y'ndard'ak bacatrakan bar'aran /Extended Explanatory Dictionary of Armenian Idioms/, Yerevan, YSU Publishing.
4. **Hayrapetyan A. (2011)**, O'tar lezowner bar'aran /Foreign Languages Dictionary/, Yerevan, Author's Publication.
5. **Matinyan N. (2024)**, Inqnagnahatowmy' & inqnazargacowmy' orpes owsowcchi masnagitakan karoghownakowt'yownner /Self-Assessment and Self-Development as Professional Competencies of a Teacher/, A Teaching Manual. Yerevan, Author's Publication.

6. **Bespalko V. (1989)**, Slagayemye pedagogicheskoy tekhnologii /Components of Pedagogical Technology/, Moscow, “Pedagogy”.
7. **Aynutdinova I. (2011)**, Innovative Technologies in Teaching Foreign Languages in Higher Education: Integration of Professional and Foreign Language Training for a Competitive Specialist (Foreign and Russian Experience) / A Handbook for the Innovative Educator, Kazan, Kazan University Publishing.
8. **Orlova O., Titova V. (2015)**, Gamification as a Method of Organizing Learning. Tomsk, Scientific Bulletin of Tomsk State Pedagogical University, no. 9 (162). Available at: <https://cyberleninka.ru/article/n/geymifikatsiya-kak-sposob-organizatsii-obucheniya/viewer> (Accessed 08.01.2025).
9. **Revina P. (2023)**, Teaching Phraseology through Project-Based Learning in Foreign Language Lessons. Kazan, Young Scientist, no. 47(494), pp. 195-197. Available at: <https://moluch.ru/archive/494/108082/> (Accessed 05.01.2025).
10. **Tuguzbaeva O. (2015)**, A Personality-Oriented Approach in the Process of Teaching Russian Language and Literature // Scientific Bulletin of Voronezh State University of Architecture and Civil Engineering: Linguistics and International Communication, Voronezh, Issue no. 2(16), pp. 1-5.
11. **Yakimanskaya I. (2000)**, Personality-Oriented Learning in Modern School. Moscow. Available at: <https://sites.google.com/site/kniznaapolkavmk> (Accessed 08.01.2025).
12. **Bibeau R.**, Taxonomy of Digital Resources and Educational Projects and Some Ideas for Integrating ICT in the Classroom. Available at: <http://www.robertbibeau.ca/taxonomie.doc> (Accessed 08.01.2025).
13. **Desmarais L. (1998)**, Technologies and Language Teaching. Montréal, Canada: Les Éditions Logiques. Available at: [https://www.researchgate.net/publication/345302618\\_Analyse\\_de\\_Les\\_technologies\\_et\\_l'enseignement\\_des\\_langues](https://www.researchgate.net/publication/345302618_Analyse_de_Les_technologies_et_l'enseignement_des_langues) (Accessed 08.01.2025).

14. **Mangenot F., Soubrié T. (2010)**, "Creating an Internet Task Bank: What Descriptors for What Uses?" In A.-L. Foucher, M. Pothier, C. Rodrigues & V. Quanquin (Eds.). The Task as the Focal Point of Learning. Proceedings of the 2nd International Tidilem Conference (ICT and Didactics of Foreign and Native Languages), Clermont-Ferrand 2010, p. 2. Available at: <https://edutice.hal.science/edutice-00495054/PDF/Mangenot.pdf> (Accessed 08.01.2025).
15. **Peeling N. (2011)**, Brilliant Negotiations: What the Best Negotiators Know, Do, and Say. Harlow, England; New York: Prentice Hall. Available at: <https://archive.org/details/brilliantnegotia0000peel> (Accessed 08.01.2025).
16. **Yakovleva A. (2021)**, Gamification: How to Turn a Lesson into a Game and Not Overdo It // Educational Portal Mel.fm: Website. Available at: <https://mel.fm/ucheba/shkola/6783041-gamification> (Accessed 06.01.2025).
17. <https://www.armedu.am/> «Haykakan krt'akan mijavayr» portal /"Armenian Educational Environment" Portal/ (Accessed 10.01.2025).
18. <https://dlc.armedu.am/> «Her'avar owsowcman kentron» portal /"Distance Learning Center" Portal/ (Accessed 10.01.2025).
19. <https://esource.armedu.am/> «Owsowcman interaktiv texnologianer» hart'ak /"Interactive Learning Technologies" Platform/ (Accessed 10.01.2025).

**Ашхен Гюрджинян**

### **Технологии обучения французским фразеологическим единицам**

#### **Заключение**

**Ключевые слова и выражения:** информационно-коммуникационные технологии, личностно-ориентированные технологии, развитие критического мышления, метод проектирования, проблемно-ориентированный метод, геймификация, ментальные карты, диаграмма Венна, интерактивная знаковая система.

Французские фразеологизмы являются важным компонентом лексики. Их важно преподавать как уникальный пласт языка, который не всегда имеет точные аналоги при переводе.

Можно выделить следующие технологии: информационно-коммуникационные, личностно-ориентированные, технологию развития критического мышления, проектный метод, геймификацию и другие.

Информационно-коммуникационные технологии особенно важны для быстрого поиска, координации и сбора подходящих фразеологизмов.

Технология развития критического мышления целесообразна при проблемном обучении. Изучаемая фраза анализируется как источник новой информации, отражающей национально-культурные реалии и уникальные историко-культурные лакуны. Система ВОР (вызов, осмысление, рефлексия) особенно эффективна для активизации словарного запаса, особенно на этапе размышления.

Элементы научно-исследовательской работы включены в технологию развития критического мышления, так как учащиеся проводят синхронный и диахронический анализ фразеологизмов. Применение проектного метода способствует построению обучения фразеологических единиц на коммуникативной основе.

Использование технологии личностно-ориентированного обучения помогает создать благоприятную эмоциональную и творческую атмосферу на уроке, развивать рефлексивность и обеспечивать объективность оценки.

Технология психологического самоопределения и рефлексии помогает учащимся обобщать собственный опыт использования фразеологизмов и усваивать новые фразеологические единицы.

Применение технологии геймификации создает условия для моделирования речевых ситуаций, характерных для носителей языка, а также совершенствования навыков использования фразеологизмов с помощью телекоммуникационных технологий.

Ashkhen Gyurjinyan

## Technologies of teaching french phraseological units

### Conclusion

**Key words and expressions:** information and communication technologies, student-centered technologies, development of critical thinking, project-based method, problem-based method, gamification, mind maps, Venn diagram, interactive sign system.

French phraseological units are an essential component of the vocabulary. It is important to teach them as a unique layer of the language that does not always have precise equivalents in translation.

The following technologies can be highlighted: information and communication technologies, student-centered technologies, critical thinking development technology, project-based method, gamification, and others.

Information and communication technologies (ICT) are particularly important for the quick search, coordination, and collection of suitable phraseological units.

The critical thinking development technology is appropriate for problem-based learning. The idiom under study is analyzed as a source of new information reflecting national and cultural realities as well as unique historical and cultural gaps. The ERR (Evocation, Realisation of Meaning, Reflection,) system is especially effective for activating vocabulary, particularly during the reflection phase.

Elements of research work are included in the critical thinking development technology, as students conduct both synchronic and diachronic analysis of phraseological units. The use of the project-based method facilitates the communicative approach to teaching idiomatic expressions.

The use of student-centered learning technology helps create a favorable emotional and creative atmosphere in the classroom, foster reflection, and ensure objective assessment.

The technology of psychological self-determination and reflection helps students summarize their experience of using phraseological units and effectively assimilate new idiomatic units.

The use of gamification technology creates conditions for modeling speech situations characteristic of native speakers, as well as for improving the skills of using phraseological units with the help of telecommunication technologies.

**Աշխեն Գյուրջինյան** - Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ֆրանսերենի և ռոմանական բանասիրության ամբիոնի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման հարցեր: Հեղինակ է 5 հոդվածի. [ashkhen.gyurjinyan@gmail.com](mailto:ashkhen.gyurjinyan@gmail.com)

**Ашхен Гюрджинян** - Преподаватель, Кафедра французской и романской филологии, Государственный Университет имени В.Я. Брюсова. Научные интересы: Методическая система обучения французским фразеологическим единицам в профессиональном курсе. Автор пяти статей.

[ashkhen.gyurjinyan@gmail.com](mailto:ashkhen.gyurjinyan@gmail.com)

**Ashkhen Gyurjinyan** - Lecturer, Chair of french and romance philology, Brusov State University. Scientific interests: Methodological System of Teaching French Phraseological Units in a Professional Course. Author of five articles. [ashkhen.gyurjinyan@gmail.com](mailto:ashkhen.gyurjinyan@gmail.com)

*Խմբագրություն է ուղարկվել 15.02.2025թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 27.02.2025թ.*

*Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.*

## ՀՈՒՓՍԻՄԵ ՄԱՐՈՆՅԱՆ

«ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄ» ՀԱՄԱԼԻՐ ԴԱՍԸՆԹԱՑԻ  
ՄԵԹՈԴԻԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.135

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում է «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի դասավանդման գիտատեսական հիմունքներն ազգային տարազի համատեքստում: Բուխում սովորողների համար փորձ է արվել բացահայտել «Հագուստի մոդելավորում» դասընթացի ուսուցման խնդիրները, դրանց մեթոդաբանական ու տեխնոլոգիական իմաստավորումը ազգային տարազի ուսումնասիրման գործընթացում:

Համաձայն ժամանակակից բուհական կրթության համակարգի պահանջների՝ արդի ժամանակներում առաջանում է «Հագուստի կոմպոզիցիայի» և «Հագուստի նախագծման» դասավանդման նոր մոտեցումների պահանջ, որոնք ի վիճակի են հաջողությամբ լուծել գեղարվեստական կրթության ժամանակակից խնդիրները:

Այս նոր մոտեցումները «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի դասավանդման ընթացքում պետք է համապատասխանեն մասնագիտական գործունեության ժամանակակից պահանջներին: Այդ դրույթներն են՝

- օգտագործել ստացած գիտելիքները, կարողությունները և հմտությունները մասնագիտական գործունեության մեջ,
- կիրառել գրաֆիկական, գեղանկարչական և պլաստիկ մեթոդներ՝ հեղինակային նախագծեր մշակելիս և ձևավորելիս,
- գտնել նոր և ստեղծագործական լուծումներ յուրաքանչյուր նախագծի համար,

- մշակել հագուստների գեղարվեստագրաֆիկական նախագծեր և մարմնավորել դրանք նյութի մեջ,
- կազմակերպել գեղարվեստաստեղծագործական, կատարողական և նախաձեռնողական գործունեություն:

Գեղարվեստա-գեղագիտական կրթության բովանդակությունը, ինչպես նաև «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի դասավանդումը պետք է նպաստի ոչ միայն ազգային հանդեպ հարգանքի և ինքնագիտակցության ձևավորմանը, այլև համաշխարհային պատմության և մշակութային ժառանգության նկատմամբ, ինչպես նաև ազգային և համաշխարհային արժեքների ճանաչմանը, որը կընդլայնի ու կհարստացնի սովորողների պատկերացումները և մտահորիզոնը:

***Բանալի բառեր և արտահայտություններ.** մոդելավորում, մեթոդիկա, փեխնոլոգիա, ինփեզրում, ազգային, արվեստ, ուսուցում, դասընթաց, նախագծում, գեղարվեստական:*

### **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Բարձրագույն ուսումնական հաստատությունների բարեփոխումների իրականացումը նշանակում է ամենից առաջ բարձրացնել ուսուցման ու դաստիարակության որակը, ձևավորել սովորողների գիտական ու ստեղծագործական աշխարհայացքը: Եվ որպեսզի սովորողներն ըմբռնեն բնական ու հասարակական գիտությունների հիմունքներն ու հասարակության զարգացման օրինաչափությունները, անհրաժեշտ է անցնել ուսուցման նոր բնույթի՝ վերարտադրողից՝ զարգացնողի: Ուսուցման նման մոդելի դեպքում սովորողները կկարողանան կատարել վերլուծություններ և ընդհանրացումներ, համեմատություններ ու մտահանգումներ, տվյալ երևույթը կամ իրողությունը բացատրել կիրառելով տարբեր առարկաներից ստացած գիտելիքները (**Поиск развития..., 1999**):

Յուրաքանչյուր ուսումնական առարկա, արտացոլելով բնության կամ հասարակության վերաբերյալ համընդհանուրը, հիմնականում համապատասխանում է արդի գիտության որևէ մեկ բնագավառի, ուրեմն՝ սովորողները յուրացնում են գիտության համապատասխան բնագավառի հիմունքները: Ուսումնական տարբեր առարկաների բովանդակությունն արտացոլում է ռեալ իրականությունն իր տարբեր կողմերով՝ փոխկապակցված ձևով, իսկ միջառարկայական կապերը լայն հնարավորություն են ընձեռում ուսուցման ու դաստիարակության նկատմամբ դրսևորելու համալիր մոտեցում և ծառայում օբյեկտիվ իրականության նկատմամբ միասնական հայացքների ձևավորմանը:

Միջառարկայական կապերը, բացահայտելով բնության իրական կապերը, համարվում են օբյեկտիվ իրականության օրինաչափությունների արտահայտիչները:

Ուսումնասիրություններն ու փորձարարական հետազոտությունները ցույց են տալիս, որ միջառարկայական կապերի իրականացմանը նպաստում են ուսուցման որոնողական, հետազոտական և հիմնախնդիրային մեթոդները (**Դավթյան Մ., Գրիգորյան Ք., Արնաուդյան Ա., Զոհրաբյան Ա., 2007**):

Գլխավորն այստեղ **ինչ** և **ինչպես** դասավանդել, որպեսզի ժողովրդական, ավանդական արվեստները ոմանց համար դառնան գեղագիտական զարգացման, աշխարհընկալման հիմք, ձևավորեն գեղեցիկի ընկալումն ու իրական գեղեցիկի տեսլականի դաստիարակումը, մյուսների համար՝ բարձր մասնագիտական ապագա, երրորդի համար՝ պարզապես կենսակերպ, առանց որի անհնար է պատկերացնել ազգային ինքնագիտակցությունն ու գոյությունը:

### ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի մեթոդաբանական հիմք են դարձել հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, արվեստագիտական, մանկավարժական, մեթոդական հետազոտությունները, տեսությունները, հայեցակարգային մոտեցումները, հազուատի մոդելավորման նախագծումները և ազգային տարազի ավանդույթներն

ու սովորույթները: Հայ և արտերկրի տարբեր ժամանակների ուսումնական գործունեության տեսությունը (Վ. Վ. Դավիդով, Դ. Բ. Էլկոնես, Վ. Կ. Դյաչենկո), կոմպետենտային մոտեցման տեսությունը (Վ. Մ. Մաքսիմովա, Ն. Ա. Գորբաչևա), մշակութաբանական մոտեցման տեսությունը (Ա. Քամյու, Ն. Բ. Կոչիլով, Դ. Բելլ), կերպարվեստի դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ հետազոտությունները, մեթոդական մշակումները (Վ. Ս. Կուզին, Վ. Ս. Շուբինսկի, Լ. Ս. Ներսիսյան, Ա. Կ. Եղիազարյան), տարազի համատեքստով (Մ. Մնացականյան, Ս. Դավթյան, Լ. Ավանեսյան):

### ՔՆՆԱՐԿՈՒՄ

Դեկորատիվ կիրառական արվեստները և, մասնավորապես, հագուստի մոդելավորումը, մշակույթի բաղկացուցիչ մաս են կազմում: Հետևաբար, գեղարվեստական գրագիտությունը՝ որպես արվեստի միջոց, նույնպես համարվում է մշակույթի անբաժան մաս (**Готтенрот Ф., 2009**): Սակայն մշակույթը ենթադրում է ոչ միայն նյութական կամ հոգևոր արժեքներ, այլ նաև անհատական և հասարակական կուտակված փորձի փոխանակման միջոցներ, և դա նշանակում է, որ գեղարվեստական գրագիտությունը՝ որպես մշակույթի միավոր, պետք է իր մեջ ներառի նաև հենց ուսուցման գործընթացը: Ուսուցման ինտեգրացիոն համակարգում ներառված են երեք բաղադրիչներ, որոնք սերտ կապված են մեկը մյուսին և անբաժան են:

Այսպիսով՝ ինտեգրացիան պետք է իրականանա ոչ միայն գեղարվեստական գրագիտության դասավանդման ներսում որպես մասնագիտական պատրաստման բաղադրիչ: Ինտեգրատիվ մոտեցումը պետք է ընդգրկի ամբողջ ուսումնական գործունեությունը: Ինտեգրացիան, որը իրականանում է մեկ բաղադրիչի կազմում, չի կարող ամբողջական լինել և ուսուցման նկատմամբ նման մոտեցմամբ արդյունավետությունը կնվազի (**Педагогические технологии, 2002**):

Համապատասխանաբար ուսուցման ինտեգրատիվ մոտեցումը պետք է ներառի երեք մակարդակ:

Ինտեգրացիայի առաջին մակարդակը միավորում է գեղարվեստական գրագիտության բաղադրիչները: Այդ մակարդակում տեղի է ունենում տեսությունների՝ պրակտիկայի և դասավանդման մեթոդների միջև զուգորդական կապի իրականացումը: Այդ ամենը ձևավորում է ուսանողների առավել բարձր գեղարվեստական գրագիտություն, օգնում է արվեստի տեսության և պրակտիկայի լավ ընկալմանը:

Ինտեգրատիվ ուսուցման երկրորդ մակարդակը որոշում է ուսանողներին գեղարվեստական արվեստն ուսուցանելու գործընթացի յուրօրինակությունը:

Ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծ մասամբ կախված է մեթոդների գործածումից, որոնք նպաստում են ստեղծագործության խթանմանը:

- Ինտեգրացման ուսուցման մեթոդ: Որպես օրինակ դիտարկելով գեղարվեստի ֆակուլտետը՝ ինտեգրացիոն ուսուցման մեթոդը կարելի է բնորոշել այսպես.

1. ինտեգրացիան կարող է լինել որպես ուսուցման նպատակ սովորողի մեջ շրջապատող աշխարհի մասին ամբողջական պատկերացում ձևավորելու համար,
2. որպես ուսուցման միջոց, երբ ինտեգրացիան հանդես է գալիս որպես գեղարվեստական արվեստի վերաբերյալ առարկայական գիտելիքների ընդհանուր բազա ստեղծելու միջոց:

Ուսանողների ստեղծագործական ընդունակությունների խթանումը կարևոր է առավել ևս, որ և՛ մանկավարժական, և՛ գեղարվեստական գործունեությունները, ըստ իրենց բնույթի, ստեղծագործական են համարվում: Ուսումնական գործընթացի երկու՝ սովորեցնող և ստեղծագործական կողմերի համախմբումը նպաստում են ուսանողների հետագա մանկավարժական գործունեության ոճի ձևավորմանը (**Бакушинский А., 1986**):

Գեղարվեստի ֆակուլտետում գեղարվեստական փուլի առարկաները ընդհանուր համակարգի մասն են կազմում: Հազուստի մոդելավորման համալիր ուսուցման ընթացքում առանձնանում են այնպիսի հիմնական առարկաներ,

ինչպիսիք են գծանկարը, գեղանկարչությունը, դեկորատիվ կիրառական արվեստները, կոմպոզիցիան և այլն: Ինտեգրացիոն ուսուցումը իրականանում է մի քանի ուսումնական ուղղությունների՝ որոշակի ձևով կազմակերպված գործընթացի օգնությամբ: Ինտեգրացիայի արդյունքում առաջանում է գիտելիքների այնպիսի մակարդակ, որը անհնարին կլինեք ստանալ մի առարկայի ուսուցման ընթացքում:

Գծանկարի, գեղանկարչության, դեկորատիվ կիրառական արվեստի ուսուցումը կրում է ինտեգրացիոն բնույթ, քանի որ ներառում է բազմաթիվ հոգեբանական բաղադրիչներ, որոնք խթանում են հագուստի մոդելավորում համալիր դասընթացի ստեղծագործական գործընթացը (Салтыков А., 1969):

Հատուկ հագուստի մոդելավորման դասընթացի համակարգում ինտեգրատիվ ուսուցում կազմակերպելու համար անհրաժեշտ է ըստ կոնկրետ առարկաների բազմաթիվ գիտելիքներից ընտրել այն, ինչը կարող է ուսուցման օբյեկտ հանդիսանալ հաջորդ աստիճանի համար: Ինտեգրատիվ ուսուցման արդյունքում հագուստի մոդելավորում համալիր դասընթացը ձեռք է բերում ամբողջականություն, որի արդյունքում ձևավորվում է սովորողների գիտելիքների համակարգայնությունը: Ինտեգրատիվ գործընթացն իր մեջ ներառում է ուսումնական, գեղարվեստական, ստեղծագործական, մանկավարժական գործունեություն: Նման գործընթաց կազմակերպելու համար անհրաժեշտ է ամբողջական գիտելիքների համակարգի կազմում, որոնք համագործակցում են և ունեն ընդհանուր նպատակներ: Ուսուցման նպատակները հանդիսանում են ուսումնական գործընթացի համակարգող գործոն: Ինտեգրատիվ ուսուցման համար բնութագրական է միասնական մեթոդական համակարգի բոլոր բաղադրիչների համադրությունը:

Ուսանողների ինտեգրատիվ ուսուցումը համարվում է ինչպես առարկայական, այնպես էլ անձնական սկզբնաղբյուր: Դասախոսի ստեղծագործական ընդունակությունները հանդիսանում են նրանց միավորող հատկանիշ: Համապատասխանաբար, կերպարվեստի դասավանդման

մեթոդիկայի ուսուցման նպատակն է կրթել պրոֆեսիոնալ ստեղծագործող և ակտիվ ուսուցիչ, որը ընդունակ կլինի կերպարվեստի դասերն անցկացնել պատշաճ մակարդակով և կատարելագործել անհատի ստեղծագործական հատկանիշները (**Поиск развития...**, 1999):

Ուսուցման գործընթացում այլ համակարգող գործոն է գիտության և արվեստի համար համընդհանուր մեթոդների գործածումը: Գեղարվեստական գրագիտության կառուցվածքում մոդելավորողները ներառում են երկու բաղադրիչ, որոնք պայմանականորեն կարելի է վերագրել ռեալիստական արվեստի գիտելիքներին և հմտություններին: Տեսական գիտելիքների կազմում են ներառված կոմպոզիցիայի, հեռանկարի, լուսաստվերի համաչափության օրենքները: Հմտության կազմի մեջ են ներառված գծին և նրբագծին, տարբեր գեղարվեստական նյութերին և տեխնիկային տիրապետելը: Ձևավորվելով որպես գիտական կատեգորիա՝ գեղարվեստական գրագիտությունը դարձել է հագուստի մոդելավորողի արհեստավարժության չափանիշ:

Փորձագիտական ուսուցման գործընթացում ևս ուսանողների գործունեությունը կողմնորոշված էր դեպի ուսուցման ինտեգրալ մոտեցման ավելի ամբողջական իրականացմանը համակցված ազգային տարազի տեսագործնական ուսումնասիրությանը: Փորձնական հետազոտությունների համար, բացի ՀՊՄՀ գեղարվեստական կրթության ֆակուլտետում ներդրված և գործող ուսումնական պլաններից, ուսումնասիրություններ են կատարվել նաև Երևանի Ա. Տերտերյանի անվան արվեստի դպրոցում:

Ուսուցման գործընթացում «Հագուստի մոդելավորում» դասընթացները մշակվում էին համապատասխան ինտեգրացիայի օրենքների ինչպես տեսական, այնպես էլ գործնական պարապմունքների ժամանակ՝ թեմաների մեջ ներառելով ազգային տարրեր ներկայացնող վարժություններ:

Առավել օրինակելի էին հետևյալ թեմաներով առաջադրանքների կատարումները.

1. «Ազգային տարազի հանդեպ հայրենագիտական վերաբերմունքի դրսևորում»:
2. «Հայկական ազգային տարազի նկատմամբ հետաքրքրությունները և նրանում գեղագիտական ընկալումները»:

Առաջադրաքննի կատարման ընթացքում ուսանողները ի հայտ են բերել ինքնուրույնություն և ընդունակությունների բացահայտում ուսումնական գործընթացի համակցված տեսակների նկատմամբ: Ուսանողներին անհրաժեշտ էր ինքնուրույն ընտրել աշխատանքի միջոցներ, նախագծերում կատարման նպատակահարմար մոտեցում, ստեղծագործել դրանց հորինվածքային կառուցումները, թեմային համախառասխան ընտրել առաջադրանքի մատուցման ձևը՝ օգտագործելով գունագիտությունից և համակարգչային գրաֆիկայից ունեցած գիտելիքները:

- Ցածր մակարդակին համապատասխանող աշխատանքներում առաջադրանքների կատարման ժամանակ բնութագրական է օրինակներում թերացումները, որոնք վերաբերում են ձևերի, գունային որոշումների համակցման թերացումներին, ձևերի, գունային որոշումների համակցման անորոշությանը առանց դրանց իրականացման մեջ արմատական փոփոխություններ մտցնելը: Այս մակարդակին համապատասխանում էին կարծրատիպային լուծումների ձգտող ուսանողների աշխատանքները: Նման աշխատանքներում առկա էր մտածողության որոշակի իներցիա. թույլ էին արտահայտված ավանդույթները, բարեփոխումները և անհատական դրսևորումները:
- Միջին մակարդակի աշխատանքներում թեմային առնչվող տարրերը համակցված էին դրանց կիրառման, ձևի, գաղափարի ուղղությունների բարեփոխման հետ:

Աշխատանքների կատարման գործընթացում ուսանողները դրսևորվել են նկատելի երևակայություն, տարաբնույթ մտածելակերպ, հորինվածքի զգացողություն, համաչափության և հարաբերությունների համեմատականություն:

- Բարձր մակարդակը բնորոշ էր այն ուսանողներին, որոնք ազատ օգտագործել են գեղարվեստական-գրաֆիկական նյութը և միջոցները, ինքնուրույն են և յուրօրինակ, որից բխում է ազգային տարազի առանձնահատկությունների կիրառումը իրենց նախագծերում: Պահպանվել են աշխատանքի կատարման հաջորդականության կանոնները: Նախագծումների գրաֆիկական ձևավորումը համապատասխանում էր հորինվածքին ներկայացվող պահանջներին, այդ թվում նաև գունային լուծումները: Աշխատանքում դրսևորված է ստեղծագործական մոտեցում:

Ուսանողների գեղարվեստաստեղծագործական գործունեության մակարդակները «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացում որոշարկելու համար օգտագործվում են տարբեր ձևատեսություններ: Ուսանողներին առաջադրվում են համապատասխան խնդիրներ, օրինակ՝ քննարկվող նյութի համար ինքնուրույն կազմել հարցաշար և այն իրագործել գործնական աշխատանքում: Կենսունակ կապի հիմքում դրվում է նախքան պարապմունքը ուսանողների կողմից առաջ քաշված հարցերի և խնդիրների առաջադրում: Հարցերի պատասխանները պետք է լինեն հստակ, հակիրճ՝ մեկ-երկու բառերով տևողությամբ: Յուրաքանչյուր պատասխան կամ խնդիր գնահատվում է առանձին: Հնարավորության դեպքում հարցեր ուղղվում են բոլոր մասնակիցներին՝ ներգրավելով նրանց ուսումնական գործընթացի մեջ:

Այս եղանակի կիրառման դեպքում նպաստավոր պայմանների ստեղծումը հանգեցնում է ճանաչողական գործունեության առավել արդյունավետությանը, ապահովում ուսումնական գործընթացի հրապարակային, բաց գնահատումը, թույլ տալիս որոշարկել գիտելիքների թերացումները, նկատելի դարձնել ուսանողների հեղինակությունը, հատկապես նրանց, որոնք հարցերի լուծման ժամանակ դրսևորել են ինքնատիպություն, ճանաչողական ու ստեղծագործական կարողություններ ու հմտություններ, հատկապես եթե խնդիրը տրամաբանական կապի մեջ է ուսուցանվող նյութի ու աշխարհընկալման հետ:

Պետք է նաև նշել, որ այս եղանակը համադրում է ուսումնական գործունեության ստուգողական գործառույթունը, վստահելի հարաբերություններ ստեղծում ուսանողի և դասախոսի միջև:

Նման իրավիճակում որոշակի սահմաններում պետք է առաջադրանքների ազատ ընտրության հնարավորություն տալ՝ նրանց հետաքրքրություններին և կարողություններին համապատասխան:

Հագուստի նախագծման առաջադրանքների ազատ ընտրության ընձեռած հնարավորությունը կարող է ուսուցման անհատականացման հիմք ծառայել, որի դեպքում ուսանողը կարող է որոշակի մակարդակի ինքնակառավարման գործընթաց սկսել իր նախասիրած անհատական առանձնահատկություններով: Այս եղանակն իր յուրաքանչյուր աստիճանում ենթադրում է ներդաշնակություն ուսուցանվող նյութի իմաստավորման, վերլուծական և ընդհանրական եղանակների տարբեր կիրառություններում: Ստեղծագործական կարողությունների ձևավորման և զարգացման մեջ անհրաժեշտ արդյունքների կարելի հասնել՝ պահպանելով ուսուցանվող նյութի և այլ ոլորտների գիտելիքների կենսունակ կապի պայմանները:

Ներկայումս լայն տարածում են գտել ուսումնական տեխնիկական և էլեկտրոնային միջոցները, ինչն առկա է նաև «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացում: Նրանց մեջ, որպես կանոն, մտնում են գեղարվեստական նախագծում տպագիր հիմքով առաջադրանքների շարք, պատահաններ, ցուցադրումներ, տեսանյութեր, որոնք վերբերվում են դասավանդվող առարկայի տարբեր ուսումնական թեմաներին: Նրանց հիմնական նպատատակն է՝ ուսումնական նյութի յուրացման ժամանակ խթանել սովորողների երևակայությունը, մեծացնել յուրացման գործակիցը (**Савенкова Л., 2000**):

Դասընթացի մատուցման տվյալ եղանակը, որը ներգրավված է ուսումնական գործունեության մեջ, պետք է իրականացնի իրեն հատուկ գործառույթ, որն ունի մեթոդական մեծ նշանակություն, քանի որ սովորողների վերլուծական ուսուցման

մեջ ներգրավվածության աստիճանն ուղիղ համեմատական է գիտելիքների յուրացման արդյունավետությանը, ամբողջականությանն ու հաստատունությանը: Այդպիսի մեթոդների իրացումը նախատեսում է ուսուցման գործընթացի առանձնահատկություններ, նպաստելով ուսանողների որակների զարգացմանը՝

- ազգային տարազի հանդեպ գեղագիտական վերաբերմունքի ձևավորում,
- ուսանողների հետաքրքրությունների և պահանջմունքների բավարարում հայկական ազգային տարազի նկատմամբ,
- ուսանողների ենթամշակութային ուղղվածության զարգացում,
- ուսանողների գեղագիտական ընկալման ակտիվացում ազգային ավանդույթների նկատմամբ,
- ուսանողների ստեղծագործական և հուզական վերաբերմունքի զարգացում՝ ազգային տարազի ուսուցմամբ:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Վերը շարդրվածից հետևում է, որ ազգային արվեստի ցանկացած տեսակում անհրաժեշտ է տեսական գիտելիքների, գեղարվեստական արտահայտչամիջոցների, գործնական տեխնիկական եղանակների որոշակի քանակի յուրացում:

Մասնագիտական կրթական գործընթացում մեծ նշանակություն է տրվում ուսուցման բովանդակությանը և մեթոդիկային: Հագուստի գեղարվեստական նախագծման մեթոդիկա ասելով՝ հասկանում ենք մանկավարժի հետևողական և կանոնավոր գործողությունների կապակցված համակարգ, որը կազմակերպվում է սովորողների գործնական և ճանաչողական գործունեությունն անհրաժեշտ տեսական գիտելիքների, գործնական կարողությունների և ունակությունների, արհեստագործական պատկերային կառուցվածքի յուրացման ուղղությամբ:

Առանց իմանալու աշխատանքի տեխնոլոգիան, այն հոգեբանական գործընթացները, որոնք տեղի են ունենում գեղագիտական գործունեության ժամանակ, չի կարող ձևավորվել գիտելիքի և հմտության համակարգ: Գեղագիտական գիտելիքների և հմտության համակարգի ձևավորման

գործընթացը ուղղակիորեն կապված է մանկավարժի մեթոդական գիտելիքների և հմտությունների հետ:

Հագուստի նախագծման և մշակման տեսակների ուսուցման մեթոդների կիրառման հետևողականությունը և լրակազմությունը պետք է նպաստեն գիտելիքների, աշխատանքային հմտությունների և ունակությունների յուրացմանն ուղղված մեթոդներից դեպի ստեղծագործական ընդունակությունների ձևավորման մեթոդների անցմանը: Համառ զարգացման, պատրաստի հագուստի գեղարվեստական նախագծման նպատակին ուղղված աշխատանքը պետք է դրված լինի ուսուցման գործընթացի հիմքում:

Ելնելով այս նպատակից՝ «Հագուստի մոդելավորում» առարկայի դասավանդման մեթոդիկական ուսուցման մեջ պետք է կողմնորոշվի հետևյալ գլխավոր ուղղություններով.

- գեղարվեստա-ստեղծագործական, անհատականությամբ արտահայտված սովորողի անձի ընդունակությունների զարգացումը, իր կողմից ստեղծագործական ինքնաարտահայտման մեթոդների և եղանակների յուրացումը,
- նյութական և հոգևոր մշակութային արժեքների ուսումնասիրումը, ինչպես նաև նրանց վերաստեղծումը:

Հագուստի դիզայնի հիմնական մեթոդ է հագուստի մոդելավորման կոմպոզիցիան՝ որպես հիմք ներառելով գրաֆիկական պատկերացումը, որը ձևավորում է մտահղացումը, նախագծումը և տեխնոլոգիան: Նախագծումը, կոնստրուկտիվ մոդելավորումը, այնուհետև արտադրանքի կարումը համալիր գործընթաց է, որը միավորում է որոշակի խնդիրներ.

- ճաշակի զարգացումը,
- ստեղծագործական նախաձեռնության զարգացումը,
- նախագծումը, կանացի հագուստի ուրվագծի վերլուծումը,
- ձևվածքի, հատկապես բարդ ձևվածքի ստեղծումը,

- նոր արտադրանքի գեղարվեստական կերպարի պատկերացման ձևավորումը,
- երևակայության զարգացումը,
- հագուստի հարդարումը դեկորատիվ տարրերի միջոցով:

Հագուստի գեղարվեստական մոդելավորումը ուսուցման հիմնավոր գիտելիքների ճյուղ է, որը զարգացնում է գեղարվեստական մտածողությունը, ձևավորում է գեղարվեստական ճաշակը, բարձրացնում է մտածելակերպի արգասավորությունը և հնարամտությունը, եթե ուսուցման գործընթացը կազմակերպվում է համապատասխան մեթոդներով և տեխնոլոգիական պահանջներով:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դավթյան Մ., Գրիգորյան Ք., Արնաուդյան Ա., Ջոհրաբյան Ա. (2007), Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Երևան, «Այոեքս» հրատ.:
2. Бакушинский А. (1986), Исследование и статьи: Избранные педагогические труды, Москва, Изд. “Советский художник”.
3. Готтенрот Ф. (2009), Всеобщая история стиля и моды, Москва, Изд. “Эксмо”.
4. Педагогические технологии (2002), Учеб. пособие для студентов педагогических специальностей под ред. В. С. Кукушкина, Ростов на Дону, Изд. «Март».
5. Поиск развития личности учащихся на путях межпредметной интеграции (1999), Сб. научных трудов под ред. Черного С. Г., часть 1, Москва. Изд. Эксмо-Пресс.
6. Салтыков А. (1969), Самое близкое искусство, Москва, Изд. “Просвещение”.

7. **Савенкова Л.Г (2000)**, Человек в пространстве мира и культуры. Интегрированный полихудожственный подход к преподаванию изобразительного искусства, Москва, Изд. “МАГИСТР-ПРЕСС”.

## REFERENCES

1. **Davtyan M., Grigoryan K., Arnaudyan A., Zohrabyan A. (2007)**, Krt'akargi mshakman & integrman motecowmne /Curriculum development and integration approaches/, Yerevan, “Airex”.
2. **Bakushinsky A. (1986)**, Issledovaniya i stat'i: Izbrannyye pedagogicheskiye trudy /Research and articles: Selected pedagogical works/, Moscow, “Soviet artist”.
3. **Gottenrot F. (2009)**, General history of style and fashion, Moscow, “Eksmo”.
4. **Pedagogical technologies (2002)**, Ucheb. posobiye dlya studentov pedagogicheskikh spetsial'nostey pod red. V. S. Kukushkina /Textbook for students of pedagogical specialties edited by V.S. Kukushkin/, Rostov-on-Don, Publishing Center “Mart”.
5. **Poisk razvitiya lichnosti uchashchikhsya na putyakh mezhpredmetnoy integratsii /Search for the development of students' personality through interdisciplinary integration/ (1999)**, Collection of scientific papers edited by S.G. Cherny, part 1, Moscow. Publishing house “Eksmo-Press”.
6. **Saltykov A. (1969)**, Samoye blizkoye iskusstvo /The closest art/, Moscow, “Education”.
7. **Savenkova L.G. (2000)**, Chelovek v pronstranstve mira i kul'tury. Integrirovanny polikhudozhnstvenny podkhod k prepodavaniyu izobrazitel'nogo iskusstva /Man in the space of the world and culture. Integrated polyartistic approach to teaching fine arts/, Moscow, “MAGISTR-PRESS”.

**Рипсима Маронян**

## **Методика и технология комплексного курса «Моделирование одежды»**

### **Заключение**

***Ключевые слова и выражения:** моделирование, методология, технология, интеграция, национальный, искусство, преподавание, курс, дизайн, художественный.*

В статье рассматриваются теоретические основы преподавания комплексного курса «Моделирование одежды» в контексте национального костюма. Предпринята попытка выявить проблемы обучения моделированию одежды студентов высших учебных заведений, их методическое и технологическое значение в процессе изучения национального костюма.

В соответствии с требованиями современной системы высшего образования необходимы новые подходы к преподаванию дисциплин «Композиция одежды» и «Дизайн одежды», способные успешно решать современные задачи художественного образования.

Эти новые подходы при преподавании комплексного курса «Моделирование одежды» должны отвечать современным требованиям профессиональной деятельности. Это следующие основные положения высшего образования:

- использовать полученные знания, умения и навыки в профессиональной деятельности,
- применять графические, изобразительные и пластические методы при разработке и оформлении оригинальных проектов,
- находить новые и креативные решения для каждого проекта,
- разрабатывать художественно-графические проекты одежды и воплощать их в материале,
- организовывать художественную, творческую, исполнительскую и инициативную деятельность.

Содержание изобразительного образования, а также преподавание комплексного курса «Моделирование одежды» должны способствовать формированию не только уважения и самосознания к своей нации, но и к всемирной истории и культурному наследию, а также осознанию национальных и общемировых ценностей, что расширит и обогатит кругозор учащихся.

**Hripsime Maronyan**

### **Methodics and technology of the comprehensive course “Fashion design”**

#### **Conclusion**

**Key words and expressions:** *modeling, methodology, technology, integration, national, art, training, course, design, artistic.*

The article discusses the theoretical foundations of teaching the complex course "Fashion design" in the context of national costume. An attempt has been made to identify the problems of teaching students in clothing modeling at higher educational institutions, their methodological and technological meaning in the process of studying national costume.

In accordance with the requirements of the modern higher education system, in modern times there is a need for new approaches to teaching "Clothing Composition" and "Fashion design", which are able to successfully solve modern problems of art education.

These new approaches during the teaching of the complex course "Fashion design" must comply with the modern requirements of professional activity. Such are the following main provisions of higher education:

- use the acquired knowledge, abilities and skills in professional activities,
- apply graphic, pictorial and plastic methods in developing and designing original projects,
- find new and creative solutions for each project,

- develop artistic and graphic designs of clothes and embody them in the material,
- organize artistic, creative, performing and initiative activities.

The content of artistic and aesthetic education, as well as the teaching of the complex course "Fashion design" should contribute not only to the formation of respect and self-awareness towards the national, but also towards world history and cultural heritage, as well as the recognition of national and global values, which will expand and enrich the students' ideas and horizons.

**Հռիփսիմե Մարոնյան** – Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Կերպարվեստի ամբիոնի դասախոս: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ հայ և համաշխարհային արվեստ, գրականություն: Հեղինակ է 6 հոդվածի: [maronyanhr@gmail.com](mailto:maronyanhr@gmail.com)

**Рипсиме Маронян** – Преподаватель кафедры изобразительного искусства факультета художественного образования АГПУ имени Хачатура Абовяна. Научные интересы: армянское и мировое искусство, литература. Автор 6 статей. [maronyanhr@gmail.com](mailto:maronyanhr@gmail.com)

**Hripsime Maronyan** – Lecturer at the Faculty of Art Education, ASPU named after Khachatur Abovyan. Scientific interests: Armenian and world art, literature. Author of 6 articles. [maronyanhr@gmail.com](mailto:maronyanhr@gmail.com)

*Խմբագրություն է ուղարկվել 27.02.2025թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 05.03.2025թ.*

*Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.*

## ՆԱԻՐԱ ՄԻՏԻԹԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈՒ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.136

## ԱՄՓՈՓՈՒՄ

Գեղարվեստական գործվածքներից գորգագործական մշակույթը՝ ազգային ժառանգության բնագավառը, պահպանելու և կարևորելու համար ուշադրությունը և մշակութային հնարավորությունները պետք է կենտրոնացնել կրթության ու գիտահետազոտական մեթոդներով ստեղծագործ մոտեցումներով դասվանդման, հատուկ ծրագրով քայլ առ քայլ իրականացման գործին: Գիտահետազոտական դասընթացները կնպաստեն գիտաշխատողների մոտիվացիային, նրանց կարգավիճակի արժանի գնահատականին և արժևորմանը: Այս ամենի իրականացումը խթան կհանդիսանա այս բնագավառը կարևորել, պահպանել, տարածել և նոր ժամանակակից սերնդին մշակութային այս արժեքի հավատարիմ ու գրագետ ժառանգորդը դարձնել:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** գորգագործություն, զարդամուրիվ, հորինվածք, խավածածկ, մշակութային ժառանգություն, հոգածություն, գիտաշխատող, կրթություն, սոցիալական:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խորհրդանշական զարդանախշերի ուրույն լեզվով խոսող ազգային մշակութային արժեքները՝ «Գոհարի, Անահիտի, Հռիփսիմեի» և հազարավոր անունների մատների շնորհիվ մեզ հասած բազմաթիվ գորգեր են՝ մանածագործական արտադրանքներ, որոնք գրանցվել են որպես հեթանոսական և հավատացյալ ազգի, արևելաքրիստոնեական եկեղեցիների պաշտամունքային իրեր: Գորգագործներ, ովքեր մարդկության պատմության

մեջ մեզ թողել են նյութական մշակութային հետք՝ որի շնորհիվ էլ պահպանվել և մեզ է հասել հայկական արվեստի մեծագույն ավանդը՝ գորգագործության մշակույթը: Այս մասին գրել է գերմանացի արվեստաբան Ֆոլքմար Գանցհորնը՝ «որ այդ մանածագործական արտադրանքները հավատացյալ քրիստոնյաների «անառարկայական սրբապատկերներ» են, արևելաքրիստոնեական եկեղեցիների պաշտամունքային առարկա և՛ այլ մանածագործական իրերի հետ մեկտեղ, հայկական արվեստի, թերևս, մեծագույն ավանդն է համաշխարհային արվեստի պատմության մեջ» (Գանցհորն Ֆ., 2013):

Գորգը կենցաղի հասարակ դրսևորում չէ: Այն չէին օգտագործում բոլորը: Նրա ծիսապաշտամունքային առարկա լինելու փաստը թույլ չի տվել, որ ամեն ոք նստի, քայլի կամ նայի գորգին: Այն համարվել է սրբազան տարածք, որի վրա իրավունք ուներ նստել, բազմել միայն քուրմը, սուրբը և առաջնորդը: Այս մասին գրառել են իրենց աշխատություններում շատ պատմաբաններ, մշակութաբաններ, գորգագետներ, հնագետներ (Պողոսյան Ա., 2013):

Ծիսական խորհրդանշական պատկերներն ու զարդերը պատկերվում էին և՛ գորգերի, և՛ հագուստների վրա, ինչն էլ վկայում է այն մասին, որ օգտագործված զարդերի նշանակությունները խիստ կապված էր մարդկանց, կենցաղի և կյանքի հետ: Ըստ ազգագրագետների և ուսումնասիրողների՝ հայկական գորգի առաքելությունը մարդու կյանքում ամփոփում է իր մեջ մարդկային պատմության հետ կապված տարբեր հավատալիքներ, ծեսեր (Պողոսյան Ա., 2013): Այդ նշանակություններով, իմաստաբանությամբ, կատարողական և որակային հատկանիշներով բնութագրվող գորգերը համարվում են սրբազան իրեր և մշակութային արժեքներ (Ավանեսյան Լ., 2020): Որպես այդպիսին՝ խիստ անհրաժեշտություն կա այս բնագավառի ուսուցումը պահպանելու և ընդլայնելու կրթական համակարգերում նոր մոտեցումներով և նպատակով:

Վերջին ժամանակների պետական կրթական ծրագրերում առկա ուսումնական պարտադիր դասընթացները՝ գորգագործության տեսական և գործնական պարապմունքները, վերը նշված արժեքների ու կարևորությունների մասին բուռն հետաքրքրություն և սրտացավ մոտեցում են արթնացրել երիտասարդ սերնդի մոտ: Համալրվել են երիտասարդական խմբեր, որոնք պատրաստական վերականգնում, զարգացնում, կրթում և տարածում են այս խիստ կարևոր մշակութային ժառանգությունը: Կրթական համակարգում դասընթացների շնորհիվ ձգտում ենք իրականացնել ազգային արժեքներին վերաբերվող բնագավառների դասավանդման նոր հետազոտական մեթոդներով մոդելներ, ստեղծել արդյունավետ մատուցման մանկավարժական հետազոտական և լաբորատոր պայմաններ՝ վերլուծելով սովորողների ազգագիտակցության ձևավորմանը նպաստող կամ խոչընդոտող օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները:

Ուսումնական հաստատությունների ծրագրերի իրականացումը կապել թանգարանների «Հայկական գորգեր» գիտահետազոտական ուսումնական բաժինների հետ: Այն կհանդիսանա շարժիչ ուժ նոր ժամանակակից տեխնոլոգիաներով հարուստ հնարավորությունները կիրառել գորգագործության բնագավառի կրթական ծրագրերի զարգացման համար, ինչն էլ կապահովի այդ բնագավառի պահպանմանը, զարգացմանը, տարածմանը, մասնագիտական աշխատանքի ապահովմանը և սոցիալական հարցերի բարելավմանը:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Հետազոտությունն անցկացվել է ուսումնական, գործնական, համադրական, վերլուծական մեթոդների կիրառմամբ, որի նպատակն է համակցված մեթոդի շնորհիվ զարգացնել, բարելավել և ընդլայնել այս բնագավառի մասնագիտացված գիտահետազոտական ճյուղը:

## ՔՆՆԱՐԿՈՒՄ

Վերհանելով կրթական հետազոտական դասընթացի խնդիրներն ըստ գործառույթների՝ նպատակ է հետապնդում միավորել բոլոր հայկական գորգերի ֆոնդերը՝ որոշակի իրական և ամբողջական էլեկտրոնային տարբերակով մեկ տեղում, որի արդյունքում ստեղծել գիտահետազոտական ուսումնական կենտրոն և հանձնախումբ այս մշակութային ժառանգության մասսայական ուսումնասիրության և պրակտիկ գործունեության վարման և պահպանման համար: Վերլուծվել և քննարկվել է գիտահետազոտական մեթոդով դասավանդելու խնդիրները, գրանցվել արդյունքներ տարբեր կրթական կենտրոններում և նրանց հետ համագործակցությամբ անցկացրած դասընթացների հիման վրա: Համեմատել և վերլուծել լավագույն արդյունքները, հիմնովին տրամադրել գործածության մասնագիտական կրթական ծրագրերում, որոնք կապահովեն լուծել և գնահատել առաջադիր խնդիրները և նպատակները:

Քննարկումների և վերլուծությունների ընթացքում գրանցվել են ուսումնական արդյունքների գնահատման չափանիշներ, օրինաչափություններ, գիտելիքի նորովի ձեռքբերման արդյունավետություն: Ուսումնական արդյունքների գնահատումը նպատակային էր. ստուգել և մոտիվացնել սովորողի կարողությունները, հմտությունները, ստեղծագործական հնարավորությունները և ստեղծագործական ունակությունների զարգաման փուլերը: Ըստ վերջնարդյունքների վերլուծության՝ գրանցվեցին արժեքների ձևավորման հարցում ձեռքբերումները և դիրքորոշումները: Գնահատման համակարգված ձևերը խթանեցին պարզ մատուցել և հասանելի դարձնել ուսանողին իր իսկ ձեռքբերած հմտությունները, կարողություններն ու գիտելիքը:

Արդյունավետությունը ապահովելու և հիմնավորելու համար գիտահետազոտական կրթական ծրագիրը փորձում ենք անցկացնել Հայաստանի տարբեր մարզերում կրթական կառույցների հետ, որը կունենա

շարունակական բնույթ մասնագետներին ներգրավելու պարտադիր գիտական աշխատանքի մեջ, գրանցելով գեղարվեստական գործվածքների ստեղծմանը վերաբերվող փորձարարական դասընթացների փաստացի արդյունքներ: Կրթական համալիրներում և տարբեր կազմակերպություններում անցկացվող դասընթացները կլինեն փոխկապակցված և կհետապնդեն վերը նշված նպատակն ու խնդիրները: Դասընթացները կներկայացնեն գորգագործության ակունքները գորգարվեստի բարձր ու նոր տեղեկատվատեխնոլոգիական նվաճումներով հարուստ հնարավորությունները: Այս բնագավառում ընդգրկված տարբեր մասնագետներ հետազոտական աշխատանքների, գորգերի հավաքագրման, ուսումնասիրության վերլուծական դասընթացների միջոցով կիրականացնեն գիտահետազոտական աշխատանք, որի արդյունքում կկազմվի կրթական համագործակցային ծրագիր: Գիտահետազոտական դասընթացները՝ տեղեկատվական, գործնական և փորձարարական գործընթացներով, հագեցած նոր ժամանակի միտումներով և տեխնոլոգիաներով կնպաստեն բնագավառի զարգացմանն ու պահպանմանը: Այս բնագավառի գրագետ և նորովի մատուցումը կապահովի հետաքրքրություն և մեծ պահանջարկ մշակութային այս արժեքի կիրառելիությունը տարածելու և ժամանակակից պահանջներին համապատասխան լուծումներով ծառայելուն, ինչպես նաև ազգային ավանդույթներն ու արժեքները պահպանելու համար:

Դարեր շարունակ Հայաստանում գորգարտադրության զարգացումը պայմանավորված էր հայկական լեռնաշխարհում թելի հումքի՝ բրդի, բույսերի, հանքաքարերից, միջատներից ստացվող ներկանյութերի առատությամբ: Նպաստող միջոցները հնարավորություն էին տալիս, ոչ միայն այդ հումքը արտահանվեր, այլ նաև զարգանար և լուրջ հիմքերի վրա դրվեր գորգարտադրությունը: Աշխարհում հայկական գորգերի պահանջարկը բարձր է եղել, այդ պատճառով այս մասնագիտությունը եղել և մշտապես մնացել է պահանջված: Դրա մասին է վկայում Վ. Թեմուրճյանը՝ իր աշխատության մեջ նշելով, որ դեռևս 8-րդ դարում (մ. թ.) պատմական Հայաստանում տարածված

է եղել կապերտագործությունը, որը դեռ գորգագործություն չէր (**Թեմուրճյան Վ., 1955**), **Աբրահամյան Վ., 1956**): Այդ մասին հիշատակում է նաև Լ. Ավանեսյանը իր հայկական գորգերի զարդաձևերի ծագումնաբանությունն ու իմաստաբանությունը աշխատության մեջ (**Ավանեսյան Լ., 2020**):

Կարպերտագործության առանձին ճյուղերի զարգացման հետ միասին, զարգացել է նաև գորգագործությունը: Ըստ արաբական և բյուզանդական պատմիչների վկայությունների՝ 9-13-րդ դդ. միջնադարյան Հայաստանում հատկապես Դվին, Կարս, Արճեշ և այլ քաղաքներում, տարածված է եղել գորգագործությունը՝ որպես պրոֆեսիոնալ արհեստ (**Թեմուրճյան Վ., 1955**): Հետագայում հայկական գորգերը թե՛ իրենց զանազան տեսակներով և թե՛ լավ որակով հայտնի են դառնում ամբողջ Արևելքում: Ինչպես հին ժամանակներում այնպես էլ մեր դարաշրջանում այս բնագավառում վարած գործունեության արդյունքները հիմնավորում են այն փաստը, որ Հայաստանում գորգագործությունն անընդհատ կապված է եղել հարևան երկրների առևտրային, տնտեսական, դիվանագիտական փոխհարաբերությունների պահպանման և վարման հետ: Այս մասին հետաքրքիր վերլուծություններ և տեղեկություններ է ներկայացրել (**Աբրահամյան Վ., 1956**): 1940-ական թթ. պատմական, քաղաքական ուսումնասիրություններից ելնելով՝ նկատվում է, որ այս բնագառն իր գործունեությունը վարել է ԽՍՀՄ լիիրավ թելադրանքով և ծրագրով: Ինչի մասին փաստում են այդ ժամանակաշրջանի գորգանկարիչների կատարած պետական պատվերների շրջանակներում արված աշխատանքները (**Հայգորգմիավորում, 1986**):

Այդ ժամանակաշրջանի գորգարտադրող գործարաններում, որ կոչվում էր «Հայ Գորգ», արտադրվում էին համարյա թե պարսկական զարդամոտիվներին նմանվող գորգեր: Հին հայկական մոտիվներով և ոճավորված հորինվածքներով գորգեր շրջանառվում էին շատ քիչ, մեծամասնությունը գործվում էին ըստ հատուկ պատվերների և տնայնագործների ձեռքով, որոնք մեծ քանակությամբ պահպանվում են Հայաստանի թանգարանների

պահոցներում: Խորհրդային միության փլուզումից հետո՝ դեռ 2000 թ.-ից սկսած բացահայտ փորձեցին ներկայացնել միայն բուն հայկական մոտիվներով և բացառիկ տեսակի խորհարդանշական զարդանախշային ոճերով գորգերը: Նույնիսկ թանգարանների պահոցներից դուրս բերվեցին գորգեր, որոնք տարիներ շարունակ չէին հանրայնացվում: Այդ ժամանակաշրջանի ուսումնասիրությունները հստակ ապացուցում են այն մասին, որ հայկական գորգերի հորինվածքները, թեմատիկ խորհրդանշական և ոճային տեսքը խորհրդային միության ժամանակաշրջանում գործած և աշխարհին ներկայացված ու միջազգայնացված գորգերը բավական տարբերվում են բուն հայկական գորգամշակույթին բնորոշ տեսակներից: Դրանք նույնիսկ տարբերվում էին կատարման տեխնիկայով՝ մեկուկես հանգույցով, այնինչ հին հայկական գորգերը գործվել են կրկնակի հանգույցով:

Սկսած 1990-ական թթ.՝ կենցաղից, կարողություններից և մշակույթից դուրս մղեցին ձեռագործ գորգերը: Ուսումնասիրությունները պարզ ու հասկանալի են դարձրել գորգագործության բնագավառում եղած և առաջացած հիմնահարցերն ու խնդիրները: Գովելի է, որ գորգագործության բնագավառում կատարած աշխատանքների արդյունքում այդ տարիներին անհատ ձեռներեցները հետապնդելով սեփական շահը, ինքնաբերաբար հանգել են սոցիալ-հասարակական հարցերի որոշակի բարելավման: Սակայն նրանց տարիների գործունեությունը միայն հիմնավորել է և վերականգնել է կրկնակի հանգույցով գործելու տեխնիկական կատարումը, բայց չի ծավալել որևէ գիտական, ուսումնական մոտեցում և հիմնավոր գիտահետազոտական գործունեություն: Կրթական ոլորտում գիտական հիմքերի վրա դրված ծրագրերի իրականացումը նպաստում է այդ խնդրի լուծմանը: Կրթական ծրագրերն են, որ խորը ուսումնասիրությունների հիման վրա վերհանում և վերաիմաստավորում են հայկական գորգերի հորինվածքային, զարդանախշային, տեխնիկական կատարման խորիմաստ, ազգային պատկանելության իմաստաբանական գաղափարները:

Կրթական ծրագրերը և դրանց իրականացումը արհեստագործական կենտրոնների հետ կհիմնավորի գործնական լիարժեք կատարումների արդյունավետությունը գորգագործության տեխնիկական կատարումները, թելի մշակման, ներկման և դասակարգման տեխնոլոգիական գիտելիքներն ու խնդիրները: Կրթական ծրագրերով դասավանդվող թեմաների միջոցով հիմնավոր գիտելիք կտրամադրվի գորգի պատմաշխարհագրական, իմաստաբանական, հորինվածքային կառուցվածքի և զարդանախշերի խորհրդանշական գաղափարային բովանդակությունների մասին, ինչը հիմնավորում է հայկական գորգարվեստի բնութագիրը (Ավանեսյան Լ., 2020): Նման մոտեցումով և ծրագրով դասընթացները չեն կարող հետաքրքրություն և շարունակական արդյունավետություն չապահովել հետաքրքրվող մեծ լսարաններին, որը կապահովի հայկական գորգարվեստի ձեռագիրը, ինքնատիպությունն ու առանձնահատկությունները պահպանելու հարցերը:

Գորգագործության ծրագիրն իրականացվում է ՀՊՄՀ գեղարվեստական կրթության ֆակուլտետի կերպարվեստի ամբիոնի դեկորատիվ-կիրառական արվեստ բաժնի դասընթացներին: Բարձրակարգ գիտելիքներ գորգագործության, կարպետի, նախագծման, տեխնիկական նկարի ավանդական և ժամանակակից ձևերով քարտեզների պատրաստման, թելի մշակման, ներկման և տեխնիկական կատարման բոլոր հմտությունների, տեսական գիտելիքի լիարժեք և բացառիկ տիրապետման հնարավորությունը կկարգավորի բոլոր այն խնդիրների լուծումները, որոնք առաջացել են այս տարիների ընթացքում: Առաջարկում եմ նաև քննարկման և հաստատման դնել դասավանդման այս ձևը, ըստ որի՝ այս ծրագրով մասնագիտական կրթական որակավորում ստացած մասնագետները աշխատանքային պայմանագրով պարտադիր երկամյա աշխատանք կատարեն Հայաստանի այն շրջաններում, որոնք, ըստ ուսումնական ծրագրի, կհամագործակցեն բուհի և Հայաստանի գորգի պետական գիտահետազոտական կրթական ծրագիրն իրականացնող ուսումնական կառույցի հետ: Այս միջոցով նաև

փոխհամագործակցություն և բարելավում կլինի շրջանների ուսումնական կենտրոնների և բնակչության գործունեության հետ:

Շահեկան կլինեք հայկական գորգի պետական կրթական ծրագրով իրականացվող գիտահետազոտական դասընթացները լինեին պետության, կրթության, սպորտի և մշակույթի նախարարության և այն շահագրգիռ անձանց ուսումնասիրության և հոգաձության տակ, որոնք իսկապես մտածում են ազգային ինքնությունը պահելու և շարունակելու մասին: Քանի որ գորգագործությունը այն բնագավառներից մեկն է, որն իր մեջ ներառում է ողջ ձեռագործ արհեստների բուն իմաստը՝ ազգագիտակցության և ազգաճանաչողության հիմքը, ազգային ավանդույթներն ու սովորույթները, որոնցից էլ բխում են ազգանպաստ որակներն ու հատկանիշները ձևավորելու, պահպանելու, հիմնավորելու հարցը: Իր իմաստաբանությամբ, խորհրդատվությամբ, ազգային արժեքների և խորհրդանշանների ներկայացմամբ ու պահպանմամբ այս բնագավառի կարևորությունը պետք է պահել պետության հոգաձության առաջնային դիրքերում: Խնդիրներ, որոնք կարևորություն են Հայաստանում այս բնագավառի հետևողական, շարունակական գործունեության ընդլայնման և պահպանման համար: Կրթական ծրագրի հետ պետք է կանոնակարգված աշխատեն գիտաշխատողներ, գորգագործության բնագավառին համապատասխան տարբեր մասնագետներ և պատմաբաններ: Այդ աշխատանքի արդյունքում փուլ առ փուլ կկարգավորվեն մշակութային արժեքների պահպանման, տարածման հարցերը, շարունակական լուծում կստանան սոցիալ-հասարակական, տնտեսական խնդիրները, որի արդյունքում էլ կպահպանվի՝ հիմնավոր կներկայացվի հայկական գորգի ինքնատիպ ու անկրկնելի տեսակը:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Մշակույթի ոլորտի գործունեության գնահատման չափանիշների ներկայիս համակարգում գորգագործության բնագավառին վերաբերվող կրթական բոլոր հնարավորությունները անհրաժեշտություն ունեն բերել պետական,

կառավարական հոգաձության դաշտ: Որը պարարտ հող կդառնա յուրաքանչյուր թաքնված ռեսուրսների բացահայտման, բարելավման և այս բնագավառի հարցերի ու խնդիրների համալիր բազա ստեղծելու գործի համար: Մշակույթի կառավարման համակարգին առնչվող յուրաքանչյուր աշխատանքի ներկայիս պաշտոնական չափանիշները հաշվի առնելով, ներկայացնում եմ այս հակիրճ հոդվածը «Հայկական մշակութային արժեքները կրթության և պետության հոգաձության ներքո» խորագրով իմ մտահոգ առաջարկը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբրահամյան Վ. (1956)**, Արիեստները Հայաստանում IV-XVIII դդ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Հայաստանի պատմության թանգարան:
2. **Ավանեսյան Լ. (2020)**, Հայկական գորգերի զարդաձևերի ծագումնաբանությունն ու իմաստաբանությունը, Երևան, Հայաստանի պատմության թանգարան:
3. **Դավթյան Ս. (1981)**, Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
4. **Դավթյան Ս. (1975)**, Հայկական կարպետ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ:
5. **Եղիազարյան Ա. (2002)**, Գործվածքագիտություն, Երևան, «Մանկավարժ» հրատ.:
6. **Թեմուրճյան Վ. (1955)**, Գորգագործությունը Հայաստանում, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
7. **Մնացականյան Ա. (1955)**, Հայկական զարդարվեստ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
8. **Պողոսյան Ա. (2014)**, Վասպուրականի հարավ-արևելյան գավառների հայոց գորգագործական մշակույթի մասին, Երևան, «Բանբեր Հայագիտության», ՀՀ ԳԱԱ հրատ.:

9. **Ստեփանյան Ա. (2007)**, Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը, (Ծիսային, գունային, և նշանային համակարգեր), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
10. **Ֆոլքմար Գանցհորն (2013)**, Քրիստոնեա - Արևելյան գորգը Հայաստանի պատմության թանգարան, Երևան:

## REFERENCES

1. **Abrahamyan V. (1956)**, Arhestnery' Hayastanowm IV-XVIII dd. /Crafts in Armenia IV-XVIII centuries/, Yerevan, History Museum of Armenia, Armenian Soviet Socialist Republic AS.
2. **Avanesyan L (2020)**, Haykakan gorgeri zardad'&eri c'agowmnabanowt'yownn ow imastabanowt'yowny' /The Origin and Semantics of Ornamental Forms of Armenian Carpets/, Yerevan, History Museum of Armenia.
3. **Davtyan S. (1981)**, Drvagner haykakan mijnadaryan kirar'akan arvesti patmowt'yan /Episodes in the History of Armenian Medieval Applied Art/, Yerevan, NAS RA.
4. **Davtyan S. (1975)**, Haykakan karpet /Armenian carpet/, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR.
5. **Yeghiazaryan A. (2002)**, Gorc'vac'qagitowt'yown /Textile Science/, Yerevan, "Mankavadzh" Publishing House.
6. **Temurchyan V. (1955)**, Gorgagorc'owt'yowny' Hayastanowm /Carpet Weaving in Armenia/, Yerevan, Academy of Sciences of the Armenian RA.
7. **Mnatsakanyan A. (1955)**, Haykakan zardarvest /Armenian Decorative Art/, Yerevan, Academy of Sciences of the Armenian RA.
8. **Poghosyan A. (2014)**, Vaspowrakani harav-ar&elyan gavar'neri hayoc gorgagorc'akan mshakowyt'i masin /On the Armenian carpet weaving culture of the southeastern provinces of Vaspurakan/, Yerevan, "Banber Armenian Studies", NAS RA.

9. **Stepanyan A. (2007)**, Ornaments of Armenian Folk Costume, (Ritual, Color, and Symbolic Systems), Science, Yerevan, NAS RA.
10. **Volkmar Gantzhorn (2013)**, Qristonea - Ar&elyan gorgy' Hayastani patmowt'yan t'angaran /Christian - Oriental Carpet/, Yerevan, History Museum of Armenia.

**Наира Мхитарян**

### **Культурные ценности в образовании и государственной заботе**

#### **Заключение**

***Ключевые слова выражения:** ковроткачество, искусство, мотив орнамента, узел, художественная ткань, культурное наследие, прикладной, исследователь, образование, социальный.*

Чтобы сохранить и подчеркнуть культуру художественного ковроткачества, область национального наследия, внимание и культурные возможности должны быть сосредоточены на задаче обучения с творческим подходом, использованием образовательных и научно-исследовательских методов, поэтапной реализации по специальной программе. Научно-исследовательские курсы будут способствовать мотивации исследователей, достойной оценке и признанию их статуса. Реализация всего этого станет стимулом подчеркнуть, сохранить, распространить эту сферу и сделать новое современное поколение достойным и грамотным наследником этой культурной ценности. И действующей системе критериев оценки деятельности в сфере культуры все образовательные возможности, связанные с областью ковроткачества, необходимо отнести к сфере государственной, правительственной опеки. Что станет плодородной почвой для работы по обнаружению и улучшению каждого скрытого ресурса и созданию всеобъемлющей базы данных вопросов и проблем в этой области. Принимая во внимание действующие официальные стандарты для каждой работы,

связанной с системой управления культурой, я представляю эту краткую статью под названием «Армянские культурные ценности под опекой образования и государства» в качестве моего заинтересованного предложения.

**Naira Mkhitaryan**

### **Cultural values in education and state care**

#### **Conclusion**

**Key words and expressions:** *carpet weaving, fabric, ornament, knot, value, culture, heritage, researcher, specialist, education, social, method.*

In order to preserve and highlight the culture of artistic carpet weaving, the national heritage area, attention and cultural opportunities should be focused on the task of teaching with a creative approach, using educational and research methods, phased implementation according to a special program. Research courses will contribute to the motivation of researchers, worthy assessment and recognition of their status. The implementation of all this will be an incentive to emphasize, preserve, disseminate this area and make the new modern generation a worthy and competent heir of this cultural value. And in the current system of criteria for assessing activities in the cultural sphere, all educational opportunities related to the field of carpet weaving must be attributed to the sphere of state, government guardianship. Which will become fertile ground for work on discovering and improving each hidden resource and creating a comprehensive database of questions and problems in this area.

**Նաիրա Մխիթարյան** - Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ գեղարվեստական կրթության ֆակուլտետ, կերպարվեստի ամբիոնի դասախոս, ուսումնասիրությունների և հետաքրքրող բնագավառները՝ դեկորատիվ-կիրառական արվեստ, հեղինակ է 11 հոդվածի: [72naira@gmail.com](mailto:72naira@gmail.com)

**Наира Мхитарян** - преподаватель кафедры изобразительного искусства факультета художественного образования Армянского государственного университета имени Хачатура Абовяна, Области изучения и интересов: декоративно-прикладное искусство, автор 11 статей. [72naira@gmail.com](mailto:72naira@gmail.com)

**Naira Mkhitaryan** - Lecturer at the Department of Visual Arts, Faculty of Art Education, Armenian State University named after Khachatur Abovyan, Areas of study and interest: decorative and applied arts, author of 11 articles. [72naira@gmail.com](mailto:72naira@gmail.com)

*Խմբագրություն է ուղարկվել 12.02.2025թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 20.02.2025թ.*

*Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.*

## ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ «ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ» ՊԱՏՄԱԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.137

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հասարակական արդի իրավիճակում կրթության համակարգն ուղղված է ազգային մշակույթի վերածննդին և այլ ժողովրդների ու նրանց մշակույթի նկատմամբ հանդուրժողականության դաստիարակությանը, երեխաների և երիտասարդության հետաքրքրությունների պահանջմունքների սատարմանն արարմանը, դրանց բարեհաջող հասարակայնացմանը: Այս պարագայում գեղարվեստական մշակույթի համակարգի համակարգաստեղծ գործոն է հանդիսանում մարդու գործունեությունը գեղարվեստական տարածության յուրացման և ինքնարտահայտման գեղարվեստական միջոցների որոնման բնագավառում:

Դպրոցականների գեղարվեստական դաստիարակության հիմնական խնդիրները առնչվում են նաև հայկական գեղարվեստական արհեստների, մասնավորապես ոսկերչական արվեստի իմացության հետ՝ առաջնահերթ համարելով նրա պատմաժամանակագրության ուսումնասիրումը:

Հայկական գեղարվեստական մշակույթն ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումներով սովորողների զգայական ոլորտի և ստեղծագործական գործունեության հիմնական միջոցներից մեկն է՝ պայմանավորված գեղարվեստական մշակույթի յուրահատկությամբ, նրա ավանդականությամբ:

Գեղարվեստական կրթության ժամանակակից տեսության ոլորտում այդ գործընթացի կազմակերպման արդյունավետ պայմանների որոնումն ընթանում է սովորողի արվեստի տարբեր ձևերի հետ հաղորդակցվելու ուղղությամբ:

Այս խնդիրը կարող է լուծվել կրթության և դաստիարակության նկատմամբ համալիր մոտեցման դեպքում՝ արվեստների փոխներգործության պայմաններում:

**Քանալի բառեր և արտահայտություններ.** պատմաժամանակագրություն, ավանդույթներ, սովորույթներ, ժողովրդական արվեստ, գեղարվեստական արհեստներ, աշխատանքային հմտություններ, ոսկերչական արվեստ, կրթություն, դաստիարակություն, գեղարվեստական մշակում:

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի նյութական մշակույթի կարևոր դրսևորումները ձևավորվել են պատմական Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքին, բնակլիմայական պայմաններին, ազգային առանձնահատկություններին, ժողովրդի տեսական վիճակին և ճաշակին համապատասխան:

Հայկական ժողովրդական բազմատեսակ արհեստները, ավանդաբար փոխանցվելով սերունդներին, պահպանել են իրենց ազգային յուրօրինակ կողմերը և գրեթե ողջ համալիր հասել է մինչև մեր օրերը:

Հայկական ժողովրդական արհեստների խմբավորման և նրա առանձին մասերի ուսումնասիրության վերաբերյալ այսօր արդեն հրապարակի վրա են ամբողջական աշխատանքներ, որոնց նպատակն է մոտիկից ծանոթանալ ազգային ժողովրդական արհեստներին, նրանց ծագման և զարգացման պայմաններին:

Ժողովրդական արհեստների դերի բարձրացումը հասարակության կյանքում նրա զարգացման օբյեկտ օրինաչափություններից մեկն է: Ժողովրդական արհեստները դառնում են ժամանակակից գաղափարական պայքարի գործոն շնորհիվ այն հասկացության, որ այն միաժամանակ ազդում է մարդու գաղափարի, կամքի, զգացմունքների վրա: Հետևաբար ժամանակակից սերնդի նախապատրաստումը աշխատանքային, գիտական և հասարակական գործունեության անհնար է առանց վերջիններիս մասնակցության, որը կոչված է ծառայելու նրան անմիջապես, հազեցնելու գեղեցիկ դարձնելու նրա ամենօրյա

կենցաղը, միևնույն ժամանակ այն կարող է դառնալ գեղագիտական դաստիարակության իրական միջավայր:

Հայկական գեղարվեստական մշակույթը՝ որպես ուսումնաստեղծագործական աշխատանքի ձև, սովորողներին գինում է տեխնիկական գիտելիքներով, նրանց մոտ զարգացնում է աշխատանքային հմտությունները և գիտելիքներ, հոգեբանորեն, գործնական նախապատրաստում աշխատանքի և մասնագիտական կողմնորոշման:

Ի տարբերություն արվեստի մյուս ձևերի՝ ժողովրդական գեղարվեստական արհեստի ստեղծագործությունները հանդիպում են ամեն տեղ և ամենուր: Առանձնահատկությունը, որն արտահայտում է դեկորատիվ առարկայի ձևի և պրակտիկ նշանակությունը, աշխատանքային հմտությունների, գիտելիքների և գեղարվեստական ճաշակի միասնության մեջ, հնարավորություն է տալիս ազգային գեղարվեստական արհեստի պարապմունքների համալիր կազմակերպման, բացահայտելով դեռահասի աշխատանքային և գեղագիտական դաստիարակության միասնությունը:

### ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Թեմայի ուսումնասիրության ընթացքում կիրառվել են ազգային գեղարվեստական մշակույթի, մեր դեպքում ոսկերչական արվեստի ձևավորման և զարգացման հիմնարար խնդիրներով զբաղվող մի շարք հետազոտողների աշխատությունները, որոնց կողմից առաջարկվող մի շարք մեթոդներ վերլուծական, համար, գործնական: Որպես գրականություն օգտագործվել է հայ և արտասահմանյան հետազոտողների ուսումնասիրությունները (**Մ. Շուգարով, Ս. Ավետիսյան, Ա. Եղիազարյան, Լ. Ներսիսյան, Մ. Կազան, Ա. Սալտիկով և այլք**):

### ՔՆՆԱՐԿՈՒՄ

Մետաղի գեղարվեստական մշակումը հնուց ի վեր պահպանել և զարգացրել է ժողովրդի վառ ստեղծագործական երևակայությունը, վարպետությունը, ավանդույթները, որոնք ժամանակի ընթացքում կրել են բազմաթիվ

փոփոխություններ, նորամուծություններ և այդ գործընթացները շարունակվում են մինչ օրս: Հայկական լեռնաշխարհը դեռ հնուց եղել է այն կենտրոններից մեկը, որտեղ զարգացել է մետաղի գեղարվեստական մշակման արվեստը: Այն հարուստ է եղել բազմաթիվ ոսկերչական օջախներով, ուր ոսկերչությունն անընդհատ զարգանում էր վարպետների ուսումնասիրությունների, նոր տեխնիկաների բացահայտումների և կատարելագործման շնորհիվ:

«Ատացվում է, որ իրերը պետք է լինեն ոչ միայն իսկապես օգտակար, այլ նաև համապատասխանեն մեր պատկերացումներին՝ համապատասխան մեր գեղագիտական կատարելակերպին» (Шугуров М., 2001).

Հայկական ոսկերչությունը և արծաթագործությունը մեծ զարգացում են ապրել նաև եկեղեցու շնորհիվ, քանի որ եկեղեցական մասունքների ստեղծումը պահանջում էր ճկուն ստեղծագործական միտք, ոսկերչական վարպետություն և ավանդույթների պահպանում:

Հայ ժողովրդի կիրառական արվեստում առանձնահատուկ տեղ ունի մետաղի գեղարվեստական մշակումը և ոսկերչությունը, որի ակունքները թաղված են խոր հնադարում: Դեռևս մեր թվարկությունից առաջ երկրորդ հազարամյակի սկզբին Հայկական լեռնաշխարհի բնիկները ծանոթ են եղել մետաղին, այդ թվում ոսկու և արծաթի մշակման և օդտագործման հետ: Հայաստանը եղել է այդ արհեստի կենտրոններից մեկը և հարուստ է եղել բազմաթիվ ոսկերչական օջախներով, ուր ոսկերչությունն այնքան է զարգացել, որ նույնիսկ առանձին քաղաքներում ոսկերիչ արհեստավորները մասնագիտացել են հատուկ ճյուղերում:

Ինչպես նշում է Մ. Նովիցկայան, «Ազգային մշակույթն արտահայտում է երկար ժամանակ նույն տեղում ապրող արյունակցական կապեր ունեցող մարդկանց խմբի որոշակի առանձնահատկությունները: Այսպիսով, ազգային մշակույթը ներդաշնակության մեջ է գտնվում ազգային բնավորության հետ: Այն հոգեբանորեն համարժեք ձևով արտահայտում և իրականացնում է այդ բնույթը գեղարվեստական ձևի մեջ» (Новицкая М., 1994):

Քիչ չեն մեր մատենագրական հիշատակությունները ոսկյա և արծաթյա զարդարանքների, զենքերի, անոթների, խաչերի, մասանց պահարանների մասին:

Շատ ուշագրավ նմուշներ են տվել Հայաստանի հնագիտական պեղումները: Շենգավիթի(Երևան) պեղումներից հայտնաբերվել են մ.թ.ա. 2-րդ հազարամյակին պատկանող ոսկյա զարդարանքներ՝ մեդալիոն, մատանի և պարուրածև ոսկյա առարկաներ: Սևանի ջրերից ազատված տարածությունից, Լճաշենից հայտնաբերված ականջօղի մակերեսը հատիկավոր նախշերով է ձևավորված, նույն ձևով է պատրաստված գորտի ձևով զարդը, որի աչքերի տեղ ակներ էին դրված: Կարմիր բլուրից և այլ վայրերից ևս կան զարդեր, որոնք ցույց են տալիս, որ մ.թ.ա. 9-6-րդ դդ. մետաղամշակման տեխնիկայի կատարելագործման հետ կապված է՛լ ավելի բարձր զարգացման են հասնում արհեստի տարբեր ճյուղեր, այդ թվում՝ ոսկերչությունը:

Կարևոր նշանակություն ունեն միջնադարյան Դվին, Անի քաղաքների, Ամբերդ ամրոցի և այլ վայրերի հնագիտական պեղումները, որոնց ժամանակ հայտնաբերվել են մեծ քանակությամբ արծաթյա, պղնձյա և նույնիսկ ոսկյա անոթներ՝ նախշազարդերով, փորագրություններով, երբեմն ականազարդ, արծանագրություններով թասեր, գավաթներ և այլ իրեր:

Զարդերի մեջ առանձնահատուկ էին գլխի զարդարանքը, հագուստը, որոնցից շատերը բանեցվել են ամեն օր: Զարդերը պատրաստվել են ոսկուց, արծաթից և գունավոր ակներից, մարգարտից: Հայկական զարդերի մեջ մարգարտը գրավել է պատվական տեղ: Մարգարտը եղել է միջազգային առևտրի առարկա: Մարգարտներով էին զարդարված թագավորական, եկեղեցական հանդերձանքները՝ գլխի հարդարանքը, նույնիսկ ոտնամանները:

Ոսկուց, արծաթից, մարգարտից, թանկարժեք գոհարներից կազմված Կարին-Շիրակի, Երևանի երանի զարդերը հայկական ոսկերչության ամենաշքեղ զարդերն են: Այդ զարդերի մեջ աչքի է ընկնում ոսկերիչ մասնագետների բարձր վարպետությունը:

Ամենից բազմազան են Վան-Վասպուրականի զարդերը, որոնց մեծ մասը կապված են տարազի հետ: Վանի ոսկերիչները սովորություն ունեին ոսկի մատանիների թանկարժեք ակների տակից քաշել ոսկի տախտակ, որը գոհարը պաշտպանում էր կեղտից և հատուկ փայլ հաղորդում նրան: Վանա լճի շուրջը գտնվող շրջանների գեղջկական տարազի հետ կրել են բազմազան զարդեր: Չնայած որ նրանք հաճախ եղել են արծաթից կամ այլ էթանագին մետաղների խառնուրդից, կիսաթանկարժեք ակներով, ապակյա ուլունքներով, բայց չափազանց արտահայտիչ ու գրավիչ տեսք են ունեցել՝ լինելով իսկական արվեստագետ վարպետների ձեռքի գործ: Ջարդերի վրա բուսական զանազան վարդյակների, խաղիկների, կենաց ծառերի հետ ոսկերչական արվեստի տարբեր ձևերով պատկերված են արևը, լուսինը, աստղերը, ձկան, թռչունի, գազանների, հեքիաթային օձավիշապանների և այլ պատկերացումները: Ջարդերի մի մասը հին ծագում ունի, օրինակ, օձագլուխներով վերջացող ապարանջաններ (բրոնզյա դար), լուանագարդ («նորը» իր տեսքով հիշեցնում է ուրարտական լուանաձևը):

Ազգագրական - արվեստագիտական տեսակետից չափազանց հետաքրքիր են թռչնանման կրծքազարդերը: Կրծքազարդերից են նաև Արևիկ և Նորեր զարդերը՝ ոճավորված արևի և լուսնի պատկերներով, որոնցից նույնիսկ կախիկների ձևով կան թփեր-թռչնամարմիններ, լուանաձևեր, աստղաձևեր, ընդ որում, այդ զարդերն էլ ունեն իրենց մանրիկ կախիչ ծաղիկները: Կախիչներով զարդերը նազանք են հաղորդել երիտասարդ կնոջը: Իներորդ դարի կեսից քաղաքների ծաղկման և առևտրի զարգացման շնորհիվ արհեստներում առավել խորանում է աշխատանքի բաժանումը: Ոսկերիչ արհեստավորները, կենտրոնացած լինելով քաղաքներում ստեղծված հատուկ արհեստանոցներում, միաժամանակ բավարարում էին նաև նոր առաջացած քաղաքային դասի և գյուղական դասի պահանջները: Ոսկերիչ և արծաթագործ արհեստավորները կատարել են նաև եկեղեցու, վանքերի և հոգևորականության պատվերները: Հայ եկեղեցական սպասքների լավագույն նմուշները կենտրոնացված են Էջմիածնի

վանքի թանգարանում: Այդ իրերի մեջ իրենց կատարման բարձր արվեստով աչքի են ընկնում մասանց պահարանները, սկիհները, գայիսոնները:

Պատմական դեպքերի բերումով հայ ոսկերիչներն աշխատել են նաև Հայաստանից դուրս՝ Կովկասի տարբեր քաղաքներում, Հունաստանում, Կոստանդնուպոլսում և այլ երկրներում: Իրենց նուրբ ու բարձրարժեք արվեստը շարունակելով և զարգացնելով օտար երկրներում՝ նրանք նպաստել են նաև այդ երկրներում ոսկերչության զարգացմանը:

Հայ ոսկերչության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սովետական իշխանության տարիներին վերածնվեց այդ հնագույն արհեստը և վերելք ապրեց:

Մետաղի գեղարվեստական մշակումը ժողովրդական գեղարվեստական մշակույթի տեսակներից մեկն է, որն ընդգրկում է արվեստի տարբեր ոլորտներ՝ փայտի գեղարվեստական մշակում, մետաղի գեղարվեստական մշակում, խեցեգործություն, գործվածքագիտություն, հագուստի մոդելավորում, ինտերիերի և էքստերիերի դիզայն, մեր օրերում ավելացել է նաև համակարգչային նախագծում և դիզայնում: Ն. Կուզնեցովան իրավացիորեն նշում է. «Գեղարվեստական գործունեությունը՝ որպես ամբողջական կազմակերպական գործընթաց, ենթարկվում է որոշակի օրինաչափությունների և սկզբունքների: Դրանք ազդում են ինչպես դաստիարակության, այնպես էլ գործընթացին մասնակցող սուբյեկտների դիրքորոշման վրա» (Кузнецов Н., 2008):

Գեղարվեստական մետաղամշակությունը հիմականում ազնիվ մետաղների (ոսկի, արծաթ) հետ կատարվելիք աշխատանքն է: Այն ի սկզբանե հանդես է եկել սերտ համագործակցությամբ արվեստի մյուս ուղղությունների՝ մանրանկարչության, փայտամշակման, քանդակագործության, ակնագործության, խեցեգործության և ապակեգործության հետ՝ մշտապես հաղորդակից լինելով նրանց կրած փոփոխություններին և ազդեցություններին:

«Գեղարվեստական ստեղծագործության ստեղծման համար անհրաժեշտ է ոչ ավելի, ոչ պակաս առանձնահատուկ վերաբերմունք կյանքի նկատմամբ» (Мелик - Пашаев А., Новлянская З., 1995):

Ոսկուց, արծաթից նաև ոսկեզարդ բազմաթիվ իրեր և առարկաներ հաճախ հիշատակվում են մատենագրական աղբյուրներում: Մեծ քանակությամբ մետաղի գեղարվեստական մշակման իրեր հայտնաբերվել են պատմական քաղաքների պեղումների ժամանակ, որոնք ցույց են տալիս բոլոր ժամանակների վարպետների հմտությունը:

Այժմ մետաղի գեղարվեստական մշակման վարպետների գործը շատ հեշտ, արագ և գրեթե կատարյալ է դարձել մեր օրերի նորամուծությունների շնորհիվ: Ասպարեզ են եկել նորագույն ժամանակակից տեխնոլոգիաները, քանի որ զարգացման հետ մեկտեղ առաջ եկավ արագության և ճշգրտության պահանջը:

Մետաղի գեղարվեստական մշակումը սկիզբ է առել այն ժամանակ, երբ նախապատմական մարդը հայտնաբերեց մետաղը դարբնելու, ձուլելու և այլ մեթոդներով մշակելու հնարավորությունները: Այդ ժամանակ նա սկսեց կատարելագործել դրանք, բացահայտել բազմազան տեխնիկաներ՝ ձուլում, կռում, դրվագում, սևադապատում, արծաթապատում, փորագրում, դրոշմադրում, ցանցահյուսազարդում, ոսկեջրում և այլն:

Մետաղամշակման համար Հայաստանում օգտագործվել են բազմաթիվ մետաղներ՝ երկաթ, պղինձ, բրոնզ, ոսկի, արծաթ: Առանձնապես ոսկու կիրառումը լայն տարածում գտավ այն ժամանակաշրջանում, երբ մարդն առաջին քայլերն արեց դեպի գեղեցիկի ընկալումը և պնդվելու ձգտումը: Այդ ամենի թելադրանքով տեղի ունեցավ զարդերի՝ իբրև տարազին յուրահատուկ շուք հաղորդողի երևան գալը և դրանց անբաժանելի մի մաս դառնալը: Վարպետները սկսեցին զարդեր պատրաստել ոչ միայն կանանց, այլև տղամարդկանց համար:

Զարդերը պատրաստվում էին թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղներից բոլոր ազնիվ քարատեսակների կիրառմամբ, նաև ոսկրից և ապակուց:

### *Ձուլում*

Ձուլումից առաջ վարպետը պատրաստում էր ձուլվող առարկայի մոդելը մոմից, պղնձից կամ փայտից: Առարկայի այն հատվածները, որոնք պետք է

լինեին առավել ամուր, ձուլվում էին ավագե կաղապարի մեջ: Կրկնվող դետալների համար արվում էր մեկ ամուր կաղապար, որը տալիս էր մեկ դետալի մի քանի ձուլման հնարավորություն՝ մեկ կաղապարով: Իսկ բարդ գործերի մոմե մոդելը արվում էր մի քանի կտորից, որոնք ձուլումից հետո միմյանց ամրացվում էին զոդման եղանակով:

Միջնադարյան Հայաստանի քաղաքում ձուլված բարդ իրերը քիչ քանակությամբ պատրաստվել են կավե կամ փայտե մոդելի օգնությամբ, որոնցից հանվող կաղապարը սովորաբար մի քանի մասից էր բաղկացած լինում: Նման եղանակով ձուլված բազմաթիվ աշխատանքներ գտնվել են Անի քաղաքի պեղումների ժամանակ:

#### *Դրվագում*

Դրվագումը դեկորատիվ կիրառական արվեստի հնագույն ուղղություններից մեկն է և մետաղի գեղարվեստական մշակման եղանակներից է: Դրվագումը մետաղի վրա նախապես ընտրված պատկերի կամ գրառման դակումն է՝ ծավալներով պատկերը ստանալու ձգտմամբ: Մետաղի գեղարվեստական դրվագումը գեղարվեստական դրվագման ամենաբարդ եղանակն է, քանի որ մետաղը դրվագելու համար պետք է զգալ ծավալը և ստանալ ընտրված պատկերը՝ պահպանելով մետաղի ճկունությունը: Դրվագման համար հիմնականում ընտրվում է պղինձ՝ իր փափկության և ճկունության համար: Մետաղի գեղարվեստական դրվագումը լայն կիրառվում է կենցաղային իրերի, դեկորատիվ առարկաների, զարդերի ստեղծման համար, ինչպես նաև ճարտարապետության մեջ:

#### *Դրոշմագարդում*

Դրոշմագարդումը մետաղի, փայտի կամ մակերեսների վրա զարդանախշերի, պատկերների, գրությունների փորագրումն է: Փորագրման արդյունքում ստացված խորությունները այնուհետև լցվում են այլ մետաղի ձուլվածքով կամ քարերով: Այդ մեթոդը շատ է կիրառվում ճարտարապետության մեջ, կառույցների ներքին հարդարման համար, ինչպես նաև ստեղծվում են

բազմաթիվ զարդեր դրվագման լայն հնարավորությունների և բազմաթիվ մեթոդների կիրառմամբ:

#### *Փորագրում*

Փորագրումը նախշաձևման տեսակներից է, որը իրերին տալիս է յուրահատուկ արժեք: Փորագրում կատարվում է երկու եղանակով՝ ձեռքով և մեքենայացված: Այն մետաղի, փայտի, ապակու կամ քարի մակերեսի վրա պատկերի գրառման ստեղծումն է նուրբ փորագրման եղանակով: Փորագրությունը սկիզբ է առել հենց մետաղի գեղարվեստական մշակման շնորհիվ, երբ սկսեցին ստեղծել փորագրված զարդեր, կենցաղային մետաղական իրեր, ինչպես նաև փորագրված զենք և զինամթերք:

Փորագրությունը սկսելուց առաջ մետաղը հղկում են և փայլեցնում: Ապա նախապես պատրաստված պատկերը կամ գրությունը փոխանցում դրա վրա և սկսում փորագրությունը:

#### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Ոսկերչական արվեստի նպատակն է այդ արվեստի հիմունքների յուրացումն այնպես, որ սովորողները դառնան ակտիվ ստեղծագործական գործունեության մասնակիցներ՝ օժանդակելով գեղագիտական դաստիարակությանը և գեղարվեստական կրթությանը:

2. Հայկական գեղարվեստական մշակույթը ներկայանում է հզոր և միևնույն ժամանակ անձի բազմակողմանի զարգացման, նրա հոգևոր աշխարհի և ստեղծագործական ընդունակության ձևավորման անփոխարինելի միջոց:

3. Ոսկերչական արվեստի դասաժամերը սովորողի մեջ ստեղծում են հուզական վերաբերմունք ազգային մշակույթի նկատմամբ:

Առաջարկվող մեթոդների նպատակն է բացահայտել ազգային գեղարվեստական արհեստների գեղագիտական դաստիարակչական հնարավորությունները:

Գեղագիտական օբյեկտի հետ սովորողների շփման որակի ծավալի մեծացումը տանում է աշխարհի գեղագիտական իմաստավորման և անհատի

գեղագիտական պահանջմունքների ձևավորմանը, ցանկություն առաջացնում արվեստի մասին իմանալ ավելին և շատ առնչվել նրան:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Кузнецов Н. (2008)**, Настольная книга практикующего педагога, Москва, Гросс медиа; ПОЦБЫХ, <https://libking.ru/books/sci-/science/204403-igor-kuznetsov-nastolnaya-kniga-praktikuyushchego-pedagoga.html#read>
2. **Мелик - Пашаев А. , Новлянская З. (1995)**, Ступеньки к творчеству, Художественное развитие ребенка в семье. Москва, Искусство в школе. <https://chamaeleonbook.info/books/stupenki-k-tvorchestvu>
3. **Новицкая М. (1994)**, Человек и природа культуре: Введение центр в народной в народоведение, Москва, Изд-во планетариум герменевтика // Труды <https://search.rsl.ru/ru/record/01002717913>
4. **Шугуров М. (2001)**, Виртуальная герменевтика // Труды лаборатории виртуалистики. Вып. 13. Москва. <http://www.virtualistika.ru/centerlist.html>

## REFERENCES

1. **Kuznyatsov N. (2008)**, Nastol'naya kniga praktikuyushchego pedagoga /Desktop book of a practicing teacher/, M., Gross media; <https://libking.ru/books/sci-science/204403-igor-kuznetsov-nastolnaya-kniga-praktikuyushchego-pedagoga.html#read>
2. **Melik-Pashaev A., Novlyanskaya 3. (1995)**, Stupen'ki k tvorchestvu, Khudozhestvennoye razvitiye rebenka v sem'ye /Steps to creativity, artistic development of a child in a family/, Moscow, Art in school, <https://chamaeleonbook.info/books/stupenki-k-tvorchestvu>
3. **Novitskaya M. (1994)**, Chelovek i priroda kul'ture: Vvedeniye tsentr v narodnoy v narodovedeniye /Man and Nature Culture: Introduction Center in Folk in Ethnology/, Publishing house "Planetariy germeneytika". <https://search.rsl.ru/ru/record/01002717913>
4. **Shugurov M. (2001)**, Virtual'naya germeneytika /Virtual hermeneutics/. <http://www.virtualistika.ru/centerlist.html>

Давит Петросян

**Методология исторической хронологии «Ювелирного искусства» в  
армянской художественной культуре**

**Заключение**

*Ключевые слова и выражения: исторический, традиции, национальное искусство, художественные ремесла, профессиональные навыки, мастерство работы с золотом, образование, воспитание, художественное структурирование.*

В современных социальных условиях система образования направлена на возрождение национальной культуры, создание уважения к другим народам и их культуре, а также на обеспечение молодежи необходимыми условиями для проявления интересов и успешной социализации. В данном случае ключевым

фактором для системы художественной культуры является человеческое участие и понимание художественной сферы, а также предоставление необходимых ресурсов для самовыражения.

Одной из главных проблем обучения искусству школьников является недостаток знаний об армянском искусстве, особенно о ювелирном искусстве, с учетом исторической важности изучения и исследования данной темы, а также в целом обогащения информации в этой области.

Армянская художественная культура как в теоретическом, так и в практическом аспектах будет оказывать эмоциональное и творческое влияние на учащихся, так как культура искусства чрезвычайно уникальна по своей природе и жизненно важна в своей традиционности.

В области художественного образования с точки зрения современной теории поиск подходящих и необходимых условий направлен на помощь учащимся в общении и взаимодействии с различными формами искусства.

Эта проблема может быть решена, если мы будем поощрять и приглашать учащихся к циклу обучения и воспитания, который будет происходить в условиях взаимосвязанности искусств.

**Davit Petrosyan**

### **Methodology of the historical chronology of "Jewelry Art"**

#### **in Armenian artistic culture**

#### **Conclusion**

**Key words and expressions.** *Historical, traditions, national art, artistic crafts, work skills, gold making skills, education, nurturing, artistic structuring.*

In the current social situation, the educational system is dedicated to the rebirth of the national culture and creating respect towards other nations and their culture as well as providing youth with the necessities for their interests and making successful socialization possible. In this case, a critical factor for the system of artistic culture is

human interference and understanding of the artistic sphere, the supplying of the right resources for self-expression.

One of the main problems that the education of art for schoolchildren faces is also the knowledge of Armenian art, especially knowledge of gold making art, taking into the consideration the historical importance of examining and researching this particular subject and generally having information about this.

Armenian artistic culture both theoretically and practically will influence students emotionally and creatively as the culture of art is incredibly unique in its nature and vital in its traditionality.

In the area of art education from a modern theoretical perspective, the search for appropriate and needful conditions is directed towards helping students to communicate and associate with different forms of art.

This problem could be fixed if we encourage and invite students to a cycle of education and nurture which would take place in interconnected conditions for arts.

**Դավիթ Պետրոսյան** - Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ գեղարվեստի ֆակուլտետի կիրառական արվեստի ամբիոնի հայցորդ, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր, «Ոսկեգործական լաբորատորիայի» ղեկավար, ուսուցիչ: Գիտական հետաքրքրությունները՝ ժամանակակից մանկավարժական մեթոդաբանություն, կիրառական արվեստի նոր ճյուղերի դասավանդման մեթոդաբանություն հանրակրթական դպրոցում, արհեստագործական մշակույթի պահպանման և զարգացման խնդիրները: Հեղինակ է երկու հոդվածի, ՀՊՀ «Արվեստ-արհեստ» բնագավառի «Ոսկեգործություն» առարկայի և ծրագրի (7-8) դասարանների համար: [Lovedovedrive@gmail.com](mailto:Lovedovedrive@gmail.com):

**Давит Петросян** – Аспирант кафедры прикладного искусства факультета изобразительного искусства Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна. Научные интересы: современная педагогическая методология, методология преподавания новых направлений прикладного искусства в общеобразовательной школе, проблемы сохранения и развития ремесленной культуры. Место работы: образовательный комплекс

«Мхитар Себасти», руководитель «Ювелирной лаборатории», преподаватель. Автор двух статей, а также учебной программы и предмета «Ювелирное искусство» для учащихся 7-8 классов в рамках дисциплины «Искусство и ремесло» (Государственный стандарт общего образования). [Lovedovedrive@gmail.com](mailto:Lovedovedrive@gmail.com).

**David Petrosyan** - Is a postgraduate student at the Department of Applied Arts, Faculty of Fine Arts, at the Armenian State Pedagogical University named after Khachatur Abovyan. Research interests: modern pedagogical methodology, teaching methods for new branches of applied arts in general education schools, issues of preserving and developing craft culture. Place of work: "Mkhitar Sebastatsi" educational complex, head of the "Jewelry Laboratory," teacher. Author of two articles, as well as the curriculum and course "Jewelry Art" for 7th–8th grade students within the framework of the "Art and Craft" discipline (State General Education Standard). [Lovedovedrive@gmail.com](mailto:Lovedovedrive@gmail.com).

*Խմբագրություն է ուղարկվել 03.12.2024թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 14.12.2024թ.*

*Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.*

## ՎԱՀԵ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐՎԱԾ  
ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՕՋԱԽՆԵՐՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.138

## ԱՄՓՈՓՈՒՄ

Ժամանակակից կրթական միջավայրում ստեղծագործական ինքնարտահայտման կարևոր ուղիներ են լուսանկարչությունն ու գեղանկարչությունը, որոնք նպաստում են միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների ինքնաճանաչման, գեղարվեստական ընկալունակության ձևավորման և ստեղծարարության զարգացմանը: Ինտեգրված ուսուցման նման մոդելը ոչ միայն խթանում է նրանց ստեղծագործական կարողությունները, այլև նպաստում է տարբերակված մտածողության, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման և գեղագիտական արժեքների խոր ընկալմանը: Այս պարագայում լուսանկարչությունը օգտագործվում է որպես գեղարվեստական արտահայտության միջոց, իսկ գեղանկարչությունը՝ լուսանկարչական աշխատանքների գեղագիտական արժեքների ընդգծման գործիք: Նման մոտեցումը խրախուսում է սովորողներին զարգացնել թե՛ տեխնիկական հմտությունները (լուսանկարչության տեխնիկա, նկարահանման տեխնոլոգիաներ) և թե՛ գեղարվեստական ընկալունակությունը (կոմպոզիցիա, գույների և լուսային արտահայտչականություն): Ուստի լուսանկարչության և գեղանկարչության համակցված ուսուցումը արդյունավետ միջոց է՝ խթանելու սովորողների ստեղծագործական կարողություններն ու գեղարվեստական աշխարհայացքը, որոնք զարգացնում են ոչ միայն տեխնիկական հմտությունները, այլև օգնում են սովորողներին արտահայտել իրենց մտքերը, զգացմունքներն ու գաղափարները գեղարվեստական եզակի ձևերով՝ նպաստելով նրանց ինտելեկտուալ և գեղագիտական զարգացմանը:

**Քանալի բառեր և արտահայտություններ.** լուսանկարչական արվեստ, գեղանկարչություն, ինտեգրված ուսուցում, գեղարվեստական ընկալունակություն, մանկավարժական տեխնոլոգիաներ:

### **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Մեր հասարակության սոցիալ-տնտեսական նոր որակական հարաբերությունների, աշխատաշուկայի կողմից մասնագետներին ներկայացվող բարձր պահանջների և միջազգային կրթական համակարգին ինտեգրմամբ պայմանավորված՝ էական բարեփոխումներին միտված քայլերը դարձել են այժմեական: Հատկապես կրթական բարեփոխումների և գիտատեխնիկական առաջընթացին համապատասխան մրցունակ մասնագետների պատրաստման հետ կապված՝ առաջացել է նաև կրթության որակի ապահովման գործընթացի արդյունավետ կառավարման, մանկավարժական տեխնոլոգիաների մշակման և ներդրման լուրջ անհրաժեշտություն: Ներկայիս միջին մասնագիտական կրթական համակարգը փորձում է նորովի լուծել գեղարվեստական կրթության և դաստիարակության հիմնախնդիրները՝ կիրառելով ինչպես եղած փորձը, այնպես էլ մշակելով նոր պայմաններ, մեթոդներ, միջոցներ և ձևեր:

Գեղարվեստական մանկավարժությունը, որպես գիտակարգ պետք է նպաստի անձի զարգացմանը, արվեստի միջոցով դաստիարակությանը և սովորողի մեջ գեղագիտական նրբաճաշակություններ ձևավորի: Այս ամենի ուսումնասիրությունը և ներդրումը մանկավարժության մեջ, գեղարվեստական կրթության ոլորտում, լուսանկարչության՝ պատկերի ստեղծման արվեստի միջոցով, հնարավորություն կտա գեղեցիկի ընկալման կարողություն ձևավորել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների գիտակցության մեջ՝ կյանքի ցանկացած իրավիճակում: Գեղարվեստական կրթության խնդիրները լուծելիս հանդիպում ենք դժվարությունների նաև մի շարք այլ պատճառներով: Ուստի անհրաժեշտ է գեղարվեստական կրթության դասընթացների ընթացքում հաշվի առնել միջին մասնագիտական ուսումնական

հաստատություններում և հասարակության մեջ գոյություն ունեցող բոլոր հնարավորությունները, միջոցներն ու ձևերը, որոնց կիրառություններն այդ գործընթացում կլինեն խիստ նպատակային, զարգացնելով սովորողների գեղարվեստական ընկալունակության գործոնը, այդ թվում նրանց լրատվարչական արվեստի ունակությունները: Վերոթվագրյալի նպատակով կատարված վերլուծություններն ու առաջարկությունները պայմանավորում են հոդվածի գիտական նորույթը: Հոդվածի նպատակն է բացահայտել լրատվարչության և գեղանկարչության ինտեգրված ուսուցման դերը՝ սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման գործընթացում: Սովորողների գեղագիտական մտքի ձևավորումը և զարգացումը պետք է մշտապես լինի մանկավարժության ուշադրության կենտրոնում, մասնավորապես գեղարվեստական կրթության ոլորտում՝ առանձնահատուկ կարևորություն տալով ինտեգրված ուսուցմանը, որը կրթական գործընթացում կարող է տալ այնպիսի հնարավորություններ, ինչպիսիք են՝

- ստեղծագործական մտածողության զարգացման խթանում,
- մտավոր և հուզական խոր կապերի ստեղծում գեղարվեստի միջոցով,
- մարդասիրական արժեքների և էթետիկ նուրբ ընկալումների ձևավորում՝ անհատական ու սոցիալական մակարդակներում:

Որպես գեղարվեստական գործունեության և ուսուցման տեսակ՝ լրատվարչության խնդիրն է ինտեգրումը գեղարվեստական կրթության համակարգում: Դա կապված է մեծապես կոմպոզիցիոն ընկալման և կիրառման հետ, որը կարևոր նշանակություն ունի ստեղծագործության կազմության գործում:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի իրականացման ժամանակ առաջնային խնդիրների լուծման և գիտական վարկածի ստուգման, հաստատման նպատակով կիրառվել են տեսական, հետազոտական, փորձարարական և էմպիրիկ մեթոդները: Աշխատությանը հարող համապատասխան գիտամեթոդական, մասնագիտական, ուսումնական և լրացուցիչ գրականություն, հայկական առաջատար ուսումնական հաստատություններում ներդրված փորձի ուսումնասիրություն և արդյունքների վերլուծություն: Ինչպես նաև լուսանկարչության և գեղարվեստական կրթության ինտեգրված ուսուցման գործընթացում սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորմանը նպաստող ուսուցման մեթոդական նմուշօրինակի իրականացման մանկավարժական պայմանների փորձարկում: Արդյունքում՝ ընդհանուր մասնագիտական պատրաստվածության մեջ որոշվել է լուսանկարչության ուսուցման գործընթացում գեղանկարչության ներքո կոմպոզիցիոն օրինաչափությունների կիրառման միջոցով սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորմանը նպաստող ուսուցման դերն ու տեղը: Այնուհետ բացահայտվել են լուսանկարչության և գեղանկարչության ինտեգրված ուսուցման գործընթացում սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման գործնականության հիմնական եղանակներն ու ձևակերպվել են այդ ձևավորմանը միտված համապատասխան մասնագետների համար առավել արդյունավետ ուսուցման պայմանները:

## ՔՆՆԱՐԿՈՒՄ

Սովորողների գեղարվեստական գործունեությունը, անհրաժեշտ է ընկալել որպես երևակայության և գեղարվեստական մտածողության ինտեգրված գործունեություն: Գեղարվեստական մտածողության զարգացումը, լուսանկարչության բնագավառում կադրի ձևավորումը, գեղանկարչության արտահայտչամիջոցների ինտեգրումը լուսանկարչական արվեստում՝ սովորողների գեղարվեստական գործունեության և գեղագիտական դաստիարակության խնդիրների շարքին է դասվում: Համապատասխան

ծրագրերի և տեխնոլոգիաների մշակումը՝ ուղղված լուսանկարչության և գեղարվեստական կրթության ինտեգրված ուսուցման շրջանակում գեղագիտական կարողունակությունների ձևավորմանը, կնպաստի սովորողների համակողմանի և ներդաշնակ զարգացմանը: Երկու վիզուալ արվեստների փոխադարձ կապը կոմպոզիցիոն առումով գլխավոր գործոնն է, որը մեծ ազդեցություն կարող է ունենալ լուսանկարչական արվեստին գեղարվեստական շունչ տալու և սովորողների մտածողությունը զարգացնելու տեսանկյունից:

Գեղարվեստական գործունեության մեջ կարևոր է առանձնահատուկ անդրադառնալ գեղարվեստի մեջ օգտագործվող կոմպոզիցիոն կանոններին, որի դերը և նշանակակությունը անփոխարինելի է գեղագիտական գիտակցության զարգացման գործում: Գիտական հետազոտությունների բնագավառում ինտեգրման խնդրին համալիր մոտեցում ցուցաբերվել է՝ Լ. Ներսիսյանի, Ա. Բայանի, Վ. Աֆանասևի և այլոց աշխատություններում: Ակնբերել է, որ սովորողների զգացմունքների և ընկալունակության ընդլայմանը մեծապես կարող է նպաստել այս երկու վիզուալ արվեստների ինտեգրումը: Նրանց արժեհամակարգի ձևավորման խնդիրը մշտապես եղել և մնում է կրթության ոլորտի գիտություններով զբաղվող տեսաբանների, մասնավորապես մանկավարժ-հետազոտողների ուշադրության կենտրոնում: Արժեհամակարգի ձևավորման և նրա լինելության ապահովման համար հանրակրթության ասպարեզում կարևոր դեր ու անհերքելի նշանակություն ունի արվեստի ոլորտի առարկաների ուսուցումը: Մասնավորապես լուսանկարչության, որն իր անսահման մեծ հնարավորություններով անփոխարինելի միջոց է աշխարհը և բնությունը ճանաչելու գործում: Լուսանկարչությունը արվեստ է, որտեղ կարևոր է ստեղծագործական միտքն ու ազատությունը, ինքնարտահայտումը, նոր և ինքնատիպ գաղափարներ իրագործումը (Митчел Э., 1988): Սովորողների գեղարվեստական և լուսանկարչական գործունեությունն ինտեգրված ուսուցման շրջանակում արդյունավետ կազմակերպման համար մեծ նշանակություն ունի գեղարվեստական ընկալունակության բարձրացման, նրա համակարգի

ձևավորման, մեթոդների ներդրման և դրանց կիրառման առանձնահատկությունների գործում: Այստեղ հստակ մեթոդաբանության կիրառումը կրթական գործընթացը արդյունավետ կազմակերպելու երաշխիքն է: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք գործոններ ինտեգրված ուսուցումը կազմակերպելու համար.

1. սովորողի հոգեբանական առանձնահատկությունները,
2. ուսուցման ձևատեսությունը,
3. սովորողի ներուժային հնարավորությունները:

Գեղարվեստական գործունեության հիմնախնդիր է սովորողի ընկալումը բերել դեպի արվեստի ստեղծագործության նկատմամբ հուզական վերաբերմունքի ձևավորմանը (**Петрушин В., 2008**): Սովորողների արժեհամակարգի մեջ առաջնայիններից է ձևավորել նաև մեծագույն արժեքը՝ սերը դեպի գեղեցիկը, աշխարհը և մարդը: Այս ամենի դրսևորումը հարգանք ու պատկառանք է առաջացնում դիմացինի մեջ: Սույն արժեքը լավագույնս ձևավորվում է գեղարվեստական կրթության, մասնավորապես լուսանկարչության դասերին: Որքան հարուստ, բարձր, ընդգրկուն, վեհ լինի մարդու արժեհամակարգը, զգայական ընկալումը հարուստ լինի գիտելիքով, լայն մտահորիզոնով, այնքան ավելի խորը կլինի գեղագիտական ընկալումը և ճաշակը (**Բայլան Ա., 1980**): Լուսանկարչական արվեստի հմտությունների տիրապետումը կօգնի սովորողին տեսնելու իրականության գեղագիտական արտացոլանքը:

Գեղարվեստական կրթության մեթոդների, եղանակների ամբողջությունն է, որոնց շնորհիվ արվեստի այս ոլորտում կարող ենք հասնել արդյունքի: Գեղարվեստական մանկավարժության բնագավառում ինտեգրումը ենթադրում է գեղարվեստական ստեղծագործության, գեղարվեստական մշակույթի զարգացման կապը համամարդկային արժեքների հետ (**Ներսիսյան Լ., 2002**): Անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել այն գործոնները, որոնք ազդում են սովորողի արժեհամակարգի ձևավորման վրա, քանի որ դրանք այն հիմնական մեթոդներն են, որոնց կիրառման միջոցով սովորողների մեջ

հնարավոր է ձևավորել համապատասխան արժեհամակարգ: Կրթական տարրեր մակարդակներում սովորողն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարատեսակ դրսևորումներ (**Կորոտով Վ., 1985**): Լուսանկարչությունը՝ որպես արվեստի նշանակալի երևույթ, կարող է դառնալ սովորողների գեղարվեստական ընկալման, աստիճանաբար զարգացման միջոց:

Շատ կարևոր է մշտապես ուշադրություն դարձնել սովորողի զգացմունքներին և իրականության նկատմամբ նրա վերաբերմունքին գեղարվեստական լուսանկարի պատկերման ընթացքում: Անձի զգացմունքների և վերաբերմունքի ձևավորման, զարգացման հիմքում ընկած է նրա զգայության և ընկալման արդեն ձևավորված ու միևնույն ժամանակ զարգացման փուլում գտնվող ռեալ իրականության նկատմամբ գեղագիտական վերաբերմունքի դրսևորման կերպը: Լուսանկարչությունը, լինելով տեսողական արվեստ, օգտվելով տեսողական անալիզատորի, վերլուծիչի հնարավորություններից, որը համարվում է ամենամեծ զգայություն ունեցող կշիռը մարդու ընկալման մեջ, կարող է դառնալ հրաշալի միջոց սովորողի գեղարվեստական ընկալման ձևավորման և զարգացման փուլում: Սովորողների հուզազգացմունքային զարգացումը, նրանց հոգևոր աշխարհի հարստացումը՝ մանկավարժության, գեղարվեստական կրթության գործունեության հիմնախնդիրներից է: Կարելի է ասել, որ լուսանկարչության և գեղանկարչության ինտեգրված ուսուցումը մեծ ներգործություն կարող է ունենալ սովորողի ընկալման վրա, նրա ստեղծագործական փորձը և գեղագիտական ճաշակը կարելի է հարստացնել լուսանկարչության դասերին՝ ծանոթացնելով գեղանկարչական դասական կոմպոզիցիային և ստեղծագործություններին:

Լուսանկարչական՝ ստեղծագործական գործընթացում մեծ կարևորություն ունի պատկերավոր մտածողությունը, որի հիմքն են կազմում պատկերային արտահայտչամիջոցների, հուզագեղագիտական զարգացումը, դաստիարակությունը և այլ գործոններ (**Морозов С., 1985**): Սովորողների գեղարվեստական գործունեությունը, լուսանկարչության և գեղանկարչության

ինտեգրված ուսուցման ընթացքում կտա նրանց հնարավորություն՝ պատկերի միջոցով դիմացինին հաղորդել այն, ինչն իր կողմից ընկալվում է որպես գեղեցիկ: Գեղեցիկի մասին պատկերացումը իր մաքրագործող հատկությամբ մեծ կարևորություն ունի սովորողների արժեհամակարգի ձևավորման գործում:

Լուսանկարչական արվեստի, մասնավորապես վերջինիս ժանրերից մեկի՝ բնապատկերի միջոցով գեղեցիկի մասին պատկերացումները, կարող են ընդլայնվել՝ սովորողի, բնության հետ փոխհարաբերությունների ընթացքում: Բնությունը սովորողների գեղարվեստական գործունեության վրա ներազդելու հիանալի միջոց է: Լուսանկարչություն դասընթացի շրջանակներում բնապատկերի ուսուցումը, սովորողի մեջ աշխարհաճանաչողություն, վերաբերմունք, մտածողություն և գեղարվեստորեն ստեղծագործելու ունակություններ ձևավորելու հիանալի միջոց է: Գեղարվեստական մանկավարժության մեջ ուսուցման այս միջոցը մեծ ազդեցություն կարող է ունենալ: Կարևոր դեր և նշանակություն ունի տեխնիկայի և էլեկտրոնային միջոցների կիրառումը, դասավանդվող առարկայի շրջանակում՝ տարբեր ուսումնական թեմաների մասին առավել խոր պատկերացում կազմելու, նպատակով (**Московская С., 1995**): Բնության հետ առնչվելով՝ լուսանկարելով, սովորողը ձեռք է բերում գիտելիքներ, հնարավորություն է ունենում ծանոթանալ բնության տարբեր երևույթներին:

Լուսանկարելու ընթացքում ձեռք է բերվում իմացական գիտելիքներ, օրինակ՝ տեսնելով թե ինչպես է զարթոնք ապրում բնությունը, ինչպես են ծաղկում ծաղիկները, ինչպես է անձրևից հետո առաջանում ծիածանը կամ ինչպես են սկսում դեղնել տերևները և այդպես շարունակ (**Marc Newton, 2023**): Բնության հետ առնչվելով՝ մարդու մոտ առաջանում է սեր դեպի դիմացինը, դեպի աշխարհը, սովորողները սկսում են ձևավորել գեղեցիկ և դրական վերաբերմունք կյանքի նկատմամբ: Ուսուցման ժամանակ նրանց արժեհամակարգի զարգացման գործում այս մեթոդը շատ կարևոր է: Մեծ նշանակություն ունի նաև իրենց կողմից կատարած տվյալ աշխատանքների վերլուծությունը թե՛ արվեստաբանական և թե՛

հոգեբանական տեսանկյունից: Ուսուցման մատուցման այս միջոցը, որը ներգրավված է ուսումնական գործունեության մեջ, մեթոդական մեծ նշանակություն ունի և իրականացնում է իրեն հատուկ գործառույթ՝ նպաստելով ձեռք բերած գիտելիքների յուրացման արդյունավետությանը: Այստեղ անձի գեղարվեստական մտքի զարգացման մանկավարժական պայմանների հետազոտումը չափազանց արդիական և կարևոր ուղղություն է մանկավարժության մեջ: Զանգվածային տեղեկատվական միջոցների արագընթաց զարգացումը, էկրանային պատկերումը նոր միջոցներով վերարտադրվող հայտնությունն իր հետ առաջ բերեց այժմեականության պահանջներ գեղագիտական և հոգեբանամանկավարժական ուսումնասիրություններում, որոնք էլ տեղեկատվական տեխնոլոգիաների հոսքի ներգործության միջոցով կապված են մարդու մտավորի և հոգեկանի, վարքի և մտածելակերպի հետ (Дыко Л., 1977):

Վիզուալ արվեստի ուսուցման այս ինտեգրված տեսակը հարկավոր է դիտել որպես կարևոր ազդակ մանկավարժագիտության մեջ, որի կիրառումը գեղարվեստական կրթության ոլորտում կապահովի սովորողների գեղարվեստական ընկալունակության զարգացումը և կնպաստի նրանց մասնագիտական ընդունակությունների ձևավորմանը: Իր ժամանակին ֆրանսիացի փիլիսոփա, մանկավարժ Ս. Ֆրենենն առաջ է քաշել անձի ստեղծագործական ընդունակությունների զարգացման հայեցակարգը, որը գերմանացի մանկավարժ Թ. Շտեյները դրեց առաջին ազատ Վալդորֆյան դպրոցի հիմքում: Հետագայում սովորողների ընդունակությունների զարգացման հարցերը ուսումնասիրվել են խորհրդային շրջանի և ժամանակակից մի շարք հոգեբանների ու մանկավարժագետների կողմից (Բ. Գ. Անանև, Տ. Ի. Արտեմևա, Լ. Ա. Վենգեր, Մ. Գ. Դավլեթջին, Վ. Ա. Կրուտեցկի, Ն. Ս. Լեյտես, Ս. Լ. Ռուբինշտեյն, Վ. Մ. Տեպլով, Պ. Մ. Յակոբսոն, Լ. Թ. Ասատրյան, Հ. Լ. Ներսիսյան, Ս. Մ. Ներսիսյան, Լ. Գ. Աթանեսյան):

Ստեղծագործական ընդունակությունների զարգացման տարրեր տեսանկյուններ՝ կոնստրուկտորական, տեխնիկական ստեղծագործական, գեղարվեստական մտածողության, քննարկվել են նաև Պ. Ն. Անդրիանովի, Վ. Ի. Կաչնևի, Վ. Դ. Պոտիլինի, Յու. Ա. Ստոյարովի, Դ. Ա. Տխորժասկու, Կ. Բ. Գևորգյանի և այլոց հետազոտություններում: Այդ հետազոտությունների հիման վրա ակնառու դարձավ, որ ընդունակություններն ի հայտ են գալիս ոչ միայն որևէ գործունեության մեջ, այլ նաև նրանց զարգացումը պայմանավորված է ժառանգական տվյալներով, հատուկ կազմակերպված ուսուցմամբ: Բացահայտված են ուսումնական տարրեր հաստատություններում ստեղծագործական ընդունակությունների նպատակաուղղված զարգացման դրդապատճառներն ու հնարավորությունները: Այս հիմնախնդրի առանձին տեսանկյուններ ուսումնասիրված են միջավայրի մանկավարժությանը (Ս. Տ. Շացկի), երեխայի հասարակական միջավայրին (Պ. Պ. Բլոնսկի), շրջակա միջավայրին (Պ. Պ. Բլոնսկի, Զ. Ն. Գինզբուրգ, Ա. Ս. Մակարենկո, Ս. Մ. Ռիվես, Վ. Ն. Սորոկա – Ռոսսինսկի, Ս. Մ. Շացկի) նվիրված աշխատություններում:

Չանտեսելով դիտարկված հետազոտությունների նշանակությունը՝ պետք է նշել նրանց տեսամեթոդաբանական բնույթը: Սովորողների ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը նպաստող իրական մանկավարժական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ է բացահայտել հոգեբանամանկավարժական պայմանների համալիրը, մշակել նրա իրացման տեխնոլոգիան: Ստեղծագործական ընդունակությունների զարգացումն ու ձևավորումը պայմանավորված է սովորողների ստեղծագործական ակտիվությամբ և երևակայությամբ (Ростовцев Н., 1980.): Ժամանակակից մանկավարժագետների կարծիքով այսօրվա հրատապ խնդիրն է սովորողների ստեղծագործական ընդունակությունների զարգացման համակարգի ստեղծումը: Աճող մարդու ամբողջական զարգացումը և ստեղծագործական ազատության դրսևորումը հնարավոր է որոշակի հոգեբանամանկավարժական պահանջների ապահովման դեպքում.

1. դաստիարակչական գործընթացը պետք է ենթարկվի անձի զարգացման կենսական ռազմավարության ձևավորմանը և անհատականացման,

2. ուսուցման տեխնոլոգիաները պետք է դրվեն որակական նոր, ակնեռլոգիական մակարդակի վրա՝ ապահովելով յուրաքանչյուր սովորողի ուսուցման նվաճումների հաջողությունը,

3. ուսումնական հաստատություններում անհրաժեշտ է ստեղծել զարգացնող կրթական միջավայր, որը կնպաստի անձի տաղանդի և ստեղծագործական ընդունակությունների ազատ ձևավորմանը:

Վերոնշյալից ելնելով շեշտենք, որ սովորողների ստեղծագործական ընդունակությունների ձևավորմանը և զարգացմանը, անկասկած, կարող է նպաստել ինտեգրված ուսուցումը, մասնավորապես երկու վիզուալ արվեստների՝ լուսանկարչական և գեղարվեստական կրթության համակցմամբ:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Այսպիսով, լուսանկարչական արվեստի սույն տեսական վերլուծությունը ինքնանպատակ չէ, քանզի ցանկացած գեղարվեստական գործունեության ուսումնասիրությունը պետք է ծառայեցվի արդի խնդիրներին: Այստեղից հետևում է, որ ժամանակակից կրթական համակարգում առանձնակի ուշադրություն պետք է դարձնել անցյալում կատարված գիտամեթոդական ուսումնասիրություններին, որոնք ստեղծագործաբար կիրառելով կարելի է հասնել նկատելի արդյունքների: Հետևաբար, անհրաժեշտ է պատշաճ կերպով ուսումնասիրել լուսանկարչական արվեստն ըստ համապատասխան նեղ մասնագիտական ուղղվածությունների՝ ժամանակակից կրթական և սոցիալական պայմանների ռիթմով, ինչպես նաև կազմել գիտական հիմնավորված տեսական և մանկավարժամեթոդաբանական ձեռնարկներ:

Բացի այդ անհրաժեշտ է ստեղծել լուսանկարչության և գեղանկարչության ինտեգրված ուսուցման մեթոդական համակարգ և սովորողների գեղարվեստական ընկալունակությունը զարգացնելու նպատակահարմար

պայմաններ՝ բարձրացնելով նրանց հետաքրքրությունը դասավանդվող առարկայի և ընդհանրապես ուսուցման նկատմամբ:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Կորոտով Վ. (1985)**, Ուսումնադաստիարակչական պրոցեսի ընդհանուր մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատ.:
2. **Բալյան Ա. (1980)**, Գեղագիտական զարգացման տեսություն, մաս 1, Երևան, «Լույս» հրատ.:
3. **Ներսիսյան Լ. (2002)**, Գեղարվեստական պատկերացումների տեղը ստեղծագործական գործունեության մեջ, Երևան, «Զանգակ-97» հրատ.:
4. **Митчел Э. (1988)**, Фотография, Москва, Изд. “Радуга”.
5. **Петрушин В. (2008)**, Психология и педагогика художественного творчества, Учебное пособие для вузов, 2-е изд., Москва, Академический Проект; Гаудеамус.
6. **Московская С. (1995)**, Цвет и звук, Педагогика будущего - синтез искусств, СПб.: Изд. «Типография Ивана Федорова».
7. **Морозов С. (1985)**, Творческая фотография, Москва, Изд. «Планета».
8. **Дыко Л. (1977)**, Беседы о фотомастерстве, 2-е изд., переработ. и доп., Москва, Изд. “Искусство”.
9. **Ростовцев Н. (1980)**, Методика преподавания изобразительного искусства в школе: Учебник для студентов худ.-граф, фак-тов, Москва, Просвещение.
10. **Marc Newton (2023)**, The School of Photography: Beginner's Guide. London, "Ilex press".

### REFERENCES

1. **Korotov V. (1985), Owsomnadastiarakchakan procesi y'ndhanowr met'odika /General Methodology of the Educational Process/, Yerevan, Publishing House "Luys".**
2. **Balyan A. (1980), Geghagitakan zargacman tesowt'yown /Theory of Aesthetic Development/, Part 1, Yerevan, Publishing House "Luys".**
3. **Nersisyan L. (2002), Gegharvestakan patkeracowmneri teghy' steghc'agorc'akan gorc'owneowt'yan mej /The Place of Artistic Imagination in Creative Activity/, Yerevan, Publishing House "Zangak-97".**
4. **Mitchell E. (1988), Fotografiya /Photography/, Moscow, Publishing House "Raduga."**
5. **Petrushin V. (2008), Psikhologiya i pedagogika khudozhestvennogo tvorchestva /Psychology and Pedagogy of Artistic Creativity/, Textbook for Universities, 2-nd edition, Moscow: Academic Project; Gaudeamus.**
6. **Moskoskaya S. (1995), Tsvet i zvuk, Pedagogika budushchego - sintez iskusstv /Color and Sound, Pedagogy of the Future - Synthesis of Arts/, St. Petersburg: Publishing House "Ivan Fedorov Printing."**
7. **Morozov S. (1985), Tvorcheskaya fotografiya /Creative Photography/, Moscow, "Planeta" Publishing,**
8. **Dyko L. (1977), Besedy o fotomasterstve /Conversations on Photographic Mastery/, 2nd edition, revised and expanded, Moscow, Publishing House "Art."**
9. **Rostovtsev N. (1980), Metodika prepodavaniya izobrazitel'nogo iskusstva v shkole /Methodology of Teaching Visual Arts in Schools/: Textbook for Students of Art and Graphics Faculties, Moscow, Prosveshchenie.**
10. **Marc Newton (2023), The School of Photography: Beginner's Guide, London, "Ilex Press."**

## Интегрированное обучение фотографии и живописи в художественном образовании

### Заключение

**Ключевые слова и выражения:** *Фотоискусство, живопись, интегрированное обучение, художественная восприимчивость, педагогические технологии.*

Важными способами творческого самовыражения в современной образовательной среде являются фотография и живопись, которые способствуют самопознанию, формированию художественной восприимчивости и развитию творчества учащихся средних профессиональных учебных заведений. Такая модель интегрированного обучения не только развивает их творческие способности, но и способствует дифференцированному мышлению, применению современных технологий и глубокому пониманию эстетических ценностей. В этом случае фотография используется как средство художественного самовыражения, а художественное образование – как инструмент для подчеркивания эстетических ценностей фотографических работ. Такой подход побуждает учащихся развивать как технические навыки (техника фотографии, технологии съемки), так и живописи (композиция, выразительность цветов и света). Таким образом, комбинированное обучение фотографии и живописи является эффективным способом развития творческих способностей и художественного мировоззрения учащихся, которое развивает не только технические навыки, но и помогает учащимся выражать свои мысли, чувства и идеи уникальными художественными способами, способствуя их интеллектуальному и эстетическому развитию.

Vahe Israyelyan

Integrated teaching of photography and painting in art education

Conclusion

**Key words and expressions:** *Photography, painting, integrated learning, artistic sensitivity, pedagogical technologies.*

Photography and painting are important ways of creative self-expression in the modern educational environment, which contribute to self-knowledge, the formation of artistic sensitivity and the development of creativity of students of secondary vocational educational institutions. This model of integrated learning not only develops their creative abilities, but also promotes differentiated thinking, the use of modern technologies and a deep understanding of aesthetic values. In this case, photography is used as a means of artistic expression, and art education is used as a tool to emphasize the aesthetic values of photographic works. This approach encourages students to develop both technical skills (photography techniques, shooting techniques) and painting (composition, expressiveness of colors and light). Thus, combined photography and painting is an effective way to develop students' creative abilities and artistic worldview, which develops not only technical skills, but also helps students express their thoughts, feelings and ideas in unique artistic ways, contributing to their intellectual and aesthetic development.

**Վահե Իսրայելյան** – Երևանի «Հայրուսակ» համալսարանի Վեբ դիզայնի և ինֆորմատիկայի ամբիոնի դասախոս, Հայաստանում եվրոպական քոլեջի և Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ գեղարվեստական մանկավարժություն, արվեստի պատմություն և տեսություն: [vaheisrayelyan@mail.ru](mailto:vaheisrayelyan@mail.ru)

**Варе Израелян** - Преподаватель кафедры веб-дизайна и информатики Ереванского университета «Айбусак», преподаватель Европейского колледжа в Армении и Ереванского государственного колледжа информатики. Сфера научных интересов: Художественная педагогика, история и теория искусства. [vaheisrayelyan@mail.ru](mailto:vaheisrayelyan@mail.ru)

**Vahe Israyelyan** - Lecturer at the Department of Web Design and Informatics at the "Haybusak" University of Yerevan, as well as a lecturer at the European College of Armenia and the Yerevan State College of Informatics. Scientific interests: Artistic pedagogy, art history and theory. [vaheisrayelyan@mail.ru](mailto:vaheisrayelyan@mail.ru)

*Խմբագրություն է ուղարկվել 27.02.2025թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 04.03.2025թ.*

*Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.*

## ԱՐԳԻՇՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅ-ԹԵՔ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.139*

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հայ-թեք ճարտարապետական ոճը, որը ձևավորվել է հայ ավանդական ճարտարապետության և արդի տեխնոլոգիաների միաձուլման արդյունքում, դարձել է քննարկման արդիական թեմա Հայաստանում: Այն արտացոլում է պատմամշակութային ժառանգության և ժամանակակից մոտեցումների համադրումը, ինչը նպաստում է ազգային ինքնության նորովի ներկայացմանը: Հետազոտությունից ակնկալվող արդյունքն այն է, որ հայ-թեքի զարգացման միջոցով Հայաստանը դառնում է տարածաշրջանում կոմերցիոն, գործարարական, ուսումնակրթական, գիտահետազոտական, կոմունիկացիոն և այլ բաղադրիչներով հագեցված կենտրոն: Հայ-թեքի հիմնական բնութագիրն է համարվում ավանդական ոճերի ինտեգրումը տեխնոլոգիական լուծումների հետ: Ներառյալ նորարարական նյութերի կիրառությունը, որոնք ապահովում են շինությունների երկարակեցությունը և էկոլոգիականությունը, ինչպես նաև ազգագրական մոտիվների վերարժևորումը նոր դիզայնի լեզվով: Հայ-թեք ոճի ուսումնասիրությունը կարևոր է մի քանի պատճառներով. ազգային մշակույթի պահպանության, էկո-ճարտարապետության զարգացման, մրցունակության, քանի որ համաշխարհային շուկայում նման մոտեցումներով նախագծերը կարող են Հայաստանի համար դառնալ յուրահատուկ այցեքարտ: Ուստի հայ-թեք ճարտարապետական ոճը կարող է դառնալ Հայաստանում ինչպես մշակութային վերածննդի, այնպես էլ տնտեսական զարգացման խթան: Ուսումնառությունը և խրախուսումը այս ոլորտում կօգնեն ձևավորել կայուն և ազգային ինքնությանն ուղղված քաղաքաշինական միջավայր:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Հայ-թեք, բարձր տեխնոլոգիաներ, պիկ մոդեռնիզմ, ամրանային կապեր, օդաւարներ:

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XX դարի 2-րդ կեսին ճարտարապետության մեջ որոշակի տեղ էր զբաղեցնում հայ-թեք ոճի նորարարական ուղղությունը: Այս համատեքստում հայկական ճարտարապետական ժառանգությունը, որը դարերի ընթացքում կերտվել է ազգային մշակույթի և ավանդույթային առանձնահատկությունների համադրությամբ, այսօր կանգնած է նորարարական մոտեցումների անհրաժեշտության առաջ: Արդի աշխարհում, որտեղ տեխնոլոգիաները և ստեղծարար լուծումները մեծապես ձևավորում են միջավայրը, հայ ճարտարապետությունն ունի բացառիկ հնարավորություն՝ վերարժևորելու իր ինքնատիպությունը նոր ձևաչափերում: Հայ-թեք ճարտարապետական ոճը, որը ներառում է ավանդական հայկական ճարտարապետության տարրերը և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը, ի հայտ է գալիս որպես նոր ուղղություն՝ շեշտադրելով ազգային ինքնության և առաջադեմ մոտեցումների ներդաշնակությունը: Այս մոտեցումը ոչ միայն ստեղծագործական լուծումների հնարավորություն է տալիս, այլև կարևոր է Հայաստանի՝ որպես մշակութային և տեխնոլոգիական խաչմերուկի դերակատարության համար: Այս հոդվածի նպատակն է վերլուծել հայ-թեք ճարտարապետական ոճի ուսումնառության արդիականությունը՝ բացահայտելով դրա նշանակությունը, հնարավորությունները և առկա խոչընդոտները: Հիմնական խնդիրներն են.

1. Ներկայացնել հայ-թեք ոճի համաաշխարհային ճարտարապետության արդի խնդիրները և նրանց կազմակերպումը:
2. Բացահայտել Հայաստանում հայ-թեքի ոճով կառույցները և նրանց ճարտարապետության հիմնական սկզբունքները:
3. Տալ առաջարկներ Հայաստանում հայ-թեք ոճի ուսումնառության զարգացման ուղղությամբ:

Հողվածի գիտական նորոյթն այն է, որ առաջին անգամ կկատարվի Հայաստանում հայ-թեք ոճով իրականացված կառույցների համալիր համակարգված հետազոտություն և դրանց օրինաչափությունների բացահայտում: Հետազոտության մեթոդաբանությունը հիմնված է մասնագիտական գրականության, զննումների, դիտման մեթոդի, արխիվային փաստաթղթերի և էլեկտրոնային շտեմարանների ուսումնասիրության հիման վրա: Ուսումնասիրությունները ներառում են հայ-թեք ոճի Հայաստանի օրինակներով, իսկ համաշխարհային փորձի ուսումնասիրությունը դիտարկվում են Հայաստանի խնդիրների բացահայտման տեսանկյունից: Հայ-թեքի շնորհիվ փոխվում են ճարտարապետական հայացքներն ու ընկալումները:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Հայ-թեք ճարտարապետական ուսումնառությունը Հայաստանում ներառում է մի շարք մեթոդներ, որոնք ուղղված են ինչպես դասավանդման գործընթացին, այնպես էլ ճարտարապետական նախագծերի մշակմանը: Այս մեթոդները հիմնականում դրվում են եռակի մոտեցմամբ՝ մասնագիտական ուսուցում, մշակութային ժառանգության պահպանություն և նորարարական լուծումներ: Աշխատանքում ներառել ենք պատմական-կոնցեպտուալ և վիզուալ վերլուծության մեթոդները: Առաջինը պատմական և մշակութային համատեքստում ճարտարապետական նախագծերի վերլուծությունն ու համեմատությունն է, իսկ երկրորդը՝ շենքերի ու նախագծերի ձևավորման ուսումնասիրությունը՝ գեղարվեստական, կառուցվածքային ու գործառնական տեսանկյուններից:

### **Հայ-թեք ճարտարապետության ակունքները**

Քսաներորդ դարը շրջադարձային էր ճարտարապետության զարգացման համար: Մերժելով ավանդական ոճերը՝ ճարտարապետները ձգտում էին ստեղծել նոր դարաշրջանին համապատասխան ֆունկցիոնալ նմուշներ: Ճարտարապետության բարեփոխիչներն ավելի խոստումնալից էին համարում պարզ և գործնական ձևավորումները, որոնք հնարավոր են դարձել նոր տեխնոլոգիաների շնորհիվ: Տեխնոլոգիական առաջընթացը

ճարտարապետներին հասանելի է դարձրել պողպատե, երկաթբետոնե և ամուր ապակե բլուկների միջոցով: Առաջացել են այնպիսի ճարտարապետական ոճեր, ինչպիսիք են կոնստրուկտիվիզմը, մոդեռնիզմը, պոստմոդեռնիզմը, դեկոնստրուկտիվիզմը և բարձր տեխնոլոգիաները: Բարձր տեխնոլոգիաների «խորհրդանիշ» աշխատանքը Արվեստի կենտրոնի շենքն էր: Ժ. Պոմպիդու Փարիզի Բոբուր հրապարակում՝ կառուցված 1972-1979թթ. ըստ ճարտարապետի նախագծի (Ռենցո Պիանո և Ռիչարդ Ռոջերս): Եվ այդ պատճառով Ռիչարդ Ռոջերսն իրավամբ համարվում է այս ճարտարապետական շարժման հիմնադիրներից մեկը (Азизян И., 2009): Հայ-թեք տերմինն առաջացել է անգլերենից hi-tech բառից, որը թարգմանաբար նշանակում է «բարձր տեխնոլոգիաներ»: Հայ-թեքի ողջ գաղափարախոսության և պրակտիկայի առաջնորդներն են աշխարհահռչակ ճարտարապետներ՝ Նորման Ֆոսթերը, Ռիչարդ Ռոջերսը, Նիկոլաս Գրիմշոուն, Ջեմս Ստրիլինգը և Ռենցո Պիանոն: Բարձր տեխնոլոգիաների կազմավորման զարգացմանը մեծապես նպաստել է «АРКИГРЕМ» ճարտարապետական խումբը 1960-ական թթ. (Бэнем Р., 1980): Այդ խմբի անդամներն են եղել անգլիացի՝ Փիթեր Կուկը, Ուորեն Չոկը, Ռոն Հերոնը, Ջենիս Կրոմպթոնը, Մայքլ Ուէբը և Դեյվիդ Գրինը: Տեխնոլոգիական կազմի աշխատանքների մեջ նույնպես կարևոր գործունեություն են ծավալել Ռիչարդ Բակմինսթեր Ֆուլլերը իր գեոդեզիական գմբեթով 1960-1983թթ., որի հետ համագործակցել է Նորման Ֆոսթերը և Օտտո Ֆրայյան իր զարգացող կինետիկ ստրուկտուրայով:

1990-ական թթ. սկզբներին բիո-թեք և էկո-թեք ոճերի հակադրությունը փորձել է միացնել ճարտարապետությունը բնության հետ: Համաձայն Չարլզ Ջենքսի համառոտ նկարագրի՝ հայ-թեքն առնչվում է ավելի ուշ մոդեռնիզմ ոճի հետ, այսինքն՝ այն բնութագրում է պրագմատիզմը՝ որպես միտք էլիտար ճարտարապետությունից (էլիտա լատ. eligo, անգլ. և ֆր.՝ «ընտրված, հատընտիր, լավագույն»): Հանդիսանալով և՛ ճարտարապետական գործ՝ որպես արվեստ, և՛ հայ-թեք ոճ՝ ենթարկվել է մասնագիտական քննադատությունների: Տարիների

ընթացքում քննադատություններն ունեցել են իրենց ազդեցությունը, որի շնորհիվ հայ-թեքը, բազում մշակումներ անցնելով, կատարելագործվել է: «Ժամանակակից ճարտարապետությունը կենտրոնանում է նրբագեղության վրա, բայց մոռանում է հետաքրքիր գաղափարների մասին», - Փիթեր Կուկ (**Иконников А., 2002**): Հայ-թեք ոճն անվանում են նոր սերնդի ժամանակակից: Եթե հայ-թեք, ապա պիկ մոդեռնիզմ, լայն իմաստով «գերժամանակակից» միտք ճարտարապետության մեջ: Հայ-թեքը կարելի է բնութագրել ստեղծագործական աշխատանքների մի ամբողջ դարաշրջան: Հայ-թեքն անցել է կազմավորման շրջան, որի յուրաքանչյուր հատված իր մեջ ներառում է նոր գաղափարներ: Նրա տիպային զարգացումների մեջ է մտնում վաղ հայ-թեքը: Վաղ հայ-թեքի շրջանին բնորոշ կառույցներից է եղել Պոմպիդեի կենտրոնը:

Պոմպիդեի կենտրոնը կառուցվել է 1977թ. (կառուցողներ՝ Ռիչարդ Ռոջերս և Ռենցո Պիանո), հանդիսանում է մշակույթի կենտրոն Փարիզում: Այն ամբողջովին մետաղական կառույց է՝ երկարությունը՝ 166 մ, լայնությունը՝ 60 մ, բարձրությունը՝ 42 մ: Ճարտարապետների նախնական գաղափարը եղել է տեխնիկական կոնստրուկցիաներով բոլոր դիրքերից (ամրանային կապեր, խողովակաշարեր, վերելակներ և շարժասանդուղքներ), որոնք կառույցից դուրս են՝ նպատակ ծառայելով տարածքի ներսում մակերեսի կորուստ չունենալուն: Ամրանային հանգույցները ներկված են սպիտակ գույնով, օդափոխության խողովակները՝ կապույտ, ջրամատակարարումը՝ կանաչ, էլեկտրականության գծերը՝ դեղին, իսկ վերելակներն ու շարժասանդուղքները՝ կարմիր: Կոնստրուկցիայի այս գունային գամման միտված է էքստերիերը աչքի զարնելու համար: Այս ոճն ենթարկվել է մասնագիտական քննադատությունների: Փարիզում եղել են վեճեր՝ առաջնային համարել հայ-թեք ոճի կառույց՝ Էյֆելյան աշտարակը, թե Պոմպիդեի կենտրոնը: 1990-ական թթ. վեճերը հանդարտվեցին: Ի վերջո, վաղ հայ-թեք ոճի նախնական կառույց համարվեց Էյֆելյան աշտարակը (կառուցող՝ Գուստավ Էյֆել, 1889թ.): «Ճարտարապետությունը չափվում է անցյալով, դու կառուցում ես ներկան ու փորձում պատկերացնել ապագան»։ Ռիչարդ Ռոջերս (**Andreseans S., 2014**):

Այդ ժամանակվա վաղ հայ-թեք ոճի նորագույն կոնստրուկցիայով և տեխնոլոգիայով հայտնի կառույց է չինական բանկի շենքը Հոնկոնգում՝ 70-հարկանի և 367.40 մ բարձրությամբ երկնաքեր (կառուցող՝ ծնունդով չինացի, ամերիկյան ճարտարապետ՝ Յու Մինգ Պեյ, 1989թ.): Անգլիայում հայ-թեք ոճի շինությունները առաջացան ավելի ուշ: Առաջին անգամ հայ-թեք ոճով շինությունները կառուցվել են 1980-1990-ական թթ. (շինությունների մասնակից՝ Ֆրանկ Լյոյդ Ռայթ, 1986թ.): Անգլիայում հայ-թեք ոճի նախագծերի իրականացման դժվարությունները պայմանավորված են եղել ղեկավարող արքայազն Չարլզ Ֆիլիպպ Արթուր Ջորջ Վինդզորի հետ: Նա խոչընդոտում էր հայ-թեքի զարգացմանը՝ այն դիտարկելով տգեղ ոճ: Ճարտարապետ Չարլզ Ջենքսը կոչ է անում թագավորությանը. «Ճարտարապետությունը թողնել ճարտարապետներին»: Նույնիսկ պատմում են արկածներ, որ սկսվում է նոր պատերազմ «մոնարխիզմ դիկտատուրա՝ արքայազն ընդդեմ ճարտարապետության»: Ժամանակակից հայ-թեքում առաջնային են տեխնաձին սկզբունքները, որովհետև հայ-թեքը ստեղծվել է որպես արտադրական ոճ: Այն ծագել է արդյունաբերական տարածքների դիզայնից, որի մեջ բոլոր էլեմենտները ենթարկվում են ֆունկցիոնալ նշանակության: Ճարտարապետություն հայ-թեքը նախապատվությունը տալիս է ապակուն, մետաղին, պլաստիկ նյութերին, բետոնին և այլ արհեստական էլեմենտներին, որոնք բոլոր շենքերում և շինություններում բավականին թանկ են: Այս գեղարվեստական ոճը, որի մտահղացումները հայտնվեցին 1960-ականներին Անգլիայում, այժմ միակներից է իր ուղղությամբ ճարտարապետների և դիզայներների համար: Հայ-թեքն առանձնանում է իր զարգացումներով, որոնք միտված են օբյեկտը դարձնել առավել ֆունկցիոնալ և հարմարավետ՝ ընդգծելով իր արտաքին առավելությունները: Չնայած այս ամենին՝ ժամանակակից հայ-թեքը ցույց է տալիս գեղագիտություն պարզության ձևով, որը բնորոշ է ցանկացած արդի տեխնոլոգիաներին: Այդ պարզությունն իր մեջ ընդգրկում է պողպատ և ապակի, օգտագործում է արտաքին ֆունկցիոնալ տարրեր՝ վերելակներ, օդատարներ,

ինչպես նաև շարժասանդուղքներ (**Ganno T., 2017**): Ամենավաղ օրինակներից են՝ «Штабквартира» (Լոնդոն, կառուցող՝ Ֆրանկ Լյոյդ Ռայթ, 1986-1991թթ.), Տեղեկատվական կենտրոնը (Լոնդոն, կառուցող՝ Ռիչարդ Ռոջերս, 1992թ.), Բարախաս օդանավակայանը (Մադրիդ, կառուցող՝ Ռիչարդ Ռոջերս, 2006թ.): Եթե հաշվի առնենք որպես բարձր տեխնոլոգիաների ոճով աշխատանքները, ապա կա ենթադրություն խիստ մինիմալիստի և բացակայությունը դեկոր և մոնոխրոմ գամմաների: Փոփոխվելով կոնստրուկցիաները, արդյունաբերական շենքերի բնութագրերը, մետաղական կարկասը տեխնիկական կոմունիկացիաները (խողովակներ, ամրաններ, օդափոխիչներ, վերելակներ, հեծաններ, ֆերմաներ և մալուխներ)՝ իրենց արտահայտությունն են գտնում հայ-թեքում: Անշուշտ, ժամանակակից հայ-թեք ոճը մեր օրերում անհրաժեշտ է:

### **Հայ-թեք ոճի ուսումնառության հիմնահարցերը Հայաստանում**

Հայ-թեքի ուսումնառությունը Հայաստանում ունի մեծ ներուժ՝ համադրելու ազգային մշակութային ժառանգությունը և ժամանակակից տեխնոլոգիաների նորարարությունները: Այս մոտեցումը ոչ միայն վերաիմաստավորում է հայ ճարտարապետության ավանդական արժեքները, այլև նպաստում է դրանց կիրառմանը ժամանակակից միջավայրերում՝ տեխնոլոգիական և էկոլոգիական լուծումներով հարստացած ձևաչափերով: Ուսումնառության արդիականության կարևորությունը ներառում է նախևառաջ ազգային ժառանգության վերարժևորումը: Հայ-թեքի ուսումնառությունը հնարավորություն է տալիս հասկանալու և նորովի մեկնաբանելու հայկական ավանդական ճարտարապետության տարրերը: Մշակութային ժառանգության կիրառումը նորարարական նախագծերում նպաստում է ազգային ինքնության ամրապնդմանը: Մյուս կարևոր պայմանը տեխնոլոգիաների ինտեգրումն է, քանի որ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում՝ թվային նախագծման գործիքներից մինչև վիրտուալ միջավայրերում մոդելավորում, ապահովում է հմտությունների ձեռքբերում, որոնք անհրաժեշտ են միջազգային շուկայում մրցունակ լինելու համար:

Էական է նաև կայունության և էկոլոգիայի ուսուցումը, քանի որ հայ-թեք ոճի կարևոր առանձնահատկությունը կայուն և էկոլոգիապես արդյունավետ լուծումներն են: Ուսումնական ծրագրերում այս թեմաների ընդգրկումը կարևոր է՝ զարգացնելու համար պատասխանատու ճարտարապետություն: Այս ամենը համադրվում է միջազգային համագործակցության ամրապնդմամբ, որովհետև հայ-թեք ոճը կարող է ծառայել որպես յուրահատուկ ուղղություն՝ ապահովելով հայ ճարտարապետների մասնակցությունը միջազգային նախագծերում և զարգացնելով փոխադարձ գիտելիքների փոխանակումը:

Այս ամենով հանդերձ, կան մի շարք գործուն խոչընդոտներ, որոնք ոչ դրական կերպով են ազդում ուսումնառության զարգացմանը: Ուսումնական ծրագրերի թարմացման կարիքը դրանց գլխավոր խնդիրն է, քանի որ գործող կրթական ծրագրերը հաճախ չեն համապատասխանում ժամանակակից հայ-թեք ոճի պահանջներին: Նորարարական ենթակառուցվածքների պակասը ևս էական դեր ունի այս ոլորտում: Շատ ուսումնական հաստատություններ չունեն համապատասխան լաբորատորիաներ և տեխնոլոգիաներ, որի պատճառով հայ-թեքի մասին բավարար գիտելիքների բացակայությունը սահմանափակում է մասնագետների ու ուսանողների հետաքրքրությունը:

Ըստ այդմ, հայ-թեքի ուսումնառության արդիականացումը պահանջում է համալիր և երկարաժամկետ ռազմավարություն, որը ներառում է կրթական ծրագրերի վերափոխում, տեխնոլոգիաների ներդրում, միջազգային համագործակցություն և հանրային իրազեկում: Այս մոտեցումը հնարավորություն կտա ոչ միայն պահպանել հայկական մշակույթի ինքնատիպությունը, այլև այն համադրել նորարարական և կայուն ճարտարապետական լուծումների հետ՝ ձևավորելով ժամանակակից հայ ճարտարապետության նոր դարաշրջան:

Հայ-թեքի ուսումնառության կարևոր բաղադրիչը նմանաբովանդակ կառույցների ծանոթացումն է և ուսումնասիրումը՝ ինչպես դիդակտիկ պարագաների օգնությամբ, այնպես էլ դաշտային հետազոտությունների միջոցով: Այս համատեքստում կարևոր է նախևառաջ ուսումնասիրել Հայաստանում նշյալ

ոճով կառուցված խոշորագույն կառույցները և շեշտել դրանց ոճային և կառուցվածքային առանձնահատկությունները: Մենք առանձնացրել ենք դրանցից՝ Զվարթնոցի միջազգային օդանավակայանը, Նաիրիտի գործարանը և Կարճաղբյուրի ձկնաբուծական համալիրը:

**1. Զվարթնոց միջազգային օդանավակայան.** Ժամանակակից հայ-թեք ոճի օրինակ է Զվարթնոց միջազգային օդանավակայանի նորակառույց վարչական շենքը: Շինարարության տևողությունը՝ 2007-2011թթ. (ճարտարապետ՝ Ժորժ Շեխյան): Ճարտարապետության մեջ որդեգրվել էր մեկ կարևոր սկզբունք՝ շենքն ամբողջությամբ պետք է լիներ մետաղական կառույց: Կառույցն ամբողջությամբ հագեցված է գերժամանակակից տեխնոլոգիաներով: Հատուկ ուշադրություն է հատկացվել շենքի սեյսմակայունության խնդրին: Ամբողջ շինությունը ռետինեմետաղական հակասեյսմիկ բարձիկների վրա է կառուցված: Օգտագործվել է 150-ից ավել բարձիկ՝ ռետին – արճիճ համադրությամբ, ինչը գիտության մեջ վերջին խոսքն է այս ոլորտում: Ինդոնեզիայից բերված, սակայն նորգելանդական այս տեխնոլոգիան 70 տոկոսով նվազեցնում է սեյսմիկ ցնցումների ազդեցությունը շենքի վրա: Բարձիկները փոխվելու են տասը տարին մեկ անգամ, կամ՝ ըստ անհրաժեշտության: Հինգ մակարդակ ունեցող շենքի առաջին և երկրորդ հարկերը նախատեսված են մեկնող և ժամանող ուղևորների համար, իսկ մնացած երեք ստորգետնյա հարկերը բեռների ստուգման և անվտանգության համակարգերի կառավարման նպատակ ունեն: Կարևոր է, որ շենքն այնպես է կառուցված, որ անհրաժեշտության դեպքում (օրինակ՝ ուղևորների ավելացման) այն ընդարձակվելու հնարավորություն ունի: Շենքը հիմնականում ապակեպատ է, որոնք մետաղական ձողերի օգնությամբ միացված են կրող կոնստրուկցիաներին: Տանիքն իրականացված է մետաղական ֆերմաներից, որոնց միջոցով տարված են մի շարք կոմունիկացիաներ՝ օդատարներ, հակահրդեհային անվտանգության համակարգեր, էլեկտրահաղորդման մալուխներ և այլն: Միջհարակային ծածկն

իրականացված է միաձույլ ե/բ-ե կոնստրուկցիաներից և սալիկապատված՝ գրանիտով: Ուղղաձիգ հաղորդակցման ուղիներն են՝ շարժասանդուղքներն և վերելակները: Վերելակները ապակու և մետաղի համադրությամբ են: Գլխավոր մուտքը շեշտում է ստրուկտուրային հովարով, որը հենված է ձողային փնջերի վրա: Զվարթնոց օդանավակայանն իր տեսակով լավագույնն է ճանաչվել Անդրկովկասում: Այսպիսով, օդանավակայանի ինտերիերի և էքստերիերի ճարտարապետական էլեմենտները տանում են դեպի հայ-թեք ոճ:

2. **Նաիրիտ գործարան.** արդի պայմաններում դժվար է պատկերացնել աշխարհն առանց բարձրտեխնոլոգիաների, որոնք մեծ դեր ու նշանակություն ունեն մեր կյանքի գործունեության շատ ոլորտներում: Բարձր տեխնոլոգիաների զարգացման ոլորտում Հայաստանն ևս անմասն չմնաց: Հայաստանը տնտեսական աճին զուգընթաց նաև վերելք ապրեց բարձրտեխնոլոգիաների ոլորտում: Անկախությունից հետո (1991թ.) Հայաստանը մուտք գործեց ներդարաշրջան՝ ընդունելով Եվրոպայի «մարտահրավերը» հայ-թեքյան ոճով: Հայաստանում հայ-թեքի զարգացման հիմնական նշանակետը հանդիսացավ Երևանը: Բնական է, որ հազարամյակների պատմություն ունեցող ազգի համար բավականին բարդ էր ազգային ճարտարապետությունը տանել դեպի ժամանակակիցի մոտեցումներով: Դեռևս Խորհրդային Հայաստանում՝ 1940-ականներին, բարձր տեխնոլոգիաների ոճով կառուցվել է Նաիրիտ քիմիական գործարանը:

Այդ ժամանակահատվածում միտք անգամ չի եղել, որ այն կարող էր դասվել հայ-թեք ոճում: Նաիրիտ գործարանը հիմնադրվել է 1940թ.-ին Խորհրդային Հայաստանում: Այն գտնվում է Շենգավիթ վարչական շրջանում (Երևան): Արհեստական կաուչուկ արտադրող գործարանը գրեթե ամբողջությամբ մետաղական է: Առաջին հայացքից պարզ, բայց, միևնույն ժամանակ բարդ կոնստրուկցիաներով գործարանն առանձնանում է իր տեսակով Հայաստանում գործող այլ շենքերից: Բոլոր կոմունիկացիաները դուրս են բերված շենքի արտաքին մասերում՝ օդատարներ, ջրահեռացումներ, էլեկտրականություններ և

այլն: Հեռվից նայելիս ակնհայտ երևում է գործարանի մետաղական հանգույցները: Աստիճանավանդակները և կապող կամուրջները գտնվում են շենքի արտաքին հատվածներում: Գործարանը մասամբ վերագործարկվել է 1992-1993թթ. Եվրոպայի մասնագետների կողմից նորագույն տեխնոլոգիաներով:

**3. Կարճադրյուրի ձկնաբուծական համալիր.** Հայաստանում հայ-թեք ոճի կառույց է հանդիսանում նաև Գեղարքունիքի մարզի Կարճադրյուր համայնքում կառուցվող ձկնաբուծական համալիրը: Ձկնաբուծական համալիրը նախագծվել է 2014թ.-ին, կառուցող՝ «Հայնախագիծ» ԲԲԸ, որի շինարարական աշխատանքները արդեն ավարտվել են:

Արտադրական մասնաշենքն իրենից ներկայացնում է ժամանակակից մետաղա-կոնստրուկցիաներով կառույց՝ 17x6մ քայլով և 37,7մ երկարությամբ թռիչքով: Այսպիսի մեծ թռիչքներն ապահովում են մետաղական շրջանակները: Մետաղական շրջանակները, պատերը և տանիքը պատված են սենդվիչ պանելներով: Սենդվիչ պանելները շրջանակներին միացված են մետաղական C-աձև և Z-աձև էլեմենտների միջոցով: Տեխնոլոգիայի հիմնական մասը դանիական և գերմանական են, որոնք շատ հուսալի են և ժամանակակից: Գլխավոր կոնունիկացիան այս գործարանում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերն են: Ջեռուցման և օդափոխման համակարգերը շենքից դուրս են տեղադրված՝ կցակառույցներում: Կցակառույցներում տեղադրված են նաև տեխնոլոգիական, խմելու-տնտեսական, հակահրդեհային համակարգերի համար նախատեսված պոմպեր: Նույն կոնստրուկտիվ համակարգով է իրականացված նաև վերամշակման մասնաշենքը:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Քննարկված խնդիրները հուշում են, որ այսօր արդիական է Հայաստանում կատարել հայ-թեք ոճով իրականացված կառույցների և տվյալ ճարտարապետության հետագա զարգացման հնարավորությունները բացահայտող հետազոտություն: Հայ-թեք ճարտարապետական ոճը յուրահատուկ հնարավորություն է ստեղծում ազգային մշակութային ժառանգությունը

վերախմաստավորելու և այն համադրելու արդի տեխնոլոգիաների հետ: Այս մոտեցումը ոչ միայն նպաստում է հայկական ճարտարապետության ինքնության պահպանմանը, այլև հնարավորություն է տալիս լուծել ժամանակակից քաղաքաշինության ու էկոլոգիական խնդիրները: Հիմնվելով վերլուծության վրա՝ կարելի է եզրակացնել, որ հայ-թեք ոճի ուսումնառությունը Հայաստանում ունի մի շարք կարևոր ուղղություններ:

1. Մշակութային ինքնության ամրապնդումը, որով ավանդական և ժամանակակիցի համադրումը նպաստում է ազգային արժեքների պահպանմանը նոր ձևաչափերով:
2. Տեխնոլոգիական հնարավորությունների ընդլայնումը, քանի որ նորարարական նյութերի և կայուն լուծումների կիրառումը թույլ են տալիս ձևավորել արդյունավետ և ֆունկցիոնալ միջավայր:
3. Միջազգային մրցունակությունը, որի շնորհիվ հայ-թեք ոճը կարող է ծառայել որպես Հայաստանի յուրօրինակ այցեքարտ համաշխարհային ճարտարապետական դաշտում:

Այնուամենայնիվ, զարգացման ճանապարհին կան մի շարք խոչընդոտներ, այդ թվում՝ մասնագիտական կրթության պակասը, պետական քաղաքականության թերությունները և հասարակական տեղեկացվածության ցածր մակարդակը: Այս խնդիրների լուծումը պահանջում է համալիր մոտեցում՝ ներառելով կրթական համակարգի բարեփոխումները, պետական աջակցության մեխանիզմների զարգացումն ու հանրային իրազեկման ծրագրերի իրականացումը:

Այսպիսով, հայ-թեք ճարտարապետության ուսուցումը և խրախուսումը կդառնան կարևոր քայլ՝ ազգային մշակութային ժառանգությունը ժամանակակից համատեքստում ներկայացնելու և Հայաստանի քաղաքաշինական դիմագիծը նոր մակարդակի բարձրացնելու ուղղությամբ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. **Азизян И. (2009)**, Очерки истории теории архитектуры нового и новейшего времени, Санкт-Петербург, Коло.
2. **Бэнэм Р. (1980)**, Взгляд на современную архитектуру: Эпоха мастеров, Москва, Стройиздат.
3. **Иконников А. (2002)**, Архитектура XX века. Утопии и реальность, т. 2. Москва, Прогресс-Традиция.
4. **Andreaseans S. (2014)**, Shell Structures for Architecture. Form Finding and optimization, New York, Routledge.
  5. **Ganno T. (2017)**, Reyner Banham and the Paradoxes of High Tech, Los Angeles, Getty Publications.

## REFERENCES

1. **Azizyan I. (2009)**, Ocherki istorii teorii arkhitektury novogo i noveyshego vremeni /Essays on the History of the Theory of Architecture of the New and Contemporary Times/, St. Petersburg, Kolo.
2. **Benham P. (2011)**, Vzgl'yad na sovremennuyu arkhitekturu: Epokha masterov /A Look at Contemporary Architecture: The Age of Masters/, Moscow, Stroyizdat.
3. **Ikonnikov A. (2002)**, Arkhitektura KHKH veka. Utopii i real'nost' /Architecture of the 20th Century. Utopias and Reality/, Vol. 2. Moscow, Progress-Tradition.
4. **Andreaseans S. (2017)**, Shell Structures for Architecture. Form Finding and optimization, New York, Routledge.
5. **Ganno T. (2017)**, Reyner Banham and the Paradoxes of High Tech, Los Angeles, Getty Publications.

Аргишти Хачатрян

### Современность армяно-тек архитектурного стильного образования в Армении

#### Заключение

**Ключевые слова и выражения:** Хай-тек, высокие технологии, пик модернизма, усиленные соединения, воздуховоды.

Армянский архитектурный стиль, сформировавшийся в результате слияния традиционной армянской архитектуры и современных технологий, стал актуальной темой дискуссий в Армении. Ожидаемый результат исследования заключается в том, что благодаря развитию армянских технологий Армения становится центром, оснащенным коммерческими, деловыми, образовательными, научными исследованиями, коммуникацией и другими компонентами. Основной характеристикой армянских технологий является интеграция традиционных стилей с другими технологическими решениями. В том числе использование инновационных материалов, обеспечивающих долговечность и экологичность зданий, а также переосмысление этнографических мотивов на новом языке дизайна. Изучение армянского стиля важно по нескольким причинам. сохранение национальной

культуры, развитие экоархитектуры, конкурентоспособность, ведь проекты с такими подходами могут стать уникальной визитной карточкой Армении на мировом рынке. Таким образом, архитектура в армянском стиле может стать стимулом как для культурного возрождения, так и для экономического развития в Армении. Исследования и поощрение в этой области помогут сформировать устойчивую и ориентированную на национальную идентичность среду городского развития.

**Argishti Khachatryan**

### **Modernity of Armenian-tech architectural style education in Armenia**

#### **Conclusion**

**Key words and expressions:** *High-tech, high technology, peak of modernism, reinforced connections, air ducts.*

The Armenian architectural style, formed as a result of the fusion of traditional Armenian architecture and modern technology, has become a hot topic of discussion in Armenia. The expected result of the study is that due to the development of Armenian technology, Armenia becomes a center equipped with commercial, business, educational, scientific research, communication and other components. The main characteristic of Armenian technologies is the integration of traditional styles with others. technological solutions. Including the use of innovative materials that ensure the durability and environmental friendliness of buildings, as well as the rethinking of ethnographic motifs in a new design language. Studying Armenian style is important for several reasons. preservation of national culture, development of eco-architecture, competitiveness, because projects with such approaches can become a unique calling card of Armenia in the world market. Thus, Armenian-style architecture can become a stimulus for both cultural revival and economic development in Armenia. Research and encouragement in this area will help create a sustainable and national identity-oriented urban development environment.

**Արգիշտի Խաչատրյան** – Հայաստանի Եվրոպական համալսարանի Ճարտարապետության և գրաֆիկ դիզայնի ամբիոնի դասախոս: Հեղինակ է երկու ուսումնամեթոդական ձեռնարկի: [argishti.khachatryan@internet.ru](mailto:argishti.khachatryan@internet.ru)

**Аргишти Хачатрян** – преподаватель кафедры “архитектуры” и “графического дизайна” Европейского университета Армении. Автор двух учебно-методических пособий. [argishti.khachatryan@internet.ru](mailto:argishti.khachatryan@internet.ru)

**Argishti Khachatryan** – Lecturer at the Department of “Architecture” and “Graphic Design” at the European University of Armenia. Author of two educational and methodological manuals. [argishti.khachatryan@internet.ru](mailto:argishti.khachatryan@internet.ru)

*Խմբագրություն է ուղարկվել 19.02.2025 թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 25.02.2025թ.*

*Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.*

АННА ЕГЯН

**АКТУАЛЬНОСТЬ СОПОСТОВИТЕЛЬНОЙ АРХИТЕКТУРНОЙ ЛЕКСИКИ  
АНГЛИЙСКОГО ЯЗЫКА*****DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.140*****СОДЕРЖАНИЕ**

Данная работа посвящена сравнительно-сопоставительному описанию архитектурной лексики английского языка. Она охватывает область, к которой относятся "Архитектурное проектирование", "Районная планировка и градостроительство", "Архитектурные сооружения", "Архитектурно-декоративные материалы" и которая в настоящее время насчитывает свыше 70 тыс. терминов и номенклатурных единиц. В избранной нами области наиболее выразительно проявляются особенности, присущие всей архитектурной терминологии. За последнее десятилетие в языкознании наблюдается возрастающий интерес к лингвистическому анализу специальной лексики отдельных областей знания: авиационной, анатомической, военной, лексики и терминологии компьютерной терминологии, статистики, лексикографической, метеорологической, общественно-политической, спортивной, терминологии холодного оружия, экологической, экономической и ряда других. Существуют исследования и особенностей архитектурной лексики. Однако эти работы посвящены рассмотрению других разделов архитектурной лексики: помещений, архитектурных конструкций или отдельным аспектам только английской терминологии. Проблемы системного описания английской лексики успешно разрабатываются многими лингвистами: **Б.Н. Головиным, С.В. Гриневым, Ю.Н. Карауловым, Ю.Н. Марчуком, Л.Л. Нелюбиным, Л.А. Телегиным, А.А. Уфимцевой, Н.М. Шанским, Д.Н. Шмелевым, Л.В. Щербой** и др.. В отечественном языкознании эти вопросы рассматривались • как учеными

Института языка им. Гр. Ачаряна, так и специалистами Ереванского госуниверситета. В частности, большое признание получили работы **Г.Б.Джаукяна, С.В.Мурадяна, С.А. Аракеляна** и др.. Возросший в настоящее время интерес к изучению терминологий объясняется рядом причин как внеязыкового, так и внутриязыкового характера.

***Ключевые слова и выражения:** архитектурная лексика, лингвистический анализ, архитектурная конструкция, терминология.*

## **ВВЕДЕНИЕ**

Актуальность сопоставительных исследований терминологий вызвана тем, что по существующим данным до 75% времени, затрачиваемого на перевод, уходит на перевод терминов. Поэтому проблема сопоставления (в особенности системного) терминологий для повышения качества перевода приобретает все большую актуальность, и не случаен постоянный интерес переводчиков и терминоведов к установлению надежных эквивалентов терминов в переводных словарях специальной лексики.

В настоящее время в общей лингвистике наблюдается тенденция к более тщательному исследованию отношений между языком и культурой, языком и национальными особенностями психологии. Наиболее полно данная связь раскрывается именно в лексике того или иного языка. Различия между лексическими средствами ярче всего выступают в различиях между лексическими системами, в специфике отношений, связывающих лексические единицы между собой. Через системное лексическое отображение той или иной области реальности в скрытой форме могут быть отражены национальные особенности мышления, особенности психологического восприятия окружающей жизни и отношения людей к тем или иным ее аспектам. Для установления общих национальных психологических особенностей, присущих всем представителям данной языковой группы, целесообразнее всего изучать наиболее близкие к быту

и общей культуре человека семантические области, играющие в его жизни важную роль.

### **МЕТОДОЛОГИЯ**

Архитектурная лексика отражает одну из наиболее древних областей знаний, составляющих неотъемлемую часть человеческого опыта. На протяжении всей истории архитектурной лексики наименования архитектурных сооружений представляли собой памятники человеческой цивилизации. С незапамятных времен здания определяли условия человеческой жизни и труда, являясь не только местом пребывания человека, но и одним из неотъемлемых факторов формирования его мировоззрения и миропонимания, качеств, от которых напрямую зависела созидательная активность индивида и темп прогресса. Важность сопоставительного анализа и межъязыкового упорядочения - гармонизации терминологии трудно переоценить. Установление точных эквивалентов не только резко повышает качество научно-технического перевода, но и является одним из неперемных условий машинного перевода. Еще одной немаловажной деталью является то, что, как известно, наличие стройной и непротиворечивой терминологии способствует оптимизации развития области знания, которую она описывает.

### **ОБСУЖДЕНИЕ**

Термины служат для закрепления результатов познания специальных областях знаний и деятельности, а только при удачной передаче накопленного опыта возможно дальнейшее познание и усовершенствование ов науки и тидох техники. Непротиворечивая унифицированная терминология не только лингвистически отражает систему определенных понятий, но и обладает прогностическими свойствами, может стать инструментом для дальнейшего развития той или иной области науки и техники. Стремительный рост количества терминологических единице на рубеже веков, ог недостаточная изученность названной области архитектурной лексики и наличие ряда несоответствий и

неточностей перевода в специальных словарях вызвали необходимость упорядочения и комплексной унификации терминов. Однако эффективная унификация терминологии должна опираться на предварительное лингвистическое исследование. **Еще** одной немаловажной деталью является то, что, как известно, наличие стройной и непротиворечивой терминологии способствует оптимизации развития области знания, которую она описывает. Стремительный рост количества терминологических единиц на рубеже веков, недостаточная изученность названной области архитектурной лексики и наличие ряда несоответствий и неточностей перевода в специальных словарях вызвали необходимость упорядочения и комплексной унификации терминов. Однако эффективная унификация терминологии должна опираться на предварительное лингвистическое исследование.

В качестве одного из исходных положений при проведении сопоставительного исследования принято положение **Л.Л. Нелюбина** о том, что «...с точки зрения трудности понимания и перевода терминов возможно их деление на три группы: термины, обозначающие иностранные реалии, идентичные отечественным реалиям; термины, обозначающие иностранные реалии, для которых отсутствуют отечественные реалии, но есть общепринятые терминологические эквиваленты; и термины, обозначающие иностранные реалии, для которых отсутствуют отечественные аналоги и нет общепринятых терминологических эквивалентов» .

## **ЗАКЛЮЧЕНИЕ**

Проблема разделения терминов и общеупотребительных, бытовых слов в области архитектуры приобретает большое значение, поскольку одной из наиболее важных и любопытных особенностей исследуемой лексики является ее близость к общеупотребительному, быденному языку. Исследование показало, что проблема отделения специальной лексики от обычных общеупотребительных

слов может быть решена за счет используемых источников — в данном случае специальных словарей.

Отбор лексики из специального (терминологического) словаря представляется весьма эффективным приемом (менее трудоемким и более качественным), ввиду того, что количество терминов, собранных в нем, является наиболее полным по сравнению со всеми видами известных источников, из которых может быть почерпана необходимая лексика

#### ЛИТЕРАТУРА

1. **Нелюбин Л. (1989)**, К описанию терминологической лексики, Сб научных трудов по лингвистике. **Саратов**.
2. **Лейчик В. (2000)**, Терминология и терминосистема. Научно-техническая терминология, Москва, Вып. 2, с. 54-56.

#### REFERENCES

1. **Nelyubin L. (1989)**, On the description of terminological vocabulary. - Collection of scientific papers on linguistics. **Saratov**.
2. **Leichik V. (2000)**, Terminology and terminology system. Scientific and technical terminology, Moscow, Issue 2, p. 54-56.

Աննա Եղյան

**Անգլերեն ճարտարապետական բառապաշարի զուգորդական  
ուսումնասիրության արդիականությունը  
Եզրակացություն**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** ճարտարապետական բառապաշար, լեզվաբանական վերլուծում, ճարտարապետական կառուցվածք, տերմինաբանություն:

Հոդվածում ներկայացված են անգլերեն ճարտարապետական բառապաշարի և տերմինների ուսումնասիրության արդիականությունը և դրա կարևորությունը: Նաև կարևոր է հաշվի առնել այն փաստը, որ տվյալ տերմինները իրենց իմաստով իրապես տարբերվում են ընդհանուր գործածական բառապաշարից: Այսօր ընդհանուր լեզվաբանության մեջ անհրաժեշտություն է նկատվում լեզվի և մշակույթի, լեզվի և ազգային առանձնահատկությունների միջև էլ ավելի մանրամասն ուսումնասիրություն: Ճարտարապետական բառապաշարը գիտելիքների հնագույն ոլորտներից մեկն է:

Ողջ պատմության ընթացքում ճարտարապետական բառապաշարը համարվում է մարդկային քաղաքակրթության հուշարձան:

Ոչ քիչ կարևոր մաս է ներդաշնակ և ոչ հակասական տերմինաբանությունը, որ նպաստում է ոլորտի գիտելիքների զարգացմանը: Խնդիրն այն է, որ բաժանումն ու տարբերությունը տերմինների և ընդհանուր գործածական առօրյա ճարտարապետական բառապաշարի միջև ձեռք է բերում մեծ կարևորություն և նշանակություն, քանի որ ուսումնասիրվող մասնագիտական բառապաշարը պետք է հնարավորինս մոտ լինի առօրյա բառապաշարին:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մասնագիտական բառապաշարից առօրյա բառապաշարի տարանջատման խնդիրը կարող է լուծվել օգտագործվող աղբյուրների շնորհիվ, այս դեպքում՝ հատուկ բառարանների միջոցով:

Anna Yeghyan

**The Relevance of comparative study of english architectural vocabulary****Conclusion**

**Key words and expressions:** *architectural vocabulary, linguistic analysis, architectural construction, terminology.*

The article is devoted to the to the relevance of study of english architectural vocabulary and terms and its importance. And its not less important to mention that the terms is really differed from its general use by its meaning. Nowadays we notice the need of general linguistic studies between language and culture, language and national features.

Architectural vocabulary is one of the oldest fields of knowledges. During whole history architectural vocabulary represents monuments of human civilization.

Important part is harmonious and consistent terminology, too. It contributes the development of the field.

The problem of the division and difference between terms and general routine used architectural vocabulary must be close to the routine vocabulary.

The research has shoin that the separation of routine vocabulary can be solved by the help of using special dictionaries.

**Աննա Եղյան** - Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ: Գիտական հետաքրքրությունները՝ Անգլերեն ճարտարապետական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգը: Հեղինակ է վեց հոդվածի: [annayeghyan@gmail.com](mailto:annayeghyan@gmail.com)

**Анна Егях** - Аспирант кафедры шебодики и преподавания иностранные языков в АГПУ им. Х. Абовяна. Сфера научных интересов: Методическая система изучения английской архитектурной лексики Автор около шесть статей. [annayeghyan@gmail.com](mailto:annayeghyan@gmail.com)

**Anna Yeghyan** - Phd student of the Chair of Foreign Language Teaching Methodology at the Kh. Abovyan ASPU. Scientific interests: The Methodological system of English architectural vocabulary study. Author of about six articles.  
[annayeghyan@gmail.com](mailto:annayeghyan@gmail.com)

*Խմբագրություն է ուղարկվել 27.02.2025թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 05.03.2025թ.*

*Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.*

## ՆԱԻՐԱ ՍԻՄՈՆՅԱՆ

ԼԱՅՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀՈՒՄԱՆԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ  
ՄԻՋԱՎԱՅՐ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.141

## ԱՄՓՈՓՈՒՄ

Աշխարհը շատ արագ զարգացում է, ապրում և պահանջում հասարակության նորացում: Նորացումն էլ ենթադրում է կրթական մեթոդների և ձևերի լավարկում, որը պետք է արժևորի անձին և նպաստի նրա արժեհամակարգի ձևավորմանը:

«Հ կառավարությունը 2021թ. հաստատեց հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական ծրագրերի և չափորոշիչների ձևավորման և հաստատման գործընթացները, որով հնարավոր էր լինելու իրականացնել ՀՀ կրթության մինչև 2030թ. զարգացման պետական ծրագրի հիմնախնդիրները: Այս նոր գործընթացի հիմքում դրվեց ոչ միայն գիտելիքահեն կրթությունը, այլ նաև այն կարողունակությունները, որոնք սովորողի մոտ ձևավորվելու են կրթական գործընթացում և որոնցով սովորողը մտնելու է կյանք և դրանք դարձնելու միջոց՝ ապրելու և արարելու համար: Պետական կրթական քաղաքականության որդեգրած այս պահանջը դարձավ այն հզոր գործիքակազմը, որով դպրոցները փոխեցին իրենց ուսուցանողական ծրագրերի նպատակները և ըստ այդմ սահմանեցին չափելի և հստակ խնդիրներ՝ ուսումնադաստիարակչական գործընթացն առավել արդյունավետ և ճկուն կազմակերպելու համար:

***Կրթության մեջ կարևոր է և՛ գիտելիքը,  
և՛ հումանացված կրթական միջավայրը:  
Սխալ միջավայրում գիտելիքը չի  
յուրացվում, իսկ ճիշտ միջավայրում մարդն  
ինքն է գիտելիք փնտրում:***

Գործողությունները պլանավորելիս հիմք ենք ընդունել ՀՊԶ-ի 2-րդ բաժնի 8-րդ կետի 6-րդ ենթակետի, 6-րդ բաժնի 13-րդ կետի, 15-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջները:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** կարողունակություն, Արվեստանոց, արտադրանք, սոցիալականացում, ապրումակցում, ստեղծարարություն, Հանրակրթական պետական չափորոշիչ:

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածում ներկայացվում է <<Լայն հնարավորություններով>> **հումանացված կրթական միջավայրի մասին**, որտեղ սովորողներն ունեն հետաքրքրություններ, զբաղվածություն և կարևորված են:

2023-2024 ուստարում քիչ սովորողների թիվ ունեցող դպրոցներին պետական ֆինասավորմամբ տրվեցին անհատական ընտրովի բաղադրիչից/ ուսումնական պլանի ընդհանրական կառուցված/ ժամեր խմբակների գործունեության համար: Մենք դպրոցում բացեցինք կերպարվեստի, թատերական, ազգային պարի, երգչախմբի, մեդիագրագիտության խմբակներ, որտեղ սովորողները սկսեցին ստեղծագործել և բովանդակություն սպառողներից վերածվեցին բովանդակություն ստեղծողների: Այսինքն՝ մենք սովորողների ձեռք բերած ակադեմիական գիտելիքը դրեցինք գործողության մեջ, հմտացրինք նրանց՝ գիտելիքը օգտագործել <<արտադրանք>> ստանալու և սպառելու համար:

### ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ցանկանում ենք դպրոցը վերածել կրթական ռեսուրս-կենտրոնի, որտեղ կարևոր է և՛ գիտելիքը, և՛ այն կիրառելու արվեստը,
- Կրթական կենտրոն, որտեղ երեխաներին տարբեր մեթոդներով սովորեցնում ենք ապրելու արվեստը,
- Կենտրոն, որտեղ սովորողներն ունեն մշտական զբաղվածություն և հետաքրքրություն,

- Կենտրոն, որը մոտիվացնում է սովորողին արարել, ցանկալի և պահանջված է դառնում սովորողի համար:

### **ՔՆՆԱՐԿՈՒՄ**

#### **Լայն հնարավորություններով կրթական միջավայրում մեր սովորողները սկսեցին՝**

1/ Արվեստանոցում թափոններին երկրորդ կյանք տալ, ստեղծել պիտանի իրեր և դրանք տոնավաճառներում իրացնել /դառնալ բնապահպանական մշակույթի կրողներ/ և ունենալ մշտական զբաղվածություն: Արվեստանոցում սովորողները ձեռք են բերում աշխատանքային հմտություններ, կարողանում են հմուտ և անվտանգ օգտագործել տարբեր սարքեր. սովորողները մտքում ծնված գաղափարները ձեռքերի ուժով կենդանացնում և դրանց շունչ են տալիս:

2/ Ստեղծել անհմացիոն մուլտֆիլմեր, սահիկաշարեր /դառնալ անվտանգության մշակույթի կրողներ, պայքարել արատավոր երևույթների դեմ/: Մեդիա սպառողից դառնալ մեդիա ստեղծող:

3/ Բացել արվեստի աշխարհի դռները, նպաստել նրանց վարպետությանը, ստեղծարարությանը, կատարողականության զարգացմանը/ դառնալ ազգային և համաշխարհային արվեստի կրողներ և լուսաբանողներ/.

4/ Նպաստել միջառարկայական կապերի ակտիվ ներգրավմամբ՝ արվեստի և ժողովրդական արհեստների տարբեր տեսակներին հաղորդակցվելու, ինքնուրույն գեղարվեստական ստեղծագործական նախաձեռնություն ծավալելու գործունեությանը /կավագործություն, խեցեգործություն, փայտամշակում, տիկնիկագործություն և այլն/:



**Այս քայլաչափով փորձեցինք բավարարել սովորողների՝**

- պատկանելիության և խրախուսանքի պահանջմունքը,
- կարողունակ լինելու և ինքնադրսևորվելու պահանջմունքը,
- մտավոր և բարոյական արժեքների կրողը լինելու պահանջմունքը:

**Մեր գործողություններով փորձեցինք սովորողների մեջ սերմանել /նպատակը/**

- համամարդկային և ազգային մշակութային արժեքների մասին ինտեգրացված գիտելիքների և դրանց նկատմամբ վերաբերմունքի դաստիարակություն՝
- անձնակողմնորոշված դաստիարակություն՝
- երեխայի հետաքրքրությունների, պահանջմունքների, հակումների և պոտենցիալ հնարավորությունների կարիքի գնահատում և դրանց իրականացման համար պայմանների ստեղծում:

**Բաց համագործակցային կրթական միջավայր /սոցիալական միջավայր/**

2022թ. դպրոցը ձևավորել է համագործակցային մշակույթ դպրոցների միջև, երբ փորձի փոխանակման շրջանակներում բազմաթիվ դպրոցների տնօրեններ, փոխտնօրեններ, ուսուցիչներ և աշակերտներ ներկա են գտնվել դպրոցի կրթամշակութային, մարզական միջոցառումներին, մասնակցել քննարկումների:

Դպրոցն իր հերթին ներկա է գտնվել <<քույր դպրոցների>> միջոցառումներին:

Թատերական խմբակի սաների <<արտադրանքը>>՝ Ս.Փարաջանովի <<Նոան գույնը>> ներկայացումը և սովորողների ձեռքով, փարաջանովյան ոճով պատրաստած ցուցանմուշները 2023թ. ոչ միայն հասնելի և ցուցադրելի եղան մայրաքաղաքի դպրոցների և գրադարանների տնօրենների, փոխտնօրենների, ուսուցիչների համար, այլ նաև Թանգարանային գիշերվա ընթացքում ներկայացվեցին Ս. Փարաջանովի թանգարանի այցելուներին: Սովորողների գործունեությունը ընդգրկեց լայն շառավիղներ և շրջանակներ, իսկ <<արտադրանքը>> դարձավ հասարակության սեփականությունը՝ շրջապատող

միջավայրի գեղագիտական ձևավորման պահանջմունքի բավարարման մի մասնիկը:



2024թ. մարտին միջառարկայական համագործակցության շրջանակներում բեմադրվեց Լ. Շանթի «Հին աստվածներ» դրաման, որը, ի դեպ, համադպրոցական միջոցառում էր և բաղկացած էր նկարների ցուցահանդեսի բացումից, Հին աստվածների վերածննդի ներկայացումից և բուն ներկայացումից:

Ներկայացումը ցուցադրվեց երկու անգամ՝ մայրաքաղաքի դպրոցի տնօրենների, փոխտնօրենների, ուսուցիչների համար, որից հետո տեղի ունեցավ կարծիքների փոխանակում և քննարկումներ:

Մի քանի օր հետո այն բեմադրվեց մայրաքաղաքի շուրջ 15 դպրոցների /ավագ, հիմնական/ սաների համար:

Թատերական խմբակը մայիսին շրջայցեր կատարեց մարզերով և բեմադրությունը ներկայացրեց մարզային դպրոցների հանդիսատեսին:



Նպատակ ենք դրել միևնույն գաղափարի շուրջ համախմբել մարդկանց և խմբի անդամների միջև ստեղծել դրական աջակցող փոխկախվածության և փոխօգնության ապահովման մշակույթ: Այդ մթնոլորտը հնարավորություն է տալիս օգնել, խրախուսել, աջակցել խմբի անդամներին և սովորողներին ջանքերն ուղղել ընդհանուր նպատակին հասնելուն: Համագործակցության այս ձևաչափը օգնում է սովորողներին փոխանակվել տեղեկություններով, ռեսուրսներով, ցուցադրել սեփական արտադրանքը և գնահատվել հասակակիցների կողմից:

***Լավագույն գաղափարների, նորարարությունների փոխանակությունը արդյունավետ միջոց է բազմարժանեղակ կրթական միջավայրի ձևավորման համար:***

Սովորողների մտքի և ձեռքի աշխատաքները ցուցադրվել են ոչ միայն դպրոցի Արվեստանոցում, այլ նաև ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպված գրեթե բոլոր հանրապետական նախագծերում, նաև ավագ դպրոցների կողմից կազմակերպված գիտական աշակերտական համաժողովներում:

Սոցիալական, լայն հնարավորություններով միջավայրը նպաստում է երեխաների շրջանում համակեցության զգացումի զարգացմանը և խմբի մշակույթի ստեղծման գործում նրանց մասնակցությանը: Յուրաքանչյուր մարդկարևոր է մյուսի համար՝ որպես նրա միջավայրի բաղադրիչ: Այս առումով միջդպրոցական շփումները նպաստում են ոչ միայն լավագույն փորձի փոխանակմանը, նաև նոր ընկերների ձեռք բերելուն, հասարակության լայն զանգվածների հետ հարաբերմանը: Մեր համարձակ քայլը առիթ դարձավ, որ

մայրաքաղաքի դպրոցները նույնպես իրենց գործունեության պտուղները ցուցադրեն լայն լսարանին և լավագույն փորձի սերմնացանները դառնան. արդյունքում մենք ներկա գտնվեցինք Խ. Աբովյանի անվ թիվ 2 հիմնական դպրոցի Տիկնիկային թատրոնի ներկայացմանը և հմտություններ ձեռք բերեցինք արվեստի այս ճյուղի ուղղությամբ: Համագործակցության արդյունքում ընկերային սպորտլանդիաներ կազմակերպեցինք Կենտրոն համայնքի դպրոցների միջև /13 համագործակցային նախագծեր/:

Ահա թե ինչու է կարևոր սոցիալական միջավայրի դերը մարդու վարքագծի համար և մարդու դերը հասարակական միջավայրի վրա:

**Հումանացված կրթական միջավայրի անմիջական մասնակիցներ են նաև ծնողները**, որոնք իրենց մասնագիտության շրջանակներում վարպետաց դասեր են անցկացնում դպրոցի Արվեստանոցում և մասնակից դառնում սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը: Կրթական գործընթացի բոլոր սուբյեկտների /աշակերտ, ուսուցիչ, ծնող և այլն/ համար դպրոցը ապահովել է անձնային զարգացման հնարավորություններ՝ նրանցից յուրաքանչյուրի մեջ սեփական զարգացման սուբյեկտ դառնալու կարողություններ ձևավորելու միջոցով:

Ձեռնարկատիրություն-ապրումակցում: Ինչպես վերոգրյալում նշեցինք, դպրոցի Արվեստանոցը դարձել է լավագույն և նորարար գաղափարների զենեքացման կարևոր տարածք: Սովորողները հանդես եկան հետաքրքիր մտահղացմամբ. որոշեցին արտադրել էկոլոգիապես մաքուր հակասթրեսային <<ՍԻՄՈՆԱ>> խաղալիքներ և դրանց առաջին խմբաքանակը նվիրել աուտիզմով հիվանդ երեխաներին: Սա հիանալի նախաձեռնության սկիզբ էր ներառական ընկերային հարաբերությունների ձևավորման, ապրումակցման, բաց և դրական վերաբերմունքի, մարդասիրության դրսևորմանը առումով: Սա նաև հիանալի հնարավորություն էր միայնակ և նաև ուրիշների հետ հակագործակցելով կյանքի կոչելու նախագծեր՝ հմտությունները ներկայացնելով զանազան միջոցներով և մեթոդներով:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եթե ամբողջացնենք մեր գաղափարախոսությունը և մեր քայլաշարերի ամբողջականությունը, ապա նշենք, որ ստեղծել ենք լայն հնարավորություններով կրթական միջավայր դպրոցի տարածքում և տարածքից դուրս՝ դպրոցի նյութատեխնիկական և մանկավարժական ողջ ռեսուրսները օգտագործելու, սովորողների ինքնագարգացման և ինքնաիրացման համար հավասար և մատչելի պայմանների և հնարավորությունների ստեղծման համար:

Մեր ստեղծած ֆունկցիոնալ միջավայրում ուսուցիչը և մանկավարժը հետայսու հանդես չեն գալիս հրահանգողի դերում. նրանք ուղղորդողներ են, կրթական միջավայրի նախագծողներ և մոդերատորներ: Մեր ձևավորած ուսումնական հարմարավետ միջավայրը նպաստում է յուրաքանչյուր սովորողի սոցիալ-հոգեբանական առողջության պահպանմանը, դպրոցում նրա զբաղվածության ապահովմանը և սովորողի բազմակողմանի զարգացմանը՝ անկախ նրա կարողություններից, ունակություններից և տաղանդից: Մեր կրթական միջավայրը սոցիալականացման լավագույն ռեսուրս-կենտրոնն է, որտեղ մարդկային հարաբերությունները կառուցողական են, թիմային և նախաձեռնողական:

### Մենք նպաստում ենք սովորողի հետևյալ որակների ձևավորմանը՝

- սոցիալական հարաբերություններում ինքնադրսևորմանը ,
- սոցիալական հարաբերություններում մասնակցայնությանը և մրցակցության դիմակայմանը ,
- սեփական անձի նկատմամբ ինքնավստահությանը, պայքարելու կարողությանը,
- շրջապատից, փոխհարաբերություններից ակնկալած սպասելիքների իրականացմանը, մարդկանց վրա ազդելու, նրանց ուշադրությունը գրավելու, հանդուրժելու, հաղթահարելու կարողությունների ձևավորմանը,

- շրջապատի հետ կապվածության հետ համատեղ՝ ազատ, մտածելու անկախ գործելու և փոխհարաբերությունները սթափ դիտարկելու որակների առկայությանը:

Չէ՞ որ մարդը հասարակական էակ է և այդ նույն հասարակության մեջ ունի իր սեփական տեղն ու դերը ինքնուրույն սահմանելու հնարավորություն՝ համաձայն իր կողմից նախանշված նպատակների ու ցանկությունների: Մենք մեր ուղենշած գործողություններով սովորողներին տալիս են <<**թռիչքի այն թևերը**>>, որով կարող են թռչել և հասնել իրենց իսկ սահմանած նպատակների իրականացման հետևից:

Բոլոր մեծերը փորձում են երեխաներին թողնել լավ աշխարհ, մենք ուզում ենք աշխարհին թողնել լավ երեխաներ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Գյուլամիրյան Ջ.**, Կրթական հարմարավետ միջավայրի էությունը, Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ, Գիտաժողովի նյութեր, <https://aspu.am/website/images/files/.%20%20...pdf>
2. ՀՀ Կառավարության որոշումը 04.02.2021թ., N 136 - Հրաման և լրամշակումներ, <https://escs.am/am/news/8124>

#### REFERENCES

1. **Gulamiryan J.**, Krt'akan harmaravet mijavayri e'owt'yowny' /The essence of a suitable educational environment/, Khachatur Abovyan ASPU, Conference proceedings, <https://aspu.am/website/images/files/.%20%20...pdf>
2. HH Kar'avarowt'yan oroshowmy' 04.02.2021t'. /Resolution of the RA Government on February 4, 2021/, N 136 - Order and Amendments, <https://escs.am/am/news/8124>

## Гуманизированная широкими возможностями образовательная среда

### Заключение

**Ключевые слова и выражения:** Умения, Мастерская, производство, социализация, креативность, Государственный образовательный стандарт.

Обобщив нашу идеологию и всю целостность наших действий, мы создали на территории школы и вне школы образовательную среду для использования всех педагогических ресурсов, обеспечения для учащихся равных и доступных условий и возможностей для саморазвития и самореализации.

В созданной нами функциональной среде учитель и педагог больше не выступают в роли менторов: они являются направляющими проектировщиками и модераторами образовательной среды. Сформированная нами комфортная образовательная среда способствует сохранению социально-психологического здоровья каждого учащегося, обеспечению его занятости (вовлеченности) в школе и разностороннему развитию, вне зависимости от способностей, умений и таланта.

Наша образовательная среда является лучшим ресурс-центром социализации, в котором конструктивные, командные и инициативные человеческие отношения.

Мы формируем у учащегося:

- . самопроявление в социальных отношениях;
- . вовлеченность в социальные отношения и конкурентоспособность;
- . уверенность в себе и умение бороться;
- . навыки осуществления своих ожиданий от окружения и взаимоотношений, воздействия на людей, привлечения их внимания и толерантности;
- . такие качества, как свободное мышление и независимое действие, умение реально оценивать взаимоотношения, наряду с привязанностью к окружению.

Ведь человек социальное существо, и в том же социуме имеет возможность самому определять свое собственное место и роль, согласно своим целям и

желаниям. Мы своими планомерными действиями даем учащемуся те «крылья для полета», благодаря которым возможно достичь целей, определенных им самим.

Все великие мыслители стараются оставить ребенку хороший мир, мы хотим оставить миру хороших детей.

**Naira Simonyan**

### **Humanized educational environment with wide opportunities**

#### **Conclusion**

**Key words and expressions:** *Ability, Workshop, Product, Socialization, Living, Creativity, Public Education State Standard.*

If we complete our ideology and the integrity of our steps, we have created an educational environment with wide possibilities in the school territory and outside the territory, to use all the material, technical and pedagogical resources of the school, to create equal and accessible conditions and opportunities for self-development and self-realization of students.

In the functional environment we have created, the teacher and pedagogue no longer play the role of instructor, they are guides, designers and moderators of the educational environment. The comfortable educational environment that we have created contributes to the maintenance of the social and psychological health of each student, ensuring his employment at school and the multi-disciplinary development of the student, regardless of his capabilities, abilities and talent.

Our educational environment is the best resource center for socialization, where human relations are constructive, team-oriented and proactive.

We educate and shape the learner: self-expression in social relations,

- participation in social relations and coping with competition
- Self-confidence, ability to fight

- realization of expectations from the environment, relationships, formation of abilities to influence people, attract their attention, tolerate and overcome,
  - in combination with attachment to the environment, forming the presence of qualities to act freely, to think independently and to observe relationships soberly;
- After all, a person is a social being and has the opportunity to personally define his own place and role in that same society, according to the goals and desires he has set. With our guided activities, students are given "wings of flight" with which they can fly and achieve their own goals.
- All adults try to leave children a good world, we want to leave the world good children.

**Նաիրա Սիմոնյան** - Երևանի Խրիմյան Հայրիկի անվան հ. 10 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի տնօրեն, «Կրթություն առանց սահմանների» կազմակերպության վերապատրաստող տնօրեն, ԿԶՆԱԿ հիմնադրամի մենթոր: Հեղինակ է մեկ գիտական հոդվածի:

**Наира Симонян** - Директор ГНКО Основная школа N10 им. Хримяна Айрика г. Еревана, Переподготовитель организации «Образование без границ», ментор фонда «Национальный Центр развития образования и инноваций» (НЦРОИ). Автор одной научной статьи. [S-nara77@mail.ru](mailto:S-nara77@mail.ru),

**Naira Simonyan** - Yerevan Primary School No. 10 named after Khrimyan Hayrik Director of SNOC, Retraining Director of Education Across Borders Organization, Mentor of KZNAK Foundation. Author of one scientific article. [S-nara77@mail.ru](mailto:S-nara77@mail.ru),

*Խմբագրություն է ուղարկվել 19.02.2025թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 26.02.2025թ.*

*Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.*

## ՆԱԻՐԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

## ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.143

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հանրակրթությունը կարևորագույն գործոններից մեկն է, որը նպաստում է պետության զարգացմանը՝ ապահովելով գիտելիքահեն հասարակության ձևավորումը: Այն անմիջականորեն ազդում է տնտեսական աճի, սոցիալական համախմբվածության և քաղաքական կայունության վրա: Այս հոդվածը քննարկում է հանրակրթության դերը պետության զարգացման գործընթացում՝ ներկայացնելով դրա տնտեսական, սոցիալական և քաղաքական ազդեցությունները:

*Բանալի բառեր և արտահայտություններ.* հանրակրթական, պետական, տնտեսական աճ, կրթական քաղաքականություն, արտադրողական աշխատուժե, քաղաքակրթություն:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթությունը յուրաքանչյուր պետության զարգացման հիմնասյուններից մեկն է: Այն ոչ միայն ապահովում է անհատների կրթական մակարդակի բարձրացումը, այլև նպաստում է հասարակության ընդհանուր առաջընթացին, տնտեսական աճին և քաղաքական կայունությանը: Հանրակրթության դերն առանձնահատուկ է պետության զարգացման գործում, քանի որ այն ձևավորում է գիտակից, բանիմաց և կարող քաղաքացիներ, որոնք ապագայում կկարողանան կառուցել ուժեղ ու մրցունակ հասարակություն:

Տնտեսական աճի հիմնական խթանիչներից մեկը որակյալ կրթությունն է: Բարձր կրթական մակարդակ ունեցող հասարակությունները, որպես կանոն, ունեն արտադրողական աշխատուժե, նորարարության զարգացման մեծ

հնարավորություններ և ներդրումային գրավչություն: Հանրակրթությունն ապահովում է աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող մասնագիտական հմտություններ, ինչը մեծացնում է զբաղվածության մակարդակը և նվազեցնում գործազրկությունը: Բացի այդ, կրթված անհատներն ավելի հակված են ձեռնարկատիրական գործունեության, ինչը խթանում է տնտեսության զարգացումը:

### **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Հանրակրթության դերը պետության զարգացման գործում թեմայով ուսումնասիրությունները թեմատիկ առումով լայն ընդգրկվածություն ունեն: Դրանք հավասարապես պատմական, մանկավարժական, աշխարհագրական, բանասիրական, աղբյուրագիտական արժեք ունեն: Ըստ այդմ՝ սույն հետազոտությունը կատարվել է պատմահամեմատական, համադրական-վերլուծական և զուգադրական մեթոդներով:

### **ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Հանրակրթությունը կարևոր դեր ունի հասարակության համախմբման և սոցիալական արդարության ապահովման գործում: Այն նվազեցնում է սոցիալական անհավասարությունը՝ ապահովելով բոլորի համար կրթության հավասար հնարավորություններ՝ անկախ սոցիալական կամ տնտեսական կարգավիճակից: Կրթված հասարակությունը ավելի հանդուրժող է, իրավագիտակից և պատրաստ է մասնակցելու ժողովրդավարական գործընթացներին:

Ժամանակակից աշխարհում մեծանում է կրթության կարևորությունը՝ որպես ոչ միայն տնտեսության, այլև ամբողջ հասարակության նոր որակի ձևավորման կարևորագույն գործոն: Նրա դերը մշտապես աճում է մարդկային կապիտալի աճող ազդեցությանը զուգընթաց: Ռուսաստանի կրթական համակարգը ի վիճակի է մրցակցել առաջադեմ երկրների կրթական համակարգերի հետ: Սակայն դրա առավելությունները կարող են արագ կորցնել, քանի դեռ չի ձևակերպվել հանրային լայն աջակցություն վայելող ազգային կրթական

քաղաքականություն, քանի դեռ պետությունը չի վերականգնում իր պատասխանատվությունն ու ակտիվ դերն այս ոլորտում և չի իրականացնում կրթության խորը և համակողմանի արդիականացումը՝ դրա համար անհրաժեշտ ռեսուրսներ հատկացնելով և դրանց արդյունավետ օգտագործման մեխանիզմներ ստեղծելով (**UKM Teaching and Learning Congress, 2011**):

Կրթական քաղաքականությունը պետական քաղաքականության կարևոր բաղադրիչն է, անհատի հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովման, սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական զարգացման տեմպերի բարձրացման, հասարակության մարդկայնացման և մշակույթի աճի գործիք: Կրթական քաղաքականությունը հանրային համաձայնության հիման վրա սահմանում է կրթության զարգացման հիմնարար նպատակներն ու խնդիրները և երաշխավորում դրանց իրականացումը պետության և հասարակության համակարգված գործողությունների միջոցով:

Ներկա փուլում կրթական քաղաքականության առաջնային խնդիրն է հասնել կրթության ժամանակակից որակի, դրա համապատասխանեցումը անհատի, հասարակության և պետության ներկա և ապագա կարիքներին (**Иванова, М., Фаизова С., Бойченко М., Балалаев О., Смеесова В., 2020**):

Կրթական քաղաքականությունը, արտացոլելով ազգային շահերը կրթության ոլորտում և դրանք ներկայացնելով համաշխարհային հանրությանը, միաժամանակ հաշվի է առնում համաշխարհային զարգացման ընդհանուր միտումները:

Համաշխարհային զարգացման հիմնական ժամանակակից միտումները, որոնք որոշում են կրթական համակարգի էական փոփոխությունները, ներառում են՝ հասարակության զարգացման տեմպերի արագացում և, որպես հետևանք, արագ փոփոխվող պայմաններում մարդկանց կյանքին նախապատրաստելու անհրաժեշտությունը; անցում դեպի հետինդուստրիալ, տեղեկատվական հասարակության; միջմշակութային փոխգործակցության մասշտաբի զգալի ընդլայնում, որի կապակցությամբ առանձնահատուկ նշանակություն են ձեռք

բերում հաղորդակցման հմտությունների և հանդուրժողականության գործոնները; գործալ խնդիրների առաջացում և աճ, որոնք հնարավոր է լուծել միայն միջազգային հանրության շրջանակներում համագործակցության միջոցով, ինչը պահանջում է երիտասարդ սերնդի ժամանակակից մտածողության զարգացում:

Հասարակության ժողովրդավարացում, քաղաքական և սոցիալական ընտրության հնարավորությունների ընդլայնում, ինչը պահանջում է նման ընտրության համար քաղաքացիների պատրաստակամության մակարդակի բարձրացում (**Овчаренко О., Смеесова В., Иванова М., Ковтун Н., Золотухина Л., 2021**):

Տնտեսության դինամիկ զարգացում, մրցակցության բարձրացում, ոչ հմուտ և ցածր որակավորում ունեցող աշխատուժի կրճատում, զբաղվածության ոլորտում կառուցվածքային խոր փոփոխություններ, աշխատողների մասնագիտական որակավորումների բարձրացման և վերապատրաստման մշտական անհրաժեշտության որոշում, նրանց մասնագիտական շարժունակության բարձրացում. մարդկային կապիտալի աճող կարևորությունը, որը զարգացած երկրներում կազմում է ազգային հարստության 70-80 տոկոսը, ինչը որոշում է կրթության ինտենսիվ, արագացված զարգացումը ինչպես երիտասարդների, այնպես էլ մեծահասակների համար:

Քաղաքակրթական նոր մարտահրավերները, բնականաբար, շատ երկրներ տանում են դեպի նոր «կրթական բում», դեպի կրթական համակարգերի խոր բարեփոխումների այլք. դա տեղի է ունենում տարբեր երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան, Չինաստանը, Արևելյան Եվրոպայի, Հարավարևելյան Ասիայի և Հարավային Ամերիկայի երկրները և այլն (**Посталюк М., Валева П., 2016**):

Հանրակրթությունը նպաստում է արտադրողականության բարձրացմանը, նորարարությունների խթանմանը և աշխատաշուկայի որակյալ մասնագետներով համալրմանը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ կրթված աշխատուժն

ունի ավելի բարձր արտադրողականություն, ինչը նպաստում է տնտեսության աճին և մրցունակությանը:

**1. Մարդկային կապիտալի ձևավորում.** հանրակրթությունը նպաստում է հմտությունների և գիտելիքի ձեռքբերմանը, ինչը կարևոր է աշխատաշուկայի պահանջներին համապատասխանելու համար:

**2. Նորարարական տնտեսություն.** բարձրորակ կրթությունը խթանում է գիտահետազոտական աշխատանքների զարգացումը և նորարարական գործունեությունը:

Հանրակրթությունը նպաստում է գիտակից և ակտիվ քաղաքացիների ձևավորմանը, որոնք կարող են ճիշտ ընկալել քաղաքական գործընթացները, գնահատել իշխանությունների գործողությունները և մասնակցել պետական կառավարման համակարգին: Կրթված հասարակությունը ավելի հակված է պաշտպանելու մարդու իրավունքները, պահանջելու թափանցիկություն ու հաշվետվողականություն:

Հանրակրթությունը նպաստում է հասարակության սոցիալական համախմբվածությանը՝ նվազեցնելով անհավասարությունը և ապահովելով սոցիալական արդարություն:

**1. Հասարակության համախմբում.** կրթված անհատները ավելի հակված են համագործակցության և հանդուրժողականության:

**2. Աղքատության նվազում.** կրթությունը հնարավորություն է տալիս անհատներին ունենալ տնտեսական կայունություն և բարելավել կյանքի որակը:

Չնայած հանրակրթության ունեցած դրական ազդեցությանը՝ այն ունի նաև մի շարք մարտահրավերներ: Դրանց թվում են ֆինանսավորման պակասը, ուսումնական ծրագրերի արդիականացման անհրաժեշտությունը, տեխնոլոգիական առաջընթացի հետ համընթաց կրթության մատչելիության ապահովումը, ինչպես նաև ուսուցիչների պատրաստվածության մակարդակի բարձրացումը: Դպրոցը, բառի լայն իմաստով, պետք է դառնա սոցիալ-տնտեսական հարաբերությունների մարդկայնացման և անհատի կյանքի նոր

վերաբերմունքի ձևավորման կարևոր գործոն: Զարգացող հասարակությանը պետք են ժամանակակից կրթված, բարոյական, նախաձեռնող մարդիկ, որոնք կարող են ինքնուրույն որոշումներ կայացնել ընտրության իրավիճակում, ունակ են համագործակցության, շարժուն, դինամիկ, կառուցողական, պատրաստ միջմշակության, փոխգործակցության, պատասխանատվության զգացում ունեն երկրի ճակատագրի և նրա սոցիալ-տնտեսական բարգավաճման համար: Կրթական համակարգը պետք է պատրաստի մարդկանց, որոնք ի վիճակի են ոչ միայն ապրել քաղաքացիական հասարակության և իրավական պետությունում, այլ նաև ստեղծել դրանք:

Կրթված քաղաքացիներն ավելի ակտիվ են քաղաքական գործընթացներում, ինչը նպաստում է ժողովրդավարական ինստիտուտների զարգացմանը և քաղաքական կայունությանը:

1. **Քաղաքացիական գիտակցության ձևավորում.** հանրակրթությունը խթանում է քաղաքական մշակույթի ձևավորումը և մասնակցությունը հասարակական կյանքին:

2. **Կառավարման թափանցիկություն.** կրթված հասարակությունն ավելի պահանջկոտ է պետական կառավարման թափանցիկության և հաշվետվողականության նկատմամբ:

Չնայած հանրակրթության ունեցած կարևորությանը՝ այն կանգնած է մի շարք մարտահրավերների առջև.

- Ֆինանսավորման պակաս
- Տեխնոլոգիական նորարարությունների ինտեգրման անհրաժեշտություն
- Ուսուցիչների վերապատրաստման խնդիրներ

Այս մարտահրավերների հաղթահարման համար անհրաժեշտ է կրթական համակարգի բարեփոխում՝ հիմնված նորագույն մեթոդաբանությունների և տեխնոլոգիաների վրա:

Կրթության նկատմամբ պետության և հասարակության վերաբերմունքի փոփոխությունը պետք է արտահայտվի կոնկրետ քայլերով՝ նրա ֆինանսական

աջակցության ծավալների ավելացմամբ, կրթության ոլորտի աշխատողների նկատմամբ հատուկ հոգածությամբ, կրթված մարդկանց ինտելեկտուալ ներուժի օգտագործման պայմանների ստեղծմամբ և կրթության արժեքի մասին հանրային կարծիքի ձևավորման մեջ: Այս առումով, մոտ ապագայում անհրաժեշտ է ՀՆԱ-ի կառուցվածքում կրթության ոլորտի ծախսերի մասնաբաժինը 3,5%-ից հասցնել 4,5%-ի, ապահովել կրթության ծախսերի արագացված աճ բյուջետային ֆինանսավորման այլ ոլորտների, կրթության մրցունակության, աշխատաշուկայում կրթության ոլորտի աշխատողների աշխատավարձերի զգալի աճի և ուսուցման աշխատանքի որակի և արդյունավետության խթանման համար (Сидоров С., [http://si-sv.com/publ/npoop/1/1\\_1\\_rol\\_gosudarstva/41-1-0-691](http://si-sv.com/publ/npoop/1/1_1_rol_gosudarstva/41-1-0-691)):

Պետությունը պետք է ապահովի ձեռնարկությունների և քաղաքացիների ներդրումների համար կրթության ռեսուրսային գրավչությունը, արդիականացնի կրթության ոլորտում գործող կազմակերպչական և տնտեսական մեխանիզմները, որոնք կրթության ոլորտում արտաբյուջետային միջոցների ծավալը 1,5%-ից կհասցնեն ՀՆԱ-ի 2-2,2%-ի, ինչպես նաև արմատապես կբարելավեն այդ միջոցների օգտագործումը՝ դրանք ուղղելով ուսումնական հաստատություններ:

Կրթության արդիականացումը քաղաքական և ազգային, հասարակական և ազգային խնդիր է, այն չպետք է իրականացվի և չի կարող իրականացվել որպես գերատեսչական նախագիծ:

Բոլոր զարգացած երկրներում կրթական բարեփոխումները հաջող էին, երբ իրականացվում էին պետական հզոր իշխանության կողմից՝ հասարակության հետ համատեղ: Կրթության ոլորտում հասարակության և պետության շահերը միշտ չէ, որ համընկնում են բուն կրթական համակարգի ոլորտային շահերի հետ, հետևաբար կրթության արդիականացման և զարգացման ուղղությունների մշակումն ու քննարկումը չպետք է և չի կարող սահմանափակվել կրթական համայնքով և կրթական վարչությունով:

Կրթության արդիականացման նպատակն է ստեղծել կրթական համակարգի կայուն զարգացման մեխանիզմ՝ ապահովելով դրա համապատասխանությունը

21-րդ դարի մարտահրավերներին, երկրի զարգացման սոցիալ-տնտեսական կարիքներին, անհատի, հասարակության և պետության պահանջներին:

Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է առաջին հերթին լուծել հետևյալ առաջնահերթ, փոխկապակցված խնդիրները.

- մատչելիության պետական երաշխիքների և լիարժեք կրթություն ստանալու հավասար հնարավորությունների ապահովում.

- նախադպրոցական, հանրակրթական և մասնագիտական կրթության նոր ժամանակակից որակի ձեռքբերում.

- կրթական համակարգում ռեսուրսների ներգրավման և օգտագործման արդյունավետ կարգավորող, իրավական և կազմակերպչական-տնտեսական մեխանիզմների ձևավորում.

- կրթության ոլորտի աշխատողների սոցիալական կարգավիճակի և պրոֆեսիոնալիզմի բարձրացում, նրանց պետական և հասարակական աջակցության ուժեղացում.

- կրթության զարգացումը որպես բաց պետական-հասարակական համակարգի՝ հիմնված կրթական քաղաքականության սուբյեկտների միջև պատասխանատվության բաշխման և կրթական գործընթացում բոլոր մասնակիցների՝ աշակերտի, ուսուցչի, ծնողի, ուսումնական հաստատության դերի բարձրացման վրա:

Ժամանակակից կրթական քաղաքականության հիմքերից մեկը պետք է լինի սոցիալական թիրախավորումը և սոցիալական շահերի հավասարակշռումը: Կրթության արդիականացման խնդիրները և դրա իրականացման փուլերը սահմանելիս պետք է հստակ սահմանել, թե ում շահերից ելնելով են իրականացվում որոշակի փոփոխություններ (ուսանողներ, ընտանիքներ, ուսուցիչներ, ուսումնական հաստատություններ, այլ սոցիալական հաստատություններ, տնտեսություն, պետություն, հասարակություն ընդհանուր առմամբ) և ինչ արձագանքման միջոցներ կպահանջվեն շահագրգիռ սուբյեկտներից և կառույցներից (Посталюк М., Валеева П., 2016):

Կրթության արդիականացման ուղեցույցներն ու ռազմավարական նպատակները պետք է մշակվեն և ձեռք բերվեն կրթական համակարգի և ազգային տնտեսության, գիտության, մշակույթի, առողջապահության, բոլոր շահագրգիռ գերատեսչությունների և հասարակական կազմակերպությունների, ծնողների և գործատուների հետ մշտական լայն փոխգործակցության գործընթացում: Կրթության արդիականացումը, կրթական նոր մոդելների կառուցումը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով տարածաշրջանային փորձը և կրթության զարգացման տեղական պայմանները:

Կրթության արդիականացման զարգացումն ու իրականացումը պահանջում է համապետական լայն հանրային քննարկում, քանի որ այն ազդում է գրեթե յուրաքանչյուր ուսա ընտանիքի: Կրթության փոփոխությունների էությունը, դրանց նպատակները, ուղղությունները և մեթոդները պետք է պարբերաբար բացատրվեն բնակչությանը, իսկ հանրային կարծիքի և հանրային քննարկման արդյունքները պետք է ուշադիր ուսումնասիրվեն և հաշվի առնվեն կրթության արդիականացումը պլանավորելիս և իրականացնելիս:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հանրակրթությունը պետության զարգացման կարևորագույն գործոններից մեկն է, որը ձևավորում է գիտելիքահեն հասարակություն, ապահովում տնտեսական աճ, սոցիալական արդարություն և քաղաքական կայունություն: Պետական կառույցների, կրթական հաստատությունների և հասարակության համագործակցությամբ հնարավոր է ստեղծել առավել արդյունավետ կրթական համակարգ, որը կձառայի ինչպես անհատական, այնպես էլ ազգային զարգացման նպատակներին:

Հանրակրթությունը պետության զարգացման կարևորագույն գործոններից է, որը ապահովում է տնտեսական աճ, սոցիալական արդարություն և քաղաքական կայունություն: Պետական կառույցների, կրթական հաստատությունների և հասարակության համագործակցությամբ հնարավոր է ստեղծել առավել

արդյունավետ կրթական համակարգ, որը կծառայի ինչպես անհատական, այնպես էլ ազգային զարգացման նպատակներին:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **UKM Teaching and Learning Congress (2011)**. The role of education in shaping youth's national identity. Fazilah Idrisa,\*, Zaharah Hassana, Azizah Ya'acoba, Saran Kaur Gillb & Noor Aziah. Mohd Awalca. Center for General Studies, Universiti Kebangsaan Malaysia Faculty of Social Science and Humanities, Universiti Kebangsaan Malaysia Faculty of Law, Universiti Kebangsaan Malaysia, [https://www.researchgate.net/publication/257716693\\_The\\_Role\\_of\\_Education\\_in\\_Shaping\\_Youth's\\_National\\_Identity](https://www.researchgate.net/publication/257716693_The_Role_of_Education_in_Shaping_Youth's_National_Identity)
2. **Иванова М., Фаизова С., Бойченко М., Балалаев О., Смеесова В. (2020)**, Кластеризация как инструмент управления промышленным предприятием, Научный вестник Национального исслед. ун-та, № 25, с.96-102., Москва, “Научный вестник”.
3. **Овчаренко О., Смеесова В., Иванова М., Ковтун Н., Золотухина Л. (2021)**, Управление экономической безопасностью на мезоуровне: методологический и правовой подход, № 13, с.201-216, Киев, Региональный научный запрос.
4. **Посталюк М., Валеева П. (2016)**, Использование кластерного подхода в системе обеспечения инноватизации безопасности экономического пространства России, с. 221-233, Киев, № 3, «ТИСБИ».
5. **Сидоров С. (2020)**, Роль государства в регулировании образования [Электронный ресурс] // Сидоров С.В. Сайт педагога-исследователя – URL: [http://si-sv.com/publ/npoop/1/1\\_1\\_rol\\_gosudarstva/41-1-0-691](http://si-sv.com/publ/npoop/1/1_1_rol_gosudarstva/41-1-0-691)

### REFERENCES

1. **UKM Teaching and Learning Congress (2011).** The role of education in shaping youth's national identity. Fazilah Idrisa, Zaharah Hassan, Azizah Ya'acob, Saran Kaur Gill, and Noor Aziah Mohd Awal. Center for General Studies, Universiti Kebangsaan Malaysia, Faculty of Social Science and Humanities, Universiti Kebangsaan Malaysia, Faculty of Law, Universiti Kebangsaan Malaysia.  
[https://www.researchgate.net/publication/257716693\\_The\\_Role\\_of\\_Education\\_in\\_Shaping\\_Youth's\\_National\\_Identity](https://www.researchgate.net/publication/257716693_The_Role_of_Education_in_Shaping_Youth's_National_Identity).
2. **Ivanova M., Faizova S., Boychenko M., Balalaev O., Smeesova V. (2020).** Klasterizatsiya kak instrument upravleniya promyshlennym predpriyatiyem /Clusterization as a tool for managing an industrial enterprise/, Scientific Bulletin of the National Research University, No. 25, pp. 96-102, Moscow, "Scientific Bulletin".
3. **Ovcharenko O., Smeesova V., Ivanova M., Kovtun N., Zolotukhina L. (2021).** Upravleniye ekonomicheskoy bezopasnost'yu na mezourovne: metodologicheskii i pravovoy podkhod /Management of economic security at the meso-level: methodological and legal approaches/, No. 13, pp. 201-216, Kyiv, Regional Scientific Inquiry.
4. **Postaluk M., Valeeva P. (2016).** Ispol'zovaniye klasterного podkhoda v sisteme obespecheniya innovatizatsii bezo pasnosti ekonomicheskogo prostranstva Rossii /The use of the cluster approach in the system of ensuring innovation security of Russia's economic space/, No. 3, pp. 221-233, Kyiv, "TISBI."
5. **Sidorov S. (2020).** Rol' gosudarstva v regulirovanii obrazovaniya [Elektronnyy resurs] /The role of the state in regulating education [Electronic resource]/, Sidorov S.V. Website of the researcher-teacher – URL: [http://si-sv.com/publ/npoop/1/1\\_1\\_rol\\_gosudarstva/41-1-0-691](http://si-sv.com/publ/npoop/1/1_1_rol_gosudarstva/41-1-0-691)

**Наира Тадевосян****Роль народного образования в развитии государства****Заключение**

*Ключевые слова и выражения:* общее образование, государство, экономический рост, образовательная политика, производительная рабочая сила, цивилизация.

Общее образование является одним из важнейших факторов, способствующих развитию государства, обеспечивая формирование общества, основанного на знаниях. Оно непосредственно влияет на экономический рост, социальную сплоченность и политическую стабильность. В данной статье рассматривается роль общего образования в процессе развития государства, освещая его экономическое, социальное и политическое влияние.

Общее образование – один из важнейших факторов развития государства, формирующий общество, основанное на знаниях, обеспечивающий экономический рост, социальную справедливость и политическую стабильность. Суть изменений в образовании, их цели, направления и методы должны регулярно разъясняться населению, а результаты общественного мнения и публичных обсуждений должны внимательно изучаться и учитываться при планировании и реализации модернизации образования. Благодаря сотрудничеству государственных структур, образовательных учреждений и общества возможно создание более эффективной системы образования, которая будет служить как индивидуальным, так и национальным целям развития.

Общее образование является одним из ключевых факторов развития государства, обеспечивающим экономический рост, социальную справедливость и политическую стабильность. Посредством сотрудничества государственных структур, образовательных учреждений и общества возможно создание более эффективной системы образования, способствующей как личностному, так и национальному развитию.

**Naira Tadevosyan****The role of public education in the development of the state****Conclusion**

**Key words and expressions:** *public education, state, economic growth, educational policy, productive workforce, civilization.*

General education is one of the key factors contributing to the development of a state by ensuring the formation of a knowledge-based society. It directly influences economic growth, social cohesion, and political stability. This article examines the role of general education in the state's development process, highlighting its economic, social, and political impacts.

Public education is one of the most important factors in the development of a state, shaping a knowledge-based society, ensuring economic growth, social justice, and political stability. Through the cooperation of government structures, educational institutions, and society, it is possible to create a more efficient educational system that serves both individual and national development goals.

Public education is a key factor in the development of a state, ensuring economic growth, social justice, and political stability. Through collaboration between government structures, educational institutions, and society, a more effective education system can be established, contributing to both personal and national development.

**Նաիրա Թադևոսյան** - Երևանի Եղիշե Չարենցի թիվ 67 հիմնական դպրոցի պատմության ուսուցչուհի՝ ատեստավորված տարակարգի առաջին աստիճան: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հին և համաշխարհային պատմություն: Հեղինակ է շուրջ երկու հոդվածի: [naira.naira79@mail.ru](mailto:naira.naira79@mail.ru)

**Наира Тадевосян** - Учитель истории в начальной школе № 67 имени Егише Чаренца в Ереване, сертифицированный учитель первой категории. Научные

интересы: древняя армянская и всемирная история. Автор около двух статей:  
[naira.naira79@mail.ru](mailto:naira.naira79@mail.ru)

**Naira Tadevosyan** - History teacher at Yerevan Yeghishe Charents Primary School No. 67, certified first degree. Scientific interests: ancient Armenian and world history. Author of about two articles. [naira.naira79@mail.ru](mailto:naira.naira79@mail.ru)

*Խմբագրություն է ուղարկվել 09.01.2025թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 13.01.2025թ.*

*Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.*

## ՆԱԻՐԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

## ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.143

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հանրակրթությունը կարևորագույն գործոններից մեկն է, որը նպաստում է պետության զարգացմանը՝ ապահովելով գիտելիքահեն հասարակության ձևավորումը: Այն անմիջականորեն ազդում է տնտեսական աճի, սոցիալական համախմբվածության և քաղաքական կայունության վրա: Այս հոդվածը քննարկում է հանրակրթության դերը պետության զարգացման գործընթացում՝ ներկայացնելով դրա տնտեսական, սոցիալական և քաղաքական ազդեցությունները:

*Բանալի բառեր և արտահայտություններ.* հանրակրթական, պետական, տնտեսական աճ, կրթական քաղաքականություն, արտադրողական աշխատուժե, քաղաքակրթություն:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթությունը յուրաքանչյուր պետության զարգացման հիմնասյուններից մեկն է: Այն ոչ միայն ապահովում է անհատների կրթական մակարդակի բարձրացումը, այլև նպաստում է հասարակության ընդհանուր առաջընթացին, տնտեսական աճին և քաղաքական կայունությանը: Հանրակրթության դերն առանձնահատուկ է պետության զարգացման գործում, քանի որ այն ձևավորում է գիտակից, բանիմաց և կարող քաղաքացիներ, որոնք ապագայում կկարողանան կառուցել ուժեղ ու մրցունակ հասարակություն:

Տնտեսական աճի հիմնական խթանիչներից մեկը որակյալ կրթությունն է: Բարձր կրթական մակարդակ ունեցող հասարակությունները, որպես կանոն, ունեն արտադրողական աշխատուժե, նորարարության զարգացման մեծ

հնարավորություններ և ներդրումային գրավչություն: Հանրակրթությունն ապահովում է աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող մասնագիտական հմտություններ, ինչը մեծացնում է զբաղվածության մակարդակը և նվազեցնում գործազրկությունը: Բացի այդ, կրթված անհատներն ավելի հակված են ձեռնարկատիրական գործունեության, ինչը խթանում է տնտեսության զարգացումը:

### **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Հանրակրթության դերը պետության զարգացման գործում թեմայով ուսումնասիրությունները թեմատիկ առումով լայն ընդգրկվածություն ունեն: Դրանք հավասարապես պատմական, մանկավարժական, աշխարհագրական, բանասիրական, աղբյուրագիտական արժեք ունեն: Ըստ այդմ՝ սույն հետազոտությունը կատարվել է պատմահամեմատական, համադրական-վերլուծական և զուգադրական մեթոդներով:

### **ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Հանրակրթությունը կարևոր դեր ունի հասարակության համախմբման և սոցիալական արդարության ապահովման գործում: Այն նվազեցնում է սոցիալական անհավասարությունը՝ ապահովելով բոլորի համար կրթության հավասար հնարավորություններ՝ անկախ սոցիալական կամ տնտեսական կարգավիճակից: Կրթված հասարակությունը ավելի հանդուրժող է, իրավագիտակից և պատրաստ է մասնակցելու ժողովրդավարական գործընթացներին:

Ժամանակակից աշխարհում մեծանում է կրթության կարևորությունը՝ որպես ոչ միայն տնտեսության, այլև ամբողջ հասարակության նոր որակի ձևավորման կարևորագույն գործոն: Նրա դերը մշտապես աճում է մարդկային կապիտալի աճող ազդեցությանը զուգընթաց: Ռուսաստանի կրթական համակարգը ի վիճակի է մրցակցել առաջադեմ երկրների կրթական համակարգերի հետ: Սակայն դրա առավելությունները կարող են արագ կորցնել, քանի դեռ չի ձևակերպվել հանրային լայն աջակցություն վայելող ազգային կրթական

քաղաքականություն, քանի դեռ պետությունը չի վերականգնում իր պատասխանատվությունն ու ակտիվ դերն այս ոլորտում և չի իրականացնում կրթության խորը և համակողմանի արդիականացումը՝ դրա համար անհրաժեշտ ռեսուրսներ հատկացնելով և դրանց արդյունավետ օգտագործման մեխանիզմներ ստեղծելով (**UKM Teaching and Learning Congress, 2011**):

Կրթական քաղաքականությունը պետական քաղաքականության կարևոր բաղադրիչն է, անհատի հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովման, սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական զարգացման տեմպերի բարձրացման, հասարակության մարդկայնացման և մշակույթի աճի գործիք: Կրթական քաղաքականությունը հանրային համաձայնության հիման վրա սահմանում է կրթության զարգացման հիմնարար նպատակներն ու խնդիրները և երաշխավորում դրանց իրականացումը պետության և հասարակության համակարգված գործողությունների միջոցով:

Ներկա փուլում կրթական քաղաքականության առաջնային խնդիրն է հասնել կրթության ժամանակակից որակի, դրա համապատասխանեցումը անհատի, հասարակության և պետության ներկա և ապագա կարիքներին (**Иванова, М., Фаизова С., Бойченко М., Балалаев О., Смеесова В., 2020**):

Կրթական քաղաքականությունը, արտացոլելով ազգային շահերը կրթության ոլորտում և դրանք ներկայացնելով համաշխարհային հանրությանը, միաժամանակ հաշվի է առնում համաշխարհային զարգացման ընդհանուր միտումները:

Համաշխարհային զարգացման հիմնական ժամանակակից միտումները, որոնք որոշում են կրթական համակարգի էական փոփոխությունները, ներառում են՝ հասարակության զարգացման տեմպերի արագացում և, որպես հետևանք, արագ փոփոխվող պայմաններում մարդկանց կյանքին նախապատրաստելու անհրաժեշտությունը; անցում դեպի հետինդուստրիալ, տեղեկատվական հասարակության; միջմշակութային փոխգործակցության մասշտաբի զգալի ընդլայնում, որի կապակցությամբ առանձնահատուկ նշանակություն են ձեռք

բերում հաղորդակցման հմտությունների և հանդուրժողականության գործոնները; գործալ խնդիրների առաջացում և աճ, որոնք հնարավոր է լուծել միայն միջազգային հանրության շրջանակներում համագործակցության միջոցով, ինչը պահանջում է երիտասարդ սերնդի ժամանակակից մտածողության զարգացում:

Հասարակության ժողովրդավարացում, քաղաքական և սոցիալական ընտրության հնարավորությունների ընդլայնում, ինչը պահանջում է նման ընտրության համար քաղաքացիների պատրաստակամության մակարդակի բարձրացում (**Овчаренко О., Смеесова В., Иванова М., Ковтун Н., Золотухина Л., 2021**):

Տնտեսության դինամիկ զարգացում, մրցակցության բարձրացում, ոչ հմուտ և ցածր որակավորում ունեցող աշխատուժի կրճատում, զբաղվածության ոլորտում կառուցվածքային խոր փոփոխություններ, աշխատողների մասնագիտական որակավորումների բարձրացման և վերապատրաստման մշտական անհրաժեշտության որոշում, նրանց մասնագիտական շարժունակության բարձրացում. մարդկային կապիտալի աճող կարևորությունը, որը զարգացած երկրներում կազմում է ազգային հարստության 70-80 տոկոսը, ինչը որոշում է կրթության ինտենսիվ, արագացված զարգացումը ինչպես երիտասարդների, այնպես էլ մեծահասակների համար:

Քաղաքակրթական նոր մարտահրավերները, բնականաբար, շատ երկրներ տանում են դեպի նոր «կրթական բում», դեպի կրթական համակարգերի խոր բարեփոխումների այլք. դա տեղի է ունենում տարբեր երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան, Չինաստանը, Արևելյան Եվրոպայի, Հարավարևելյան Ասիայի և Հարավային Ամերիկայի երկրները և այլն (**Посталюк М., Валева П., 2016**):

Հանրակրթությունը նպաստում է արտադրողականության բարձրացմանը, նորարարությունների խթանմանը և աշխատաշուկայի որակյալ մասնագետներով համալրմանը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ կրթված աշխատուժն

ունի ավելի բարձր արտադրողականություն, ինչը նպաստում է տնտեսության աճին և մրցունակությանը:

**1. Մարդկային կապիտալի ձևավորում.** հանրակրթությունը նպաստում է հմտությունների և գիտելիքի ձեռքբերմանը, ինչը կարևոր է աշխատաշուկայի պահանջներին համապատասխանելու համար:

**2. Նորարարական տնտեսություն.** բարձրորակ կրթությունը խթանում է գիտահետազոտական աշխատանքների զարգացումը և նորարարական գործունեությունը:

Հանրակրթությունը նպաստում է գիտակից և ակտիվ քաղաքացիների ձևավորմանը, որոնք կարող են ճիշտ ընկալել քաղաքական գործընթացները, գնահատել իշխանությունների գործողությունները և մասնակցել պետական կառավարման համակարգին: Կրթված հասարակությունը ավելի հակված է պաշտպանելու մարդու իրավունքները, պահանջելու թափանցիկություն ու հաշվետվողականություն:

Հանրակրթությունը նպաստում է հասարակության սոցիալական համախմբվածությանը՝ նվազեցնելով անհավասարությունը և ապահովելով սոցիալական արդարություն:

**1. Հասարակության համախմբում.** կրթված անհատները ավելի հակված են համագործակցության և հանդուրժողականության:

**2. Աղքատության նվազում.** կրթությունը հնարավորություն է տալիս անհատներին ունենալ տնտեսական կայունություն և բարելավել կյանքի որակը:

Չնայած հանրակրթության ունեցած դրական ազդեցությանը՝ այն ունի նաև մի շարք մարտահրավերներ: Դրանց թվում են ֆինանսավորման պակասը, ուսումնական ծրագրերի արդիականացման անհրաժեշտությունը, տեխնոլոգիական առաջընթացի հետ համընթաց կրթության մատչելիության ապահովումը, ինչպես նաև ուսուցիչների պատրաստվածության մակարդակի բարձրացումը: Դպրոցը, բառի լայն իմաստով, պետք է դառնա սոցիալ-տնտեսական հարաբերությունների մարդկայնացման և անհատի կյանքի նոր

վերաբերմունքի ձևավորման կարևոր գործոն: Զարգացող հասարակությանը պետք են ժամանակակից կրթված, բարոյական, նախաձեռնող մարդիկ, որոնք կարող են ինքնուրույն որոշումներ կայացնել ընտրության իրավիճակում, ունակ են համագործակցության, շարժուն, դինամիկ, կառուցողական, պատրաստ միջմշակությամբ փոխգործակցության, պատասխանատվության զգացում ունեն երկրի ճակատագրի և նրա սոցիալ-տնտեսական բարգավաճման համար: Կրթական համակարգը պետք է պատրաստի մարդկանց, որոնք ի վիճակի են ոչ միայն ապրել քաղաքացիական հասարակության և իրավական պետությունում, այլ նաև ստեղծել դրանք:

Կրթված քաղաքացիներն ավելի ակտիվ են քաղաքական գործընթացներում, ինչը նպաստում է ժողովրդավարական ինստիտուտների զարգացմանը և քաղաքական կայունությանը:

1. **Քաղաքացիական գիտակցության ձևավորում.** հանրակրթությունը խթանում է քաղաքական մշակույթի ձևավորումը և մասնակցությունը հասարակական կյանքին:

2. **Կառավարման թափանցիկություն.** կրթված հասարակությունն ավելի պահանջկոտ է պետական կառավարման թափանցիկության և հաշվետվողականության նկատմամբ:

Չնայած հանրակրթության ունեցած կարևորությանը՝ այն կանգնած է մի շարք մարտահրավերների առջև.

- Ֆինանսավորման պակաս
- Տեխնոլոգիական նորարարությունների ինտեգրման անհրաժեշտություն
- Ուսուցիչների վերապատրաստման խնդիրներ

Այս մարտահրավերների հաղթահարման համար անհրաժեշտ է կրթական համակարգի բարեփոխում՝ հիմնված նորագույն մեթոդաբանությունների և տեխնոլոգիաների վրա:

Կրթության նկատմամբ պետության և հասարակության վերաբերմունքի փոփոխությունը պետք է արտահայտվի կոնկրետ քայլերով՝ նրա ֆինանսական

աջակցության ծավալների ավելացմամբ, կրթության ոլորտի աշխատողների նկատմամբ հատուկ հոգածությամբ, կրթված մարդկանց ինտելեկտուալ ներուժի օգտագործման պայմանների ստեղծմամբ և կրթության արժեքի մասին հանրային կարծիքի ձևավորման մեջ: Այս առումով, մոտ ապագայում անհրաժեշտ է ՀՆԱ-ի կառուցվածքում կրթության ոլորտի ծախսերի մասնաբաժինը 3,5%-ից հասցնել 4,5%-ի, ապահովել կրթության ծախսերի արագացված աճ բյուջետային ֆինանսավորման այլ ոլորտների, կրթության մրցունակության, աշխատաշուկայում կրթության ոլորտի աշխատողների աշխատավարձերի զգալի աճի և ուսուցման աշխատանքի որակի և արդյունավետության խթանման համար (Сидоров С., [http://si-sv.com/publ/npoop/1/1\\_1\\_rol\\_gosudarstva/41-1-0-691](http://si-sv.com/publ/npoop/1/1_1_rol_gosudarstva/41-1-0-691)):

Պետությունը պետք է ապահովի ձեռնարկությունների և քաղաքացիների ներդրումների համար կրթության ռեսուրսային գրավչությունը, արդիականացնի կրթության ոլորտում գործող կազմակերպչական և տնտեսական մեխանիզմները, որոնք կրթության ոլորտում արտաբյուջետային միջոցների ծավալը 1,5%-ից կհասցնեն ՀՆԱ-ի 2-2,2%-ի, ինչպես նաև արմատապես կբարելավեն այդ միջոցների օգտագործումը՝ դրանք ուղղելով ուսումնական հաստատություններ:

Կրթության արդիականացումը քաղաքական և ազգային, հասարակական և ազգային խնդիր է, այն չպետք է իրականացվի և չի կարող իրականացվել որպես գերատեսչական նախագիծ:

Բոլոր զարգացած երկրներում կրթական բարեփոխումները հաջող էին, երբ իրականացվում էին պետական հզոր իշխանության կողմից՝ հասարակության հետ համատեղ: Կրթության ոլորտում հասարակության և պետության շահերը միշտ չէ, որ համընկնում են բուն կրթական համակարգի ոլորտային շահերի հետ, հետևաբար կրթության արդիականացման և զարգացման ուղղությունների մշակումն ու քննարկումը չպետք է և չի կարող սահմանափակվել կրթական համայնքով և կրթական վարչությունով:

Կրթության արդիականացման նպատակն է ստեղծել կրթական համակարգի կայուն զարգացման մեխանիզմ՝ ապահովելով դրա համապատասխանությունը

21-րդ դարի մարտահրավերներին, երկրի զարգացման սոցիալ-տնտեսական կարիքներին, անհատի, հասարակության և պետության պահանջներին:

Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է առաջին հերթին լուծել հետևյալ առաջնահերթ, փոխկապակցված խնդիրները.

- մատչելիության պետական երաշխիքների և լիարժեք կրթություն ստանալու հավասար հնարավորությունների ապահովում.

- նախադպրոցական, հանրակրթական և մասնագիտական կրթության նոր ժամանակակից որակի ձեռքբերում.

- կրթական համակարգում ռեսուրսների ներգրավման և օգտագործման արդյունավետ կարգավորող, իրավական և կազմակերպչական-տնտեսական մեխանիզմների ձևավորում.

- կրթության ոլորտի աշխատողների սոցիալական կարգավիճակի և պրոֆեսիոնալիզմի բարձրացում, նրանց պետական և հասարակական աջակցության ուժեղացում.

- կրթության զարգացումը որպես բաց պետական-հասարակական համակարգի՝ հիմնված կրթական քաղաքականության սուբյեկտների միջև պատասխանատվության բաշխման և կրթական գործընթացում բոլոր մասնակիցների՝ աշակերտի, ուսուցչի, ծնողի, ուսումնական հաստատության դերի բարձրացման վրա:

Ժամանակակից կրթական քաղաքականության հիմքերից մեկը պետք է լինի սոցիալական թիրախավորումը և սոցիալական շահերի հավասարակշռումը: Կրթության արդիականացման խնդիրները և դրա իրականացման փուլերը սահմանելիս պետք է հստակ սահմանել, թե ում շահերից ելնելով են իրականացվում որոշակի փոփոխություններ (ուսանողներ, ընտանիքներ, ուսուցիչներ, ուսումնական հաստատություններ, այլ սոցիալական հաստատություններ, տնտեսություն, պետություն, հասարակություն ընդհանուր առմամբ) և ինչ արձագանքման միջոցներ կպահանջվեն շահագրգիռ սուբյեկտներից և կառույցներից (Посталюк М., Валеева П., 2016):

Կրթության արդիականացման ուղեցույցներն ու ռազմավարական նպատակները պետք է մշակվեն և ձեռք բերվեն կրթական համակարգի և ազգային տնտեսության, գիտության, մշակույթի, առողջապահության, բոլոր շահագրգիռ գերատեսչությունների և հասարակական կազմակերպությունների, ծնողների և գործատուների հետ մշտական լայն փոխգործակցության գործընթացում: Կրթության արդիականացումը, կրթական նոր մոդելների կառուցումը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով տարածաշրջանային փորձը և կրթության զարգացման տեղական պայմանները:

Կրթության արդիականացման զարգացումն ու իրականացումը պահանջում է համապետական լայն հանրային քննարկում, քանի որ այն ազդում է գրեթե յուրաքանչյուր ուսումնական ընտանիքի: Կրթության փոփոխությունների էությունը, դրանց նպատակները, ուղղությունները և մեթոդները պետք է պարբերաբար բացատրվեն բնակչությանը, իսկ հանրային կարծիքի և հանրային քննարկման արդյունքները պետք է ուշադիր ուսումնասիրվեն և հաշվի առնվեն կրթության արդիականացումը պլանավորելիս և իրականացնելիս:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հանրակրթությունը պետության զարգացման կարևորագույն գործոններից մեկն է, որը ձևավորում է գիտելիքահեն հասարակություն, ապահովում տնտեսական աճ, սոցիալական արդարություն և քաղաքական կայունություն: Պետական կառույցների, կրթական հաստատությունների և հասարակության համագործակցությամբ հնարավոր է ստեղծել առավել արդյունավետ կրթական համակարգ, որը կձառայի ինչպես անհատական, այնպես էլ ազգային զարգացման նպատակներին:

Հանրակրթությունը պետության զարգացման կարևորագույն գործոններից է, որը ապահովում է տնտեսական աճ, սոցիալական արդարություն և քաղաքական կայունություն: Պետական կառույցների, կրթական հաստատությունների և հասարակության համագործակցությամբ հնարավոր է ստեղծել առավել

արդյունավետ կրթական համակարգ, որը կծառայի ինչպես անհատական, այնպես էլ ազգային զարգացման նպատակներին:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **UKM Teaching and Learning Congress (2011)**. The role of education in shaping youth's national identity. Fazilah Idrisa,\*, Zaharah Hassana, Azizah Ya'acoba, Saran Kaur Gillb & Noor Aziah. Mohd Awalca. Center for General Studies, Universiti Kebangsaan Malaysia Faculty of Social Science and Humanities, Universiti Kebangsaan Malaysia Faculty of Law, Universiti Kebangsaan Malaysia, [https://www.researchgate.net/publication/257716693\\_The\\_Role\\_of\\_Education\\_in\\_Shaping\\_Youth's\\_National\\_Identity](https://www.researchgate.net/publication/257716693_The_Role_of_Education_in_Shaping_Youth's_National_Identity)
2. **Иванова М., Фаизова С., Бойченко М., Балалаев О., Смеесова В. (2020)**, Кластеризация как инструмент управления промышленным предприятием, Научный вестник Национального исслед. ун-та, № 25, с.96-102., Москва, “Научный вестник”.
3. **Овчаренко О., Смеесова В., Иванова М., Ковтун Н., Золотухина Л. (2021)**, Управление экономической безопасностью на мезоуровне: методологический и правовой подход, № 13, с.201-216, Киев, Региональный научный запрос.
4. **Посталюк М., Валеева П. (2016)**, Использование кластерного подхода в системе обеспечения инноватизации безопасности экономического пространства России, с. 221-233, Киев, № 3, «ТИСБИ».
5. **Сидоров С. (2020)**, Роль государства в регулировании образования [Электронный ресурс] // Сидоров С.В. Сайт педагога-исследователя – URL: [http://si-sv.com/publ/npoop/1/1\\_1\\_rol\\_gosudarstva/41-1-0-691](http://si-sv.com/publ/npoop/1/1_1_rol_gosudarstva/41-1-0-691)

### REFERENCES

1. **UKM Teaching and Learning Congress (2011).** The role of education in shaping youth's national identity. Fazilah Idrisa, Zaharah Hassan, Azizah Ya'acob, Saran Kaur Gill, and Noor Aziah Mohd Awal. Center for General Studies, Universiti Kebangsaan Malaysia, Faculty of Social Science and Humanities, Universiti Kebangsaan Malaysia, Faculty of Law, Universiti Kebangsaan Malaysia.  
[https://www.researchgate.net/publication/257716693\\_The\\_Role\\_of\\_Education\\_in\\_Shaping\\_Youth's\\_National\\_Identity](https://www.researchgate.net/publication/257716693_The_Role_of_Education_in_Shaping_Youth's_National_Identity).
2. **Ivanova M., Faizova S., Boychenko M., Balalaev O., Smeesova V. (2020).** Klasterizatsiya kak instrument upravleniya promyshlennym predpriyatiyem /Clusterization as a tool for managing an industrial enterprise/, Scientific Bulletin of the National Research University, No. 25, pp. 96-102, Moscow, "Scientific Bulletin".
3. **Ovcharenko O., Smeesova V., Ivanova M., Kovtun N., Zolotukhina L. (2021).** Upravleniye ekonomicheskoy bezopasnost'yu na mezourovne: metodologicheskii i pravovoy podkhod /Management of economic security at the meso-level: methodological and legal approaches/, No. 13, pp. 201-216, Kyiv, Regional Scientific Inquiry.
4. **Postaluk M., Valeeva P. (2016).** Ispol'zovaniye klaster'nogo podkhoda v sisteme obespecheniya innovatizatsii bezo pasnosti ekonomicheskogo prostranstva Rossii /The use of the cluster approach in the system of ensuring innovation security of Russia's economic space/, No. 3, pp. 221-233, Kyiv, "TISBI."
5. **Sidorov S. (2020).** Rol' gosudarstva v regulirovanii obrazovaniya [Elektronnyy resurs] /The role of the state in regulating education [Electronic resource]/, Sidorov S.V. Website of the researcher-teacher – URL: [http://si-sv.com/publ/npoop/1/1\\_1\\_rol\\_gosudarstva/41-1-0-691](http://si-sv.com/publ/npoop/1/1_1_rol_gosudarstva/41-1-0-691)

**Наира Тадевосян****Роль народного образования в развитии государства****Заключение**

*Ключевые слова и выражения:* общее образование, государство, экономический рост, образовательная политика, производительная рабочая сила, цивилизация.

Общее образование является одним из важнейших факторов, способствующих развитию государства, обеспечивая формирование общества, основанного на знаниях. Оно непосредственно влияет на экономический рост, социальную сплоченность и политическую стабильность. В данной статье рассматривается роль общего образования в процессе развития государства, освещая его экономическое, социальное и политическое влияние.

Общее образование – один из важнейших факторов развития государства, формирующий общество, основанное на знаниях, обеспечивающий экономический рост, социальную справедливость и политическую стабильность. Суть изменений в образовании, их цели, направления и методы должны регулярно разъясняться населению, а результаты общественного мнения и публичных обсуждений должны внимательно изучаться и учитываться при планировании и реализации модернизации образования. Благодаря сотрудничеству государственных структур, образовательных учреждений и общества возможно создание более эффективной системы образования, которая будет служить как индивидуальным, так и национальным целям развития.

Общее образование является одним из ключевых факторов развития государства, обеспечивающим экономический рост, социальную справедливость и политическую стабильность. Посредством сотрудничества государственных структур, образовательных учреждений и общества возможно создание более эффективной системы образования, способствующей как личностному, так и национальному развитию.

**Naira Tadevosyan****The role of public education in the development of the state****Conclusion**

**Key words and expressions:** *public education, state, economic growth, educational policy, productive workforce, civilization.*

General education is one of the key factors contributing to the development of a state by ensuring the formation of a knowledge-based society. It directly influences economic growth, social cohesion, and political stability. This article examines the role of general education in the state's development process, highlighting its economic, social, and political impacts.

Public education is one of the most important factors in the development of a state, shaping a knowledge-based society, ensuring economic growth, social justice, and political stability. Through the cooperation of government structures, educational institutions, and society, it is possible to create a more efficient educational system that serves both individual and national development goals.

Public education is a key factor in the development of a state, ensuring economic growth, social justice, and political stability. Through collaboration between government structures, educational institutions, and society, a more effective education system can be established, contributing to both personal and national development.

**Նաիրա Թադևոսյան** - Երևանի Եղիշե Չարենցի թիվ 67 հիմնական դպրոցի պատմության ուսուցչուհի՝ ատեստավորված տարակարգի առաջին աստիճան: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հին և համաշխարհային պատմություն: Հեղինակ է շուրջ երկու հոդվածի: [naira.naira79@mail.ru](mailto:naira.naira79@mail.ru)

**Наира Тадевосян** - Учитель истории в начальной школе № 67 имени Егише Чаренца в Ереване, сертифицированный учитель первой категории. Научные

интересы: древняя армянская и всемирная история. Автор около двух статей:  
[naira.naira79@mail.ru](mailto:naira.naira79@mail.ru)

**Naira Tadevosyan** - History teacher at Yerevan Yeghishe Charents Primary School No. 67, certified first degree. Scientific interests: ancient Armenian and world history. Author of about two articles. [naira.naira79@mail.ru](mailto:naira.naira79@mail.ru)

*Խմբագրություն է ուղարկվել 09.01.2025թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 13.01.2025թ.*

*Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.*

## ԱՐԵՎԻԿ ԱՖՐԻԿՅԱՆ

## ԿԱՐՈՂՈՒՆԱԿԱՇԵՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

*DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.144*

## ԱՄՓՈՓՈՒՄ

Կարողունակահեն կրթությունը (ինկլյուզիվ կրթություն) կարևոր դեր է խաղում հասարակության կայուն զարգացման մեջ՝ ապահովելով կրթության հասանելիություն բոլոր երեխաների համար՝ անկախ նրանց ֆիզիկական, մտավոր կամ սոցիալ-տնտեսական հնարավորություններից: Սակայն դրա արդյունավետ կիրառման ճանապարհին առկա են բազմաթիվ մարտահրավերներ, որոնք պահանջում են համակարգային մոտեցում և համալիր լուծումներ:

*Բանալի բառեր և արտահայտություններ.* կարողունակահեն կրթություն, ինկլյուզիվ կրթություն, ուսուցման հարմարեցում, հատուկ կրթական կարիքներ, մանկավարժական պատրաստվածություն, սոցիալական խտրականություն:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից կրթական համակարգերի հիմնական նպատակներից մեկը կրթության հասանելիության և հավասարության ապահովումն է: Կարողունակահեն կրթությունը ոչ միայն իրավունքների պաշտպանություն է, այլև կարևոր գործիք, որն ուղղված է հասարակության բոլոր անդամների սոցիալական ինտեգրմանը: Այն հնարավորություն է տալիս բոլոր երեխաներին, անկախ ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններից, սովորելու միասնական կրթական միջավայրում՝ ապահովելով անհատականացված ուսուցում:

Կարողունակահեն կրթության զարգացումը պայմանավորված է կրթական քաղաքականության բարեփոխումներով, մանկավարժական մոտեցումների փոփոխություններով և հասարակական գիտակցության բարձրացմամբ: Վերջին տարիներին միջազգային կազմակերպություններն ու պետությունները

ակտիվորեն ձեռնարկում են քայլեր, որոնք ուղղված են կրթական հաստատությունների ներառական դարձնելուն, սակայն պրակտիկայում դեռևս առկա են մի շարք մարտահրավերներ:

Այս հոդվածում քննարկվում են կարողունակահեն կրթության տեսական հիմքերը, միջազգային փորձը, ինչպես նաև այն հիմնահարցերը, որոնք խոչընդոտում են դրանց արդյունավետ կիրառմանը:

### **ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Ուսուցչի գործը հասարակության շրջանում ամենից կարևորվող, ամենամեծ հնարամտություն պահանջող, օրեցօր ավելի գնահատվող մասնագիտություններից է: Այսօր հաջողության հասնելու համար ուսուցիչներին հարկավոր են երեխաներին կառավարելու և օգնելու նոր եղանակներ, ինչպես նաև երեխաների արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ մոտեցումների խոր ընկալումներ (**Խաչատրյան Ս., 2003**):

Ուսուցումը սովորողի համար բարդ գործընթաց է: Ուսուցիչն այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռել: Համագործակցային մեթոդներն ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն, և այդ դերը լի է մարտահրավերներով: Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար՝ խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար:

Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է: Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մոտեցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը (**Խաչատրյան Ս., 2006**):

Կարողունակահեն կրթությունը հիմնված է այն սկզբունքի վրա, որ յուրաքանչյուր երեխա պետք է ստանա որակյալ կրթություն՝ հաշվի առնելով նրա անհատական կարիքները: Սա պահանջում է ոչ միայն ֆիզիկական միջավայրի

հարմարեցում, այլև ուսումնական ծրագրերի, մեթոդաբանության և մանկավարժական անձնակազմի պատրաստվածության բարելավում:

Կարողունակահեն կրթության գաղափարախոսությունը զարգացել է 20-րդ դարի երկրորդ կեսից՝ ընդգրկելով համաշխարհային կրթական բարեփոխումների օրակարգը: ՄԱԿ-ի՝ 1994թ. Սալամանկայի հռչակագիրը կոչ արեց բոլոր պետություններին վերափոխել իրենց կրթական համակարգերը՝ ներառականության ապահովման նպատակով:

### 1. Կարողունակահեն կրթության տեսության հիմքերը

Կարողունակահեն կրթությունը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա՝

- **Հավասար հասանելիություն** – կրթական հաստատությունները պետք է լինեն մատչելի բոլորի համար՝ անկախ ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններից:
- **Անհատական մոտեցում** – ուսումնական ծրագրերը պետք է լինեն ճկուն՝ հաշվի առնելով տարբեր կարողություններով երեխաների կարիքները:
- **Համագործակցային ուսուցում** – կրթական գործընթացում պետք է ներգրավվեն ոչ միայն մանկավարժները, այլև ծնողները, հոգեբանները և հատուկ մանկավարժները:

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է (**Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., 2011**):

Համագործակցային ուսուցման ներդրումը Հայաստանում իր հետ բերեց մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում: Մանկավարժական նշանակությունից բացի՝ այն ունի նաև հասարակական գործառույթ: Հայաստանում, ինչպես ամբողջ աշխարհում, ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով, ուստի համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար:

Այսպիսով՝ երեխաները ևս իրենց կյանքում կարիք ունեն արդյունավետ փոխհարաբերությունների, որոնց զարգացմանը մեծապես նպաստում է համագործակցային ուսուցումը: Դասարանական առողջ կոլեկտիվի ձևավորմանը, ինչպես նաև հոգեբանական առողջության զարգացմանը մեծապես նպաստում են հատկապես տեխնոլոգիայի գործնական դասերը, որոնց ընթացքում կան բոլոր հնարավորությունները համագործակցային ուսուցման տարրերի ապահովման համար: Այսպիսի դասերը նպաստում են նաև սթրեսի հաղթահարմանը, ավելի արդյունավետ դասարանական միջավայրի ձևավորմանը, հաճելի օգտակարի հետ համատեղելուն:

Դրական ու աջակցող փոխհարաբերությունները նպաստավոր են նաև ֆիզիկական առողջության համար: Հայտնի է նաև, որ բարձրորակ փոխհարաբերությունները փոխկապված են երկարակեցության հետ: Ուստի այսպիսի հետաքրքիր դասերը, անձի հակումների բացահայտումներից, մասնագիտական կողմնորոշումից բացի, կնպաստեն դասարանական լավ կոլեկտիվի ձևավորմանը, բարդ իրավիճակներում կողմնորոշվելուն, աշխատանքային խնդիրները ինքնուրույն լուծելուն, ինչպես նաև կնպաստեն առողջ ու երկարակյաց հայորդիներ մեծացնելուն: Կնպաստեն նաև աշակերտների ինքնագնահատականի բարձրացմանը, տարատեսակ բարդույթների հաղթահարմանը և սեփական վարքագծի կառավարմանը: Հետևաբար ամեն օր երեխաները գոհ, բավարարված կվերադառնան տուն՝ իրենց ստացած տպավորությունները ընտանիքի հետ կիսելու անհագ ցանկությամբ (**Վարդումյան Ա., Զաղինյան Ն., Հարությունյան Լ., 2005**):

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Ստորև ներկայացնում ենք համագործակցային ուսուցման մի շարք մեթոդներ: Դրանք են՝ Աշակերտների թիմային առաջադիմություն, Խճանկար, Շրջագայություն պատկերասրահում, Երեք բանալի և մեկ կողպեք, Հինգրոպեանոց ազատ շարադրանք:

**2. Կարողունակահեն կրթության միջազգային փորձը.** Տարբեր երկրներում կարողունակահեն կրթության կիրառումը տարբերվում է: Օրինակ՝

- **Ֆինլանդիա** – ուսումնական հաստատություններում ներդրվել են հատուկ աջակցության մեխանիզմներ, որոնք ապահովում են անհատական ուսուցում:
- **Մեծ Բրիտանիա** – հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների համար գործում են ներառական դպրոցներ, որոնք ապահովում են հավասար կրթության հնարավորություն:
- **Հայաստան** – վերջին տարիներին իրականացվել են բարեփոխումներ՝ ներառական կրթության արդյունավետության բարձրացման նպատակով, սակայն դեռևս առկա են համակարգային խնդիրներ:

**3. Կարողունակահեն կրթության հոգեբանամանկավարժական հիմքերը**  
Կարողունակահեն կրթության հիմնասյուներից է երեխայի անհատական զարգացման վրա կենտրոնացած մոտեցումը:

- **Վիզուոսկու սոցիալական մշակութային տեսությունը** – ընդգծում է, որ ուսուցումը պետք է տեղի ունենա սոցիալական փոխգործակցության միջոցով, ինչը նպաստում է երեխայի զարգացմանը:
- **Գարդների բազմակի բանականության տեսությունը** – կարևորում է տարբեր երեխաների տարբեր կարողությունների և ուսուցման ոճերի ճանաչումը:
- **Կառլ Ռոջերսի մարդակենտրոն ուսուցումը** – առաջարկում է, որ կրթությունը պետք է լինի հարմարեցված յուրաքանչյուր երեխայի առանձնահատկություններին:

#### **Հիմնական հիմնահարցերը**

**Ֆիզիկական միջավայրի անհարմարությունները** - Շատ ուսումնական հաստատություններ դեռևս չունեն անհրաժեշտ պայմաններ հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության համար, ինչպիսիք են՝ թեքահարթակները, վերելակները կամ համապատասխան կահույքը (Гнатышина Е., Герцог Г., 2015):

**Ուսումնական ծրագրերի հարմարեցման անհրաժեշտություն** - Ստանդարտ ծրագրերը միշտ չէ, որ համապատասխանում են հատուկ կարիքներ ունեցող երեխաների պահանջներին, ինչը դժվարացնում է նրանց լիարժեք ներգրավվածությունը ուսումնական գործընթացին:

**Ուսուցիչների պատրաստվածության պակաս.** Մանկավարժական անձնակազմի մեծ մասը չունի անհրաժեշտ հմտություններ՝ կարողունակահեն կրթության կազմակերպման համար, ինչը նվազեցնում է դրա արդյունավետությունը:

**Սոցիալական խտրականություն և գիտակցվածության պակաս.** Հասարակությունում դեռևս առկա են կարծրատիպեր, որոնք խոչընդոտում են կրթության հավասար հնարավորությունների ապահովմանը: Անհրաժեշտ է ազդել ծնողների, ուսուցիչների և սովորողների գիտակցվածության բարձրացման վրա:

**Պետական աջակցություն և օրենսդրական կարգավորումներ.** Չնայած որոշ երկրներում ընդունված են համապատասխան օրենքներ, սակայն դրանց գործնական կիրառումը հաճախ դժվարություններ է առաջացնում ֆինանսավորման և վերահսկման մեխանիզմների բացակայության պատճառով:

Կրթությունը համարվում է յուրաքանչյուր երեխայի հիմնարար իրավունք և զարգացման առանցքային գործոն: Այն հնարավորություն է տալիս երեխաներին ձեռք բերել գիտելիքներ, հմտություններ և արժեքներ, որոնք անհրաժեշտ են կյանքի հաջողության համար: Սակայն կրթության հավասար հասանելիության հարցը մինչ օրս մնում է գլոբալ խնդիր՝ պայմանավորված տարբեր սոցիալական, տնտեսական և մշակութային գործոններով:

#### **Կրթության հավասար հասանելիության խնդիրները**

##### **1. Սոցիալական և տնտեսական անհավասարություններ.**

Շատ երկրներում ընտանիքների սոցիալական և տնտեսական վիճակը մեծ ազդեցություն ունի երեխաների կրթության վրա: Աղքատ ընտանիքների երեխաները հաճախ չեն կարողանում հաճախել դպրոց՝ ֆինանսական

դժվարությունների, աշխատանքի հարկադրանքի կամ այլ սոցիալական խոչընդոտների պատճառով:

**2. Անհավասար պայմաններ կրթական հաստատություններում.**

Գյուղական և քաղաքային դպրոցների միջև մեծ տարբերություններ կան: Շատ գյուղական շրջաններում դպրոցները չունեն համապատասխան ենթակառուցվածք, ուսումնական նյութեր կամ որակյալ ուսուցիչներ, ինչը սահմանափակում է կրթության որակը:

**3. Հատուկ կարիքներ ունեցող երեխաների կրթություն.**

Հաշմանդամություն ունեցող երեխաները հաճախ բախվում են կրթական համակարգի մատչելիության խնդրին: Հատուկ պայմանների բացակայությունը և ներառական կրթության անբավարար զարգացվածությունը բարդացնում են նրանց կրթության գործընթացը:

**4. Կանանց և աղջիկների կրթություն.**

Չնայած վերջին տասնամյակներում զգալի առաջընթացին, որոշ երկրներում աղջիկները դեռևս բախվում են կրթության ստացման խոչընդոտների՝ մշակութային և սոցիալական սահմանափակումների պատճառով:

**5. Կոնֆլիկտային գոտիներում երեխաների կրթություն.**

Ռազմական հակամարտությունների և տեղահանության հետևանքով բազմաթիվ երեխաներ զրկվում են կրթություն ստանալու հնարավորությունից:

**Հնարավոր լուծումներ**

- **Պետական աջակցության ուժեղացում.** կրթական հաստատությունների ֆինանսավորման ավելացում, ուսուցիչների վերապատրաստման ծրագրեր, կրթաթոշակների տրամադրում:
- **Նորարարական տեխնոլոգիաների կիրառություն.** առցանց կրթական ծրագրերի զարգացում, թվային դասագրքերի օգտագործում:

- **Ներառական կրթության խթանում.** հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար համապատասխան պայմանների ստեղծում:
- **Հասարակական իրազեկում.** կրթության կարևորության վերաբերյալ ծրագրերի իրականացում:

Կարողունակահեն կրթության հիմնահարցերի լուծման համար անհրաժեշտ է պետության, կրթական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների և ընտանիքների համագործակցություն: Կրթական միջավայրի բարելավումը, մանկավարժական կադրերի վերապատրաստումը և հասարակական գիտակցության բարձրացումը կարող են էականորեն նպաստել այս կրթական մոդելի արդյունավետության բարձրացմանը (**Богатенков С., Гнатышина Е., Белевитин В., 2017**):

Կրթության հավասար հասանելիությունը բոլոր երեխաների հիմնարար իրավունքն է և զարգացման կարևոր նախապայման: Այն ապահովելու համար անհրաժեշտ է պետական, հասարակական և միջազգային կառույցների համատեղ ջանքերը՝ ստեղծելով միջավայր, որտեղ յուրաքանչյուր երեխա կունենա որակյալ կրթություն ստանալու հնարավորություն՝ անկախ սոցիալական, տնտեսական կամ ֆիզիկական վիճակից:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Կարողունակահեն կրթությունը ոչ միայն կրթական քաղաքականության բարեփոխման խնդիր է, այլև կարևոր սոցիալական մարտահրավեր: Դրա արդյունավետ գործարկման համար անհրաժեշտ է համապարփակ մոտեցում, որը կներառի կրթական միջավայրի բարելավում, ուսումնական ծրագրերի ճկունություն, մանկավարժական անձնակազմի պատրաստվածության բարձրացում և հասարակության գիտակցության բարձրացում:

Պետական և մասնավոր հատվածների համագործակցությունը, միջազգային փորձի կիրառումը, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ներգրավումը կարող են նպաստել ներառական կրթության արդյունավետության բարձրացմանը: Հատուկ կրթական մեթոդների զարգացումը, մանկավարժական

պատրաստվածության բարձրացումը և ֆինանսավորման ավելացումը կարևոր դեր կխաղան այս համակարգի ամրապնդման գործում:

Կարողունակահեն կրթության հիմնահարցերի հաղթահարման համար պետությունները պետք է իրականացնեն քաղաքական և ֆինանսական աջակցություն, զարգացնեն ներառական կրթության մեթոդները և ստեղծեն պայմաններ, որոնք կնպաստեն բոլոր երեխաների լիարժեք ուսուցմանը: Միայն այս մոտեցումը կարող է ապահովել կրթական համակարգի ճշգրիտ հարմարեցումը 21-րդ դարի պահանջներին:

### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. **Խաչատրյան Ս. (2003)**, Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի ձևերը մայրենիի ժամերին /համագործակցային ուսուցում/, «Նախա- շավիղ», Երևան, «Տիգրան Մեծ» հրատ.:
2. **Խաչատրյան Ս. (2006)**, Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, «Գիտական տեղեկագիր», էջ 18:
3. **Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ. (2006)**, Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ.:
4. **Հովհաննիսյան Գ., Ջոհրաբյան Ա., Արնաուդյան Ա., Գրիգորյան Ք., Դավթյան Մ., Օհանովա Ի. (2004)**, Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ.:
5. **Սարգսյան Վ. Ա., Թորոսյան Կ. Ա., Խաչատրյան Հ. Վ., Ջիլավյան Ե. Խ. (2011)**, Մայրենի 3, Երևան, «Մակմիլան- Արմենիա» հրատ.:
6. **Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Վարելլա Գ. (2005)**, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ.:

7. **Богатенков С., Гнатышина Е., Белевитин В. (2017)**, Компетентностно-ориентированное управление подготовкой кадров в условиях электронного обучения: монография, Челябинск, Изд-во “Южно-Ур”.
8. **Герцог Г., Гнатышина Е., Пахтусова Н. (2014)**, Проблемы подготовки бакалавров профессионального обучения Челябинск, «Вестник Южно-Уральского государственного гуманитарно-педагогического университета», выпуск №1 (48), с.5 -33.
9. **Гнатышина Е., Герцог Г. (2015)**, Компетентностно ориентированное управление подготовкой педагогов профессионального обучения в условиях вуза, Челябинск, Вестник Челябинского государственного педагогического университета, №6, с. 24-29.
10. **Зеер Э., Заводчиков Д. (2011)**, Практика формирования компетенций: методологический аспект Формирование компетенций в практике преподавания общих и специальных дисциплин в учреждениях среднего профессионального образования/, Екатеринбург, Березовский, с. 5-10.

## REFERENCES

1. **Khachatryan S. (2003)**, Ashakertneri inqnowrowyn & steghc'agorc'akan ashxatanqi d'ery' mayrenii jhamerin /hamagorc'akcayin owsowcowm/ /Forms of independent and creative work of students during the lessons of the native language /cooperative learning//, “Nakha-Shavigh”, Yerevan, “Tigran Mets” publishing house, p. 17.
2. **Khachatryan S. (2006)**, Owsowcman jhamanakakic met'odneri kirar'owmy' /Application of modern teaching methods/, Gyumri, “Scientific Bulletin” publishing house, p. 18.
3. **Hovhannisyan A., Harutyunyan K., Khrimyan M., Khachatryan S., Bayatyan N., Aleksanyan L., Purukuru V. (2006)**, Hamagorc'akcayin owsowcowm /Cooperative learning/, Yerevan, “Antares” publishing house, p. 48.

4. **Hovhannisyán G., Zohrabyan A., Arnaudyan A., Grigoryan K., Davtyan M., Ohanova I. (2004)**, Kar'owcoghakan krt'owt'yan himownqnerý' & met'odnerý' /Fundamentals and Methods of Constructive Education/, Yerevan, "Tigran Mets" Publishing House, p. 8.
5. **Sargsyan V., Torosyan K., Khachatryan H., Jilavyan Y. (2011)**, Mayreni 3 /Mayreni 3/, Yerevan, "Macmillan-Armenia" Publishing House, p. 15.
6. **Vardumyan S., Jaghinyan N., Harutyunyan L., Varella G. (2005)**, Modern Pedagogical Approaches, Yerevan, "Noyan Tapan" Publishing House, pp. 175.
7. **Bogatenkov S., Gnatyshina E., Belevitin V. (2017)**, Kompetentnostno-oriyentirovannoye upravleniye podgotovkoy kadrov v usloviyakh elektronnoy obuche- niya: monografiya / Competence-based management of personnel training in the context of e-learning: monograph/, Chelyabinsk, Изд-во "Южно-Ур", pp.20-26
8. **Герцог Г., Гнатышина Е., Pakhtusova H. (2014)**, Problemy podgotovki bakalavrov professional'nogo obucheniya Chelyabinsk /Problems of preparation of bachelors of professional training, Chelyabinsk/, "Vestnik Yuzhno-Uralskogo gosudaurstva humanitarno-pedagogicheskogo universiteta", issue №1 (48), pp. 5 -33.
9. **Gnatyshina E., Herzog G. (2015)**, Kompetentnostno oriyentirovannoye upravlenii podgotovkoy pedagogov professional'nogo obucheniya v usloviyakh vuza /Competence-oriented administration of professional training of teachers in university settings/, Chelyabinsk, Bulletin of the Chelyabinsk State Pedagogical University, №6, p. 24-29.
10. **Zeer E., Zavodchikov D. (2011)**, Praktika formirovaniya kompetentsiy: metodologicheskiy aspekt Formirovaniye kompetentsiy v praktike prepodavaniya obshchikh i spetsial'nykh distsiplin v uchrezhdeniyakh srednego professional'nogo obrazovaniya /Practice of developing competencies: methodological aspect Formation of competencies in the practice of teaching

general and special disciplines in institutions of secondary vocational education/, Yekaterinburg, Berezovsky, pp. 5-10.

**Аревик Африкян**

### **Проблемы компетентностного образования**

#### **Заключение**

***Ключевые слова и выражения:** инклюзивное образование, адаптация обучения, особые образовательные потребности, педагогическая подготовка, социальная дискриминация.*

Компетентностно-ориентированное образование – это не только задача реформирования образовательной политики, но и важный социальный вызов. Для его эффективного функционирования необходим комплексный подход, включающий улучшение образовательной среды, гибкость учебных программ, повышение квалификации педагогического персонала и повышение осведомленности общества.

Сотрудничество государственного и частного секторов, применение международного опыта, а также внедрение информационных технологий могут способствовать повышению эффективности инклюзивного образования. Развитие специальных образовательных методик, повышение педагогической подготовки и увеличение финансирования сыграют важную роль в укреплении данной системы.

Для преодоления проблем компетентностно-ориентированного образования государствам необходимо осуществлять политическую и финансовую поддержку, развивать методы инклюзивного образования и создавать условия, способствующие полноценному обучению всех детей. Только такой подход позволит адаптировать образовательную систему к требованиям XXI века.

**Arevik Afrikyan**

### **Issues of competence-based education**

#### **Conclusion**

**Key words and expressions:** *inclusive education, learning adaptation, special educational needs, pedagogical training, social discrimination.*

Competence-based education is not only an issue of educational policy reform but also a significant social challenge. For its effective implementation, a comprehensive approach is required, including the improvement of the educational environment, flexibility in curricula, enhancement of pedagogical staff training, and raising public awareness.

Collaboration between the public and private sectors, the application of international experience, and the integration of information technologies can contribute to improving the effectiveness of inclusive education. The development of specialized educational methods, the enhancement of pedagogical training, and increased funding will play a crucial role in strengthening this system.

To overcome the challenges of competence-based education, governments must provide political and financial support, develop inclusive education methods, and create conditions that ensure full-fledged learning for all children. Only this approach can ensure the proper adaptation of the educational system to the demands of the 21st century.

**Արևիկ Աֆրիկյան** - Երևանի Ս. Սպանդարյանի անվան հ. 24 հիմնական դպրոցի պատմության ուսուցչուհի: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հին և համաշխարհային պատմություն: [art.ar@mail.ru](mailto:art.ar@mail.ru)

**Аревик Африкян** – Учитель истории в начальной школе № 24 имени Спандаряна. Научные интересы: древняя армянская и всемирная история. [art.ar@mail.ru](mailto:art.ar@mail.ru)

**Arevik Afrikyan** – History teacher at Yerevan S. Spandaryan Primary School No. 24. Scientific interests: ancient Armenian and world history. [art.ar@mail.ru](mailto:art.ar@mail.ru)

*Խմբագրություն է ուղարկվել 13.01.2025թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 19.01.2025թ.*

*Հրատարակման է ներկայացվել 201.03.2025թ*

## ԱՐՓԻՆԵ ՂԵԶՅԱՆ

ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

*DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.145*

## ԱՄՓՈՓՈՒՄ

Այս հոդվածը ներկայացնում է ուսումնառության արդյունքների ստուգման և գնահատման այլընտրանքային գործիքները, որոնք նպաստում են սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների բազմակողմանի զարգացումը: Ավանդական թեստերի և քննությունների փոխարեն առաջարկվող նորարարական մեթոդները հնարավորություն են տալիս խթանել ստեղծագործական մտածողությունը, ինքնուրույնությունը և համագործակցային աշխատանքը:

Հատուկ ուշադրություն է դարձվում անհատի բազմակողմանի և արդյունավետ փոխազդեցության կարողության զարգացմանը, խմբային աշխատանքին ու միասնական ջանքերի համադրմանը՝ նպատակին հասնելու համար: Այս ամենը ցույց է տալիս կրթության արդյունքների գնահատման համակարգի վերանայման անհրաժեշտությունը:

Անհատական գնահատման ու ախտորոշման ավանդական համակարգը թուլացնում է հասակակիցների խմբի կրթական ազդեցությունը: Անհատների մեկուսացման փոխարեն անհրաժեշտ է նրանց համախմբել, ինչը կարելի է ապահովել այլընտրանքային գնահատման մեթոդների միջոցով, որոնք քննարկվում են այս հոդվածում:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** կրթության արդյունքներ, կրթական բարեփոխում, գնահատման մեթոդներ, պորտֆոլիո, Պարվոզների փուլի, Շոտլանդական արեսուրար, Սրեղծագործական օրագիր, Քեյս մեթոդ:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման գործընթացում սովորողների առաջընթացի գնահատումը կարևոր նշանակություն ունի նրանց զարգացման և գիտելիքների խորացման համար: Ավանդական գնահատման մեթոդները հաճախ չեն արտացոլում սովորողների իրական կարողությունները, ուստի անհրաժեշտ է կիրառել այլընտրանքային մոտեցումներ, որոնք կներառեն տարբեր հմտությունների ստուգում, ինչպես նաև սովորողների ներգրավվածությունը սեփական ուսումնառության մեջ:

Ժամանակակից կրթական համակարգերում ուսումնառության արդյունքների ստուգումը և գնահատումը կարևորագույն գործընթացներից է, որը թույլ է տալիս գնահատել սովորողների գիտելիքները, հմտությունները և կարողությունները: Ավանդական գնահատման մեթոդները, ինչպիսիք են թեստերը, գրավոր կամ բանավոր քննությունները, շարունակում են կիրառվել, սակայն դրանք հաճախ չեն ապահովում ուսումնառության բազմակողմանի և օբյեկտիվ գնահատում:

## ՔՆՆԱՐԿՈՒՄ

Վերջին տարիներին կրթության զարգացման միտումներն ընդգծում են գնահատման այլընտրանքային գործիքների կարևորությունը, որոնք հնարավորություն են տալիս ավելի ճկուն մոտեցում ցուցաբերել սովորողների առաջընթացի գնահատմանը: Դրանք ներառում են նախագծային աշխատանքներ, պորտֆոլիո, ինքնագնահատում, գործընկերային գնահատում, կատարողականի վրա հիմնված գնահատում և այլ մեթոդներ, որոնք ուղղված են ոչ միայն ստացած գիտելիքների չափմանը, այլև քննադատական մտածողության, ստեղծարարության և համագործակցության հմտությունների զարգացմանը (Մակարյան Ա., 2015):

Այլընտրանքային գնահատման գործիքների կիրառումն օգնում է հաղթահարել ավանդական մեթոդների սահմանափակումները՝ ապահովելով ավելի ընդգրկուն, ճկուն և սովորողակենտրոն մոտեցում: Այս հետազոտության նպատակն է ուսումնասիրել ուսումնառության արդյունքների ստուգման և գնահատման այլընտրանքային գործիքների առանձնահատկությունները, դրանց

արդյունավետությունը և կիրառման հնարավորությունները ժամանակակից կրթական միջավայրում (Подласый И., 2007):

Կոմպետենցիայի վերլուծությունը թույլ է տալիս գնահատել կրթության արդյունքները: Այսօր ամբողջ աշխարհում նկատվող տնտեսական փոփոխություններն ազդում են աշխատաշուկայի վրա և սահմանում մասնագետների պատրաստման նոր պահանջներ: Ժամանակակից աշխատաշուկայում մրցակցությանը դիմակայելու համար մասնագետը պետք է ոչ միայն ունենա մասնագիտական գիտելիքներ, հմտություններ և կոմպետենցիաներ, այլև զարգացած լինի այսպես կոչված «փափուկ հմտություններով» (soft skills), որոնք հնարավորություն են տալիս արդյունավետ համագործակցել այլ մարդկանց հետ (Ասատրյան Լ., Հակոբյան Գ., Ասատրյան Մ., 2017):

Այս կապակցությամբ դեռևս 1996 թ. Եվրոպայի Խորհուրդը սահմանել է հինգ հիմնական կոմպետենցիաների խումբ՝

1. **Սոցիալական և քաղաքական կոմպետենցիաներ.** անձնական պատասխանատվության ընդունում, փոխշահավետ կոնֆլիկտների լուծման ձգտում, հավաքական կյանքին ակտիվ մասնակցություն, ժողովրդավարական իրավունքների և ինստիտուտների պաշտպանություն:
2. **Բազմամշակութային հասարակության մեջ ապրելու կոմպետենցիաներ.** այլ կրոնների, մշակույթների ընդունում, փոխադարձ հարգանք, հանդուրժողականություն, այլ ռասաների, լեզուների և մշակույթների ներկայացուցիչների հետ համակեցության կարողություն՝ առանց նրանց իրավունքների ոտնահարման:
3. **Աշխատանքային և սոցիալական փոխհարաբերությունների կոմպետենցիաներ.** շրջապատի հետ արդյունավետ շփման կարողություն:
4. **Տեղեկատվության հետ աշխատելու կոմպետենցիաներ.** նորագույն տեխնոլոգիաների կիրառում տեղեկատվության որոնման և յուրացման համար, ստացված գիտելիքների գործնական կիրառում, ՁԼՄ-ներից

ստացվող քաղաքական, առևտրային և գիտական տեղեկատվության քննադատական վերլուծության ունակություն (**Biggs J., 2003**):

5. **Կյանքի ընթացքում ուսուցման կոմպետենցիաներ.** ինքնազարգացման և մասնագիտական կատարելագործման մշտական մոտիվացիա:

Գլոբալացման ժամանակաշրջանում անհատի մասնագիտական և սոցիալական ինքնաիրացումն առավել կախված է հավաքական աշխատանքի մեջ նրա արդյունավետ ներգրավվածությունից, քան միայն անհատական ակտիվությունից:

### **Կրթության արդյունքների գնահատման մոտեցումների վերանայման անհրաժեշտությունը**

Ավանդական գնահատման մեթոդները խթանում են մրցակցային ոգին, սակայն նվազեցնում են հավաքականի ազդեցությունը: Արդյունաբերական դարաշրջանում հասարակությունը պահանջում էր, որ յուրաքանչյուր անդամ ունենա ինքնուրույն գործելու ունակություն, և այդ համակարգը հիմնված էր մրցակցության և անհատականության սկզբունքների վրա: Սակայն ժամանակակից սոցիալական արժեքները շեշտադրում են ոչ թե մեկուսացումը, այլ համախմբումը:

Անհրաժեշտ է վերանայել կրթության արդյունքների գնահատման ներկայիս համակարգը, որը դիտարկում է ուսանողի հաջողությունները որպես առանձին անհատի առանձնացված հատկանիշներ: Այնուամենայնիվ, ժամանակակից պահանջները պահանջում են փոխգործակցային մոտեցում, որտեղ ուսանողի գիտելիքները և հմտությունները դրսևորվում են հավաքական միջավայրում (**Վարդումյան Ս., Հարությունյան Լ., Զաղինյան Ն., Վարելլա Գ., Աբորդո Է., 2003**):

### **Կրթության արդյունքների այլընտրանքային գնահատման մեթոդներ**

1. **Պորտֆոլիո, Պատվոգրերի տուփ, Ստեղծագործական օրագիր.** այս մեթոդները ներկայացնում են ուսանողի աշխատանքների, մրցանակների և նվաճումների համակարգված հավաքածու: Դրանք արտացոլում են

ընդհանուր մշակութային և մասնագիտական կոմպետենցիաների զարգացման դինամիկան, նպաստում են ինքնավերլուծության և ինքնամոտիվացիայի զարգացմանը, ինչպես նաև ուսանողներին սովորեցնում են գնահատել իրենց կուտակած գիտելիքներն ու պլանավորել հետագա զարգացումը: Ուսումնական կուրսի ավարտին ուսանողի անձնական և մասնագիտական որակների բնութագիրը կարող է օգտագործվել աշխատանքի ընդունվելիս:

2. **Շոտլանդական ատեստատ.** այս անգլիական գնահատման մեթոդը հիմնված է ուսանողի բոլոր ակադեմիական և արտալսարանային ակտիվությունների ամենօրյա գրանցման վրա: Ատեստատում ներառվում են գնահատականները, հաճախելիությունը, մրցանակները, մասնակցությունը կրթական և մշակութային ծրագրերին, հանձնարարությունների կատարումը, հավաստագրերը և դիպլոմները: Այս մեթոդը խթանում է ուսանողի շարունակական մասնագիտական և անձնական զարգացումը:
3. **Քեյս մեթոդ, նախագծեր, գործարար խաղեր.** այս մեթոդները թույլ են տալիս ուսանողներին զարգացնել տեղեկատվության որոնման, վերլուծության և գործնականում կիրառման հմտությունները, սովորել լուծել ոչ ստանդարտ խնդիրներ, արդյունավետորեն համագործակցել թիմի հետ և ճիշտ բաշխել դերերը:
4. **Փորձագիտական գնահատում.** այս մեթոդն առաջարկում է կրթության արդյունքների գնահատման գործընթացում ներգրավել ոլորտի փորձագետներին, գործատուներին և գիտահետազոտական համայնքի ներկայացուցիչներին: Օրինակ, պետական ատեստավորման հանձնաժողովը, որը գնահատում է ուսանողի դիպլոմային աշխատանքը, կարող է ավելի մանրամասն վերլուծել ուսանողի հետազոտական, մասնագիտական և ստեղծագործական հմտությունները( Nicol D., & Macfarlane-Dick D., 2006):

Այսօր վերոնշյալ այլընտրանքային մեթոդները հաճախ կիրառվում են անհատական նախաձեռնությամբ՝ առանձին առարկաների կամ դասընթացների շրջանակում: Սակայն դրանց համակարգային ինտեգրումը կրթական համակարգում դեռևս բացակայում է, ինչպես նաև չկան հստակ չափանիշներ ու գնահատման սանդղակներ, ինչը երբեմն հանգեցնում է սուբյեկտիվ մոտեցումների:

### **Այլընտրանքային գնահատման գործիքներ**

#### **1. Նախագծային գնահատում**

Նախագծային գնահատումը ուսուցման գնահատման մեթոդներից մեկն է, որը ներառում է գիտելիքների գործնական կիրառում: Այն թույլ է տալիս սովորողներին աշխատել իրական խնդիրների լուծման վրա, ինչը նպաստում է նրանց ստեղծագործականության, հետազոտական հմտությունների և համագործակցության զարգացմանը:

- Օրինակ՝ հետազոտական աշխատանքներ, մուլտիմեդիա նախագծեր, մոդելներ, ներկայացումներ:
- Այս մեթոդը խթանում է սովորողների պատասխանատվության զգացումը և թիմային աշխատանքի հմտությունները:

#### **2. Էլեկտրոնային պորտֆոլիո**

Էլեկտրոնային պորտֆոլիոն ներկայացնում է սովորողի աշխատանքների թվային հավաքածու, որը ներառում է նրա առաջընթացի վերաբերյալ բազմակողմանի տվյալներ:

- Աշխատանքների հավաքածու, որը ներառում է գրավոր, նկարային և վիդեո նյութեր:
- Նպաստում է երկարաժամկետ առաջընթացի հետևմանը:
- Սովորողն իր աշխատանքները կարող է ներկայացնել որպես զարգացման վկայություն, ինչը հնարավորություն է տալիս գնահատել ոչ միայն վերջնական արդյունքը, այլև աշխատանքի կատարած ուղին:

#### **3. Ինքնագնահատում և փոխգնահատում**

Ինքնագնահատման և փոխգնահատման մեթոդները կարևոր են սովորողների ինքնուրույն մտածողության զարգացման համար:

- Սովորողները գնահատում են իրենց կամ միմյանց աշխատանքները՝ սահմանված չափանիշների համաձայն:
- Օգնում է զարգացնել քննադատական մտածողություն և պատասխանատվություն:
- Ընդգծում է սովորողի ինքնուրույնությունը և թույլ է տալիս ավելի օբյեկտիվորեն վերլուծել իր առաջընթացը:

#### **4. Խաղային գնահատում (Gamification & Quizzes)**

Խաղային մեթոդները նպաստում են ուսուցման գործընթացի ինտերակտիվությանը և ներգրավվածության բարձրացմանը:

- Կրթական խաղերի և ինտերակտիվ վիկտորինաների (Kahoot, Quizizz) կիրառում:
- Պահպանում է հետաքրքրությունը և խթանում ուսումնառության արդյունավետությունը:
- Տեխնոլոգիական առաջընթացի շնորհիվ հնարավոր է ստեղծել անհատականացված խաղեր, որոնք հաշվի են առնում սովորողի կարողությունները և նախասիրությունները:

#### **5. Բանավոր ներկայացումներ և բանավեճեր**

Բանավոր ներկայացումներն ու բանավեճերը կարևոր դեր են խաղում սովորողների բանավոր հաղորդակցման, վերլուծական մտածողության և տրամաբանական կառույցների ձևավորման մեջ:

- Նպաստում են հաղորդակցման հմտությունների զարգացմանը:
- Կարելի է կիրառել ինչպես անհատական, այնպես էլ խմբային ձևաչափերով:
- Մասնակիցները հնարավորություն են ստանում պաշտպանել իրենց կարծիքը, հիմնավորել իրենց տեսակետները և վերլուծել տարբեր մոտեցումներ:

## 6. Խնդիրների լուծման վրա հիմնված գնահատում

Այս մեթոդը ուսուցման գործընթացի մի մասն է, որտեղ սովորողները բախվում են իրական կամ վիրտուալ խնդիրների, որոնց լուծումը պահանջում է իրենց գիտելիքների ու հմտությունների կիրառում:

- Սովորողները լուծում են իրական կամ վիրտուալ իրավիճակներում առաջացած խնդիրներ:
- Օրինակ՝ դեպքերի ուսումնասիրություն (case study), խնդիրների վերլուծություն:
- Սա խթանում է սովորողների տրամաբանական մտածողությունը, թիմային աշխատանքը և արագ որոշումներ կայացնելու կարողությունը:

Ուսումնառության արդյունքների գնահատման այլընտրանքային գործիքները թույլ են տալիս առավել ճկուն և բազմակողմանի կերպով վերլուծել սովորողների առաջընթացը: Դրանք նպաստում են ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը և սովորողների մոտիվացիայի աճին: Այս մոտեցումները հնարավորություն են տալիս անհատականացնել ուսումնառությունը և ապահովել այնպիսի հարթակ, որտեղ յուրաքանչյուր սովորող կարող է դրսևորել իր ուժեղ կողմերը: Նորարարական մեթոդների ներդրումը կրթական համակարգում կարող է բարելավել ուսումնական միջավայրը և ապահովել ավելի արդի ու արդար գնահատման մեխանիզմներ:

## ԵՂՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ ուսումնառության արդյունքների ստուգման և գնահատման այլընտրանքային գործիքները կարևոր դեր են խաղում ժամանակակից կրթական համակարգերում: Ավանդական գնահատման մեթոդների սահմանափակումները, ինչպիսիք են գիտելիքների ուղղակի չափումը և ուսուցման գործընթացի ոչ թե գործընթացի, այլ արդյունքի վրա կենտրոնացումը, արդիականացնում են այլընտրանքային մոտեցումների կիրառումը:

Այլընտրանքային գնահատման գործիքները, ինչպիսիք են նախագծային աշխատանքները, պորտֆոլիոն, ինքնագնահատումը և գործընկերային գնահատումը, հնարավորություն են տալիս ավելի բազմակողմանի կերպով գնահատել սովորողների գիտելիքները, հմտությունները և կարողությունները: Դրանք ուղղված են նաև ստեղծարարության, քննադատական մտածողության և համագործակցության հմտությունների զարգացմանը, ինչը շատ կարևոր է XXI դարի կրթության համար:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այլընտրանքային գնահատման գործիքները նպաստում են ոչ միայն սովորողների ներգրավվածությանը և մոտիվացիային, այլև ստեղծում են հնարավորություններ ուսուցման և գնահատման գործընթացների անձնավորված մոտեցման համար: Արդյունքում, կրթական հաստատությունները պետք է գնահատման մեթոդաբանության մեջ ներառեն այլընտրանքային գործիքներ՝ ապահովելով ուսումնական գործընթացի որակի բարձրացում և սովորողների ընդլայնված զարգացման հնարավորություններ:

Այս տեսանկյունից, ապագա հետազոտությունները կարող են հետազոտել այլընտրանքային գնահատման գործիքների արդյունավետությունը տարբեր կրթական միջավայրերում, ինչպես նաև դրանք ինտեգրելու ճանապարհները ավանդական գնահատման համակարգերի հետ:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ասատրյան Լ., Հակոբյան Գ., Ասատրյան Մ. և այլք (2017),** Մանկավարժություն, Երևան, «Արտագերս»>> հրատ.:
2. **Մակարյան Ա. (2015),** Այլընտրանքային գնահատման անհրաժեշտությունը տարրական դպրոցում: Կրթության որակի չափման, գնահատման հիմնախնդիրները: Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, «Մանկավարժ» հրատ.,

3. Վարդումյան Ս., Հարությունյան Լ., Ջաղինյան Ն., Վարելա Գ., Աբրրդո Է. (2003), Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «ԱՅՈՒԵՔՍ» հրատ.:
4. Подласый И. (2007), Педагогика: учебник, Москва, “Высшее образование”.
5. Biggs J. (2003). Teaching for Quality Learning at University. McGraw-Hill Education. [https://www.scirp.org/pdf/CE20122600021\\_27076494.pdf](https://www.scirp.org/pdf/CE20122600021_27076494.pdf)
6. Black P. & Wiliam D. (1998), Assessment and Classroom Learning. Assessment in Education, Principles, Policy & Practice. <https://www.gla.ac.uk/t4/learningandteaching/files/PGCTHE/BlackandWiliam1998.pdf>
7. Nicol D. & Macfarlane-Dick D. (2006), Formative Assessment and Self-regulated Learning. Studies in Higher Education. [https://www.reap.ac.uk/reap/public/papers/DN\\_SHE\\_Final.pdf](https://www.reap.ac.uk/reap/public/papers/DN_SHE_Final.pdf)
8. Shepard L. (2000). The Role of Assessment in a Learning Culture. Educational Researcher. <https://www.colorado.edu/education/sites/default/files/attached-files/The%20Role%20of%20Assessment%20in%20a%20Learning%20Culture.pdf>
9. Shute V. (2008), Focus on Formative Feedback. Review of Educational Research. <https://journals.sagepub.com/doi/full/10.3102/0034654307313795>

## REFERENCES

1. Asatryan L., Hakobyan G., Asatryan M. et al. (2017), Mankavarjhowt'yown /Pedagogy/, Yerevan, “Artagers”>> Publishing House:
2. Makaryan A. (2015), Ayly'ntranqayin gnahatman anhrjheshtowt'yowny' tarrakan dprocowm: Krt'owt'yan oraki chap'man, gnahatman himnaxndirneri': Mijagayin gitajhoghovi nyowt'eri jhoghovac'ow /The need for alternative assessment in elementary school. Issues of measuring and assessing the quality

- of education: Collection of materials of the international conference/, Yerevan, “Mankavarzh” Publishing House, p. 400:
3. **Vardumyan S., Harutyunyan L., Jaghinyan N., Varella G., Abordo E. (2003)**, Jhamanakacic mankarjhakan motecowmner /Modern pedagogical approaches/, Yerevan, “AIREX” Publishing House, p. 20:
  4. **Podlasy I. (2007)**, Pedagogika: uchebnik /Pedagogy: textbook/, Moscow, “Высшее образование”, с45-48.
  5. **Biggs J. (2003)**. Teaching for Quality Learning at University. McGraw-Hill Education. [https://www.scirp.org/pdf/CE20122600021\\_27076494.pdf](https://www.scirp.org/pdf/CE20122600021_27076494.pdf)
  6. **Black P. & William D. (1998)**, Assessment and Classroom Learning. Assessment in Education, Principles, Policy & Practice. <https://www.gla.ac.uk/t4/learningandteaching/files/PGCTHE/BlackandWiliam1998.pdf>
  7. **Nicol D. & Macfarlane-Dick D. (2006)**, Formative Assessment and Self-regulated Learning. Studies in Higher Education. [https://www.reap.ac.uk/reap/public/papers/DN\\_SHE\\_Final.pdf](https://www.reap.ac.uk/reap/public/papers/DN_SHE_Final.pdf)
  8. **Shepard L. (2000)**. The Role of Assessment in a Learning Culture. Educational Researcher. <https://www.colorado.edu/education/sites/default/files/attached-files/The%20Role%20of%20Assessment%20in%20a%20Learning%20Culture.pdf>
  9. **Shute V. (2008)**, Focus on Formative Feedback. Review of Educational Research. <https://journals.sagepub.com/doi/full/10.3102/0034654307313795>

**Арпине Глечян**

### **Альтернативные инструменты оценки и анализа результатов обучения**

#### **Заключение**

*Ключевые слова и выражения:* образовательные результаты, образовательная реформа, методы оценки, портфолио, сундук с отличием, шотландский сертификат, творческий дневник, кейс-метод.

В результате этого исследования стало ясно, что альтернативные инструменты проверки и оценки результатов обучения играют важную роль в современных образовательных системах. Ограничения традиционных методов оценки, такие как прямое измерение знаний и акцент на результате, а не на процессе обучения, актуализируют применение альтернативных подходов.

Альтернативные инструменты оценки, такие как проектные работы, портфолио, самооценка и оценка сверстников, позволяют более многогранно оценивать знания, навыки и способности обучающихся. Они также направлены на развитие креативности, критического мышления и навыков сотрудничества, что очень важно для образования XXI века.

Исследование показало, что альтернативные инструменты оценки способствуют не только вовлеченности и мотивации учащихся, но и создают возможности для персонализированного подхода в процессах обучения и оценки. В результате, образовательные учреждения должны включать альтернативные инструменты в методологию оценки, обеспечивая повышение качества учебного процесса и расширенные возможности развития учащихся.

С этой точки зрения, будущие исследования могут изучить эффективность альтернативных инструментов оценки в различных образовательных средах, а также пути их интеграции с традиционными системами оценки.

**Arpine Ghlechyan**

### **Alternative instruments for verification and evaluation of learning**

#### **outcomes**

#### **Conclusion**

**Key words and expressions:** *Educational outcomes, educational reform, assessment methods, portfolio, Honors box, Scottish Certificate, Creative diary, Case method.*

As a result of this study, it became clear that alternative tools for assessing and evaluating learning outcomes play an important role in modern educational systems. The limitations of traditional assessment methods, such as direct measurement of

knowledge and a focus on the outcome rather than the process of learning, highlight the need for the application of alternative approaches.

Alternative assessment tools, such as project work, portfolios, self-assessment, and peer assessment, allow for a more comprehensive evaluation of learners' knowledge, skills, and abilities. They also aim to develop creativity, critical thinking, and collaboration skills, which are essential for education in the 21st century.

The study showed that alternative assessment tools contribute not only to learner engagement and motivation but also create opportunities for personalized approaches in teaching and assessment processes. As a result, educational institutions should incorporate alternative tools into their assessment methodologies, ensuring an improvement in the quality of the educational process and expanded development opportunities for learners.

From this perspective, future research could explore the effectiveness of alternative assessment tools in various educational environments, as well as ways to integrate them with traditional assessment systems.

**Արփինե Դեչյան** – Երևանի Ս. Սպանդարյանի անվան հ. 24 հիմնական դպրոցի պատմության ուսուցչուհի: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հին և համաշխարհային պատմություն: [ghlechyana@gmail.com](mailto:ghlechyana@gmail.com)

**Арпине Глечян** – Учитель истории в начальной школе № 24 имени Спандаряна. Научные интересы: древняя армянская и всемирная история. [ghlechyana@gmail.com](mailto:ghlechyana@gmail.com)

**Arpine Ghlechyan** – History teacher at Yerevan S. Spandaryan Primary School No. 24. Scientific interests: ancient Armenian and world history. [ghlechyana@gmail.com](mailto:ghlechyana@gmail.com)

*Խմբագրություն է ուղարկվել 20.02.2025թ.*

**Հանձնարարվել է գրախոսության 27.02.2025թ.**

**Հրատարակման է ներկայացվել 21.03.2025թ.**

«Հայագիտական հանդես» ամսագրի խմբագրությունը չեզոքություն է դրսևորում հոդվածներում արտահայտած կարծիքների ու տեսակետների նկատմամբ: